Գիրքը հրատարակվել է ***Արմեն Ամիրյանի***
հովանավորությամբ

ՆԱՀԻՐԶ
ՀԵՆՐԻԿ
ՄԱՄՅԱՆ

ՀՏԴ 891.981–3
ԳՄԴ 84 Հ–4
Ի 750

Իսաբեկյան է.
Ի 750 Իգդիր: Վեպ/ է. Իսաբեկյան.–Եր.: Զանգակ–97, 2009.–240 էջ:

Վեպի հիմքում ընկած են դարասկզբի իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Իգդիր քաղաքում: Ընտանեկան հուշերն ու հեղինակի մանկությունը պատկերվում են ողբերգական իրադարձությունների հենքի վրա:

Վեպը հիմնականում ինքնակենսագրական է, գրվել է 1975–1983 թթ.: Ամսագրային տարբերակը 1988 թ. լույս է տեսել «Սովետական գրականություն» ամսագրում (թիվ 11):

ԳՄԴ 84 Հ–4
ISBN 978–99941–1–564–8
© «Զանգակ–97» հրատ., 2009

Քաղաքները, ինչպես մարդիկ, մի օր ծնվում են, ապրում իրենց կյանքը, ծերանում ու մի օր էլ մեռնում:

Քաղաքները շատ քիչ էին շատ հին ժամանակներում: Երբ Արմավիրը, Դվինը կամ Անին քաղաք էին՝ այսօրվա շատ երևելագույն քաղաքներ չկային, ինչպես, ասենք, Նյու Յորքը կամ Ռոստովը. նոր պիտի ծնվեին: Հավերժ, մինչև օրս ապրող քաղաք մեկն է եղել՝ Հռոմը, մնացածներին այդ երևելիներից կարելի է թվել «երկարակյացների» շարքում՝ Փարիզ, Լոնդոն, Մադրիդ... Շատ են, ո՞րը թվես, ապրում են ծերացած, ապրում են: Կան և կենդանի մեռած քաղաքներ էլ:

Դո՛ւ, սիրելի՛դ իմ Իգդիր, երբեք քաղաք չես եղել, որ դեռ ծերանայիր, մեռնեիր... Դու ուզում էիր քաղաք դառնալ, ավելի ճիշտ՝ ուզում էիր քեզ քաղաք դարձնել: Ստացվեց: Քարը, շինանյութը չէր պատճառը: Քո կողքին Արևագի քարհանքներն էին, քար՝ ինչքա՜ն ուզես: Դու և քո քաղաքի բնակիչները մեղք չունեիք, չթողեցին, ինչպես մարդուն, մի շատ չներվող հանցանք գործած մարդուն, որին կանգնեցնում են իր շինած կիսատ տան պատի տակ և... սպանում:

Քեզ չդատեցին էլ, որ պարզվեր հանցանքիդ հոդվածը, «պարագրաֆը», որով միայն ընդունված է քաղաքակիրթ աշխարհում թույլատրել՝ սպանել կամ կախել... Քեզ առանց դատ–դատաստանի «վերացրին», ճիշտ այնպես, ինչպես քո քաղաքում «վերացնում» էին, քո երևելի քաղաքացի «զավոդչիկ» Վլասի տերմինալոգիայով ասած, «ելուզակներին»՝ հայատյաց պրիստավներին, գավառապետներին:

Բայց դու իսկապես որ հանցանք չունեիր: Քո միակ հանցանքը, սխալը այն էր, որ քո հողածածկ տների կտուրների տակ... հայեր էին ապրում, ինչպես հազարավոր քեզ նման շենների, քաղաքների, որոնց նույնպես, առանց հանցանքը պարզելու, կանգնեցրին պատի տակ:

Եթե հավատալու լինենք, ասում են, որ... խմբովին մեռնելը հեշտ է: Մեռնողներին չեն հարցրել, ապրողներն են այդպես «ենթադրում»: Եթե մխիթարվելու բան է դա:

Բայց ո՞վ է, ասենք, հարցրել Անիում, Դվինում երբեմնի ապրողներին, որոնք կարող էին հիմա կենդանի մնացած լինել և դասվել «հավերժ» քաղաքների ու քաղաքացիների թվին, ո՞վ է հարցրել նրանց կարծիքը այդ «հեշտ» մեռնելու մասին...

— Հեշտ մեռնելս վա՞րն ի,— կասեր նույն զավոդչիկ Վլասը և երևի ավելացներ,— որ ի՞նչ, որ ի՞նչ...

Այդպես էլ եղավ: Քո գոյությունը «որ ինչ»–ով էլ վերջացավ: Վլասին էլ իր ալրաղացի պատի տակ չկանգնեցրին, ոչ ոքի չկանգնեցրին, չկարողացան: Եվ Վլասը գաղթելուց առաջ ափսոսաց, չքանդեց, չվառեց ո՛չ իր ալրաղացը և ոչ էլ լիմոնադի գործարանը, բայց ասաց միայն զարմացած ու դառնացած...

— Բա ընչի՞ չինիմ, չինիմ, որ քանդե՞մ... որ ի՞նչ. չինի–քանդի, չինի–քանդի... որ ի՞նչ...

Իսկ դո՛ւ, սիրելի՛ս, ոտքեր չունեիր, որ մեզ հետ գաղթեիր, տանեինք քեզ էլ Արազի մյուս՝ մեր ափը: Դու մնացիր, որ դառնաս աշխարհագրական, քարտեզային հասկացություն, «կենդանի մեռած», փաստ, քո քաղաքացիներին հիշեցնելու համար, որ կար, եղել էր Մասիսի երկար շվաքի տակ Սուրբ Մարի (Սուրմարի, Սուրմալի) կոչվող շեն ու լի, «դպրոցներով հարուստ» գավառի նախկին կենտրոնը՝ Իգդիր կոչեցյալ...

Ասե հրեայն. «Գոյ ի մեր գիրս, որ գուշակեն մեզ զկրկին նորոգումն...»

(Մեր հրեայի խոսք՝ ասված 1000 տարի առաջ գրված ձեռագրում. մատ. №2670, էջ 95):



Իգդիր:

Ինչի՞ց է գոյացել անունդ. այդ հինգ տառերը ի՞նչ են նշանակում, ի՞նչ ունեն իրենց տակ, որ ոչ ոք չի կամեցել, ոչ ոքի չի հետաքրքրել վերծանելու դրանց տակ եղածի իմաստը...

Չէ՞ որ դու էլ ես ունեցել «ուսյալ զավակներ» և շատ ավելի, քան պետք էր քեզ, խղճուկ քաղաքիդ, որի նմանները անհաշիվ էին ռուսաց թագավորի անծայրածիր հողում: Իսկ հայերս էլ, ինչքան մեզ հայտնի է, անբացատրելի բառեր չենք սիրում... Բառ է, կամ անուն է, մի օր հնարել–ստեղծել են, ուրեմն պարտավոր է բացատրություն ունենալ, ինչպես, ասենք՝ Աղավնաձոր, Բջնի կամ Նախիջևան, Ստեփանավան... Իսկ քո հինգ տառերը ուրարտերեն էլ չեն, կարծեմ... Գիտունների ստեղծած բառարաններում, հանրագիտարաններում էլ չկան: Չկան, սիրելի՛դ իմ Իգդիր, չկան:

Բայց և զարմանալու էլ բան չկա: Սովորական տեղանուն հարյուրավորների նման և ընդամենը այն տարբերությամբ, որ այդ տեղանունը անցած վեց–յոթ տասնամյակում վեց–յոթ անգամ չի գործածվել... Հեռու էլ չես ախր, սիրելի՛ս, ավելի մոտ ես, քան նույն Աղավնաձորը կամ Նախիջևանը. ընդամենը մի ժամվա հեռավորություն Երևանից, եթե «Ժիգուլի» կոչվող մեքենան նստես, ասենք, Արարատ գործարանի մոտ և մեքենայի ղեկը ուղղես դեպի Մարգարայի կամուրջը, որով մի օր անցանք, քեզ թողեցինք Արազի այն ափին՝ գլխահակ, չվարած...

Կամրջից կմնա մի 12–15 կմ դեպի քեզ, բայց... լինելու բան չէ. փչալարեր են երեք շարք, սահման է, և Արազն էլ բաժանում է մեզ՝ այս կողմում ապրողներիս, քեզնից և քո հիմիկվա ապրողներից: Բայց եթե այդ կիլոմետրերն էլ չլինեին, քեզ այցի գալը «Ժիգուլիով» լինելու բան չէ. քո մոտիկությունից կարող են օգտվել... արագիլները միայն, իսկ ես, սիրելի՛ս, արագիլ չեմ, շունը քեզ օրինակ, խոտի մոտ կապած շունը... Քո մոտիկությունն էլ չօգնեց, որ հիշվեիր, գոնե անունդ տվող լիներ: Մոռացել են, օ՛խ, այնպե՛ս են մոռացել, կարծես թե չես եղել... և ո՛վ պիտի հիշեր:

Քո հողածածկ տանիքների տակ ծնվածներից, եթե մի քիչ էլ անցնի, մատների վրա կարելի է հաշվել, իսկ Երևանի թիթեղածածկ տներում ծնվածների համար դու ընդամենը աշխարհագրական տեղանուն ես քարտեզի վրա, Արազի էն ափին, մի քորոցի գլխի չափ...

Բայց ախր եղել ես, չէ՞, և կաս, և ինչպես հիմա հուշում ես ականջիս, որ եղել ես, կաս և կարևոր չէ, թե ով է շնթռած հիմա քո հողին. կարևորը չմոռանալն է, որ անհերքելի եղելություն ես եղել, Արարատյան դաշտ կոչվող, Արազի հովտի շեն ու լի գավառի, Սուրմալուի կենտրոնը լինելու պատիվ ես ունեցել, և այն ժամանակ է եղել, որ քո անունի հինգ տառերը ծամոնից ավելի գործածական են եղել...

Մոռացել են, օ՜խ, ո՜նց են մոռացել քեզ, սիրելի՛դ իմ Իգդիր... Կարծես չես էլ եղել, Ակոռի գյուղիդ պես Մասիսի վիհերում կուլ ես գնացել, չքվել...

— Ճիշտ կլիներ, եթե ես էլ չքվեի, քան այդպես մոռանային...

Մոռանալը ուրիշ բան է, քան այդպես մոռանային...

Մոռանալը ուրիշ բան է, իսկ մոռանայինքը՝ ուրիշ: Մենք, այսինքն՝ քո հողի վրա ծնվածներս, քեզ իրավունք չունենինք մոռանալու, և եթե իմ Զանգի շնիկը լիներ քեզ պատասխանող, կասեր, որ մարդը իրենից տարբերվում է նրանով, ընդամենը նրանով, որ հիշողություն ունի...

— Իգդիրի բոլոր զանգիները, լեզուները հանած, ծարավ, քաղցած, անտեր, մինչև Մարգարայի կամուրջը եկան ձեր հետևից և էլ հետ չեկան...

— Շունը կատու չէ, սիրելի՛ս, որ ամեն անլվայի ձեռից հաց վերցնի, ինչ պատահեց՝ մեզ պատահեց, դու եղել ես, կլինես՝ քորոցի գլխի թե սիսեռաչափ... Բայց «Էն Իգդիրը» չես լինի, Սուրմալու շեն գավառի կենտրոնը լինելու պատիվը չես ունենա և գավառական իշխանությունների «Երիվանսկայա գուբերնիայի» նահանգապետի աչքի փուշը չես լինի... Եվ, երևի, նրանք եթե լինեին հրաշքով՝ կուրախանային, կուրախանային հաստատ քո հիմիկվա վիճակի վրա, քանի որ քո հողին ապրողները, քեզ «կենտրոն» դարձնողները հեչ նրանց սրտովը չէին. բայց նրանց սրտովը կլիներ, թե չէր լինի, քո հողին ապրողների պետքը չէր: Զօգնեց անգամ նրանց բոլոր միջոցները՝ քո քաղաքացիներին «խելքի բերելու» համար թուրք ու քուրդ պրիստավներ, յասավուլներ նշանակելը...

Նրանցից ազատվելու ճար էլ էին գտել, իրենց «միջոցներով»... Չնայած որ չէին դադարում զարմանալուց, թե ինչ իմաստ ուներ քրիստոնյա տերության համար իրենց տեղահան անել–բերել և «կառավարել»... Թուրք ու քուրդ պրիստավների, յասավուլների միջոցով՝ պարսիկ կզլբաշների փոխարեն: Մեկ չէ՞ր, թե նրանց ով կհարստահարեր, հացը հարամ կաներ... Հեչ սազական չէր քրիստոնյա մեծ տերության համար իր բռնած գործը: Քո քաղաքացիներից ամենախելոքներն անգամ գլուխ չէին հանում այդ տերության տմարդի վերաբերմունքից և գլուխները օրորելով, դառը ծխի մի ամպ թողնելով՝ ծպծպացնում էին բեղի տակ, թքում մի կողմի վրա և տխուր, հերսոտ ասում.

— Որ ի՞նչ, որ ի՞նչ... ընչի՞ պերեց, ընչի՞ եկանք... Հայ քո քրիստոնյա ասողի տիրու մերը...

Եվ շարվում էր մի պատկառելի հիշոց նահանգապետի էլ, իրենց թագավորի էլ հասցեին...

Այդպես «որ ինչ»–ով էլ սկսվեց նրանց ապրուստը՝ զարմացած ու բարկացած:

Ընտրած տեղերն էլ մի բան չէր... Շոռամներ, փուշ ու տատասկ, ճահճուտներ, խարաբաներ՝ եղինջով պատած... Եվ էլ ո՞նց չթքեին, երբ ի՜նչ էին թողել եկել... Դու էլ կհիշես, ախար հեչ բանի նման չէիր, խմելու ջուր էլ չունեիր, տնաշե՛ն, խմածները Արազի ջուրն էր, որ տարվա եղանակների հետ տարբեր թանձրություն ուներ ու գույն...

Լուռ ես, երևի առարկելու բան չունես, այդպես էր, և թե ինչո՞ւ մնացին քո հողին ու հեռուները չգնացին մյուս գաղթականների հետ, ասենք՝ Բյուրական, Գառնի, Կոտայք... Ոչ ոք հիմա չի կարող պատասխանել այդ հարցին: Պատասխանողը առաջին եկածները՝ Կանան, Իսաբեկը, Ենոքի պապը, Նարնջոց Ենոքը պիտի լինեին, բայց նրանց գերեզմանների խոտը քանի՜–քանի անգամ է չորացել, կանաչել... Հաշիվ չկա:

Անունդ էլ չփոխեցին: Զնայած կարող էին, իրավունք ունեին, ընդունված սովորություն է հնին մի բան կպցնելը: Քո անունին էլ կավելացնեին «նոր» մակդիրը և կդառնայիր «Նոր Սալմաստ», «Նոր Մակու», «Նոր Խոյ»... Հավանել էին երևի, կարճ էր և հատու, ազդեցիկ... Իգդիր:

Ժամանակ էլ չունեին երկար–բարակ մտածելու, գիտեին, որ հին ես, իսկ հինը նորացնել չի կարելի, կարկատանի նման բան կլինի... Իսկ այդ եկած ժողովուրդը կարկատած շորեր չէր սիրում հագնել: Քո նոր քաղաքացիների մեջ «ուսյալ զավակներ» էլ կային, որոնք՝ Մելիք Վրթանեսը, Գարեգին աղան, Կանայենց Մարտիրոսը, «զավոդչիկ» Վլասը, Օգաբաչենց Երվանդը և էլի ուրիշներ, գիտեին քո պատմությունը, հին լինելը:

Գիտեին, որ ժամանակին շեն գյուղ ես եղել Արարատյան Ճակատք գավառում, ամրոց–բերդ ես ունեցել, ինչպես վկայում է մի իսպանացի ճանապարհորդ, դեռ 1403 թվին անցնելով Սուրմարի կոչվող տեղանքով, գիշերել է այդ ամրոցի հյուրընկալ տիրուհու՝ այրի իշխանուհու դղյակում, որը և հարկ է տվել Լենկ–Թեմուրին:

Բայց մենք մեզ թույլ ենք տալիս կարծելու, որ քո անունը շատ ավելի հին պատմություն է ունեցել, քան դու, սիրելի՛ս, կարող ես հիշել, կամ իսպանացի ճանապարհորդը, առավել քան քո նոր բնակիչները, ինչքան էլ որ ուսյալ լինեին:

Քո նոր բնակիչները, քեզ քաղաք դարձնողները քո անունի տակ հասցրեցին շատ պարզորոշ և նոր իմաստ, և մանավանդ «բովանդակություն» դնել, գավառի և գավառապետի ուշադրության կենտրոն դարձնել, մի մեծ հարցական և գլխացավանք այդ իշխանությունների համար և... չա՜տ էին պետք այդ ժողովրդին, քանի որ անհրավեր եկել ու շնթռել էին այդ հողերին, տիրացել այլազգի խաժամուժ և քարաքոսի պես կպել կողքիդ:

Այդ եկած ժողովուրդը հին Հայաստանի Հեր և Զահրեվանդ գավառների բնիկ հողագործ, այգեգործ ժողովուրդն էր, որ Մխիթար Հերացի էր ծնել, Ռաֆֆի, Զարենց և էլի ուրիշ երևելի մարդիկ... Եվ թողել եկել էին Խոյի, Սալմաստի, Մակվի դրախտա-

յին պարտեզները, այգիները, և ինչի՞դ վրա հիացան, ինչո՞վ գերեցիր նրանց չեն ու լիություն տեսած խոշոր, թախծոտ աչքերը, որ երկու ոտքերով չռվեցին քո անջրդի շոռամներով ծածկված հողերում ու մնացին...

...Ու մնացին: Գուցե հավատալո՞վ «Կլավ» Սարգսի պապին, որ ասել էր.

— Էս ղռերի մեջը մովուզի վազի քոքը ոտիս խաստությանը կտառնա, թե ճուր ճարվի:

Իսկ Կլավ Սարգսի պապի ոտքերը, ինչպես և իրենը՝ Սարգսինը, պատկառելի հաստություն ունեին և Իգդիրում կոշկակարների մոտ «կոլոդկա» չէր ճարվում «չաքմա» կարելու համար: Իսկ ջո՞ւրը... Դե Արազը կողքներիս էր, քո նախկին բնակիչների նման «անբաշար», անշնորհք չէին, բերեցին ջրանցքաչափ առու բացեցին՝ բերեցին:

Այդ գաղթած ժողովուրդը Մխիթար Հերացուց էլ առաջ և հետո, տոհմիկ հողագործ, հողին կպած մարդիկ էին և հմուտ արհեստավորներ, քարտաշներ, բրուտներ, դարբիններ, ոսկերիչներ, դերձակներ, օր ու ժամանակի արժեքը հասկացող, և եկած օրվանից Իգդիրիդ տերը համարեցին իրենց: Հեչ գաղթականի նման չէին պահում իրենց... և այնպես կպան հողիդ, կարծես այդտեղ էլ ծնվել էին:

Եվ շենացրին, ծաղկեցրին Արարատյան դաշտի անտեր, անմշակ մնացած հողերը ու նորից հեքիաթային այգիներով, պարտեզներով: Եռացին սև, թանձր գինիները նոր թրծած կարասներում, թուջերում կողակ ու Վանա տառեխ աղ դրին, թոնիրներ կապեցին, կրկին ծուխ բարձրացավ հացատներից: Եվ որպես բարեպաշտ լուսավորչական՝ չմոռացան նաև եկեղեցի շինել շտապ՝ հում, չթրծած աղյուսից, և երեկոյան զանգերի զողանջի հետ սեղան նստեցին, հաց կերան, ոմանք Բյուրականի, Կրխբուլաղի, Գառնու սառը անմահական աղբյուրների ջուրը խմեցին հացի վրա, որ զով կժերով ու կուլաներով հարսներն ու նախշուն աղջիկները բերում էին «քառասուն» աղբյուրներից: Իսկ քո հողին մնացածները, սիրելի՛դ իմ Իգդիր, խմում էին Արազի ջուրը, առվից, որ տարվա եղանակների հետ տարբեր պղտորություն էր ունենում և պարզվում էր միայն քարի գուռ ավազաններում, երբ դեռ մութը–լուսին հավաքում էին օրվա համար: Բայց մնացին, դիմացան ծարավին էլ, շոգին էլ, տենդ ու ջերմին էլ:

Շատ իրենց ասածին էին քո հողի վրա հաստատվածները, որոշել էին մնալ և վերջ:

Իգդիր... Հե՛յ Իգդիր, ե՞ս պիտի քո մասին գրեի, երբ այնքան «ուսյալ զավակներ» ունեիր... Ինչպես պարծենալով ավետում էր Իգդիրմավայի ծխական քահանա տեր Մեսրոպը, որ «Իգդիրը պետք է պարծենա իր ուսյալ զավակներով...», այսինքն՝ ո՛չ ուստաբաշի դերձակ Ավետիսով, որի կարած չուխան, չերքեզկան ունենալու համար Թիֆլիսից, Գյանջայից էին գալիս պատվեր տալու... Ո՛չ, Իգդիրի «զավոդչիկ» Վլասով, որի գործարանի լիմոնադը Երևանի գավառապետը հաճախ բերել էր տալիս Իգդիրից և ամեն բաժակի վրա տնքալով, գխտալով՝ հյուրերին բացատրում էր Վլասի ով լինելը: Եվ շատ ուրիշ երևելի անունները...

Եվ պիտի պարծենար իր «ուսյալ զավակներով»... Եվ ինչո՞ւ այդ գովական «ուսյալ զավակները» այդպես շուտ մոռացան, մտահան արին քեզ, լեզուները կուլ տվին, երբ ժամանակ կար, որ ծամոնի պես բոլորի բերանից չէիր իջնում... Եթե ուրիշ-ները մոռացան և իրենց պետքն էլ չէր՝ եղել էիր, կաս, չկաս... Բայց քո «ուսյալները», տեր Մեսրոպի գովական ուսյալները, ինչու, ախր ինչո՞ւ քեզ խառնեցին իրենց թողած շիրիմների հետ... Ուրիշ գաղթողներ էլ կային, օրինակ վերցնեին, թե ինչպես են իրենց թողածի համար «կրակ թեժացնում», խոսք ու զրույց շատացնում, ավելացնում, որ բացի իրենցից ուրիշներն էլ հիշեն...

Ախր դու ինձ համար երազում տեսածի նման բան ես թվում, և ես քո մասին ավելի շատ լսել եմ, քան տեսել, բայց ինչո՞ւ չեմ մոռանում, ինչո՞ւ չես չքվում երազի նման և մխում ես մեջս թաց ցախի պես: Հին վերքի նման նստել ես հոգուս ծալքերում և մարմանդ կրակի նման այրում, մորմոքում ես: Ի՞նչ պատահեց, ինչո՞ւ քեզ այդպես անփառունակ հողը դրեցին ու պապանձվեցին...

Ինչո՞ւ դու էլ չծնեցիր մի պոետ, բանաստեղծ, թո՛ղ ծալը պակաս, որ նա էլ, թառած Երևանի պուրակների ծառերին, ճռվողեր քո հաստաբուն կաղամախիների, քո նարնջաբոսոր արևի, քո Մասիսի փեշերին կախված ծառաչափ մասրենիների, քո հրա-շալի այգեպանների մասին, որոնց կարասներում եռում էր սև մովուզի թանձր գինին... Քո ջանբեզար տղերքի մասին, որոնց ահ ու սարսափից թուրք ու քուրդ ծակերը քաշ-վեցին սողունների պես, և որոնց լոկ անունները լսելիս փշաքաղվում էին...

Քո մասին մի երգ մնաց ընդամենը, որ սազանդարները լացախառն երգում են ամեն անգամ, երբ մի հին իգդիրցի, սուրմալեցի հեռանում է էս աշխարհից՝ քեզ տես-նելու հույսը կտրած... «Աման, աման Սուրմալու...»:

Այդ երգը դու՝ սիրելիդ իմ Իգդիր, չես լսել, նա հետո երգվեց: Քո ո՞ր աշուղը դաղված, մխալով հնարեց: Եվ երբ հնարեց, արդեն «օձն էր նստել բախտիդ վրա»...

Քո հողի վրա մնացածները մեծ մասամբ Խոյի, Սալմաստի ժողովուրդն էր, խստաբարո, հպարտ մարդիկ էին, թանձր հոնքերի տակից զննող, խիստ հայացքով, սև, խոշոր աչք ու ունքով, թավ բեղերով, բարակիրան, թիկնեղ, որոնց հագածը տոն օրերին սև շալի երկար չուխաներն էին, երկար արծաթապատ պատյաններում խան-չալներ՝ արծաթ «քյամարներից» կախ: Նրանց խստաբարո նայվածքների մեջ անսահ-ման բարություն կար ու թաքնված ժպիտ, որ մի շատ հին թախծի հետ նրանց աչքե-րին տալիս էր մի առանձին գրավչություն, որին իրենք էլ տեղյակ չէին:

Նրանց բարկությունն ու ծիծաղը հեռու չէին իրարից, բայց նրանց բարկացնելը ավելի հեշտ էր, և այդ մասին գիտեին արդեն շրջակա լեռների, Մասիսի փեշերին փռված թուրք ու քուրդ գյուղերի, օբաների բնակիչները, որոնք նրանց գալուց հետո սկվել, քաշվել էին մի կողմի վրա: Եվ ինչո՞ւ բարկացնել, բորբոքել նրանց ցավը, խոր վիրավո-րանքը, թողած հազար տարվա շիրիմները, քրտինքով ջրած հողը, տունուտեղը...

Նրանք՝ այդ թուրք քուրդն ու թուրքը, այդքան հասկացել էին, գլխի էին ընկել, որ կամովի եկած այս մարդկանց հետ, դաղված մարդու հետ, զգույշ պիտի լինեին և զգույշ էին, վախվորած...

Զէ՞ որ տարերային ոչ մի աղետ՝ ոչ ջրհեղեղը, ոչ երկրաշարժը, ոչ մի գերբնական ուժ չի կարող տեղահան անել մարդուն իր շինած բնից:

Բայց երևի համբերությունն էլ մի օր ցամաքում է: Շինածդ տունն էլ, հողն էլ, տնկածդ ծառ ու ծաղիկն էլ մի օր դառնում են եղինջ ու տատասկ, խորթ, անիմաստ, նողկալի, երբ հացիդ ծուռ նայող կա, կերած–խմածիդ՝ լեղի խառնող:

Հին Երանի, Իրանի հողում ապրում էին ուրիշ, արդեն թլպատված երանցիներ, Մխիթար Հերացու ժամանակվա երանցին չէին... Խառնվել էին, մուռտառվել ասպատակող քոչվոր ցեղերի հետ, և այդ «նոր պարսիկները» հաջողեցրին զզվեցնել մի ժողովրդի, որ հազա՛ր–հազար տարի ապրել էր այդ հողին կպած:

Ես փշաքաղվում եմ, երբ մտովի ինձ դնում եմ հեռո՛ւ–հեռավոր մեծ պապիս տեղը...

Ի՞նչ ահավոր ուժ կարող էր լինել նրա՝ դերանդի ու մաճ բռնած աջ դաստակում, երբ նա լուռ, ատամները սեղմած, ծածկեց իր տան ու այգու դուռը՝ երբեք այլևս չբացելու վճիռով... Ես կբռնեի նրա սև, երկար չուխայի փեշից, կկախվեի երկու ձեռքով, կասեի.

— Մի՛ անի, պա՛պ:

Իսկ նա լուռ կդառնար ինձ, թավ, խոժոռ հոնքերը մի պահ կհարթվեին ճակատին, գուցե և ժպտար իմ միամիտ վարմունքի վրա և իր կոշտացած–քնքուշ մատներով կշոյեր գլուխս ու կասեր.

— Քե՛լ, քե՛լ էթանք, բալա՛ս...

* * *

Տեղահան եղավ հիսուն հազարից ավելի ընտանիք, և նրանց քարավանը թշնամի, անհյուրընկալ հողով ծանր ու դժվարին եղավ: Նրանց միակ պաշտպանը ու մխիթարողը, տիրություն անողը գնդապետ Եղիազար Հովակիմի Լազարյանն էր՝

Լազարևը, որի մեծ տոհմը (Գողթան գավառից) վաղուց հաստատվել էր Ռուսաստանում, դարձել անբավ հարստության տեր, արքունի շրջաններում մեծ ազդեցություն, պատիվ ու հարգանք վայելող: Եվ այդ տոհմից էր ինքը՝ «Ելիզար Ակիմովիչը», նշանավոր ռազմական գործիչ, որը և նշանակվել էր, իր վրա էր վերցրել պարսկահայերի վերաբնակեցման հանձնաժողովի պետի պարտականությունը, գաղթողներին իր ջոկատներով պաշտպանելու, դադարի, գիշերելու, կերակրելու հոգսը, որը... չէր նախատեսված թագավորական գանձարանի կողմից:

Եվ եթե մեծ երախտավոր իշխան Գրիբոյեդովը որպես կայսրության դեսպան իրականացնում էր իր աշխարհակալ թագավորի պարսիկներից գրված, իրենց ձեռքով էլ դատարկված, ամայացած հողերը քրիստոնյա ժողովրդով բնակեցնելու հրամանը, ապա Լազարևների նպատակը... ավելի «հեռուներն» էր հետապնդում: Նրանց նպատակը, երազածը, որ և հավանություն էր գտել ռուսական արքունիքում, ոչ ավել, ոչ պակաս՝ հայկական պետականություն ստեղծելու երազանքն էր, որը, սակայն, մնաց այդպես էլ մնաց երազանք: Այդպես էլ պիտի լիներ, «երազանքից» պետություն չի շինվի:

Բայց և ինչ տեղի ունեցավ 1928 թվին՝ Թուրքմենչայի նշանավոր պայմանագրից հետո, պատմական առումով ճակատագրական արժեք ու նշանակություն ունեցավ մեզ՝ հայերիս համար, եթե նկատի ունենանք Շահ Աբասի ամայեցրած հողերը, որոնք նորից կենդանացան, նորից իրենց տիրոջը, աշխատավորներին տեսան, իր հաց ստեղծողին սուրբ քրտինքով:

Պատմության անիվը հետադարձ աշխատեց, շուռ եկավ նաև քեզ համար,

սիրելի՛դ իմ Իգդիր, որ դու քեզ նորից զգաս քո հողի վրա՝ Պապ թագավորի ստեղծած «արքունի գանձարանի» ժամանակների նման:

Բայց երկար չտևեց: Պատմության համար քո վերակենդանությունը չնչին ժամանակ էր: Մի ակնթարթ՝ և նորից կանգ առավ այդ անիվը, այս անգամ՝ «անորոշ» ժամանակով... Շատ անորոշ:

Պատմության անիվի խաթարումներ լինում են, լինում են հազվագյուտ, աննախադեպ, «չնախատեսված», բոլոր օրենքներին հակառակ, բայց լինում են:

Եվ եթե կա աշխարհի քարտեզի վրա մի թզաչափ հողակտոր, որի պատմությունը կրել է «պատմականորեն չնախատեսված տարափոխություններ», ապա, սիրելի՛դ իմ Իգդիր, ոչ միայն քո մի թզաչափ հողն էր իր «չպատճառաբանված» տարա-

փոխությամբ, այլև մի ամբողջ ժողովրդի՝ Հայ անունը կրող, և հազիվ թե կարողանա այդ անունը կրողի ամենապերճախոս զավակը բացատրել, թե ինչու էր այդպես հաճախ արևի խավարում լինում մի երկրում, որտեղ արևը տարվա մեջ տասներկու ամիս չէր իջնում երկնակամարից...

* * *

Իգդիրի գաղթի հենց նույն տարում իգդիրցիք, որ համակ սպասողական վիճակում էին ապրում և համոզված էին, որ Երևանում իրենց ապրելը ժամանակավոր է, նորից բաղատեր դարձան շատերը, բայց ոչ հիմնավորապես, ժամանակավոր, առնելով միայն այգու «երեսը», այսինքն՝ տարվա բերքը:

Երևանի հարուստ թուրքերը հարկադրական «հաճությամբ» էին այդ գործարքին դիմում: Լինելով հաշվենկատ՝ չնչին գներով «զիջում էին» իրենց ունեցած մի քանի այգիներից մեկը՝ գիտակցելով, որ միևնույն է, իրենք չեն վայելելու բերքը, քանի որ Երևանի կեսից ավելին գաղթած, սովալուկ ժողովուրդ էր, և նրանց «անհրաժեշտ այցելություններն» այգիներ գազազած մորեխի պարսի ավերածություններով էր վերջանում... Մինչդեռ այսպիսի գործարքի դեպքում այգուն պահապան կար, և պահապանն էլ ինքը՝ գաղթած ժողովուրդն էր: Եվ այդպես հաշվենկատ թուրքերը պահպանեցին իրենց ունեցածը, իսկ իգդիրցիք, որոնք առանց այգու չէին կարող մի օր ապրել՝ դարձան... ժամանակավոր բաղատերեր:

Մեր այգին Դալմայի վերջին այգիներից էր՝ «էջմիածնի շոշի» փոշոտ ճանապարհի վրա: Եվ ի՜նչ այգի էր: Մի թիզ անմշակ հող չէիր գտնի այգում և ի՜նչ մշակվածություն ու մրգերի տեսակներ...

Այգու վերևի քարքարոտ մասում ընկուզենիներ էին, պատերի երկայնքով սերկևիլի, նուշի, պնդուկի, թզի ծառ ու թփեր: Ներքևում ծիրանանոցն էր՝ տարբեր տեսակի ծիրաններով, սկսած մեղրահամ աղջանաբադից, թաբարզայից՝ վերջացրած «չալախ», «բադամ ծիրանով» և պահածոյի սպիտակ ծիրանով, մուրաբայի խնձորի կարճլիկ ծառերով: Դեղձենիք ցրված էին խարջու թփերի արանքում:

Ծիրանանոցի տակ այգու քոլիկն էր՝ ցեխի աղյուսով շինված, շուրջը կախանի խաղողի թարմաներով, իսկ այգու գոգավորության մեջ քամիներից ապահով խարջի խաղողի թմբերն էին, որից, բացի դոշաբ և տան համար քիչ քանակությամբ գինի ունենալուց, մնացած բերքը ծախում էին Շուստովի կամ Սարաջևի կոնյակի գործա-

բաններին: Աշխարհում եղած խաղողների մեջ խարջուց ավելի քաղցր էլի ինքը խարջին է, որը և հարկ ու խարջ էին տալիս պարսիկ սարդարներին: Եվ Շուստովի խարջու կոնյակը ողջ Ռուսաստանի հողում իր մրցակիցը չուներ, անգամ ֆրանսիականին չէր զիջում:

Երևանցիք էլ պակաս այգեգործներ չէին: «Մեր այգուն» նայող բաղմանչին Խաչոն էր, որ հայտնի էր «Դնգլ Խաչո» անունով և կապը կտրածի մեկն էր: Նրանից պակաս կռվարար չէր Արամոն, Ավագովենց Արամոն, որոնց այգին էլ մի պատով էր բաժանվում մերից, և նրանցից մեկն էլ բավական էր, որ այգու պատերի տակով անցնողները արագացնեին իրենց քայլերը...

Երկուսն էլ մաուզեր ունեին կողքներից կախ, իսկ Արամոն նաև մոսին ուներ:

Խաչոյին հացը, ուտելիքը տանողը ես էի՝ էշով, այգու երեսի հետ մեզ անցած էշով, որը Համադանի երևելի էշն էր, փալանն էլ փոխել էինք թամբով: Մեծ եղբայրս՝ Հրոն՝ Հրայրն էր փոխել և այդ էշով ինքն էր մեծ մասամբ երթևեկողը՝ տնից այգի և տուն: Ես բավարարվում էի նաև երկրորդ՝ փոքր սև էշով, որին և հեշտ էր նստելը:

Եղբորս այգում մնալը բաղմանչության հետ կապ չուներ, այսպես ասած՝ «զինավարժությամբ» էր զբաղվում Խաչոյի ղեկավարությամբ, նշանառություն էր սովորում, որ պետք չեկավ, բացի մեր ու հարևան այգիների թռչուններին դադարգյուն անելուց:

Խաչոյի մի ոտքը մի քիչ կարճ էր մյուսից և դժվար էր իմանալ՝ որը որից: Այնպիսի մանրիկ, շորորացող քայլվածք ուներ, որ իր թերությունը դառնում էր «նազելի» սեթևեթանքի նման բան... Ահագին մաուզերը, որ նրա կարճլիկ բոյի պատճառով ավելի մեծ էր երևում, ռիթմով գնում էր գալիս, և ես մի առանձին նախանձով էի նայում նրա այդ թերությանը և դեռ կապկում նրա քայլվածքը: Այդ բանը իրեն ակնհայտ դուր էր գալիս երևի, քանի որ ինձ նայելիս ինչ–որ ժպտանման բան էր երևում նրա հաստ ու կարճ սև բեղի տակ, իսկ Խաչոն ժպտալու սովորություն չէր ունեցել կամ մի օր մոռացել էր:

Ես, աջ ուսս կապած, նստել էի քոլիկի ստվերում և ազատ ձեռքով կամացուկ շփում էի ուսագլուխս և զրուցում Զանգի շնիկիս հետ, որ մենակ էր մնացել իր եղբայրիկ Զրանգիի «անհետանալուց» հետո, որին գելը տարավ, թե Խաչոն էր «կորց-

ըել»՝ գտնելով, որ երկու շունը շռայլություն է մի այգու համար, մանավանդ իր առկայությամբ: Շատ լաց եղա, բայց Խաչոյից ի՞նչ կարելի է իմանալ. ուսերը վեր գցելով՝ ասում էր. «Եսիմ ի՞նչ եղավ...»:

Նստել է Զանգիս իմ առաջ, փռչոտ, կոր մանգաղի նման պոչը տակը դրած, որ իմ ամեն խոսքին տակից հանում է ու հովհարի նման տանում–բերում խոտերին քստքստացնելով, և մի լայն, անուշիկ ժպիտ մռութին՝ ամեն ասածիս վրա գլուխը մեկ ձախ, մեկ աջ է թեքում, փափուկ ականջները վրաս ուղղելով, որ խոսքերս լավ լսի... և զրուցում ենք:

Շան հետ էլ կարելի է խոսել և առհասարակ՝ բոլոր շնչավորների հետ էլ, եթե լեզու գտնես: Ես մեր ժամանակավոր էշի հետ էլ էի խոսում: Ինչքան էլ որ էշ լիներ, էլի մի բանով մասնակից էր լինում ասածիս, գոնե գլուխը տանում–բերում էր, որ մեկ այո էր նշանակում, մեկ՝ ոչ: Ես նրան բարդ հարցեր չէի տալիս, և պատասխանները համընկնում էին նրա աչքերին, քթածակերին նստած ճանճերի քշելու շարժումների հետ: Ասում էի՝ թամբդ իջեցնեմ, ասում էր՝ այո կամ ոչ... Կամ՝ ծարավ ե՞ս... էլի նույ-նը: Դե, էշից ի՛նչ զրուցակից...

Զանգիս ուրիշ բան էր, խելքի ծով: Ասում եմ. «Ա՛յ Զանգի, բա չե՞ս կարոտել Զրանգիին»... Եվ կամացուկ նվում էր այգու թզենիների կողմը նայելով, որտեղ էր իրենց բույնը: Կամ հարցնում եմ. «Զանգի՛ ջան, էսօրվա ճաշից գո՞հ ես»: Եվ ժպտում էր՝ բերանը մինչև ականջները ձգելով, և երկու–երեք անգամ բարձր կլանչում, մի անգամ էլ՝ դնչիկը խոտերին քսելով... Այսինքն՝ շնորհակալ է խորապես: Ասում եմ. «Ա՛յ Զանգի, բա մորդ չե՞ս հիշում, էն մեծ ու փռչոտ, կարմիր չալ մորդ»... Ապուշի պես երեսիս է նայում, ականջները սրում, կախում է և... ոչինչ: Շատ ժամանակ է անցել, հիմա շուն է ինքը արդեն և ուրիշ շուն տեսնելիս չի էլ ամաչում «տնտղել» ինչ լինելը... Մորը չի հիշում: Բոլոր զգայարանները՝ լրիվ հինդ, ինչպես ես կամ Խաչոն, ունի, հիշողություն չունի: Եվ երևի մեր տարբերությունը ընդամենը այդ հիշողություն կոչված բարեմասնությունն է, որ ավելի լավ էր չլիներ: Ա՛խ, չլիներ այդ նողկալի բարեմասնությունը:

Մեր զրույցը խանգարում է Խաչոն, որի մոտենալուց Զանգիս միշտ մի կողմ էր քաշվում պատկառանքով:

— Հը՞, էսօր չե՞ս ուզելի կրակես,— հարցնում է Խաչոն: Ես ուսս եմ շփում, որ դեռ կարգին ցավում է և կապտած է:

— Կոնդաղը պտի պինդ հուպ տաս թևիդ ու ուսիդ արանքը, որ կոթը չխաղա մեջը...

Եվ ինչո՞ւ չի հիշում, որ նույն «ցուցումները» երեկ չի տվել՝ կոնդաղը ինչ-պես պահելու մասին... Չէ՞ որ գիտեր, որ առաջին անգամն եմ մոսին կրակում... Ես մոսինի բլթակը մատով քաշելն իմացա... Գետնից ինքը բարձրացրեց, մի քիչ շփեց

ուսս իր կարճ հաստ մատներով, որոնցից մի երկուսը–երեքը չկային, և ասաց ամենայն անտարբերությամբ. «Պան չկա, կլավանա»...

Մի կարմրած դդում դրել էր տասնհինգ–քսան քայլի վրա, մի փետուր տնկել վրան. բացատրեց, որ փաշայի չալմա է և նշան պիտի բռնեմ ուղիղ մեջտեղը, այսինքն՝ ճակատին...

Պառկել էի փորիս վրա, լոբու մարգի թմբին հենված, և աչքս կկոցելով դդումի մեջտեղին էի հարմարեցնում մոսինի ծայրը. մոսինը ծանր էր և ձախ ձեռքս դողում էր, հրացանի ծայրն էլ վեր ու վար էր անում փահլևան Վաչագանի պես:

— Մէ բոպե նաֆասդ պախի ու «ծիծը» քյաշի... դե՛:— Եվ այդ «ծիծը»՝ բլթակը քաշելն իմացա... Զանգին լեղապատառ մի կողմ փախավ, իսկ ես փռվեցի կիսամեռ և կարծես հեռվից լսեցի Խաչոյի ձայնը.

— Ա՛յ ապրես, ա՛յ կոչաղ...— Պարզվեց, որ դդումն էլ ծակ էր մեջտեղից: Խաչոն, վիճակս տեսնելով, ասաց.

— Լավ, էսօր թող մնա, էքուց էս վախտը կկրակենք:— Եվ պատն անցավ դեպի Արամոյենց այգին, երևի «դուփա, փաստոն» խաղալու:

Իսկ Զանգիս, որ հեռվից մեզ էր նայում, երբ Խաչոն հեռացավ, մի երկու անգամ ականջները խլշտացրեց նրա կողմը և հետ–հետ նայելով եկավ պպզեց առաջս՝ փռչոտ պոչը տակը ծալելով, որ զրույցը շարունակվի: Ու ինձ է նայում մի քիչ կարեկցանքով, մի քիչ էլ ժպտալով, և եթե լեզու ունենար, պիտի լսեի երևի նույն խոսքերը, ինչ Խաչոն ասաց.

— Լավ, լավ, պան չկա, մե քիչ ցավացրի. էքուց ելը՝ կկրակես...

Տո, էլի էն կողմ ես նայում, շա՞տ ես վախենում Խաչոյից... Գլուխը կախում է, մզզում... Ճիշտն էլ դու ես անում, նրանից ո՞վ չի վախենում, ինքդ ասա. մեր խազեինը՝ բաղի իսկական տերը՝ Հաջին, որ պատահում է՝ գալիս է, այո, այո, օ՛խ, ոնց էլ գլխի ես ընկնում, է. դե՛ հիշիր՝ ոնց է ցից տնկվում Խաչոյի առաջ, ոնց է հինա դրած ցանցառ մորուքը տնկտնկում՝ ոնց որ դողէրոցքի մեջ. օ՛խ սատանա, ժպտո՞ւմ ես, բա՛, իսկ դու ի՞նչ ես, մի խեղճ Զանգի, որ կարող է քեզ էլ Զրանգիի մոտ... Հա՛, մզզում ես, բա՛... Տեսնո՞ւմ ես՝ ինչ է կողքին կախած՝ մա–ու–զեր: Հասկանո՞ւմ ես՝ ինչ է նշանակում՝ մաուզեր,– հա՛, գիտես, գիտես, ձայնը լսել ես, ի՛նչ ձայն է, չէ՞... Մի թեթև քաշելուց բլթակը՝ տա՛, տա՛, տա՛, տա՛... և տասն անգամ, և ինչո՞ւ ես ուրախ կլանչում, չեմ հասկանում. այ այդպես մզզա, բայց դրա սփաթն է այդպես՝ ոնց որ քացախ խմած, դու նրա աչքին շատ մի երևա, հրեն այդու պատերի տակ, դռան մոտերը մնա. և հաչա, ջանս, շատ հաչա, թեկուզ անտեղի, հենց այնպես–գնացող եկողի հետևից, դե՛, շուն ես, չէ՞: Ա՛յ հասկացար, հիմա չէ, հետո: Դրա սփաթն է այդպես: Հիշո՞ւմ ես երեկ, որ կրակել էր սովորեցնում... ըհը՛, ըհը, որ ընկա, իսկ դո՛ւ, քնաճռո՛տ, վախից փախել թզի ծառի տակ էիր մտել, փոխանակ կող-

քիս լինեիր... Ինքը՝ Խաչոն, բարձրացրեց և վախ–վախ էր անում.— Վախ քոռանամ ես, քյորփան վախեցավ... Եվ ես, ախար, զգացի, չէ՞, որ ճակատս համբուրեց, այսինքն՝ իր կոշտ բեղերի ծակոցները զգացի ճակատիս, բա՛: Իսկ որ աչքերս բացեցի, էլի էն քացախ խմածն էր... Ախր խեղճը տուն ու տեղ չունի, ոչինչ չունի, մի եղբայր է ունեցել, էն էլ Արհաջի տակ սպանվել է... Մե՛ղք է, մե՛ղք: Դաղված է, դաղվա՛ծ էդ թուրքերից... Ա՛յ, մզզում ես, մեղք է. ունեցածը էդ մաուզերն է ու մի պառավ մայր, այդպես. մզզա՛, դու մայր էլ չունես, մզզա՛:

Բայց լսի՛ր, Զանգի՛: Մո՛տ արի, ինքը չլսի հանկարծ... Ախար ինքն էլ մարդ է, չէ՞, ինքն էլ վախ ունի, մի օր տեսա, ափսո՛ս... և եթե ճիշտը խոսենք, հիմա բոլորն են իրարից վախենում, ժամանակն է այդպես, շունը տիրոջը չի ճանաչում, չէ, չէ, քեզ չի վերաբերում, իսկական շներին չի վերաբերում... Հա՛, ի՞նչ էի ասում, Խաչոյի մասին էր, ախար Խաչոն չպիտի վախենա, իգդիրցի է, բայց... Այո՛, այո՛, վախկո՛տ սիրելիս, իգդիրցի է, չէ՞, չգիտե՞ս՝ ինչ է նշանակում իգդիրցի... Քո խելքի բանը չի... Եվ ոչ ոքի խելքի բանը չի... Դու քնած էիր, դու էլ կասես՝ շուն ես, այգու պահապան, իսկ ես այդ օրը պիտի հիշեմ, որ մնացի, տուն չգնացի, որ մերս կապտած ուսիս վիճակը չտեսներ, թե չէ մի բան էլ ինքը կավելացներ... Եվ քնեցի չարդախի վրա, որ մի կուշտ նայեմ երկնքին, աստղերին ու ճռիկների գիշերային համերգ լսեմ, և իմացիր, սիրե-լի՛ս, ով որ չարդախի կամ կտրի վրա չի քնել, ի՞նչ իմանա գիշերն ինչ է, երկնքում ինչ կա: Բայց չարդախը ուրիշ է... Բարձր, ոնց որ ճոճի մեջ լինես, շարժվում է, օրո-րում՝ քո շուռումուռ գալու հետ, իսկ չոր ծաղկաբույր տակիդ խոտը, կարպետը վրան փռած, փափուկ է, ոնց որ մորս չրփած բրդի դոշակները... Իսկ ճռիկների երգը, որ համատարած զնգոցի էր փոխվում, այնքա՛ն քաղցր է... Այո՛, ճռիկներին դու էլ ես լսում, և ականջներդ իզուր ես խլշտացնում, հիմա ցերեկ է, չեն երգում... Եվ աստղերն են աչքով անում, ծկլթում, նրանք էլ են կարծես զնգում, բայց նրանց զնգոցի ձայնը ուրիշ է... Քեզ թվում է, բայց ձայն չկա...

Զգիտեմ ինչու այդ առավոտ շուտ զարթնեցի: Խաչոն էլ էր քնած քոլիկում: Իջա չարդախից թեթև պետքիս համար, չնայած չարդախից՝ վերևից էլ կարելի էր, բայց էլի չգիտեմ ինչու իջա և քնաթա-թախ գնացի դեպի խարջու թմբերի միջի դեղձի ծառը և քար կտրեցի, շվարած կանգնեցի, ոնց որ դու հիմի:

Թմբերի փոսերից մի քանիսը ծածկված էին կարպետներով, ջլերով: Մի

պահ ինձ թվաց, որ մարդիկ են կարպետների տակ քնած, բայց գլուխ–ոտ չէր երևում: Կռացա, մի կարպետի ծայրը բարձրացրի և ի՛նչ տեսնեմ, լեզուդ ի՛նչ պտտի՝ է՛լ ինքնաեռ, մեծ ու փոքր պղինձներ, կճուճներ դատարկ, լիքը, բերանները շորով, կաշվով կապած, տեղաշորեր, սնդուկներ, պարկերով ցորեն, գարի, երևի... Վախից ու զարմանքից էն էր՝ ձայնս պիտի գլուխս գցեի, տեսա Խաչոյին՝ մատը շուրթերին դրած. «Սո՛ւս»,— ասաց ֆշշացնելով, ինչ–որ վատ ձևով... Ես կանգնել էի պապանձված, մի ձեռքս դեպի այգու փոսերի կողմը տնկած, փայտացել էր կարծես, չէր իջնում:

— Սո՛ւս,— կրկնեց Խաչոն նորից ու գլխով կանչեց ինձ:

— Ցարի, յարի, բալա՛ ջան, քո կործը չի, հարևանի այնոյին ի, մկը կիկյան կտանեն...— և էլի ինչ–որ անկապ բաներ էր ասում մեղավոր ժպիտը երեսին, սփրթնած, գույն գցած... Եվ իսկապես, հենց այդ ժամանակ էլ սայլերի ճռնչոցներ լսվեցին և լռեցին մեր այգու դռան պատի մոտ: Այգու դուռը չգիտես ինչու բաց էր մնացել՝ կամաց ճռռոցով բացվեց և ներս մտան իրար հետևից ինչ–որ զինված մարդիկ, որոնց հագի շորերը չէին երևում՝ այնքան զենք ու պատրոնդաշներ կային կախած վրանները... Խաչոյի ասած «հարևաններն էին» երևի, եկել էին իրենց այնոյինները տանելու...

Առջևից գալիս էր մի բարձրահասակ, տարիքով մարդ՝ փառավոր շեկ բեղերով, սպիտակ մորթե փափախը մի քիչ հետ, թեք դրած, սպիտակ բաց ճակատին ոսկեշեկ մազափունջը կախ... Մոտենում էր ժպտալով և զարմանալի բարի, շատ անուշ կապույտ աչքեր ուներ: Այդ տարիքով մարդը միայն մեզ բարևեց, մնացածները՝ մազակոխ, չածիլված, խոժոռ աչքերով, փափախները հոնքերին քաշած, լուռ շարվե-

ցին տարեց մարդու թիկունքում, ձեռքները՝ մաուզերներին դրած... Ուրեմն դու էլ տեսար նրանց, որ գլխով ես անում...

— Բարի՛ լույս, Խեչո՛ ախպեր,— դիմեց Խաչոյին այն տարեց մարդը, որ երևի այդ մթնածների գլխավորն էր:

— Զարթուն իս, քունդ հարամ երի՞նք... Եդպես էլ կեղնի, ներող կեղնիս, եդպես էլ կեղնի...

Հետո, ինձ գլխով ցույց տալով՝ շարունակեց ավելի քնքուշ ձայնով և ժպիտով.

— Էդ ձագուկ քոննի՞, նախշուն ձագուկ է, Աստված պահապան...

Եվ դա վերաբերում էր երևի իմ ավելորդ ներկայությանը, որը հեչ տեղին չէր:

Հետո ձեռքով շարժում արեց, և խոժոռ մարդիկ սկսեցին անշտապ կրել փոսե-րի մեջ եղած իրերը, բարձեցին սայլերին:

Հետո կարծես ինձ դիմելով, ավելի շուտ՝ ինքն իրեն հետ խոսելով.

— Էդպես է, յավրո՛ւմ, ջխանգարե...— և «չ» տառը ասում էր «ջ»-ի նման, փափուկ՝ «ջխանգարե...»:

— Էնոնք մերը, մենք իրենցը, ջխանգարե...

Եվ ամեն խոսքը կարծես զոռով, հարկադրված, չուզելով, մի բան ասած լինե-լու համար, մինչև սայլերը բառնան:

— Մեր թողաձն ինչ, էս ջուլ ու փալասն ինչ. հմը պետք է, էդ մարդոց քյուլփաթ էս էլ չունին, մնաց էրգիր, շներու փայ... էդպես է, ջխանգարե, իրանք ին իրանց, անոթի չփլախ խալխ... Դուն էլ, Խեչո՛ ախպեր, վերցու, ջգի, քեզի էլ ջխանգարե, մի՛ քաշվե...

Խաչոյի միայն կոկորդի խնձորակն էր վեր ու վար անում: Թուքն էր կուլ տալիս մի կերպ, իսկ ձայն չկար, և ընդամենը գլուխը խոնարհեց, ձեռքը կրծքին տարավ, գլուխ տվեց, երևի հասկացնել ուզելով, որ շնորհակալ է մեծապես, կարիք չունի, երբ ինքն էր ու իր չոր գլուխը ու մի կարպետ, որի կեսը տակն էր մնում գիշերը, կեսը՝ վրան:

— Դու գիդիս, Խեչո՛ ախպեր, թող քու ուզածով եղնի, խոսք խորաթան էլ մեր մեջ, դուն գիդիս...

Սայլերը բարձած էին արդեն, այգու դռան մոտ կանգնած մռայլ մարդիկ իրենց գլխավորին էին սպասում, իսկ ինքը՝ այդ գլխավորը, ինչ-որ չէր շտապում... Հետո մոտենալով՝ ձեռքը Խաչոյին մեկնեց՝ հրաժեշտ տալու, որը Խաչոն երկու ձեռքով բռնել և խոնարհ թոթվում էր...

Հետո այդ գլխավորը ձեռքը ազատեց Խաչոյի ափերից, նույն ձեռքով կամացուկ, մատների ծայրերով դիպավ երեսիս և կապած ուսս նկատելով՝ հարց-

րեց, թե ինչու է կապած: Այստեղ Խաչոն հիշեց, որ լեզու ունի և իմ փոխարեն ասաց, որ կրակել է սովորում, մոսինն է ուսը ցավեցրել... Եվ գլխավորը, որ մի քիչ ուշ գլխի ընկավ, կռացավ, ուսս շոյեց կամացուկ և իր ոսկեզօծ բեղերով թեթև դիպավ երեսիս...

— Աբրի՛ս, ձագո՛ւկ, աբրի՛ս, սորվի՛ր, սորվի՛ր, ջխանգարե, ձագո՛ւկ, ա՛խ, ջխանգարե...

Եվ գնաց դեպի սայլերը, դեպի իրեն սպասող մթնած մարդիկ, իր պարթև հասակը մի քիչ կարծես կորացած, գլխահակ, դեպի իր լուռ մարդիկ, իր ձիու սանձը վերցրեց մեկի ձեռքից և սայլերի հետևից գնաց, գնացին էջմիածնի ուղղությամբ:

Ջխանգարե...

Տկլոր, սովալլուկ մարդկանց չէր խանգարի այդ չուլ ու փալասը: Բայց ինչո՞ւ էր այդպես գլխահակ գնում այդ հսկա, պատկառելի մարդը, ձի էլ չնստեց... Ի՞նչ հիշեց, ի՞նչ մտաբերեց, որ ուսիս դիպավ, շոյեց... Դեռ ինչ–որ արցունքանման բան էլ տեսա իր բաց կապույտ աչքերի մեջ, երբ շտկվեց հասակով մեկ...

Իմ ներկայությունը ավելորդ էր, ես էի երևի պատճառը այդ սարի պես մարդու հուզվելու, վշտանալու... Նա չէր սպասում և չէր ուզի, որ երեխա տեսներ իրենց գալ ու գնալը... Ինչքան էլ որ միամիտ էի, «ջխանգարե» խանգարեցի, խռովեցրի այդ մարդու հոգին, ով գիտի՝ ինչե՛ր հիշեցնելով, որ չէր ցանկանա երևի հիշել նորից...

Իսկ դո՛ւ, սիրելի՛ս, որ մի երկու անգամ երևացիր աչքիս, լավ էր, որ ձայն չհանեցիր... Որ ասում եմ՝ խելոք ես: Գիտես անգամ՝ երբ է հարկավոր լուռ մնալ, երբ նույնիսկ խելքը գլխին մարդիկ չգիտեն լռել, երբ խոսելն ավելորդ է... Տեսար՝ Խաչոն էլ էր պապանձվել, գույնը՝ պատի ծեփ... Ասեմ՝ վախից էր... չէ՛, Խաչոն վախ չունի, տեսել եմ մի անգամ, երկար պատմություն է, հետո թող մնա... Հիսունից ավելի զինվոր էին լցվել այդին՝ մենակ քշեց բոլորին, բա՛: Բայց ինչո՞ւ էր այդպես գունաթափվել, կարկամել, կծկվել, չէ՞ որ ինքն էր տեղը տվել, համաձայնվել... Օխ, էլի ես էի երևի պատճառը: Ես չպիտի տեսնեի նրա արածը, «գործարքը»... և քանի որ հետս չէր խոսում, վրաս չէր նայում, կրակելն էլ մոռացանք... Բերածս հացն էլ զոռով էր ուտում... Ախ, իմ խե՛ղճ Խաչո:

Զանգիս աչքի պոչով հնձանի կողմն է նայում և մզզում է, տխուր է, Խաչոյի կողմն է նայում, երևի կարեկցում է, մոռացել է, որ պիտի վախենա, մարդ լիներ՝ կհիշեր, երևի ուրախանար էլ, որ Խաչոն՝ իր ահն ու սարսափը, այդ վիճակում է:

Ավելորդ բան է երևի այդ հիշողություն կոչված կույր աղիքը, բայց... պետք է, օ՛խ, շատ է պետք...

Եվ մի օր, սիրելի՛դ իմ Իգդիր, սովորականի նման կզարթնես լուսումութին, առավոտ վաղ, ձեռքդ կդնես ճակատիդ և սովորականի նման կնայես դեպի Մարգարայի կամուրջը և կտեսնես դեպի քեզ եկող մի հսկայական փոշու ամպ

Երևան–Իգդիր խճուղու վրա, ինչպես շատ տարիներ առաջ գնացին քո քաղաքի և ողջ Սուրմալուի ժողովուրդը Իգդիր–Երևան ճանապարհով՝ փոշու երկա՛ր–երկար ամպ թողնելով իրենց հետևից...

* * *

Ուշ գիշերներին, երբ լռությունը դառնում է համատարած, երբ միայնակ անցորդի ոտնաձայները կարող են հատ–հատ հաշվել՝ մինչև հեռվում խավարի մեջ խլանալը, ես սպասում եմ «նրանց»: Այդ «նրանք»–ը գալու են, գալիս են, թե քնած էլ լինեմ, միևնույնն է՝ կնստեն, կսպասեն մինչև զարթնեմ... Իսկ ես քնած չեմ կարող լինել, գիտեմ, որ պիտի գան:

Ախար իմ եղած–չեղածը ի՞նչ էր, ընդամենը չորս–հինգ տարեկան երեխա, իսկ դուք ձեր քաղաքի երևելի մարդիկ էիք արդեն, և ես ձեզ ի՞նչ ընկեր... Կասեք՝ օ՛, մեծացել ես... Ո՛չ, սիրելինե՛րս, հենց ձեզ տեսնում եմ, նորից դառնում եմ ոչ ավելի, ոչ պակաս՝ նույն չորս–հինգ տարեկանը և, ինչպես կասեր Հմայակ հայրս՝ «մէ խեղճ, ողորմելի պան»: Այո՛, մի խեղճ, ողորմելի, շատ ողորմելի բան, որ հորս լեքսիկոնում բոլորովին ուրիշ իմաստ ուներ և ամեն մարդու վրա չէր շռայլի այդ բառը...

— Ա՛յ ձեր տունը չքանդվի, որ իմանաք, թե ինչ եք անում ինձ հետ, դուք էլ կխղճաք հաստատ: Բայց ի՞նչ, ի՞նչ կարող եմ անել: Այ, խնդրեմ, նստել է արդեն Հարթեն բիձան, իմ սիրելի «բիծլոն»՝ մեր տանը կպած հարևանը: Մագթաղ գալոյի մարդը, որոնց հետ մի տան պես, հարազատի պես էինք ապրում, նստել է ու չի խոսում: Ամբողջ մազակալած երեսով մեկ (որ երբեք սափրված չտեսա) ժպիտ է, նայում է ինձ ու չի խոսում, ժպտում է...

Երեխա չունեին և նրանց զբաղմունքն էլ մենք՝ ես ու քույրս էինք, ամբողջ օրը իրենց տանն էինք, հատկապես ես:

Այդպես է՝ կգա կնստի, կժպտա և կգնա...

Բիծլոն, իհարկե, շատ կուզենար, որ Իգդիրում լիներ, ճաշը, թոնրի շորվան՝ կծու բիբարով, բամիայով, սև բադրիջանով, թանձր համեմված շորվան կերած, մի թեթև էլ կոնծած, պատշգամբի լայն թախտի վրա պառկած լիներ, և ես էլ բոբիկ տոտիկներով վրան ման գայի, տրորեի, որ բավականությունից նվաղած տնքտնքար...

Բայց ի՞նչ անեմ հիմա. ես էլ իրեն եմ նայում. նույն ժպիտն էլ, երևի, իմ երեսին է, մինչև վեր կենա, հորանջելով գնա, ինչպես քնելու էր գնում Իգդիրում, երկար հորանջելով, երեսն ու բերանը խաչակնքելով, որ սատանա չմտնի բաց բերանից, ինչպես հավատացնում էր ինձ: Իսկ Մագթաղ գալոյին մենք երեխաներով հոքիր էինք կանչում, հորաքույր. մորս սիրելին էր, մեծ քույր, պահապան հրեշտակ:

Քույրությունն էր անում իմ ամաչկոտ, վախկոտ մորս, որ չէր համակերպվում իգդիրցիների՝ թոհուբոհով, ղալմաղալով, անհանգիստ ապրելակերպին, մանավանդ թուրքերին, Իգդիրմավայում դեռ կային. և մշտական վախի մեջ էր, մինչև քաշվեցին, ռադ եղան: Բայց քանի դեռ կային, Մագթաղ գալոն էր մորս սիրտ տվողը, իսկ Հմայակի բացակայությունների ժամանակ, երբ «առևտրական գործերի» պատճառով տանը չէր լինում՝ մեր տանն էր քնում Մագթաղ հորաքույրը և մեզ համար էլ տոն–ուրախություն էր, գիշերները քուն չունեինք, հեքիաթ էր, որ պատմում էր...

Բարձրահասակ, խոշոր կազմվածքով էր, «մեծոսկոր», հպարտ, տիրական նայվածքով, համակ վստահություն: Ձենք էլ ուներ տանը... Հմայակ հայրս էր նվիրել իր չկրակած մաուզերներից մեկը: Ուժեղ, լիքը թեև ու թիկունք ուներ. գրտնակ անելուց գրտնակը խաղալիք էր թվում ձեռքերին, իսկ ցորենի լիքը պարկը մի թևով կողքանց տանելը՝ սովորական բան:

Եվ քանի որ Իգդիրմավան հայտնի էր իր «բախչաներով», հոյակապ պարտեզներով, վեճ ու ղալմաղալն էլ անպակաս էր... Եվ խաղաղվեցին, երբ Մագթաղ գալոյին ընտրեցին ջրբաժան՝ հայ ու թուրք պարտեզատերերը:

«Մայթա խանում» էին ասում իրեն թուրքերը: Եվ երկյուղած կանգնում էին առաջը, վզները «համեստորեն» մի կողմի վրա՝ խնդրանքով.

— Մայթա՛ խանում... Մեզի էսօրը ճյուր կխասնի՞...

— Կհասնի,— ասում էր, իսկ դառնալով մեկին՝ խնդրողներից, խոժոռ կչափի ոտից գլուխ ու կասի.

— Իսկ քեզ, Այո՛ւբ տղա, բաբայիս ցավն էլ չի հասնի. էդ ո՞ւր էիր Արազի դամբերը կապելուց, իթոզլի իթ,— այսինքն՝ շան թուլա...

— Դու մարդ չես, փեյին ես...

Հետո բոլորը կմիջամտեն, կխնդրեն էդ «իթոզլիի» համար, և Մայթա խանումը կգիջի...

— Ծառը–ճյուղն են մեղք, թե չէ... կճրես՝ Եղիշից, Առաքելից, Բաղր աղայից հետո... Դը, ռադ յել...

Իսկ իմ Բիծլոն ուրիշ զբաղմունք չուներ իր բաղ ու պարտեզից բացի: Դրախտ էր դարձրել. մեր պարտեզին էլ ինքն էր նայում: Տան պատշգամբի առաջ՝ նախշուն



նունուֆարներ էին, զամբեխներ, յասամաններ, վարդեր Շիրազի... Իսկ մրգերի տեսակները՝ պատվաստած, ազնվացրած ծիրանի, դեղձի, տանձերի տեսակները... Մալաչա, ձմեռվա, «ալբուխարիները», սալորի տեսակները, «դամբուլները»... Սեխն ու սնեյվազը, դուխման ամբողջ ձմեռվա ընթացքում սեղանին էին, ոնց որ թփից նոր քաղած...

Եվ ահա... բոլորից շուտ է եկել, որ բոլորից էլ շուտ գնա, քանի որ սովորություն էր արդեն, որ առավոտ ծեգին պիտի ոտի վրա լինի, բահը ձեռին ու շուտ էլ քնի: Իսկ հիմա սուսիկ նստել է... Երևի կուզենար վեր կենայի, տրորեի մեջքը տոտիկներով... Ի՜նչ իմանաս, գուցե թե աչքին փոքր եմ երևում... Ա՜խ, Բիծլո, Բիծլո... Կանգնեցնում էր սեղանին, ձեռքերը ափ անում ու... ասում. «Պոզի, պոզի...»: Ես էլ հաճույքով կատարում էի խնդրանքը... Շփում էր ափերի մեջ ու ասում. «Դուխիի, դուխիի...»:

Ախար իմ Բիծլոն լավն էր, շատ լավը. ամբողջ օրը ժպիտը երեսին, աչքերի մեջ լիքը կայծիկներ ու շատանում էին, երբ ինձ տեսնում էր մեր պատշգամբում, որ շորորալով դեպի ցանկապատի դռնակն եմ գալիս. էլ գործ չէր լինելու, բահը տնկում էր մարգի թմբին ու մոտենում դռնակը բացելու ու գրկած տուն բարձրանում, որը կնշանակեր մի համեղ բան ենք ուտելու, ճաշելու ենք, եթե ճաշի ժամանակն էր լինում, կեսօրին: Բիծլոս լավ ուտող էր. անշտապ, իր մեծ մարմնին համապատասխան, մեկ կանաչի, մեկ գինու գրաֆինը իրեն քաշելով, մեկ լավաշի մեջ մի բան փաթաթելով ինձ համար ու ինքն էլ ծամելով, մեծ աղմուկով, վսվսոցով, մեծ պատառներով, անուշ չմփչմփացնելով... Եվ եթե ես էլ մի բան էի խոթում բերանը, ցուցամատով էլ մտնում՝ գլուխն օրորում էր, աղմուկն ավելի շատանում, որ հասկանամ, թե տվածս շատ ավելի համեղ էր...

Եվ Մագթաղ հոքիրն էլ, ինչպես Իգդիրի բոլոր կանայք, բացի մեր Վարդուհի զալոյից, բոլոր շնորհներից առաջինը համեղ ճաշեր ստեղծելն էր համարում, իսկ Վարդուհի զալոն ճաշը համարում էր «փոր խաբելու» բան... Եվ Բիծլոս ճար չուներ, չէր կարող լավ չուտել. ուտում էր այնքան, ինչքան կթույլատրեր իր մեծածավալ ընդերքը, որը առանձին խնամք էր պահանջում գոհանալու համար, որ հետո պատշգամբի լայն թախտին, մութաքաների վրա բազմած տնքա, գղտա, վսվսա՝ կերած–խմածի բազմապիսի բույրերով... Ռեհանի, գինձ ու համեմի, վարունգի ու իր ընտիր գինու բույրերով... Եվ թիկնել է, իբրև թե ինձ հետ զրուցելու, որ երկար չէր տևելու, և գիտեի, որ անձկությամբ, ուշք ու միտքը էն է, սպասում է, թե երբ պիտի իրեն հրեմ, հրմշկեմ, որ սուտի գլորվի թախտին, հաղթված–տապալված Գողիաթի նման, իսկ ես էլ Դավիթ եմ իբրև թե...

Ու երբ սկսում էի իմ սովորական պարը լայն մեջքին, կողերին, բավականությունից հառաչում էր, հոգոցները, վսվսոցը շատանում, մինչև հոգնած նստեի ուսերին, հաստ ու կարմիր վզին, թամբի նման հարմար՝ ու Բիծլոյիս դարձնում էի ձի, որ հեչ ձիու նման չէր, արջի, մեծ բարի արջի էր նման, որ խաղում, փոլոլ էր գալիս իր քոթոթի հետ: Իսկ Մագթաղ հոքիրն էլ բաց դռնից, սեղանը հավաքելու հետ, ձեռք ու աչքով կհասկացնի, որ ականջները քաշեմ, մազերը խառնշտեմ... Ու քաշում, քաշքշում էի անխիղճ, ծղրտալով, ճչալով՝ յո, յո, խաբարդա... Ու բլբլացնում ինչ–որ էլի բաներ՝ ի՜նչ իմանամ ինչ...

Իսկ անցյալ օրը մեր հարգարժան փեսան՝ Վլասն էր եկել Օվսաննա հորաքրոջս հետ (որին տեսնելուց իմ ուրախությանը չափ ու սահման չկար), և ի՜նչ. ճառ էր ասում ըստ իր սովորության, երբ մեր տան հավաքույթներին խոսքն իրեն էր հասնում: Եվ այնքան անհասկանալի, անկապ բլբլացրեց, որ հորաքույրս չդիմացավ, սերթուկի փեշը պինդ քաշեց ու հրամայեց. «Դը բոլի, բոլի, բոլ եղավ քեզ, ել, ել երթանք, թող քյորփաս քնի»: Եվ համբուրեց թուշս իր հյութալի համբույրով, սրբեց ափով (ըստ սովորության) և ըստ սովորության էլ մի բան խոթելով բարձիս տակ՝ գնացին...

Եվ, ով զարմանք, նրանց գնալուց հետո ես բնազդորեն բարձիս տակ նայեցի... Զկար, ի՜նչ պիտի լիներ:

Ամենից հաճախ, իհարկե, մշտական այցելուս Հմայակ հայրս է: Նա էլ էն գլխից խոսելու հետ գլուխ չուներ, նստում է ոտքերիս մոտ, տեղաշորին, շորերիս է ձեռք տալիս, ուղղում վերմակս, մի քանի անգամ ծպծպացնում շուրթերով... Օ, ոչ ոք այդպես անուշ ծպծպացնել չի կարող, չեմ տեսել, և երբ ուզում եմ վեր կենալ, ճուլվում է սենյակի խավարին...

Բայց երեկ անսպասելի բան եղավ, խոսեց, ասաց.

— Մրսես եմ...

Ես լուռ իրեն եմ նայում ապշած, բան չհասկանալով, իսկ նա նորից կրկնեց.

— Մրսես եմ ախար...

Ու ճուլվեց խավարին... Առավոտյան հարցրի մեր հարևանուհուն, որը զարմանալի կերպով կարողանում էր երազները մեկնել: Հարցրեց.

— Գերեզմանը սարքե՞լ ես...

— Զեմ շինել, ախ, չեմ շինել դեռ...

— Դե էնա էլի, դրա համար է եկել, քար պիտի գցես, մրսում է:

Տե՛ր Աստված: Այդպես է, «գործնական» հարցերով էլ են այցելում ինձ հարգարժան իգդիրցիք: Բայց ինչ–որ լավ բան չի ստացվում կարծեմ, պատվական իգդիրցիք: Դուք ինձ կարգին իգդիրեցու տեղ եք դրել, երևի, իսկ ես ամոթ էլ չունեմ, խոզի պես եմ ապրում... ես հո գիտեմ չինածս գերեզմանը ինչ է, մի հողաթումբ կանաչ ճմբերով պատած... Մրսում է, գիտեմ էլ, որ մրսկան էր... Ամառ–ամեռ երկարաճիտ կոշիկներով էր ման գալիս, ասում էր՝ ոտերից խեղճ եմ... Ոտքերից խեղճ չէր, իհարկե, այդ ոտքերով օրական 20–30 կիլոմետրը սովորական զբոսանք էր իր համար, բայց տես, որ մրսում է:

Մորս, որ գիտի, պատմում եմ հորս այցելությունների մասին, պատմեցի և ապուշ կտրեցի...

Ինձ համար սեղան է գցում և ամենայն լրջությամբ, հանգիստ, առանց ախ ու օխի, գործի արանքում խոսում, դեռ ժպտում էլ է...

— Ասա էդ անդադարին, թող համբերի, փախցնելու տեղ չունի, թող մի քիչ էլ համբերի... Քիչ մնաց... նոր շիշ բացե՞մ, թե՞ երեկվա կիսատ գինին...— Տխրություն էլ չկա ասածի մեջ, սա էլ է գործնական և կարծես միտքս գուշակելով.— Ծախսի համար չեմ ասում, Էդիկ ջան, դե, միասին կշինես, թող համբերի... Դու էն նկարդ վերջացրու, իսկը ինքն ա, միրուքը տնկած քուշի մեջ տնգված, պալտոնն էլ հագին, չի մրսի...

— Ա՛յ մեր, ա՛յ մեր, ինչ ես ասում, հեչ կարգին բան չի ասածդ ախար...

— Ընչի՞ կարգին չի, որ ինձ լսեր, էն հալհլոցին տունը մնար, ո՞ւր էր վռազում, դու հացդ կեր, ճաշդ սառավ... որ լսեր... լսո՞ղն էր... էն անդադարը, հիմի հո նստած կլիներ կողքիդ...

Եվ լուրջ բարկանում է.— Պետք չի, թող սպասի, իրան էդպես էլ ասա...

Օ, սա էլ է իգդիրեցի, ասածը ասած է՝ ու վերջ:

Ես բաժակս եմ լցնում, լուռ խմում, որ ավելորդ բան չասեմ, չշարունակվի այդ դաժան խոսակցությունը: Իզուր էլ իրեն ասացի, իզուր...

Տեր Աստված, ինչի՞ց ես չինել այս մարդկանց... Անսրտություն չի, գիտեմ, բայց ի՞նչ է...

Պատահում է, որ հորս հետ է գալիս ինքը՝ Իսաբեկ պապս, ես իրեն չեմ տեսել, մորս պատմածով գիտեմ և ճիշտ նրա պատմածով այդպես էլ պատկերացրել եմ: Երկար սև չուխան հագին, տակից բեշմեթին կապած արծաթ գոտուց կախ երկար խենչալը, թավ հոնքերի տակից քննող հայացքով եղած–չեղածս: Եվ ամեն անգամ իրեն տեսնելուց ուզում եմ վեր թռչել, զգաստ կանգնել, բայց ոտքերս չեն ենթարկվում, բամբակից լինեն կարծես, և անհանգստությունս նկատելով՝ ձեռքով մի շարժում է անում, որ պարզ նշանակում է. «Լավ, լավ, տեղդ մնա...»:

Այդպես լուռ (սա էլ խոսելու հետ գլուխ չի ունեցել, ասում են), զննող կնայի շուրջը, հետո ինչ–որ բան կասի իմ հասցեին (հորս կողմը շրջված) ու միասին կճուլ-վեն սենյակի խավարին...

Եվ այսպես՝ ամեն ասածո գիշեր:

Գիտեմ, ինչ–որ բան են ուզում ասել և չեն կարողանում ասել, հասկացնել: Եվ ինչ պիտի ասեն, երևի նույն բանը. «Հը, հո չե՞ս մոռացել մեզ, տե՛ս, հա՞...»:

Տնաշեններ, ձեզ մոռանա՞լ կլինի, եթե մոռանալու համար հիշողություն կոչ-ված այդ անգութ, անխղճին նախօրոք չեմ բթացրել մի թաս օղիով, որին, պատահում է, մի թասն էլ չի բավականացնում... Եվ գալիս եք արդեն խմբով, միասին և խոսում եք, խոսում, գոնե իրար հերթ տայիք, գոնե բան հասկանայի, թե չէ՝ բզզում եք, ննջա-բանը դարձնելով մեղվի փեթակ...

Ուրիշ բան է, եթե Վլասը հետներն է, ապա Իգդիրից դեռ գիտեմ, թեման պիտի «միջազգայինը» լինի, քաղաքականությունից... Անգլիայից, Ֆրանսիայից, Ռուսաստա-նից, Նիկոլայից, ոչ ոքի հերթ չի տա, խոսողը ինքն է, և երբ մեկը խառնվում, միջամ-տում է՝ բարկությունից կարմրում է եփած բազուկի պես, ոտ ու ձեռ ընկնում...

Հայտնի բան է, իգդիրցիք առհասարակ վիճել սիրում են... Բայց սրանք էլ ի՜նչ պիտի ունենան չասված, չլուծված...

Խոսելու նյութը հաստատ որ դու ես, սիրելիդ իմ, իսկ քո հարցը այդպես էլ սրանց համար մնաց բաց, անլուծելի, հարցական:

Ախր սրանք, բացի մեր պապերից և մի քանի մեծերից, բախտ չունեցան քո հողում թաղվելու և այդպես էլ չհամոզվեցին, որ Մարգարայի կամրջով ետ գնացող չի լինելու այլևս: Եվ հավաքվում են ինձ մոտ, երևի, իմանալու՝ նորություն կա՞, թե՞ ոչ... «Նորություն» 18 թվից հետո, քեզ համար, սիրելիդ իմ Իգդիր, նորություն չեղավ: Դու մնացիր քեզ համար, մենք՝ մեզ համար: Եվ ոչ միայն քեզ համար չեղավ: Բոլորի համար նորություն չեղավ: Մեզ համար սևացավ, սևացրին, հավա-տացրին, որ անհնար բան է, խելք–բանականությունից դուրս բան, հիվանդի զառան-ցանքի նման բան:

Չհավատացին քո հին բնակիչները, ի դեմս իմ «ակումբի» այցելուների և, երևի, մեկ էլ դու, սիրելի՛ս, որ մնացիր Արազի էն ափին: Ձեռքդ՝ ճակատիդ՝ Մարգա-րայի կամրջի կողմը նայելով:

Իմ այցելուներից ոչ մեկի մտքով չէր անցնում, որ քեզ տեսնելը պիտի դառնա «խելքից դուրս բան» կամ զառանցանք, և ամեն մեկը «Ի վերին Երուսաղեմի» ճանա-պարհը բռնելիս, իրեն շուրջը հավաքվածներին մի բան է ասում. «Երնեկ ձեզ, որ Իգրը (այսինքն՝ Իգդիրը) կտսնաք»... Ջտեսանք, օ՜խ, չտեսանք...

Բայց քեզ տեսնելու նման բան եղավ, կարծեմ. դու էլ կհիշես երևի, որ նույն գաղթի թվին, 18–ին այդպիսի կարճատև, շատ կարճատև հնարավորություն եղավ, և

Սուրմալուի ժողովրդի մի մասը նորից Արազն անցավ... Բայց պետք չէր երևի, տեսածները տեսնելու բան չէր: Անիմաստ, իսկապես «խելքից դուրս» բան էր եղել այդ գաղթած ժողովրդին նորից հետ տանելը, և հետադարձ հնարողները իրենք էլ շուտով գլխի ընկան, որ վերադարձողների համար ոչինչ չեն կարող անել... Մի քանի տակառ հոտած ձկներով, մի քանի պարկ ալյուրով, ցորենով, գարով՝ գաղթած ժողովուրդ կլինե՞ր պահել. տուն ու տեղն էլ քարուքանդ, ավերակ... Տեսնելու բան չէր տեսածները, և իմ անհամբեր հայրս էլ համոզվել էր անձամբ, բայց ոչ վերջնական:

Վերադարձի «քեֆ, ուրախություն» չեղավ, ինչպես կանխագուշակում էր իրենց քաջ խմբապետը... Ո՞վ, ինչո՞վ և որտե՞ղ քեֆ անեին, երբ բացված հացի միակ փռից կես ֆունտ հաց կարող էին ստանալ շնչապատկան... Իսկ շուրջը՝ Իգդիրը՝ դուռ ու լուսամուտ հանած կույր տներ, սատկած, նեխած անասունների լեշերի գարշահոտություն և անհամար ագռավներ, և բվեճի գիշերային վայոց, որ գալիս էր Իգդիրի նեխած գյոլի կողմից... Մի քանի տուն պարսիկներ էին մնացել դեռ, ի թիվս մեր Մալիմը, որին քիչ է մնացել, որ հերս համոզեր Երևան բերեր... Բայց ասել էր.

— Չէ՛, Հմայա՛կ եղբայր, մենք էստեղ էլ չենք մնա, հարամվեց, շատ հարամվեց, եկողները մարդու պատկեր չունեին... Բորենի էին... էլի հետ են գալու, չենք մնա, կերթանք մեր Երանը... Դուք էլ հետ մի նայեք, տեսա՞ք ինչ դարձրին շեն Իգդիրը... էլ ապրելու տեղ չէ, վա՛յ ֆալագ, վա՛յ...— Դե, իհարկե, «վերջնական» չէր հորս համոզմունքը. էլի իրեն համոզմունքին էր. տեսածից էլ չէր սթափվել, բայց լուռ էր, երկար ժամանակ տևեց, շփոթված էր, մորս ծաղրուծանակին էլ չէր պատասխանում...

Բայց այդպես էլ մնաց իր ասածի, անկոտրում, իր ապրած կյանքի ողջ ընթացքում մնաց անունդ տալով, անբացատրելի համոզմունքով, որ տեսնելու է Իգդիրը. քեզ, սիրելի՛ս, չտեսավ, օ՜խ, չտեսավ, օ՜խ, չտեսավ...

Եվ էլ ինչո՞ւ պիտի հիմա զարմանամ, որ ամենահամառը Հմայակ հայրս էր դրանց մեջ, որ ոչ մի կերպ չի ուզում համոզվել, որ երկու արկղ Շուստովի կոնյակը, ծիրանի ծառի տակ թաղված, պիտի լամուկներին մնա՝ մոռանալով տուն ու տեղի, բաղ ու բաղչի մասին, իսկ երբ կշտամբում էի .

— Տունը խո չե՞ն շալակելու տանեն. բաղն էլ թազա, քյորփա բաղ կտնկենք,— այսինքն՝ նոր այգի... և ո՞րերորդ անգամ...

Ուր է թե, իսկապես, մի երկու շիշ լիներ էն կոնյակից, սրանց խմացնեի, թողնեին ինձ հանգիստ...

Ախր խմող էլ չէր հայրս, Իգդիրից հետո ոչ խմում էր, ոչ ծխում, ափսոսում էր ընդամենը, որ թողածը շուն ու գելի փայ է դառնալու: Եվ դարձել էր. երբ վերադարձանք «հետախուզությունից», խոսք չեղավ այլևս կոնյակի մասին: Կոնյակ կթողնե՞ն, քանդել, լակել էին:

Պատահել է, որ Իսաբեկը՝ պապս, հավաքվել, եկել է «Հանդերձ ընտանյոք»: Ինքը՝ Իսաբեկը, տատս՝ Բանավշան, իր երեք աղջիկներով՝ Օվսաննայի, Նունեի, Մանեի, հորեղբորս՝ Ավետիսի, նրա կնոջ՝ Վարդուհի զալոյի և հորս՝ Հմայակ հայրիկի, մորս, լուսեղեն մորս՝ Սաթենիկի հետ... Կարծես՝ նկարվելու համար: Եվ այդպես էլ կանգնում են՝ մեծերը կենտրոնում, դիմացները նստած երեխեքը: Սենյակի մթի մեջ միայն լուսավորված դեմքերն են՝ լուրջ, հանդիսավոր, մեկը մյուսից գեղեցիկ, թուխ, ցորնագույն դեմքերով: Կարծես Ռիբերիայի նկարներից իջած... իրենց ոտքերի տակ նստած երեխաների հետ՝ Սիրանույշ, Հայրո, Հրայր, Կարինե, Ռուզան և նույնիսկ ես: Ես, որը մթան միջից ինձ է նայում իր կաթնակեր և կաթից չկշտացած աչքերով և երկու ձեռքերի մատներից մի հինգը երևի կտրած, քերծած, շորերով կապած:

Չէ, ես ձեր բոլորին մի օր պիտի նկարեմ երևի, և, երևի, դա է ձեր ցանկությունը, որ գալիս լուռ շարվում եք՝ ինչ–որ բանի սպասելով:

— Չէ՛, նկարվելը չէ միայն դրանց ուզածը, բայց որ նկարես էլ, վատ չի լինի, արժե, եթե կարողանաս, վատ չէր լինի: Դրանց ուզածը, ինչպես և իմ... որ չմոռանաս մեզ...

— Գիտեմ, գիտեմ, լսել եմ. ամեն գիշեր գործս ինչ է, լսածս ինչ է...

— Հը, հո չե՞ս մոռացել, տես հա՛...

— Մեծ պատիվ է: Տեսնո՞ւմ ես, նրանք էլ քեզ չեն մոռացել... Մեծ պատիվ է:

Օ՛, դու հազիվ պատկերացնես, թե ինչ տխուր, հոգեմաշ «պատիվ» է՝ ապրել ստվերների հետ... Ինչքան էլ սիրելի, բայց...

— Մոռացի՛ր, ինչպես բոլորը, եթե կարող ես, դու էլ մոռացիր...

Չեմ կարող, երևի կարողանայի, եթե չլիներ քո այս մոտիկությունը և չլիներ այս քար լռությունը, անտարբերությունը քո նկատմամբ... Կամ ասենք, եթե մոտ ես, գոնե լիներիր Դդմաշենի տեղը կամ Ալափարսի... Ես ինքս էլ դդմաշենցի, ինչի՞ պիտի գրեի. կաս, ապրիր՝ քեֆդ ուզածի չափ, գրելս ո՞րն է:

Վախից եմ գրում երևի, ճիշտ որ վախից. քո նկատմամբ ունեցածս վախից, քո «չլինելու» վախից, ինչպես ասենք՝ Անդիժանում կամ Ֆիլադելֆիայում ապրող հայը, որ «ուրիշ տեղում» պիտի մեռնի: «Ուրիշ տեղ» ո՞նց կարելի է մեռնել, եթե գործուղման մեջ չես, և մահն էլ... հանկարծակի չէ:

Դու, սիրելի՛ս, «ուրիշ տեղում» ես և այդ «ուրիշ տեղում» չի կարելի քեզ... Չեմ էլ ուզում այդ բառը ասել՝ պիտի ապրես. խնդրում եմ՝ ապրես, գուցե մի բան մտածենք... Թեկուզ մտածենք... Իսկ ի՞նչ «մտածենք»: Մտածողը ես եմ կամ ինձ նման մեկը, որ քո մասին դեռ կարող է մտածել, մտածել ընդամենը: Դատարկություն չես լցնի մտածելով, ա՛յ, գնացին՝ և դատարկություն է. մարդու վախենալու բոլոր բաներից ամենավախենալուն, որ գողի պես սողոսկում է մեջդ, մի ցուրտ բան: Ոչնչով չես տաքացնի այդ սառնությունը, և անտանելի կլինի, եթե Իգդիր ասելուց... դատարկություն զգամ: Ուզածս այդ վիհը լցնելն է, գոնե ինձ համար: Քանի որ շատերի համար

անունդ տալուց կարեկցություն ես տեսնում դեմքներին, տխուր ժպտանման բան, գրեթե խղճահարություն: Չեմ ուզում խղճան քեզ, դա հավասար է ինձ խղճալուն... Նույն ցրտությունն է, բայց չեմ ուզում, որ այդ «շատերը» հաստատապես համոզվեն, թող գոնե մի քիչ կասկածեն, չի խանգարի, եթե ափսոսան նաև, բայց՝ չխղճան, օ՛, ոչ, խղճալ պետք չէ, նույն ցրտությունն է և կմնա ընդամենը այն սրտամեռ երգը քո մասին... «Աման, աման Սուրմալու»: Դեռ շուտ է, շատ շուտ է այդ երգի համար: Այդպես է, շատ անուններ տալուց հիմա ընդամենը՝ երգում են, և բոլոր երգերը տխուր են, սրտամեռ, ցուրտ... Ավելի վատ, եթե լավ են երգում, ավելի վատ, կուզենաս՝ հա՛ երգեն:

Դու, սիրելի՛ս, դու էլ չես կարող օգնել ինձ, բայց պիտի աշխատես օգնել, թեկուզ այդպես, ամեն գիշեր մոտս ուղարկելով քո պատվարժան քաղաքացիներից մեկին, երկուսին, ով պատահի, թեկուզ մեր խանութի կողքի խորովածանոցի տիրոջը իր սմքած, անբեղ սփաթով, և ես տեղնուտեղը կհիշեմ «Կապեկ Ակոփին», որ առավոտից կոկորդ էր պատռում իր ճղճղան ձայնով.

— Շիշը մե կոպեկ, շիշը մե կոպեկ, բիբարն էլ խետը...

Ծախածը մի կոպեկանոց ապրանք էր, իսկ տես, թե ոնց էր ձեռ առնում խեղճ Պյան Առաքելին: Օղու շիշը ձեռքը դիտմամբ ուշացնում էր Առաքելի՝ դեպի իրեն պարզած արաղի թասը լցներ... Առաքելի հոգու հետ էր խաղում, իսկ Առաքելը մեղք է, ձեռքը անհնազանդ, իրեն չի լսում, դողում է մանր դողով... Եվ այդ անխիղճը երկարացնում է Առաքելի տանջանքը: Ամոթ չունի, դեռ կփիլիսոփայի նաև արաղի խմելու ձևի մասին...

— Տո, կլցնեմ մկա, իշխո խոգիդ տար մեջի, խա՞...

— Տո, գոնյա մե պան կեր խետը, կո, զակուսկա եմ տրի, կեր՝ նոր խմի, ա՛յ ախմախ... Մեխկ ես ախար:

Եվ հրում է դեպի Առաքելը լավաշի մեջ փաթաթած խորովածի միսը, որը Առաքելը արհամարհանքով հետ է հրում և բարկացած ասում.

— Զայլա մի տար, քյոնը լցնելն ի, լից՝ առ քյո կապեկը, ինչ ես լաչառ կնգա պես ծենդ կլոխդ քյցի...

Եվ լցնում է վերջապես Կապեկ Ակոփը Առաքելի թասը, որը նա խմում է կում–կում, անշտապ... և մի շահանոցը անփույթ նետում դախլին: Եվ Ակոփը շփոթված ձայնը իջեցնում է՝ ասելով.— Ախար քեզ խմա եմ ասելի, մեղք ես տնաշենի... ախմ...— չվերջացնելով:

Առաքելը գուցե և ուրիշ տեղ, դասաբների հետ մի բան կերած է եղել և խորոված ծանոց գալը նրա համար գուցե ուրիշ իմաստ ուներ. թեկուզ այն, որ ինքն էլ կարող է երկու կոպեկանոցը անփութորեն դախլին գցել կամ մի խոսք փոխանակել ներկաների հետ... Իսկ Ակոփը շատ է հասարակացնում ամեն ինչ... Բայց և չի մոռանա Առաքելի շահանոցը և մյուս անգամ Առաքելից փող չի վերցնի երևի:

* * *



Խոյից գաղթած իգդիրցիք մեծ մասամբ պարսկական անուններ են ունեցել, և այդտեղ ոչինչ էլ զարմանալի չպիտի թվա, եթե նկատի ունենանք մեր՝ հայերիս անփութությունը անունների նկատմամբ, որ այսօր էլ խնամքով շարունակում ենք:

Միայն մեր ցեղում՝ Յորդուխան, Այվազ, Իսաբեկ, երկու տատերս՝ Բանավշա, Մեհրիբար, որոնցից մեկը նշանակում է մանուշակ, մյուսը՝ բարի, ընդունելի բար: Գեղեցիկ անուններ են, համ ու հոտ ունեն, չես զարմանա... Լավրենտի չեն, Յուրիկ չեն, Դեզդեմոնա կամ Սեռոժ...

Բայց հետո, դեռ Իգդիրում երևի, եղել է դեռ տեր Մեսրոպից էլ առաջ խստաբարո քահանա և կնքվել են՝ Վահագն, Արտաշես, Արշալույս, Հմայակ, Համազասպ, Մամիկոն, Արամ, Ավետիս... Հետո «նույն ոգով» շարունակել է Իգդիրի երևելի քահանան, տեր Մեսրոպը՝ Հրայր, Հայրապետ, Շավարշ, Խորեն, Նորայր, Ներսես, Գարեգին, Գեղամ, Վարդան, շատ Վարդան և շատ Մամիկոն, և անշուշտ՝ Մեծ սպարապետի պատվին:

Ինչպես տեսնում ես, սիրելիդ իմ Իգդիր, անքնությունն էլ վատ բան չի եղել, ի՞նչ իմանամ (դու կիմանաս) քեզ հիշող կա՞, մնացե՞լ է, թե՞ միայն ինձ ես շնորհ արել այդ պատիվը ամենօրյա, գիշերային այս հանդիսությունը, որից ոչ դժգոհել կարող եմ, ոչ էլ...

— Օ՜, ո՛չ, ընդհակառակը, գոհ եմ, երդվում եմ քո տարօրինակ անվան հինգ տառերով, որոնք այսօր էլ ուրարտերենի նման անհասկանալի են թվում

շատերին, բայց գոնե քո անունին չի կպչկոտել «լու» վերջավորությունը, որից չեն խուսափել «դպրոցներով հարուստ գեղեցիկ գավառ» մեծն Սուրմալուի անհաշիվ գյուղերը՝ Բհառլու, Սիչանլու, Խալփալու, Հաքրլու, Թեջրլու, Մալաքլու, այդ գարշելի «լու»–ից խուսափել չկարողացավ նույնիսկ ինքը՝ Սուրբ Մարի վանքի շուրջ ստեղծված գյուղը, որը կոչվում է վանքի անունով՝ Սուրմարի, որ, օտարների բերանում աղավաղվելով, դարձավ «Սուրմալու»...

Գոհ եմ, և ոչինչ, որ առավոտյան գլուխս մի քիչ ծանր է թվում ուսերիս, մի քիչ խումար գլխապտույտ, բայց չէ՞ որ քեզ հետ եմ: Քո անգո հավատացյալների նման հավատում եմ, որ կարող է մի օր վաղ առավոտյան, երբ արևի ճառագայթը ողջ Հայաստանի հողի վրա առաջինը Մասիսի սպիտակ բաշին է ընկնում՝ զարթնես ու ձեռքդ ճակատիդ դնես ու նայես Արագի կողմը, Մարգարայի կամրջին և տեսնես՝ գալիս են...

Օ՜, գոհ եմ, գոհ եմ, բայց ի՞նչ անեմ այս փչալարերի հետ, երեք չարք ձգված Արագի այս ափին՝ իմ ու քո միջից, որից միայն արագիլները կարող են և իրավունք ունեն ազատ անցնելու, թռչելու դեպի քեզ, դեպի մեր բակի հաստաբուն կաղամախիները, որոնց վրա կային և մնացել են երևի նրանց բները...

«Արագիլները իրենց բները չեն լքում»...

Ես պարզ լսում եմ այս խոսքերը սենյակիս խավարի լռության մեջ և, երևի, դու ասացիր... Ուրիշ այցելու չունեմ այսօր: Դու ասացիր, և դա հազար տարվա ճշմարտություն է: Բայց դա հենց այնպես, հանուն «իմաստուն խոսքի» համար չէր, որ ասացիր, գիտեմ, որ չէր, վիճելու բան չէ ասածդ, սիրելի՛ս, գուցեև մնում են, ի՞նչ իմանամ, մեր կաղամախիների վրա կարող է տեսած լինես, երկու բուն ունեին: Բայց հորս հարցին, երբ նույն թվին աշնանը վերադարձել էր, չգիտես ինչու, ինձ էլ հետը վերցնելով, մենակ, բոլորովին մենակ չլինելու համար երևի, հորս հարցին, թե ուր են արագիլները, Մուսա Մալիմը, որ մեր տանն էր ապրել և ապրում էր, պատասխանեց, ասաց.

— Ձեր գաղթից հետո գարնանը էլ չեկան, չերևացին...

Մեր ջրհորը նայի, տես, թե ինչ են դարձրել, աղբանոց... Իջնում էին բակը, ջրհորի շուրջը զբոսնում, իրենց համար հանած սառը ջուրը հենց դույլից խմում, կտուցները վեր տնկած՝ կափկափում գոհունակությունից և տանտիրոջ նման շրջում բակում, ձագերն էլ՝ հետները... Խոզի հետ արագիլը կապրի՞, իսկ դու՝ «արագիլները չեն լքում»... Ո՞նց չէ, էն էլ ո՞նց են լքում... Իզուր կշտամբում ես: Իրավունք ունես: Դու Իգդիրն ես, դու հող ես, դու հայրենիք ես...

— Հայրենիքը չեն լքում...

Դա է՛լ ավելի, քան հազար տարվա պատմություն է և նորից քո ձայնն է: Եվ ես պապանձվում եմ: Ուր է, թե խոսքի տեղ կրակոց լիներ, համազարկ մաուզերի, մոսինի, որ ոչ միայն պապանձվեի...

— Իմ քաղաքացիք կարող էին, պարտավոր էին մնալու:

Նորից և դժվար տանելի բան ես ասում, դաժան, բայց չես նեղացնի, քանի որ սխալվում ես, կամ ուզում ես վիրավորել, իսկ ես ցավ չեմ զգում և չեմ զգա, եթե իսկապես կրակելու հնարավորություն ունենայիր... Հոգով վիրավորվածին ցավ չես պատճառի: Ես իգդիրցի եմ և ոչ 14 թվից, երբ ծնվեցի քո հողին, և ոչ էլ 1828 թվից... Ես իգդիրցի եմ այն օրից, երբ հարգարժան Նոյը՝ քո առաջին բնակիչը, տնկեց խաղողի որթը քո արևակող բլրի լանջին, որ հիմա էլ կա, կողքիդ է... Ինձ բուժել է պետք, բայց գիտեմ, որ բուժում չկա: Ինձ Լոխման հեքիմն էլ, Ամիրդովլաթն էլ չեն օգնի, ինձ իմ օրորոցաչափ հողը կարող է բուժել, որին չեն փոխարինի աշխարհի համայն հողերը եթե ինձ տան... Այն, մի օրորոցաչափ հողը, որի վրա ինձ օրորել է մայրս և պատմել Զմրուխտ հավքի հեքիաթը... Ծննդավայր են ասում, թե ինչ, բայց առանց այդ մի պատառ հողի երեխան ծնվելու իրավունք չունի: Եվ այդ մի պատառ հողն է պետք, որից «երեք ափը» միայն կարող է «հողը թեթև» անել ինձ համար...

Իսկ ո՞վ կտա: Ո՞վ կտա ինձ այդ մի պատառ հողը... Ոչ ոք:

Հողը, ջրից բացի, արյուն է սիրում երևի... Օ՜, նամանավանդ մեր հողը վիշապի ախորժակ ունի, չի կշտացել և չի կշտանա երևի, մինչև... Բայց, սիրելի՛ս, ինչպե՞ս, որտե՞ղ կհրամայես տամ, թափեմ արյունս, քանի չի մակարդվել...

Լռում ես, սսկվել ես... Դե էլ մի խոսեցնի ինձ, և քե՛զ նման շեներ մնացին անտեր, լքված... և ի՛նչ շեներ, ի՛նչ հող ու ջուր, ի՛նչ առավոտներ, ի՛նչ գիշերներ աստղալից... Մենակ դու չես սպասողը:

Քո քաղաքացիք, ճիշտ է, աներկյուղ էին, համառ, հպարտ, դոռոզամիտ, բայց հո ազրայի՞լ չէին... Ողջ ռուսաց հողն էր տակնուվրա եղել, դու ի՞նչ էիր, ընդամենը մի թիզ հող, այն էլ՝ սահմանի քթին...

— Իմ քաղաքացիք կարող էին, պարտավոր էին մնալու... Ի՞նչ էր պակասում, կովո՞ղը, կովելու շնո՞րհքը, զե՞նքը...

Բոլոր քո այդ թվածները, սիրելի՛ս, երեք–չորս օր բավականացրին, մինչև Սուրմալուի խառնիճաղանջ խալիսը Արազն անցավ... Եվ դու, ինչպես և անունդ կրող «առևտրական տան» տնօրեն Հմայակ քաղաքացիդ՝ թիվ ու ժամանակ չեք հասկացել: Ձեր տարբերությունն այն է, որ այդ «տնօրենը» կարող էր և չլինել...

Այո՛, չլինել, իսկ դու եղել ես, լինելու ես, քոնը «լինելն է» և միևնույնն է, ներող կլինես, թե ով կապրի քո հողին՝ «փափախը դիք» դնողնե՞րը, թե՞ թլպատված լամուկներ...

— Կոպիտ ես խոսում... Ես սիրում էի իմ «թարս նայողներին»: Օ՛, շատ էի սիրում, առանց նրանց ես ի՞նչ... Իսկապես, քո ասած՝ «սիսեռաքորոցային» մի բան:

Վիրավորելու համար չէր ասածս, դու պարզապես չէիր կարող իմանալ, որ աշխարհում եղել է 17 թիվ... ինչպես և չիմացար, որ եղավ 14 թիվը... Մենք եղանք վերջին գաղթողնե՞րը, թե՞ լքողները, միևնույնն է՝ ինչ անուն ուզում ես դիր, և դա արդեն 18 թիվն էր... Քո ջահելները իրենց խմբապետի և սահմանապահ կայազորից մնացած փոքրաթիվ խմբով կարողացան 3–4 օր ընդամենը դիմադրել փաշաների կանոնավոր զորքին և նրանց միացած թուրք ու քուրդ խաժամուժին...

Դու ոչ Կարինի բերդն էիր և ոչ էլ Ղարսի հզոր բերդաքաղաքը՝ երեք շարք մարտկոցներով լեռան վրա, անհամար թնդանոթներով, գնդացիրներով, պահապան կանոնավոր զորքով, բարձրակարգ օֆիցերներով, այրուձիով–կոզակներով... Եվ ժողովուրդն էլ միամիտ, համոզված այդ բերդի «անառիկության» վրա, մնացին քաղաքում՝ հավատալով նաև «ինչ–որ մարդկանց»... Իրենց նման հայ, որոնք ասում էին եկող թուրքը «էն» թուրքը չի, նոր, «ուրիշ թուրք է», հեղափոխական, իրենց բարեկամը, այդ «ինչ–որ հայ մարդկանց բարեկամը»... Իսկ այդ «ուրիշ թուրքը» եղել է սովորական, միամիտ, անզեն հայ ուտող թուրք... Ու այդպես «հավատացյալ» էլ կոտորվեցին... Օխ, ո՛նց կոտորվեցին: Կոտորողներն էլ Քեմալ փաշայի՝ կարմիր աստղ փափախներին կպցրած սպաներ էին, կարմիր աստղ...

Իսկ քո ունեցածն ինչ էր, երբ Օրգովի լեռնանցքը պահող սահմանապահ զորքը թողել հեռացել էր... Զասենք՝ լքել էր. քո եղածն ինչ էր, մի շեն լիքը կին ու երեխա, չորս կողմը բաց, տափարակի վրա, անպաշտպան... Մեր ունեցածը, սիրելի՛ս, երեք–չորս օր հերիքեց...

18 թվին ռուս զինվորը արդեն որոշել էր չկռվել իր թագավորի համար: Լսել էր՝ «Խաղաղություն խրճիթներին և հողը գյուղացուն»... Ուզում էր վարել, ցանել և վերջ:

18 թվին իգդիրցու վարած–ցանածը մնաց չհավաքած, երեք–չորս օր ընդամենը կարողացան տիրություն անել և վերջ:

Եվ հետո, սիրելի՛ս, ո՛վ–ո՛վ, բայց դու պիտի որ հիշես այն գիշերը՝ գաղթից մի քանի օր առաջ, Գարեգին աղայի դաստակերտում հավաքված քաղաքիդ մեծամեծերի «խորհրդավոր ընթրիքը», որտեղ ներկա էր, հրավիրված էր նաև ռուս բարձրաստիճան զինվորական Կարելկովը, մի ազնվագույն, հայասեր անձնավորություն, իգդիրցիներից շատերին ծանոթ, մտերիմ. և զինվորականին վայել դաժան պարզությամբ նա ցրել էր հավաքվածների ավելորդ ինքնավստահությունը, համբերությամբ բացատրել, որ Իգդիրը իր փոքրաթիվ ուժերով, ինչպես և սահմանապահ կայազորը, չի կարող դիմադրել եկող արհավիրքին, և միակ խելացի, լսո՞ւմ ես, խելացի քայլը գաղթելն է: Գաղթելը՝ առանց կորստի և իրարանցման: Ավելացրել էր նաև, որ սահմանի բոլոր կայազորներին վաղուց (գաղտնի) հրամայված է հետ քաշվել առանց դիմադրության:

Այստեղ է, որ դու չտեսար սեղանի շուրջ նստած քո «պատվական մեծամեծերի» դեմքերը սպիտակած, երկարած, իսկ Վլասը՝ ըստ սովորության կարմրատակած, և լեզուն կարծես կուլ էր տվել, բան չէր գտնում ասելու: Նրանը, որ վիճելն էր, վիճելու էլ ոչինչ չուներ: Եվ երևի շատ մնային նույն վիճակում, եթե խոսք չվերցներ քո քաղաքացիներից մեկը, երևելի խմբապետը, որը քաջի համարում ուներ...

— Ես մեր տղաներով կպահեմ Օրգովը, Արհաջը, մինչև դուք Մարգարայի կամուրջը անցնեք, ինչ գենք, փամփուշտ ունեք՝ բերեք ռուսաց եկեղեցու բակը: Մի ափսոսացեք, էլ կրակելու տեղ կլինի թե ոչ՝ չգիտեմ: Գիտեմ, որ ձեզանից ոմանք ընտանիքները արդեն տեղափոխել են և վատ չեն արել. հիմա ձեր գործը խալխին անտեր չթողելը պիտի լինի: Կանոնավոր հեռացեք, առանց խառնաշփոթի և օգնեք ձեր ունեցվածքով՝ սելերով, ֆուրգոններով, վարձեք, մի ափսոսացեք ոչինչ: Սա ժամանակավոր նահանջ է նշանակում և մի քանի ամիս չի քաշի, նորից հետ կգանք...

Ներկաների ձգված դեմքերից պարզ երևում էր, որ բան չեն հասկանում իրենց լսածից, լուռ են, դեռ «տեղ չի հասել», այնքան անհասկանալի, անսպասելի էր լսածը. «Ֆուրգոններ վարձեք, ոչինչ մի ափսոսացեք, ժամանակավոր նահանջ է»...

Եվ ինչո՞ւ դարձավ անհասկանալի, երբ գաղթելը, տուն ու տեղ թողնելը շատ հասկանալի, սովորական զբաղմունք է եղել իրենց համար, բայց քո քաղաքացիք մոռացել էին, չգիտես ինչու մոռացել էին... Հպարտ, ինքնավստահ...

Այստեղ քո ինքնավստահ խմբապետը չնկատեց գնդապետի դեմքին հազիվ նշմարվող տխուր ժպիտը, որ շատ բան էր նշանակում, բայց միայն ինքնավստահ խմբապետը չէր այդպես մտածողը... Քո ոչ մի իգդիրցու մտքով չէր անցնում, մանավանդ Վլասի, որ կարմրատակած մտքերի ծովն էր ընկել, կծկվել, խեղճացել... հեշտ է ասել... «կանոնավոր հեռացեք»: Իրե՛ն ինչ, ի՞նչ ունի թող-

նելու... Իսկ ինքն ի՞նչ անի գերմանական սարքավորումները, երկու գործարանները... Եվ կծկվել էր, մի բուռ դարձել:

Ոչ ոք չէր ուզում քեզ լքել, թողնել հեռանալ, թողնել իրենց տուն–տեղը, այգիները, դեռ չքաղած այգիները, ցորենը... Պարզապես պիտի փակեին տները, դարպասները և բանալիները գրպանները դնեին, մինչև «ժամանակավոր նահանջը» վերջանար...

Եվ գնդապետը, նկատելով ակնհայտ, զարհուրելի փոփոխությունը ներկաների տրամադրության մեջ, զինվորականին հատուկ հաշվենկատությամբ, որ նրա համար սովորական էր, ասելիքը ուզեց ավելի պարզ, հասկանալի դարձնել և հուսադրել «ժամանակի արժեքով»:

— Դուք 72 ժամ ժամանակ ունեք ձեր տրամադրության տակ՝ մտածելու, բայց ոչ հապաղելու: Պիտի գործել և գործել:

Քո քաղաքացիները, սիրելի՛ս, չէին կարող մնալ, անուղղելի սխալ արած կլինեին, մնալու իրավունքը վերջացել էր, մնացել էր... կոտորվելը, չուզեցին կոտորվել. պատահում է, հազվագյուտ, բայց պատահում է, որ հայն էլ է երբեմն խելոք դատում:

Տեր Մեսրոպի թևին կպած Վլասը նստած տեղը քլքլում էր բանականությունից բոլորովին զրկված և տեր Հորը հարցնում.

— «72 ժամը» իրեք օր ի անելի, չէ՞... Իրեք օրում ինչ կըլի անել, իրեք օրում տուն չես շինի, բայց քանդել՝ իրեք ժամն էլ բոլի, իմ զավոդն էլ կըլի քանդել... Էն նեմեցը կբացատրի, թե իշխո քանդեն, որ էլ չշինվի... Բա ընչի՞ շինիմ... Շինիմ, որ հա՛ մնար: Մկա էլ քանդի, որ ի՞նչ. քանդի–շինի, քանդի–շինի, որ ի՞նչ...— Եվ վերջին խոսքերը, որ բարձր ասաց, գնդապետը գլխի ընկավ ինչի մասին է Վլասը կարմրատակած բլբլացնում, իր բարի ժպիտից դոյացած հարցական հայացքով դարձավ դեպի Վլասը և մխիթարելու, գուցե և նրան ահավոր շփոթից զգաստացնելու համար կատակի ձևով ավելացրեց. «Օ, դորոգոյ մոյ Վլաս, գլյա տեբյա սչաստյե պովերնուլոս սպինոյ... տի տոժե պոկաժի եմու սվոյ զադ...»:

Վլասին այդ կատակը կարծես դուր եկավ, և իր կծիկ դարձած տեղից մի քիչ շտկվեց, և ինքն էլ նույն ձևով պատասխանեց հայերենն ու ռուսերենը ինչպես միշտ խառնելով.

— Տո հենց պոկաժու, նո նե զադ, ա...— և չշարունակեց, քանի որ խոսել էր սկսել Մելիք Վրթանեսը՝ Իգդիրի հողատերերից ամենաուսեալը, հարգանքի արժանի մի մարդ, որը, երևի, իր ողջ կյանքում բարձր խոսած չլիներ, և խոսեց ցածր, խզված ձայնով, համարյա թե լացախառն:

— Ոչինչ չենք խնայի, էլ ում է պետք, ում է պետք...— և նրան գլխով էին անում Գարեգին աղան, Խաչատուր աղան, տխուր, գլխիկոր...

Բայց թե ինչո՞վ, ինչպե՞ս կարող էին օգնել հազարավոր գաղթականներին, մի տաս–քսան սայլ վարձելո՞վ, ո՞վ էր սպասելու նրանց վարձած սայլին, կամ ո՞վ պիտի վարձվեր, երբ այդ սայլը իրենց էլ էր պետք:

Տկարամիտ խոսակցություն էր, անտեղի, «մի բան» ասած լինելու համար, խիղճը քնեցնելու համար:

Հետո լռություն տիրեց, լուռ խմեցին բոլորը մի–մի վերջին թասը և ոտքի ելան կորացած, մտքերի մեջ մոլորված, և չգիտես թե ինչու բոլորը հանկարծ շտապելով, կարծես հենց հիմի պիտի տեղահան լինեին, բոլորը տուն էին շտապում: Գարեգին աղան խնդրեց գնդապետին գիշերել իրենց մոտ և խնդրեց նաև, որ մնան Մելիք Վրթանեսը, Խաչատուր աղան, Դրոն...

Այդ «պատմական» ընթրիքից հետո, որտեղ քո քաղաքի մեծամեծերը չկարողացան, փորձ էլ չարին մի կտոր հաց դնել բերանները, վախենալով, որ կուլ չպիտի գնա ու կխցկվի, կմնա կոկորդում, տուն գնացին ոչ միայն գլխիկոր, շփոթված, այլև զգաստացած, գլխի ընկած, թե իսկապես, եկողը արհավիրք է, և իրենք ոչնչով չեն կարող ընդդիմանալ, և եթե տաշեղ չեն, ապա արմատահան եղած ծառ են՝ սելավի բերանն ընկած և գաղթելը, որ այդքան պարզ հասկացրեց նրանց գնդապետը, անհավատալի, անհեթեթ, անողոք փաստ է, որի «լինել–չլինելը» իրենցից չի կախված, չլինել չկա, պետք է լինի:

Վլասը, հենց այդպես էլ մի բուռ դարձած, բռնեց իր տան ճանապարհը տեր Մեսրոպի ուղեկցությամբ, որը մի ձեռքով թևանցուկ էր արել Վլասին, պարզ տեսնելով, որ ուր որ է՝ կարող են Վլասի ծնկները ծալվել, որը, գետնին նայելով, մի բան էր կրկնում ընդամենը...

— Բան չեմ հասկանում, բան չեմ հասկանում... Մի բան ասա, ողորմի հորդ, տե՛ր հայր...

Տեր Մեսրոպն էլ մտքի ծովն ընկած չէր լսում Վլասի թոնթորանքները: Հետո, ուշքի գալով, հարցրեց.

— Ի՞նչ ասիր, բան ասի՞ր, Վլա՛ս...

— Հա՛, ասում եմ՝ մի բան ասա, ի՞նչ անեմ, ի՞նչ հող տամ գլխիս...

— Ի՞նչ պետք է անես, փակիր գործարանդ ու բանալիքը կուզես կտուրը գցի, կուզես դիր ջեբդ ու հայդա Երևանի շոշը...

— Էդ էլ բա՞ն էր, որ փակեմ, պացող չի ճարվի...

— Ընչի՞ չի ճարվի, չելավ՝ կջարդեն դռները...

— Կջարդեն, կջարդեն բոլորիս դռները... Ջեմ էլ հավատում, որ հետ գալ, վերադարձ կարող է լինել, ձեր ցնդած խմբապետի խելքով չի շարժվելու աշխարհը... Օ՛, վատ, շատ վատ բան եմ գուշակում, և տերն էլ մեզ չի փրկի... Սա վերջ է նշանա-

կում... Վե՛րջ, վե՛րջ... Բայց ինչո՞ւ այդպես հանկարծ, օրը ցերեկով, անսպասելի, անհավատալի...

— Բոլ ի, բոլ ի, տե՛ր հայր, թե չէ կեթամ հիմի կվառեմ, պաժառ կտամ ինչ կա–չկա...

— Գուցե և ճիշտը դա լիներ... Ճիշտը դա կլիներ...

Տեր Մեսրոպը իր մտքերի հետ էր խոսում, ելք, լույսի շող չկար... Մութ, անտեսանելի ու թանձր էր մտածածը:

— Գնա՛, գնա՛, Օվսաննայի հետ խելք խելքի տուր, տեսեք ինչ եք անելու... Իսկ ես գնամ:

Եվ մտածում էր, որ Խորենը, Նորայրը... օ՜, տան հետ չեն մնա... իրեն էլ չեն հարցնի և ճիշտ էլ կանեն, ուրիշ ճար չունեն... չունեն...— Վերջին «չունենը» երևի ասել էր բարձր...

— Ի՞նչը չունեն, տե՛ր հայր...

— Ճա՛ր չունեն, ճա՛ր... Դու էլ գնա վառի, նավթը լցրու, որ լավ վառվի, մնձր-վի, մոխիր դառնա...

Մտքի ծովն էր ընկել տեր Մեսրոպը, և խռովյալ հոգին առանց իր կամքի կրկ-նում էր Վլասի լեղի խոսքերը...

— Որ ի՞նչ, որ ի՞նչ, բա ընչի՞ չինիմ, չինիմ, որ քանդե՞մ... որ ի՞նչ, որ ի՞նչ, չինի–քանդի, չինի–քանդի... որ ի՞նչ...

Օ՜, կռնչալ էր ուզում դեպի վեր, բարձրյալը, այս ի՞նչ բանդագուշանք է, ճակատագրի ծամածռություն, մի ամբողջ ժողովրդի ճակատագրի, որ կրնկակոխ իր հետն է, գալիս է և ազատվելու պրծում չկա, ճար չկա...

Եկան: Թողին հազար տարվա տուն ու տեղ, որ վերջ լինի: Քրիստոնյա հզոր տերության թևի տակ, որ վերջ լինի: Իսկ էն ռուսն ասաց, որ ընդամենը 72 ժամ ունեն մտածելու, իրենց տան տերը համարվելու, դուռը ծածկելու–բացելու և ոչ փակելու, կրակ տալու, որ մնձրվի: Ի՞նչ եղավ, ի՞նչ պատահեց այս հզոր տերության հետ, որ մի Սուրմալու, մի բուռ հողը չի կարող պահել և թողնում է թուրքին, ուր երբեք չի եղել թուրքի ոտքը այդ հողին...

Տվեց, թողեց Էրզրումը, Վանը, Ղարսը, որ հեչ տալու բան չէր... Հիմա էլ Սուրմալուն... հետո՞, էլ ի՞նչը, և ի՞նչ մնաց, մի Երևա՞նը... Դե Երևանն էլ տուր պրծի էլի... Եվ ի՞նչ էր իրենց տեղահան լինելու խորհուրդը, իմաստը: Ինչքան էլ վատ էին պարսիկները, հո թուրքերից վա՞տ չէին... Չէ՛, վատ չէին: Հազիվ էին դրանց, թուրք ու քուրդ գող ավազակի քոքը Իգդիրից կտրել, հազիվ էին դարձել՝ տուն, այգի, եկեղեցի, դպրոց, կնունք, հարսանիք... Քիթ սրբելու ժամանակ չուներ կնունքից: Եվ ինչքա՜ն էին: Միայն Իգդիրմավայի եկեղեցում երկու տիրացուի հետ հազիվ էր հասցնում... Եվ հիշում է այդ փսլնքոտ կաթնակերների մեծ, չռված, զար-

մացած աչքերը, երբ իր միջնամատով տկտկացնում էր ճակատներին, որ մատը չկծեն... Իսկ հաճախ էլ «մեռոնոտ» մատը թողնում էր դիտմամբ բերաններում, որ կծեն, անուշ ցավացնեն...

Կռնչալ էր ուզում հիմա հոգու մորմոքից դեպի երկինքն ի վեր իր գովական բարձրյալին...

— Տո, ինչ ես անում, ի՞նչ, տո անխիղճ, տո կույր, տո ցնդած անամոթ...

Եվ աչքերի առաջ նորից թուխ, գանգրահեր երեխաներ, հարսներ՝ ձյունափայլ քողերով, վառած մոմեր բարձր պահած պատանիներ՝ սև բեղերը նոր ծլած, խոժոռ, «թարս նայող» պատանիներ, որ փեսա պիտի դառնային, նորից քարաշեն տուն՝ պար-տեզներով Իգդիրմավայի լայն փողոցի վրա, իր ծխի մատյանում...

— Վա՛յ Տեր ասողիդ, թո՛ւ, քո Տեր ասողիդ...

Եվ զարհուրած իր խռովյալ մտքերից՝ կխաչակնքի երեսը մի երկու անգամ և կծկված, խեղճացած կասի.

— Մեղա, մեղա քեզ Տեր, ներիր նզովյալիս, ցնդածիս, ներիր...

Եվ չկար պատասխան, քամու ոռնոց էր Իգդիրի փոշոտ փողոցներում, շների կաղկանձ, որոնք զգացել էին եկող զուլումը, և խեղկատակի, յալանչի Արսենի քրքիջն էր լսվում կարծես. «Հի՛, հի՛, հի՛... որ ի՞նչ, որ ի՞նչ...»:

Տեր Մեսրոպը, Վլասին արդեն չլսելով, նրան մինչև տուն ուղեկցեց, բակի դուռն էլ թակեց և չսպասելով, որ Օվսաննան դուռը բացի, արդեն սթափված, Փոս թաղից թեքվեց դեպի Սուրբ Գևորգի եկեղեցին, տիրացուին զարթնեցնելու:

Հորաքույր Օվսաննան իր Վլասին չճանաչեց: Առանց այն էլ կարճլիկ էր՝ հիմի մի բուռ էր դարձել:

— Ի՞նչ ի պատահի, ա՛յ մարդ, էդ ի՞նչ օրի ես, նստի, առ էս ճուրը խմի, նստի...

— Ի՞նչ նստեմ, տուր, մե ման նավթ տուր, չպիշկա տուր, եթամ վառեմ...

— Ի՞նչ վառես, ի՞նչ նավթ, Տե՛ր Աստված, ցնդվի՞ր ես, ի՞նչ ելավ քեզի խետ...

— Տեր Մեսրոպը ասաց, որ վառեմ, տո՛ւր նավթը...

Եվ Վլասը տնքալով նստում է ու պատմում եղելությունը:

— Վայ ման, Ավետիսս, Հմայակս, երեխաներս... էդ ըլելու բան չի:

— Ավետի՛սս, Հմայա՛կս,— ձգելով տնազում էր Վլասը:

Վլասը չարությամբ չէր տնազում Օվսաննա հորաքրոջը, իրենք երեխա չու-նեին և Օվսաննայի անհանգստությունը ինքն էլ էր լավ հասկանում:

— Ես ասես եմ նավթ տուր, չպիշկա տուր՝ եթամ ինչ կա չկա՝ վառեմ, ընձի էլ խետը... Ավետի՛սս... Հմայա՛կս... Տեր Մեսրոպը ճիշտ ասաց, էլ ո՞ւմ համար լիմոնաթ... ո՞ւմ աղունը աղամ... տո՛ւր, տո՛ւր, եթամ վառեմ...

Ոչ Վլասը, ոչ էլ որևէ մեկը ոչինչ չվառեցին:

Մարդ իր տուն ու տեղը չի կարող վառել, վերցնի նավթը լցնի վառի... Չի կարող: Տուն ու այգի շինողը չի կարող վառել... Թշնամու տունն էլ չի կարող վառել հայ կոչեցյալը: Ոչ ոքի տուն նա չի վառել, իրենն են վառել, քանդել, մնձրել, մոխիր շինել: Գոնե մի անգամ փորձեր, վերցներ ու իր տուն վառողի տունն էլ ինքը վառեր: Մնձրեր, որ նա էլ շնթռելու տեղ չունենար, նա էլ ընկներ դռնեդուռ... Չի վառել, կանգնել է մոխիրների առաջ և նորից սկսել է քարը քարին դնել... Ծիծեռնակի երգի նման՝ «ամեն մի շյուղ կպցնելիս առաջվա բույնն էր հիշում... Ե՛վ շինում էր, և՛ երգում...»: Կարող է դեռ երգել: Ծիծեռնակի խելքով ուրիշի տուն չես վառի, տուն վառելու համար շատ բան է հարկավոր, որոնցից հայը ոչ մեկը չի ունեցել: Ճիշտ առածի երկարականջի նման, որ գետի, ջրի հանդիպելիս իմացած բոլոր յոթ լողերից ոչ մեկը չի հիշում...

Առավոտյան՝ դեռ լույսը չբացված, Իգդիրի եկեղեցիների զանգերը մի խառնաշփոթ աղմուկ բարձրացրին, որին միացավ նաև ռուսաց եկեղեցու զանգերի դղրդոցը... Եվ վերջին անգամ աղավնիները երկինք բարձրացան այդ օրը ու կորան անհայտ ուղղությամբ:

Տեղահան եղավ Սուրմալուն, ողջ Սուրմալուն: Քաղաքի հրապարակն էին հասել արդեն մոտակա գյուղերից գաղթողների սայլերը, և ավելի շուտ նրանք բռնեցին Էջմիածնի խճուղին:

Տեղահան էր եղել ողջ Սուրմալուն, և նրանց գաղթին ոչինչ չխանգարեց: Օրգովի լեռնանցքը, Արհաջը թուրք զորքից փակել և պահում էին սահմանապահ ջոկատների հետ նաև քո երիտասարդ «տղերքը», մինչև գաղթողները Մարգարայի կամուրջը կանցնեն, Արազը կանցնեն...

...Թուրք ու քուրդ գյուղերից ոչ ոք սիրտ չարեց տեղից շարժվելու, և դա քո, նորից քո տղաների ահն էր միայն, որոնք արնակալած աչքերով, մաուզերները բաց, ծնկներին դրած, ատամները սեղմած, ամեն տեղ էին՝ քրտնած, փրփուրի մեջ կորած ձիերի հոգին հանելով... Քո պահապան հրեշտակները... Քեզ պաշտող, աստվածացնող տղաները...

Ոչ ոք չվերադարձավ այլևս նույն ճանապարհով:

Դու մնացիր՝ ձեռքդ ճակատիդ երկար–երկար նայելով, մինչև վերջին սայլերը անցան Արազը, մինչև խավարն իջավ Մասիսի փեշերից և լցվեց Սուրմարի...

Քո ծեր քահանան զանգերն այնքան զանգեց՝ մեկ շտապ–շտապ, մեկ հատ–հատ, մինչև որ մի շունչ չմնաց, շներն անգամ լեզուները հանած, տուն ու տեղ խառնած, գնացին սայլերի հետևից Էջմիածին տանող ճանապարհով՝ թանձր փոշու դեղին ամպ թողնելով իրենց հետևից:

Գուցե մի օրում ծերացած քահանան վերջինն էր, որ իր սև շուրջառի փեշերը հավաքած հետևեց հեռացողներին: Նրանից հետո Օրգովից ու Արհաջից իջան լեռ-

նանցքը պահող տղաները, որոնք երեք օր ու գիշեր դժոխքում էին եղել: Իջան հոգնած, սևացած դեմքերով, դաժան, ակնապիշ աչքերով, հետները բերելով իրենց վիրավոր, արյունաքամ ընկերներին՝ ձիերին նստեցրած, կապած, իրենք քար–լուռ, գլխիկոր սանձերից բռնած: Կորուստ շատ չէին տվել քո տղաները, բայց եղան... Ջահելներից մնացին քո հողում՝ Օրգովի լեռնանցքում, Արհաջի տակ, Էվջիլարում... Դագաղ էլ չունեցան, սպիտակ քաթանի մեջ փաթաթեցին, դրին հողը... Խմբով, իրար կողք կողքի, ինչպես կռվում էին: Ընկածների համար լացող չեղավ, համազարկ եղավ մաուզերների և ցրվեց, Մասիսի ձորերում արձագանքվեց...

Մայրերը հետո Երևանում իմացան և լացեցին լուռ, անձայն, ընկերների՝ իրենց հետ բերած մեկի գլխարկով, մյուսի արնոտ շապիկի, դեռ առագաստ չտեսած նշանածի նախշուն թաշկինակի, ծխախոտի քիսկի վրա, և տեր Մեսրոպի տերտերակինը լացեց իր ամենափոքրի՝ կապուտաչ ոսկեծամ Նորայրի դատարկ պատրոնդաշի վրա:

Դեմը Արազն էր՝ պղտոր, վարարած և Մարգարայի «փրկարար» կամուրջը: Նրանց համար ոչինչ չկար այլևս: Նրանցը դու էիր, որ թողել էին հետևում: Դեմը գաղթականներից եռացող էջմիածինն էր, որ երեկոյան զանգերի տխուր ծկլթոցով աղաչում էր փողոցներում, վանքերի պատերի տակ թափված, ծվարած գաղթականներին՝ խաղաղվել, խոնարհվել, աղոթել բարձրյալին, որ մեղմի իր բարկությունը, գթա, ների...

Օրգովից իջած քո տղաների արյունը՝ քեզ համար թափած, լսո՞ւմ ես, սիրելի՛ս, քեզ համար և վերջին անգամ, վերջին արյունն էր, որ տվեցին քեզ, քեզ՝ ցնորելու չափ պաշտող քո տղաները: Բայց հետո նրանց արյունը թափվեց Սարդարապատում, Ապարանում, Քեշիշքենդում, Թալինում, Վեդիում, որտեղ որ պետք եղավ, որտեղ պետք էր մեզ՝ հայերիս բաժին մնացած մի թիզ հողակտորը գոնե պահելու համար, իսկ դու մնացիր Արազի էն ափին ու դարձար... «աշխարհագրական» անուն քարտեզի վրա, մի քորոցի գլխի չափ, տակը գրված՝ Իգդիր:

Գիտեմ, օ՜, գիտեմ, որ իմ այս անկապ շարադրանքը չէր քո այդքան տարիների սպասածը և հիմա գրում եմ վախի ու ակնածանքի դառնահամը սրտումս՝ համոզված լինելով, որ քո մասին ոչ ոք այլևս չի գրելու, եթե քո հարգարժան, «ուսյալ զավակներդ», որոնք Պետերբուրգ, Լայպցիգ, Ժնև էին սովորել, կարողացան լուռ մնալ և որոնց մասին հպարտությամբ ցուցամատը վեր տնկելով՝ տեր Մեսրոպը առիթ եղած դեպքում հայտարարում էր. «Իգդիրը ուսյալ զավակներով պիտի պարծենա»:

Պարծենալու առիթ չեղավ, նրանք՝ քո այդ «ուսյալ զավակներդ», ընդամենը կարողացան... քո մասին ընդունված, հաստատված լռությունը չխախտել, կարողացան լուռ մնալ՝ Արազի ջուրը բերաններում, քանի՜–քանի տարիներ լուռ մնալ: Կուլ չի գնացել ջուրը, ա՛յդ էլ իմացիր: Հետո (դու այդ մասին չէիր կարող իմանալ), մի ինչ–որ չգրված օրենքով, կարծես լուռ համաձայնությամբ՝ քո անու-

նը տալը արգելվեց... Եվ ոչ ոք չի կարող հիշել, ինչո՞ւ, և ո՞վ, և ո՞ւմ տված իրա-վունքով, բայց արգելվեց:

«Իգդիր», «իգդիրցիք» էին ասում ու փսփսում վախվորած երևանցիք և երևակայում մաուզերի կոթը բռնած ինչ–որ մարդկանց, «ջանբեզարների», մաուզե-րիստների... Կարծես այդ նույն ձեռքերով նրանք գութանի, արորի մաճ չէին բռնել, խաղողի վազ չէին էտել, հունձ չէին արել, գինի չէին քամել, բարև չէին բռնել...

Եվ ոչ ոք իրեն հարց չէր տալիս՝ ախար ի՞նչ, ի՞նչ պիտի բռնեին ձեռքներին այդ «մաուզերիստ» կոչված, աղվամազ նոր ելած խեղճ տղերքը՝ Օրգովում, Արհաջում, հենց նույն Իգդիրում, որի շուրջը թուրք ու քուրդ գյուղերի մինչև կոկորդը զինված խուժանները մշտական չռած աչքերով են նայել մեր հացին: Ի՞նչ, ի՞նչ անեին նույն Երևանում առանց զենքի, մաուզերի, մոսինի, երբ փափախին կարմիր աստղ կպցրած Քեմալի փաշաները հասել էին Խաթունարխ, Էջմիածնի տակ, Ղուրդուղուլի... Ի՞նչ անեին, ինչ... Երևանում տանը նստեին, սպասեին Քեմալի ասկյարներին, երբ կաթո-ղիկոսից սկսած մինչև ճեմարանի երիտասարդ վարժապետները սպիտակ պատանք էին հագել, Սարդարապատի ճակատ գնացել... Տանը նստել չէին կարող, երակներում ուրիշ արյուն էր, դեռ չէր լերդացել Իգդիրի արյունը նրանց երակներում: Նրանցից շատերը, մեծ մասը, չհասցրին անգամ օրինական զինվոր էլ դառնալ, իրենց «անկախ Հայաստանի» համար զինվորական համազգեստը հագնելու ժամանակ չունեցան, կռվեցին ով որտեղ հասցրեց կռվել ու առանց համազգեստի էլ սպանվեցին...

Օ՜, ուր էր, թե հազարավոր գաղթականների, մորթվածների, Եփրատի պղտոր ալիքների մեջ «փրկություն» գտածների աջ ձեռքում էլ լիներ այդ զենքից... Եփրատը չէր լերդանա արյունից:

Եվ ինչո՞վ, ի՞նչը ձեռքներին կանգնեին Վեդի բասարի, Զանգի բասարի, Թալինի, Քեշիշքենդի, Նախիջևանի գազազած թուրքերի դիմաց, որոնց ոտքի էին հանել մուսավաթական խաները, Քեմալի փաշաները, իսկ մյուս կողմից՝ վրաց մենշևիկների զորքն էր Լոռին, Ալավերդու պղնձահանքերը ուզում գրավել, «զորք», որ Կովկասյան ֆրոնտում փամփուշտ չէր կրակել, հարմար ժամանակ էր գտել՝ Ալավերդու պղնձահանքերին տիրանալու համար: Եղն էր չոքել, դանակա-վորները շատացել էին: Նրանք էլ եկան հասան իրենց զրահագնացքով, հասան մինչև Սանահին... և միակ զրահագնացքը թողնելով՝ մեկ էլ չունչ առան Թիֆլի-սում, երբ իրենց դեմ տեսան գազազած Լոռու գյուղացիներին, որոնք ժայռերից քարերով էին պատերազմում զրահագնացքի հետ, ինչպես տարիներ առաջ Հաղ-պատի գյուղացիները...

Օ՜, հարգելի՜ վրացի եղբայրներ, մեր հազար տարվա թանկագի՜ն հարևաններ, Արչիլ Ցիխիսթավիի սիրելի՜ հայրենակիցներ, ինչո՞ւ, ինչո՞ւ եկաք հասաք Սանահին, Ալավերդի, ինչո՞ւ մտաք ձեր հազար տարվա հարևանի տունը, երբ նա տանը չէր, երբ

նա արյունաքամ, չգիտեր՝ որ փաշայի զորքի առաջը պահեր... Ձեր ինչի՞ն էին պետք Ալավերդու պղնձահանքերը, երբ՝ ինչքան պետք էր, երբ ուզեիք՝ խնայող չէր լինի: Եվ մտաք զորք ու զրահագնացքով, օրը ցերեկով, առանց կռիվ հայտարարելու... խիղճ-ներդ թողած Թիֆլիսում, քալբատոնոների մոտ:

Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ, երբ Քեմալի փաշաները հայտնվեցին Լոռիում, որտեղ նույն ձեր ցանկալի պղնձահանքերն էին, ինչո՞ւ ձեր զորքը, որ կռվելու պատճառ ու առիթ էր փնտրում իր «շնորհքը» ցույց տալու համար՝ մնացիք նույն քալբատոնոնե-րի փեշի տակ... Օ՜, չուզեցիք դրժել ձեր պայմանագիրը թուրքերի, գերմանացիների հետ՝ կնքված, ստորագրված, որ մնալու եք... «ձեռնպահ», չեք խանգարելու, որ Վեհիբ փաշայի զորքերը օր առաջ հասնեն Բաքու: Մեր սրտակից մյուս հարևանի հրավերով, խնդրանքով... Եվ միակ «խանգարողը» մնաց Լոռվա անգեն բնակչությունը՝ Վեհիբ փաշայի տասը հազարանոց զորքի դեմ մեն–մենակ:

Եվ ի՞նչ կարող էին անել, բացի խանգարելուց, քանի որ հայկական զորամա-սերը բաժան–բաժան, ցաքուցրիվ կռվում էին քանի՜–քանի ուղղություններով, իսկ զորամասերի մեծ մասն էլ Բաքվի կոմունային էր օգնում պաշտպանվելու...

Եվ ի՞նչ կասեին Արշիլը կամ իր կողակիցը՝ քալբատոնո Քեթևանը, սիրելի՛դ իմ Իգդիր, իրենց հայրենակիցների մասին:

— Արշի՞լը... Արշիլն ի՞նչ էր, սիրելի՛ս, մի հասարակ փոստի նաչալնիկ, բայց կասեր, մի բան կասեր, լավ բան չէր ասի, նա Իգդիրի աղ ու հացը մոռանալ չէր կարող, մշտական հյուրն էր իմ քաղաքացիների, քեֆ հարսանիքների մշտական թամադա, չէր կարող չասել...

Ասել է երևի: Ասել է, բայց ոչ Զխենկելու նման, որ... լցնում էր Կախեթի քաղցրահամ գինին արծաթապատ եղջյուրի մեջ, թևը գցում սեղանին շնթռած Խատի-սովի ուսը ու հանգստացնում՝ լացող, աղերսող, զորք, օգնություն խնդրող Խատիսո-վին, որ խմի հանգստանա...

— Խմի՛ր, Սաշա՛, գենացվալե, խմի՛ր, թող տխրությունդ անցնի, կդիմանա, դե հայը սովոր է, որ...— չի ասում, որ կոտորվի... ասում է՝ կդիմանա,— կդիմանա, Սաշա՛, իսկ մեր զորքը... Աստված չանի՝ Թիֆլիսի վրա գա թուրքը... Մեր օրը ի՞նչ կլինի... Դու խմի՛ր, ցավդ տանեմ...

Ցավն էլ, տառապանքն էլ Լոռին, Ղարաքիլիսան տարան, և ի՜նչ ցավ ու կոտորած... Բայց խանգարեցին, ընդամենը խանգարեցին փաշաներին՝ օր առաջ հասնելու Բաքու, ընդամենը խանգարեցին: Իսկ որ խանգարեցին՝ խոստովանում է ինքը՝ Վեհիբ փաշան, Ղարաքիլիսայի տակ կռվող լոռեցիների դիմադրությունը ճաշակելուց հետո: «Հայերը կարող են դասվել աշխարհի լավագույն զինվորների թվին»,— ասել էր թուրք փաշան:

Այդպես է եղել, մենք միշտ խանգարել ենք բոլոր տեսակի փաշաներին, նրանցից առաջ պարսիկ սարդարներին, արաբներին, թաթար–մոնղոլներին, ինչ իմանամ էլ ում, որ մեր սրտացավ հարևանները... «ձեռնպահ» ապրեն:

Դանակավորները միշտ շատ էին լինում, իսկ չոքած եզը միշտ մենք էինք լինում:

Քո տղաներն էլ արդեն, սիրելի՛դ իմ Իգդիր, քո «մաուզերիստ» տղաները շատ չէին: Նրանք հանգիստ չունեցան այն օրից, երբ Իգդիրի գաղթականությանը հասցրին Մարգարայի կամրջին և Արազն անցան: Իսկ հետո, իսկ հետո նրանց այլևս չհաջողվեց նորից Արազն անցնել: Միշտ մի բան խանգարեց ու խանգարեց: Այդ մի բուռ մեզ մնացած հողը դարձել էր չորս կողմից կրակ տված տուն, որի բնակիչները չգիտեին, որ կողմը հասնեն, հանգցնեն, իրենք էլ էրվում, խորովվում էին, և քո տղաներն էլ, քո «մաուզերիստ» տղաներն էլ բոլորի հետ... Ի՞նչ անեին, ուրիշ անելիք չկար, բացի կռվելուց, կռվել էր պետք, կռվում էին... Ձեռքներին այդ «տասանոցն» էր ու մի ջահել կյանք և ուրիշ ոչինչ:

Օ՜, պետք եղավ, շատ պետք եկավ այդ «Տասնոց» կոչված փրկարար զենքը, որի հետ ընկերացել էին բոլոր նրանք, ով չէր ուզում հավի պես մորթվել, քո տղաները չէին միայն, ուրիշ ճար ու հնար չկար:

Հայի համար իր հողը երբեք, իր ապրած հազար–հազար տարիներում, երբեք չէր եղել այդքան նեղ, չնչին, մի բուռ ընդամենը, մի կորեկի արտի չափ...

Ձկար, հող չկար, ամեն տեղ՝ նստած, չնթռած թուրք ու քուրդ էին՝ քարաքոսի պես կպած այդ մի թզաչափ հողին էլ: Եվ դրանք էլ... մեր տանը ապրող թուրք ու քուրդն էին, մեր աղ ու հացը կիսող... և գազազել էին, սանձարձակվել՝ Թալինում, Դարալագյազում, Վեդիում, Նախիջևանում, Զանգիբասարում՝ մեր տանը, մեր թզաչափ հողում...

Դրանց էլ ոգևորող կար, բացի փաշաներից, և էլի և նորից մեր հարևանը...

Տե՛ր Աստված, ի՞նչ էին ուզում, ախար ի՞նչ ունեինք, որ իրենց տայինք, բացի սովից, տիֆի համաճարակից մեռնող գաղթականությունից, ուրվական դարձած որբերից: Ինչո՞ւ էին այդքան անխիղճ քարացել, մարդու կերպարանքը կորցրել՝ այդ մեր աղ ու հացը կիսող «խոնախաները», «քիրվաները»... Բորենին, գայլն էլ մի տեղ կշտանում են հոշոտելուց, արյունից... Ի՞նչ էին դրանք. մորից չէի՞ն ծնվել իրենք էլ, թե՞ օձից, կարիճից էին ծնվել...

Օ՜, երբեք այդպես նեղ չէր եղել հայի հողը իր համար և գաղթած ժողովուրդն էլ հողագործ, ռանչպար՝ առանց գութան, լծկան, սերմացու... Սերմացո՜ւ, սերմացու կարո՞ղ էր լինել, երբ հաց էին զառանցում կին, երեխա, ցնցոտիների մեջ սովալլուկ գաղթականություն: Եվ այդ գաղթականությունը իրեն մնացած մի պատառ հողն էլ պիտի ներկեր իր արյունով... Ներկվեց, այդ մի պատառ հողն էլ ներկվեց. վիշապի ախորժակ ունի մեր հողը, չի հագենում...

Քո տղաների արյունն էլ պետք եկավ, սիրելիդ իմ Իգդիր, նրանք էլ ոչինչ չունեին տալու մեր հարևաններին, բացի իրենց ջահել կյանքից և... զենքից, մաուզերից:

Գրիչ պապը գնաց Քեչիչքենդից Արշալույս քեռու շորերը բերեց... Գարեգինը սպանվեց և գերեզմանի տեղն էլ չիմացանք հետո... Վահագնին, Մամիկոնին բերեցին պատգարակով, քանի տեղից ծակծկված, արյունաքամ... Իսկ ով կենդանի եկավ Սարդարապատից, Ապարանից, Վեդի բասարից և էլ որտեղից... անուններին ավելացրին՝ իրենց ձեռքով եղած զենքի խարանով... «մաուզերիստ»: Քո տղաներին գտան սազական այդ «խարանը», սիրելի՛դ իմ Իգդիր: Եվ զարմանալու բան էլ չկա, կարծեմ, որ ձեռքներին իսկապես և հաստատ՝ մաուզեր էր եղել: Եվ ուր էր, թե այդ նույնպես «լուռ համաձայնությամբ» վերջանար, ինչպես քո անունը տալը վերջացավ «լուռ համաձայնությամբ»: Նրանք ժամանակ էլ չունեցան, ժամանակ էլ չտվին իրենց «արդարացնելու» մասին մտածելու համար: Նրանց ժամանակը մի տեղ սպառվեց:

Նրանցից ով կենդանի մնալու բախտ ունեցավ, այդ «բախտ» կոչեցյալը նրանց այլևս չժպտաց: Ժպիտի փոխարեն նրանք տեսան մի զարհուրելի ծամածռություն խեղկատակի, և նույն մաուզերի կաղկանձը, որ դեռ արձագանքում էր Օրգովի ձորերում... Եվ կրակողը իրենք չէին արդեն...

Բայց ո՞ւմ առաջ և ինչ արածի համար արդարացնեին իրենց: Ոչ ոք չկարողացավ բացատրել, ոչ ոք չկարողացավ բացատրել, թե ինչու չի կարելի արյուն թափել այն մի կտոր մնացած հողի համար, որից բացի այլևս ոչինչ չէր մնացել իրենց: Եվ ոչ ոք նեղություն չքաշեց բացատրել, թե ինչու, ինչ իրավունքով զենք ունենալը պիտի համարվեր անպատիվ խարան, հանցագործություն, ծիծաղի, արհամարհանքի արժանի խարան: Ով պիտի իրենց պաշտպաներ այդ տակնուվրա եղած հողում, որը դեռ սովից, տիֆից մեռածներին թաղելու համար էր պետք գալիս... Այդ ով, ովքեր էին «պաշտպանողները», որոնք հրեշավոր անտարբերությամբ թողեցին մորթվելու հազար հազարավորների, որոնց միակ մեղքը համարեցին հայ ծնվելը... Հայ էին ծնվել և վերջ:

Կարելի էր, օ՜, կարելի էր խարանել, նզովել նրանց: Իգդիրի տղերքին, եթե... այդ մաուզերը լուռ էր մնացել, փամփուշտը լռվել, խցանվել էր մաուզերի փողում, չէր կրակվել... Եվ կնզովեր, կնզովեր, կանիծեր տեր Մեսրոպը այդ պատանուն և չզոհված կլնչեր իր ծխի մատյանից՝ նզովված, խարանված:

Երբ քանդվողը աշխարհն է լինում, ամենաէժանը ապրանքների մեջ մարդն է դառնում, արյան գինը, իսկ հայի արյունը ափսոսացող չկար, խնայող չկար, փամփուշտն էին խնայում... Եվ տեր Մեսրոպին էլ հարցնող չեղավ իր ծխապատկան երիտասարդների և իր չորս արծիվների արյան գինը. խարանվել էին ու վերջ... Խիղճ, խղճմտանք չճարվեց, խարանեցին ու վերջ:

Քո մնացած, «չխարանված» ժողովուրդը, իր «ուսյալ զավակներով» պետք եկավ, զբաղմունք գտավ: Դու բժիշկներ ունեիր, վարժապետներ, մանկավարժներ, երևելի մանկավարժներ՝ Արշավիր Շավարշյան, Անուշավան Պողոսյան, Խաչատուր Կանայան, Գրիգոր Ահարոնյան, Գայանե Պահլավունի, որոնք Երևանում օդի չափ պետք եկան: Ունեիր արհեստավորներ և հողագործ–հողապաշտներ, որոնք ցրվեցին երևանամերձ գյուղերում, նորից կպան հողին Նորագավիթում, Շենգավիթում, Զարբախում, գնացին Ղուրդուղուլի, Էջմիածնի գյուղերը ցորեն ցանելու, այգի, բոստան տնկելու նորից, ամեն ինչ նորից ու նորից, ոչնչից սկսելու:

* * *

Իգդիր... Քաղաք էր Իգդիրը, նման անծայրածիր Ռուսաստանում ապրող այլազգի ժողովուրդների մանր ու մեծ քաղաքներին, որոնք տարբերվում էին իրարից ապրողների գործածած լեզվով ու նիստուկացով միայն:

Ուներ իր ռուսաց եկեղեցին, որ քաղաքի կենտրոնում էր, բուլվարի ու հրապարակի ծայրին, Իգդիրից Էջմիածին տանող գլխավոր փողոցի վրա: Այդ ռուսաց եկեղեցին, ի տարբերություն Ռուսաստանի բոլոր եկեղեցիների, շինված էր տաշած սև տուֆով, մեծ չէր իր չափերով. նշանավոր էր (երևի այդպես էլ պիտի լիներ) իր զանգերի հզոր ձայնով, որի պատճառով Իգդիրի մեր եկեղեցիները շուտ կամ ուշ էին ծկլթացնում իրենց զանգերը, որ ղողանջը չկորչեր այդ աղմուկի մեջ:

Այդ զանգերի հետ միասին երկինք էին բարձրանում անհամար աղավնիներ, որոնք գիշերը թառում էին հենց նույն զանգակատան ծածկի տակ: Զանգերի դղրդոցից հանկարծակիի եկած՝ խրտնում էին ֆայտոնների ձիերը, մարդիկ վախվորած խաչակնքում էին երեսները՝ ասելով. «Էլ կալմակալը տրեց»... Իսկ քաչալ Կյասպարի հնդուհավերը ուռչում–արնակալում էին բոխախներով ու հերսոտած ղլղլացնում էին մինչև զանգերի ձայնը կտրվելը...

Իսկ ինքը՝ Կյասպարը, երևի միակ մարդն էր Իգդիրում, որին բոլորովին չէին անհանգստացնում

այդ զանգերի «ղողանջը», առավել ևս իր հնդուհավերի ու նրանց ղլղլոցին միացած իր մեծ թռչնանոցի բոլոր փետրավորների՝ հավերի, սագերի, բադերի և աքլորների ահավոր աղմուկը, որը կանոնավոր կրկնվում էր ամեն օր և օրը երեք անգամ զանգերի դղրդոցի հետ... Եվ պատճառն էլ մի առանձին բան չէր. պարզապես Կյասպարը... ականջներից «խեղճ էր», այսինքն՝ լսողությունը ծերությունից, թե բնականից լավ չէր, ինչը չէր կարելի ասել նրա կողակցի՝ Թագուհի զալոյի լսողության մասին և մանավանդ նրա ձայնի, որը ամպրոպային հնչեղության երանգներ ուներ և քանի որ տանել չէր կարողանում այդ «ռսաց» եկեղեցու զանգերի աղմուկը, որոնք խլացնում էին Սուրբ Գևորգի անուշ ղողանջները, իր բարկությունը թափում էր խեղճ փետրավորների գլխին: Եվ մեծ բակի որ ծայրում լինեին հեռավոր, կսաստեր այդ չափը կորցրածներին՝ ընդամենը մի անգամ որոտալով.

— Դը, բոլ էլավ զայլա տանեք, զխկում կերածներ...— որը նաև հավասարապես կվերաբերեր «ռսաց» եկեղեցու զանգերին: Եվ եթե եկեղեցունը կարող էր և շարունակվել, բայց հավանոցի բնակիչները վախից կանցնեին ցածր ռեգիստրների, իսկ փքված, փշաքաղված հնդուհավերի փետուրները նախշուն հովհարի նման դանդաղ կծալվեին թուլացած:

Թռչնոց Իգդիրում բոլորն էլ ունեին, և դրանց մեծ ու փոքր լինելը կախված էր լինում տիրոջ ընտանիքի անդամների քանակից, իսկ Կյասպարինը՝ թռչնոցն էլ, ընտանիքն էլ, փառք Աստծո, բազմանդամ էր, իր ունեցած երեք–չորս տղաներին ու հարսներին ավելացել էին եղբոր որբ մնացած տղաները՝ Եղնիկն ու Գուգուշը: Թռչնոցին նայողն էլ ինքը՝ Կյասպարն էր, որ հացահատիկի առևտուրը, խանութը տղաներին էր թողել, ու ինքը դրանցով էր զբաղված՝ ամառ–ձմեռ էլ բրդե սև շալը ուսերին գցած, ձեռքերը մեջքին կանթած ողջ օրը թռչնոցի մոտերքում էր, ինքն էլ մի մեծ այլակերպ թռչուն հիշեցնող: Կյասպարենք մեր խնամիներն էին, և նրա բազմաթիվ հարսներից մեկն էլ իմ հորաքույրս էր՝ Մանե հորաքույրս, Իսաբեկի փոքր աղջիկը, որի գլխավոր զբաղմունքը, երբ դեռ մեր տանն էր, ինձ նայելու հոգսն էր, որին և

ամուսնացրել էին Հմայակ հորս ամենասիրելի ընկերոջ՝ Համազասպի հետ, Կյասպարի միջնեկի՝ «չոփուռ Համոյի» հետ, իսկ «չոփուռն» էլ ավելացրել էին մյուս Համոներից տարբերելու համար, քանի որ Համոներ Իգդիրում շատ կային, Հմայակին՝ Համո էին ասում, Համազասպին՝ Համո:

Թագուհի զալոյի ձայնը իսկապես արտակարգ էր, ցածր խոսել չգիտեր և դժվար է ասել՝ բնականի՞ց էր, թե՞ «մշակվել», սովորական էր դարձել Կյասպարի հետ մշտական բարձր խոսելուց ստիպված, և դրա վրա էլ զարմացող չկար ո՛չ տանը, ո՛չ իրենց թաղում, քանի որ օրվա մեջ մի երկու–երեք անգամ լսում էին «ուտելու ժամերին»: Երբ թոնրի վրա շորվայի, բոզբաշի պուտուկ–ղազանները իրենց «դամին» հասած կլինեին, Թագուհի զալոն կորոտար...

— Համո՛, Մկրտի՛չ, Գուգո՛, Եզնիկ յարեք խացիի...— Եվ տղաները՝ փողոցում, խանութում թե ավելի հեռուն լինեին, շտապ իրենց տուն կգցեին. կարիք չէր լինում հետևներից մեկին ուղարկելու:

Իսկ նրանց «հացի նստելը» սկսվում ու վերջանում էր ամեն օր երգ ու պարով: Եզնիկը դափ ու զուռնայի վարպետ էր, Համոն ու Գուգուշը՝ երգ ու պարի, պակասն էլ լրացնում էին հարսները, բոլորը ջոկովի: Բացառություն չէր քյաչալ Կյասպարի ապրելակերպը, շատ կային Իգդիրում այդպես ապրողներ: Այդպես էր կարծեմ, սիրելիդ իմ Իգդիր, տխրելու, ճանճրանալու ժամանակ չունեիր...

— Ձանձրանալո՞ւ. ամեն օրս տոն էր ինձ համար, բայց տխրությունը մնաց, ու էլ ոնց չմխա հոգիս, ոնց չգժվեմ Արազի նման...

Դե հասկացիր վիճակներս. թե չէ՝ լքեցիք, լքեցիք...

— Ներո՛ղ եղիր, ցավից է, մոմուռից, տանելու բան չէ էս մենակությունը...

Բայց, սիրելի՛ս, կարծեմ որ «մենակության» համար էլ տեղ ես ունեցել...

— Բա՞նտը, «դուսազը» նկատի ունես... Սրամիտ չէ, բայց կար, բանտ էլ ունեի, պրիստավի ունեցած մի քանի սենյակներից մի երկուսը քո ասած «մենակություն սիրողների» համար էին հարմարեցված, լուսամուտներն էլ փողոցի վրա էին նայում և շատ բարձր չէին, շատ էլ հարմար էին, որ բանտարկյալը չձանձրանար մենակությունից, գնացող–եկողի հետ կարող էր քեֆն ուզածի չափ խոսել–զրուցել, հանձնարարություն տալ, որ փոխնորդ բերեն, կամ էլ կասեր. «Գյա, զալոյիդ ասա (այսինքն՝ իր կնոջը), թող էսօր ճաշին թփով դոլմա պերեն, թթուն չմոռանան, սիրտս թթուի ուզելի... Էդ էր, սիրելի՛ս, իմ ունեցած բանտն էլ՝ էդ էր. ավել–պակաս կներես... և էլ ի՜նչ քաղաք, որ բանտ, պրիստավ չունենա:

Եվ ճիշտ այդպես էլ եղել է, ուրիշներից էլ եմ լսել նույնը, մանր–մունր «զանցառուներ» են եղել այդ բանտում գիշերողները, և եթե բարձր շենք լիներ, կարելի էր և սպիտակ դրոշակ կախել վրան միջազգային օրենքների համաձայն, քանի որ պատահում էր և դատարկ էին մնում սենյակները, զոռով հո հանցագործ չէին ճարելու...

Իգդիրն ուներ իր քաղաքագլուխը, գլավան և պրիստավը՝ նահանգապետի նշանակած և Իգդիրի համար հատուկ ջոկած: Բայց նրանց գոյատևության ժամկետները իրենք՝ իգդիրցիք էին տնօրինում... Իսկ սա էլ նշանակում էր, «մեղմ» ասել չես կարող, որ Իգդիրը ուներ իր... ահաբեկիչները, որոնց պատկանելիությունը դժվար էր պարզել, քանի որ Իգդիրում կային այն բոլոր «կոմիտեները», որ հասցրել էին ստեղծել հայերն ամենուր, ուր տասնյակից ավելի հայ բնակչություն է եղել...

Ուներ փոստ, հեռագրատուն, որի «նաչալնիկը» նշանակված էր Թիֆլիսից և մի «կարաչուխելի» վրացի էր, որն իր ուրախ, մարդամոտ բնավորության համար դարձել էր բոլորի սիրելին և անվերջանալի քեֆ ու ծնունդների մշտական թամադան՝ Արչիլ Նեստերովիչ Ցիխիսթավին:

Սրան արդեն վաղուց համարում էին Իգդիրի նշանավոր մարդկանցից մեկը, ու թեև վրացուն հայացնելը հնարավոր բան չէ, սակայն դարձնելը իգդիրցի՝ հնարավոր էր, և դարձրել էին: Նրա կինն էլ «քալբատոնո», աղջիկ–պարոն Քեթևանը պակաս նշանավոր չէր՝ հատկապես լոտո խաղը ներմուծելու գործում Իգդիրի գալոների երեկոյան թեյասեղաններին: Հետաքրքիր է, որ Իգդիրում միակ վրացին Արչիլը չէր, թեև հայտնի բան է՝ վրացին ուրիշի հողում առանձնապես ապրելու

անհրաժեշտություն չունի, բայց ահա Իգդիրում մի քանի տուն կային՝ ծառայողներ, չինովնիկներ, հենց նույն փոստում՝ 2–3 աշխատողներ. երևի, հավանել էին Իգդիրը, Իգդիրցիներին...

Հիշում եմ՝ Թիֆլիսի ակադեմիայում սովորելիս դրանցից մեկը շատ տարիներ անց ինձ գտավ... Տնից փող էին ուղարկել, և այդ գումարը փոստից ինձ բերեց մի սովորական առաքող, որը հանրակացարանի դռնից դեռ չմտած՝ քիչ մնաց Արչիլի պես լեկուռի պարելով մտներ, ու փաթաթվեց վզովս, կորած զավակին գտածի պես... Լաց էր լինում ու վրացի ընկերներիս պատմում ով լինելս ու... Բայց և չմերժեց «մաղարիչը»...

* * *

Եվ, ինչպես վայել է քաղաքին, Իգդիրը ուներ իր «հոգևոր օջախները»: «Իլիզոն» և թատրոն նույն «Իլիզոնի» շենքում, փոստ–հեռագրատուն կողքին, «գլխավոր պողոտայի» վրա, որտեղ «թատրոն էին խաղում», «Աշոտ Երկաթ» բեմադրում կամ «Քաջ Վարդան» և որտեղ հյուրախաղերի էին գալիս Սիրանույշը՝ «Համլետով» և Ադամյանը՝ «Օթելլոյով»:

Իգդիրի խանութներում կարելի էր ճարել ինչ քեֆդ ուզեր՝ սկսած ռուսական խավիարներից, ապխտեղենից, ձկնատեսակներից մինչև Վանա տառեխը, Սևանի իշխանը, կողակը և Ամստերդամի լիկյորները, «Ժորժ–Բորման» ֆիրմայի թխվածքեղեն, Շուստովի, Սարաջևի ընտիր կոնյակները, մի խոսքով՝ ինչ Թիֆլիսում, Երևանում ճարվեր: Բայց հիմնականում կապը Երևանի առևտրական տների հետ էր և նրանց միջոցով էին ստանում բոլոր ապրանքները:

Քաղաքը լիքն էր ռուսական չինովնիկությամբ, հատկապես զինվորական աստիճանավորներով, քանի որ սահմանապահ քաղաքի համարում ուներ արդեն, զորք ու կազակություն, որոնց մի մասը ապրում էին ընտանիքներով:

Իգդիրը նշանավոր էր նաև իր արհեստավորներով, երևելի դերձակներով, կոշկակարնե-

բով, որոնց կարած կարակուլի փափախները, «չքերթային» չերքեզկաները, «վեն-գերսկի» մուշտակները, բարձրաճիտ սապոգները պատվիրելու էին գալիս Երևանից և ուրիշ քաղաքներից:

Զինագործներ կային, քանի որ բնակիչներից ամեն երկրորդը զենք ուներ: Զինագործներից ամենահնարագետը Ավագովենց Նիկողոսն էր, որ մնացել էր... մի ոտքով, իսկ ոտքից բաժանվելու պատճառը մի հին, անգործածելի մաուզեր էր եղել (նորից մաուզեր), որի փողի մեջ խցանված փամփուշտը ոչ այս, ոչ այն կողմ էր ուզում գնալ, և երկար չարչարանքից հետո, փակաղակը ետ ու առաջ տանելու ժամա-նակ պայթում է ձախ ծնկի վերևում... Նիկողոսը ինքն է ուզում իր ճարը տեսնել, բայց երբ ժանգոտած փամփուշտը իր գործն է տեսնում՝ միակ ելքը մնում է վիրահատումը, որը և իրականացնում է Իգդիրի... անասնաբույժը՝ ռուսաց եկեղեցու տերտեր Մեֆո-դիի տղան, որին առաջին իսկ օրից իգդիրցիք «էշի բժիշկ» անունով կնքեցին, չնայած որ Իգդիրում համարյա թե էշ չկար, եղածը ձի էր:

Քո գոյության անհերքելի փաստով, սիրելի՛դ իմ Իգդիր, դու, դու պարտա-կան էիր միայն ու միայն քեզ քաղաք դարձնողներին, որոնք, կարելի է ասել, ջանք չխնայեցին պատմական շատ չնչին ժամանակամիջոցում քեզ քաղաքի տեսք տալու, և ոչ միայն տեսք, այլև «համապատասխան բովանդակությամբ» ու արժե-քով հայտնի դարձնելու քեզ նաև «հեռանկարային» առումով, և ոչ միայն Սուր-մալուի նահանգում, Երևանում, շատ ավելի հեռուներում և անգամ Մասիսից այն կողմ ընկած տեղերում...

Քաղաք դառնալու իրավունքը դու մեծ փորձություններով «նվաճեցիր», և քո պետքն էլ չէր, թե ինչ են մտածում քո մասին գավառական իշխանություն-ները, և եթե նրանք քո երեք եկեղեցիներին ավելացրին նաև սրբատաշ սև քարով շինված ռուսական «ուղղափառ» եկեղեցին իր գերեզմանոցով, «գորոդսկոյե ուչիլիշչեն», «կազնաչեյստվոն», փոստ–հեռագրատունը և այլ օբյեկտներ, ապա պիտի ենթադրել, որ նրանք ոչ միայն համակերպվել էին (ճարահատյալ) քո գոյության փաստին, այլև հաստատում էին, որ սահմանագլխին կա և պիտի մնա այդ Իգդիր կոչեցյալ քաղաքը, որտեղից ճանապարհները կտանեն դեպի Վան, Պարսկաստան, դեպի Բայազետ, Ալաշկերտ, Կարին, դեպի Ղարս, Արդահան, Սարիղամիշ...

Մեծ քաղաքների շուք ու փայլից դեռ շատ էիր հեռու, բայց ունեիր գավա-ռական քաղաքներին բնորոշ այն «հարմարավետությունը» սովորական, հասարակ մարդու անշտապ ապրելու համար, որ մարդը, օտարը անգամ մենակ չզգա իրեն, ինչ-պես մեծ քաղաքի թոհուբոհի մեջ խեղճացած, փոքրացած մարդը, որին բարի լույս տվող չկա, քեֆը, հալը հարցնող չկա:

Անծանոթներն անգամ փողոցում հանդիպելիս իրար բարևեն պիտի, մի երեք–հինգ անգամ բարևելուց հետո կկանգնեն, իրար հալը կհարցնեն և մի օր էլ տեսար՝ երեկոյան ժամերգությունից հետո իրար տուն կհրավիրեն...

Այդպես էր, և անգամ քո «այլազգի» բնակիչները հարմարվել էին քո ընիկների ապրելաձևին և ոչ հարկադրված:

Այդպես վաղուց «իգդիրացել էին» և «կարաչուխելի» Արչիլ Ցիխիսթավին, «ռսի տերտերը»՝ տեր Մեֆոդին ու իր տղան՝ «էշի բժիշկ» Ֆեոդորը, որին տեր Մեֆոդին ամուսնացրել էր Շուշվարենց աղջկա՝ Գոհարի հետ, որին և ոչ ավել, ոչ պակաս դիմում էր՝ անունից առաջ դնելով «դորոհոցեննայա Գոխար»...

Եվ այդպես իգդիրացել էին նաև սահմանապահ կայազորության սպայության մի մնայուն մասը իրենց «մարֆուշկաներով», եզդի Ջհանգիր աղան նաև, որ ձմեռում էր Իգդիրում և եզդի մյուս ցեղապետը՝ Ուսուբ բեկը, որի տղան էլ՝ Ալի բեկը, սովորում էր ծխական դպրոցում ու ապրում էր մեր տանը, քնում էր Գևորգի հետ տատիս «կլինիկայում»: Եվ Մուսա Մալիմը, որ չէր ջոկում արդեն ոչխարի խորոված ը խոզի խորոված ից:

Ինչքան էլ խառը լինեին ժամանակները, քո քաղաքում ոչ ոք անուշադիր չէր մնում, անգամ «Ծալը պակաս» Սմբատը, որին կնքել էին նոր անունով՝ «Օթելլո Սմբատ» էին կոչում ի պատիվ հանճարեղ անգլիացու համանուն ողբերգության տարաբախտ հերոսի, որի ծալի պակասության «բնականից» լինելը Իգդիրում պիտի պարզվեր... Բայց Սմբատի ծալի պակասությունը «բնականից» չէր և այդ պատվին էր արժանացել...կնոջը խեղդելու մի անհաջող փորձից հետո՝ «խանդի հողի վրա», որից և «խախտվել» էր... Իսկ հարգելի իգդիրցիք, որ ծանոթ էին նույնքան հանճարեղ Պետրոս Ադամյանի հոգեցունց խաղին Օթելլոյի դերում, չմոռացան իգդիրացնել այդ հերոսին ևս:

Սմբատը խելոք, անշառ մարդ էր և նրա «խախտվածությունը» այն էր, որ շրջում էր փողոցներում երեսը մի կողմի, պատի կողմ թեքած, «մենախոսելով» և հան-

դիպողներին, կարծես խնդրելով, մատը շրթներին էր դնում և «սո՛ւսս» ասում, որ չխանգարեն երևի իր մենախոսությունը:

Քո երևելի քաղաքացիներից մեկն էլ կար, որին մինչև այսօր էլ հին իգդիրցիք չեն կարողանում մոռանալ՝ Օրդուն էր, Օրդոյանների ցեղից, մեր խնամիների՝ Բանավշայի, տատիս կողմից, որոնք մեր ցեղն էլ հարստացրին նոր մականունով՝ «Հռիկենք»: Այդ մեր խնամի Օրդոյենց Օրդուն էր, որ, ինչպես Պյան Առաքելը՝ մշտական զբաղմունք չուներ, ամեն տեղ հասնող էր: Եթե ինքն էլ ներկա չլիներ, իր սրամտությունները կհիշեին, որոնք հնարածին չէին, տեղն ու տեղը ասված, առիթը չկորցնելով և առանց չարամտության, կատակի ձևով, ուրախացնելով թարս նայողներին:

Պրոֆեսոր Շավարշյանը մի ամբողջ շարք նովելներ էր ստեղծել նրա պատմություններից. ունենալով պատմելու անզուգական տաղանդ՝ Օրդուի ասածներից դարձնում էր սքանչելի մանրապատումներ, որոնց կրկնելը անհնարին զբաղմունք կլինի մեր կողմից և ցավալ կարելի է, որ այդ պատմությունները գրի չառնվեցին:

Օրդուն մի աչքով կույր է եղել՝ մեզ անհայտ պատճառով: Եվ մի օր շուկայում, երբ Իգդիրի գլավան՝ Եփրեմ կակոն, մի ինչ–որ առևտրականի վրա բարկացած, ասել է.

— Աչքերդ կհանեմ, եթե նույնը կրկնվի, հա՛...

Օրդուն, որ չէր կարող ներկա չլինել, շինծու, կեղծավոր խնդրանքով Եփրեմին է դիմել...

— Կակո՛ ջան, ինչ կլինի, որ դրա աչկերը խանես... մեկը տուր ընձի տնեմ էս քոռ աչքիս տեղը...— և ընդհանուր ծիծաղին մասնակցել է նաև մեղավոր առևտրականը:

Օրդուն, բացի իր բոլոր զբաղմունքներից, զուռնա փչելու շնորհք է ունեցել՝ իր «դաստան», նվագակցողների խումբը, որոնց հետ շրջել է մոտակա գյուղերը՝ անգամ Մասիսից այն կողմ՝ հարսանիքների, քեֆերի առիթով, և երևի ավելի շատ ուրախացրել է իր սրախոսություններով: Եվ մի անգամ Մասիսի մյուս կողմի գյուղերը գնալիս, որ սահմանն անցնել էր նշանակում, սահմանապահ սպան անցագիր է պահանջում անցնողներից, Օրդուն էլ, իրեն չկորցնելով, անցագրի տեղ «ռուսերեն» պատասխանում է.

— Կակոյ պաշպոռտ, գասպադին նաչալնիկ... տրի չալավեկա, ադին գլազ...

Պարզվում է, որ Օրդուի «երաժշտական անսամբլի» երկու անդամները... լրիվ կույր են եղել: Պատմում են, որ Օրդուի սրամտություններից օր ու արև չեն ունեցել հատկապես խալֆալվեցիք, այդ գյուղի միամիտ ժողովուրդը՝ ճիշտ Լոռվա համբոնե-րի պատմությունների օրինակով:

Իգդիրը, կարելի է ասել, ինքը ստեղծեց իր մտավորականությունը, «հոգևոր մշակնե-րը», որոնց մի մասը ծառայում էր իրեն՝ վար-ժապետություն, բժշկություն ու այլ ծառա-յություններ անելով, մի մասը շատացնում էին «գործող կոմիտեների» շարքերը, որ սնկի պես աճել էին Իգդիրում: Չպետք է մոռանալ նաև Իգդիրի ոչ մեծ հողատերերին, «զավոդչիկներին», գործատերերին, որոնք ստեղծում էին այն «նյութական բազան», առանց որի Իգդիրը քաղաքի տեսք հազիվ թե ունենար՝ ստեղծելով նաև «բարեխառն» հավասարակշռություն Իգդիրի տակնուվրա եղող «եղանակի» մեջ...

Ավելի բարձր մտավորականության համար Իգդիրը բնականորեն նեղ պիտի լիներ, և մի մասն էլ իր գործունեության համար Էջմիածինը, Երևանը և այլ քաղաքներ էին ընտրել, անգամ տեղ էին զբաղեց-նում պետական պառլամենտական բարձր ոլորտներում... չհաշված ռուսական չինով-նիկությունը, սահմանապահ կայազորության օֆիցերությունը՝ իրենց հարգարժան տիկնանցով, որոնք Իգդիրի «հոգևոր կյանքի» վրա առանձին ազդեցություն չէին կարող ունենալ, ինչպես և Թիֆլիսից եկած պարոն Նարիմանովը, որ Իգդիրում «իլի-զոն» բացեց և բաղնիք:

Բայց և Իգդիրի քաղաք դառնալու հիմքը, հուսալի հենարանը նրա արհեստավորությունն էր, առևտրականությունը, որոնց գործն ու առևտրական կապերը վաղուց ծավալվել էին հեռուները, գավառական սահմաններից շատ ավելի հեռուները:

Արհեստավորության բոլոր տեսակները կային Իգդիրում, սկսած թամբագործ-ներից, ներկարարներից, բրուտներից, վերջացրած գինեգործներով, ոսկերիչներով և Իգդիրում ընդունված, գործածվող հագուստեղենի հմուտ դերձակներով, որոնց համ-բավն էլ դուրս էր եկել Իգդիրի սահմաններից:

Բրուտներից առավել ճանաչում ուներ բրուտ Համբարձումը և ոչ միայն իր հմուտ արհեստով, «ման–չամանով»: Նրա համբավը շատացրել էին իր երեք տղաները նաև, որոնց ախորժակի մասին լեգենդներ էին պատմում, և մեր փեսա Նիկողոսի «Տառեխի պատմությունը» ոչ ոքի չէր կարող զարմացնել:

— Իմ քաղաքացիք իրենց ախորժակից գանգատվելու պատճառ չունեին, աշխատող մարդիկ էին, առավոտ լույսը չբացված՝ այգիներում, ցորենի, բամբակի, քնջութի, կանեփի դաշտերում, և պակաս աշխատող չէին նաև Համբարձումի տղաները, բայց Համբարձումը իր տղաներին հարսանիքի, կնունքի, քեֆի չէր տանում իր հետ: Մի երկու փորձից հետո տեսել էր, թե ինչ ավերածությամբ կարող էր վերջանալ տանտերերի համար նրանց ներկայությունը...



Մի անգամ ամանեղենը թրծելու, սայլով փուչ ու տատասկ բերելու համար սարն է ուղարկում որդիներին՝ սայլին առատորեն բարձելով ուտելիք, որ հոգնած–վաստակած անուշ անեն...

Քշում են սայլերը և շատ չհեռացած՝ տղաներից մեկը վերադառնում է: Համբարձումը, գլխի ընկնելով, թե ինչի համար կլինի հետ եկած, հացատնից նորից մի պատկառելի կապոց լավաշ է բերում, տալիս տղային... Բայց դեռ չհեռացած՝ մյուս որդին է վերադառնում... Լուռ ներս է մտնում, մի կես պարկ ալյուր է հանում և տալիս է տղային...

— Յար, յար, էս ալյուրն էլ տար, թխեք, կերեք, քաղցած չկոտորվեք...

Տղերքը սար են հասնում, գառը մորթում, մեծ պղնձով կրակին են դնում, փոքր եղբորը կարգում ճաշին պահապան, իրենք լանջն ի վեր գործի են անցնում: Կեսօրին, հոգնած, ավելի շուտ քաղցած ցած են իջնում... Ճամփակեսին ապշած կանգնում, տեսնում են փոքր եղբորը պարելիս: Շերեփը ձեռքին՝ ճաշի պղնձի շուրջն է պտտվում: Վատ բան գուշակելով՝ շտապ իջնում են և քարանում... վատից վատթարն են տեսնում. ծնկներին են տալիս, բայց էլ ի՜նչ, պղինձը դատարկ, հաց ու պանրի փշրանքներ են մնացել, տիկն էլ՝ ցամաք

վեր ընկած... Արածը բան չէր, բայց զարմանալու բան էլ չէր տեսածները...

Սա դեռ փոքր եղբայրը:

— Իսկ դուք ձեր փեսա Նիկողոսի ախորժակի վրա էիք զարմացել...

Արհեստավորներից ես հիշատակում եմ նրանց, ովքեր իրենց գործով առանձին ուշադրության էին արժանացել, իսկ մնացածը սովորական գործերով էին զբաղված, ինչպես նույն զբաղմունքի անհամար արհեստավորները բոլոր մեծ ու փոքր գավառական քաղաքներում:

Եվ այդ իմաստով պիտի հիշվի նաև ատաղձագործ «Նշխեմ Զաքարը», որ իգդիրցիների համար տան կարասի էր պատրաստում՝ պահարաններ, նստարաններ, «հացի չկաֆներ» և հայտնի էր նաև իր շինած սնդուկներով, որոնցից ամեն իգդիրցու տանը լինում էր, ինչպես Բանավշայի սնդուկը, որը Իսաբեկին ու իրեն բարեխիղճ ծառայելուց հետո պատիվ ունեցավ Երևանում էլ սնդուկությունն անել Հմայակ հորս համար, որի մոտ էր գտնվում նաև սնդուկի բանալին՝ չկասկածելով, սակայն, որ մենք՝ թաքցրած բան սիրողներս, կարող է ունենանք նույն բանալուց...

Վարպետ Զաքարին արդեն կնքել էին ըստ արժանվույն և կոչում էին «Նշխեմ Զաքար», որովհետև այդ երևելի սնդուկները նա գիտեր զարդարել գույնզգույն թիթեղների սալիկներով: Երբ պատվիրատուն մի բան էր պատվիրում, նա սկզբից ևեթ հանգստացնում էր՝ ասելով.

— Տու արխային մնա, էնենց նշխեմ, որ...— և նախշում էր ուստա Զաքարը սնդուկները, պահարանները, իր հնարած պարզ, անխորամանկ զարդանախշերով՝ սովորական գործածական իրը դարձնելով արժեքավոր:

Նույնն էր անում նաև մեր հարևան Մուսա Մալիմը իր արհեստանոցում թամբերի, սանձերի վրա, իրանական նուրբ զարդանախշերով: Բայց նրան անուն չէին կպցրել և միշտ պատկառանքով էին դիմում, որպես Մուսա Մալիմ՝ պարսկերեն վարժապետի նման բան: Եվ եթե հիշել ենք խորովածանոցի «Կապեկ Ակոփին», ապա ինչպես կարելի է չհիշատակել նաև «Ջրտռանենց» Հակոբին՝ այդ երևելի «շլավ-

կա» կարողին, որ պատվիրատուի գլխարկը առանց «չափսը» վերցնելու էր կարում՝ մի անգամ գլխին նայելով... Եվ քանի որ միշտ էլ թարսի պես փոքր էր ստացվում՝ բողոքավորի գլխարկը մի երկու անգամ հագցնում–հանում էր իր պատկառելի գլխին և... բողոքելու տեղ չէր մնում, լայնացած էր լինում գլխարկը՝ ինչքան պետք էր:

* * *

Քաղաք էր Իգդիրը և շատ անհանգիստ քաղաք: Հատկապես տենդագին դարձավ նրա ամեն օրը 1914 թվին՝ արհավիրքի տարիներին:

Ծանր օրեր էր ապրում Իգդիրը: Հազվագյուտ չէին այն գիշերները, երբ քաղաքացիք սարսափած վեր էին թռչում քնից՝ մաուզերիստների համազարկերից... Ժամանակն էր ծանր, խառնակված, ինչպես ամեն տեղ ռուսական հողում և նամանավանդ որտեղ հայ էր ապրում: Իգդիրը դարձել էր արջ տեսած փեթակ, ամեն օր լցվում ու դատարկվում էր կամավորներով, զորք ու կազակներով, գաղթականներով: Բայց իր սովորական կյանքն էլ ուներ և ապրում էր այնպես, կարծես աշխարհի տակնուվրա լինելը իրեն չէր վերաբերում, և այդպես էլ պիտի լիներ նորից մի հարյուր տարի:

Եվ սակայն այդ հարյուր, թե տասը տարին կարող էր լինել... Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ չլիներ, ինչո՞ւ չշարունակվեր այդ լիքը, բերնեբերան լիքը, արդեն իր խոր հունը ստեղծած մարդավարի ապրուստը, կյանքը: Ինչո՞ւ պիտի թուրքը, որի երաշտ ու խորշակ տարածող պճեղը երբեք Մասիսից չէր անցել, չէր դիպել Սուրմալուի հողին՝ անցներ, տրորեր այդ հողը, ռուսական հզոր տերության սահմանը, որ իր իսկ զինվորի արյան գնով ազատել էր պարսիկից... Ինչո՞ւ տիրություն չարեց, իր սահմանն էր, չէ՞... Ի՞նչը, ո՞վ խանգարեց այդպես

անհեռանկար սահմանը տեղափոխել Արազի ափը... Եվ պատասխան չես գտնի այդ հարցերին, սիրելի՛ս, և ոչ էլ քո երևելի քաղաքացիք, որոնք գաղթելուց հետո, արտ ու այգու հոգսից ազատված, պարապությունից ձանձրանալով հավաքվում էին Երևանի բուլվարում, ծառերի հովին, իրենց նման երևելի վանեցիների, ալաշկերտցիների, մշեցիների հետ և թամբաքուի դառը ծխից հազալով, խեղդվելով՝ խոսում, վիճում, աղմկում էին իրենց գլխին եկածի մասին: Մեղավորներ փնտրելով, հնարելով ինչ–որ պայմանագրեր՝ Գերմանիայի, Թուրքիայի, Ռուսաստանի միջև կնքած, չիմացած բաների մասին վիճում, զառանցում... Պատասխան չես գտնի, միակ պատասխանը հազար տարվա հնությունն է՝ եթե մի ժողովուրդ չի կարողանում, անզոր է իր բախտին տեր կանգնելու, տիրություն անելու, տիրություն են անում ուրիշները՝ ով հասնի, ով ինչպես կարող է, ինչպես հարմար կգտնի...

Եվ ես, ինչպես դժվար չէ քեզ տեսնել՝ անվարժ հեծյալի նման հետ ու առաջ եմ անում, անընդհատ շեղվելով հազիվ նշմարվող կածանից և հասու չեմ, թե դուրս կգամ ճանապարհ...

Բայց մի բանում համոզված եմ, որ ինչքան էլ հետ ու առաջ անեմ, խոսքս քո մասին է լինելու, միակ հիշածս «խաղը»...

Ճիշտ այնպես, ինչպես լինում էր Իգդիրի երևելի զուռնաչիներից մեկի՝ «բլդուղ Օհաննեսի» հետ. երբ խնդրում էին մի նոր բան նվագել, ասում էր՝ ո՞րը, է՛ն խա՞ղը... Եվ զուռնայի ձայնը բարձրացնում, մի քանի ելևէջներ էր զոզոացնում, ու աննկատ նորից շարունակում էր իր իմացած միակ եղանակը, խաղը:

Իմ խաղն էլ, ինչքան «ելևէջներ» անեմ, ուրիշ չի լինելու:

Համբերատա՛ր եղիր, իմացի՛ր նաև, որ վազող ձիու գլխին չեն խփի, մանավանդ եթե հեծյալն էլ անվարժ է:

Իգդիր... Քո այդ հինգ տառից կազմված անունը, սիրելի՛ս, ես անցած հիսուն–վաթսուն երկարուձիգ տարիների մեջ, ինչպես ասացինք՝ հինգ–վեց անգամ չեմ լսել: Մինչդեռ ժամանակներ կային, որ անունդ ծամոնի պես ծամվում էր... Էլ ուր մնաց բացատրությունն այդ հինգ տառերի, որոնք գիտնականների գլուխ չհանած ուրարտերենի նման անծանոթ են հնչել ականջներիս...

Կա, սակայն, քո մասին էլ, այդ հինգ տառերի մասին էլ բացատրություն: Եղել է մի լեգենդանման բան, որ քո հին բնակիչներից ոմանք հիշում, պատմում էին:

Եվ որովհետև այս հողագնդի վրա ամեն ինչ սկսվել է ջրհեղեղից հետո, ոչ ավել, ոչ պակաս՝ քոնն էլ է սկսվում նրա հետ:

Պատմում էին, երբ ցամաքել են այդ ջրերը, Նոյը, ինքը՝ Նոյ Նահապետը, որը երևի հմուտ նավարար է եղել, իր ամենատար տապանը կանգնեցրել է մեր այս Արարատի՝ Մասիսի գլխին, որտեղ և լռվել–մնացել է: Եվ իջել է Նոյը իր որդիների հետ, շրջել քո հողերում և հոգնած նստել է մի բլրի վրա, որի շուրջը քո երեկվա, այսօրվա հողերն են փռված... Այդ բլուրն այսօր էլ դեռ «Բլուր» է կոչվում:



Նստել է Նոյը և ինքն իրեն խոսել քթի տակ...

— Նո՛յ, արի դո՛ւ էլ հեռու մի գնա: Հողն էստեղ հաստ է, փուխր և խոնավություն էլ տեղը, իսկ որ իսկ՝ այգու տեղ... Արի դու մնա էստեղ և... «իգի դիր»: Այսինքն՝ այգի դիր, տնկիր... Մի տառ է ընդամենը ավելի: Էլ երկար–բարակ չի շարունակել և դառնալով տղաներին՝ ասել է.

— Բերեք էն մեծ խուրջինը:

Եվ հանելով հետը բերած խաղողի մատները՝ տնկել է առաջին մատը քո հողին, այն բլրի արևոտ լանջին, որ հիմի էլ Բլուր է կոչվում, գյուղ է և կպած Իգդիրին:

Սա է միակ բացատրությունը, քո անվերծանելի անվան հինգ տառերի միակ և անժխտելի բացատրությունը, որով, սիրեցյալդ իմ Իգդիր, ոչ միայն քեզ է վերապահվում ջրհեղեղից հետո այգեգործության «պիոներ» համարվելու պատիվը, այլև պարզվում է, որ Նոյը, ուրիշ լեզուներ իմանալով հանդերձ, իր «պատմական» խոսքերն ասել է պարզ, հասկանալի հայերենով և հավանական է նաև՝ Խոյի բարբառով, քանի որ ոչ միայն խոյեցիք, այլև հարգելի աշտարակցիք այսօր էլ այգուն «իգի» են ասում և կասեն, քանի դեռ այգի կա Աշտարակում...

Վկաների բացակայության պատճառով մենք մեզ իրավունք ենք վերապահում այս հավաստի և զվարճալի պատմությունը համարել ոչ միայն «զվարճալի», այլև միակ անվիճելի «գիտական բացատրությունը»: Հիշելով, որ մեր ժամանակներում ոչ մի զրույց ու լեգենդ չի մնացել հարգելի գիտնականների կողմից անբացատրելի:

Եվ ով է մեզ, սիրելիդ իմ Իգդիր, շտապեցնում այդքան սպասելուց հետո մի քիչ էլ սպասել և հուսալ, որ կգտնվի, անպայման կգտնվի մի սրտացավ ճշմարիտ գիտնական և ոչ մեզ պես զվարճալի պատմությունների հավատացող, որ հավաստի այս «ոչ գիտական» պատմության իսկությունը քանդի այդ հնից քեզ վրա փաթաթած մոռացության կապանը... Կգտնվի, բարի մարդիկ դեռ կան աշխարհում, իսկ ինչ վերաբերում է ինձ, լինելով անուղղելի հավատացող՝ ավելի անհավատալի պատմությունների եմ հավատացել և պապիս՝ Իսաբեկի հորը, մեծ պապիս, Իսաբեկին հիմա էլ խառնում եմ Նոյի հետ, քանի որ նա էլ երբ ոտքը դրեց քո հողին, կանչեց երեք տղաներին՝ Այվազին, Յորդուխանին, Համբարձումին, որ դեռ Խոյում էին ծնվել, ու բացել են խուրջինով բերած, իրենց Խոյի այգում կտրած խաղողի մատերը և տնկել են քո հողին, թևքերը ու շալվարները քշտած, թաշկինակի չորս ծայրերը գլուխներին հանգուցած՝ քո արևի տապից պահվելու համար, քթների տակ էլ դնդնալով մի անուշ երգ, ինչպես ամեն մի հողագործ, երբ քրտինք է թափում իր հողին:

Բայց տես, որ հույները խաղողի ու գինու մշակումը իրենց են վերագրում, «իրենց Նոյին»՝ Դիոնիսիոսին, իսկ մեր Գրիգոր Մագիստրոսը առարկում է և պնդում հին վկայություններով, որ հրեական և քաղդեական աղբյուրները խաղողի և գինու մշակումը վերագրում են Նոյին և ճիշտ են անում:

Ապա նաև լրացնում է, որ հեռավոր նախնիների Ակոռի գյուղը, որ Մասիսի լանջին էր հիմնված անհիշելի ժամանակներից, ստուգաբանվում է Արկուռի ձևով, որը նշանակում է «ուռը, շիվը տնկիր»... (այդպես է հնագույն ձեռագրերում) և շարունակելով, Սուրբ գրքի հետագա շարադրանքով պարզաբանում է նաև մի ուրիշ մանրամասնություն: Նոյը, ինչպես մեզ էլ է հայտնի, գինու նկատմամբ

անտարբեր չլինելով, մի օր խաղողի գինուց քեֆը լավացնում է, հարբում է, իսկ իր տղաներից Քամը, ավելի երես առած լինելով երևի, հոր վրա ծիծաղում է... և արժանանում է հոր՝ Նոյի խիստ նեղացած պարսավանքին: Իսկ այդ էլ նշանակում է, որ Նոյին վաղուց, դեռ ջրհեղեղից էլ առաջ, հայտնի է եղել խաղողի մշակությունը և գինի վայելելը... Եվ ըստ այդմ էլ նշանակում է, որ «Արկուռի» պիտի հասկանալ ոչ թե առաջին անգամ շիվ դնել, տնկել, այլև այդ ջրհեղեղի տակ մնացած այգիներից շիվեր կտրել, տնկել, իսկ գինին էլ, պարզ է, որ խաղողից պիտի քամեր, և հենց այդ գինուց, երևի մաճառից էլ՝ հարբել... (Գրիգոր Մագիստրոսի Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910 թ., էջ 80):

Տեսնո՞ւմ ես, սիրելի՛ս, թե ուր է գնում ծայրը քո պատմության, քո գոյության իմաստի. շատ ավելի հին է եղել, քան կարող էին երևակայել քո նախկին կամ հետագա ապրողներդ:

Խնդրում եմ՝ գոհ լինես քո անունի հինգ տառերի իմաստի իմ բարեխիղճ բացատրությունից, որոնք բոլորովին էլ ուրարտերենի հետ գործ չունեն, որ կասկածելի թվան քեզ կամ անհասկանալի:

— Իսկ ինչո՞ւ կասկածեմ. թող կասկածեն նրանք, ովքեր ավելի գիտուն են քեզանից և նամանավանդ նրանք, որոնց համար ես, Իգդիրս, մնացել եմ «աշխարհագրական հասկացություն», քարտեզի վրա ընդամենը քորոցի գլխի չափ մի բան...

Դու ինձ հիացնում ես քո լրջախոհությամբ. ինձ էլ չի անհանգստացնում քո չափը քարտեզի վրա: Քարտեզների վրա բոլորն էլ քորոցի, սիսեռի կամ ավելի խոշոր՝ լոբու հատիկի չափ են... Եվ բոլոր մեծությունների սկիզբը կետն է եղել, իսկ եթե հիշենք, որ քարտեզների վրա հիմա չկան, չեն մնացել շատ ավելի զարմանահրաշ մեծություններ...

Դու ի՞նչ ես, ասենք, Ասորեստանի, Բաբելոնի կամ Կարթագենի համեմատությամբ՝ հեչություն, բայց արի ու տես, որ չկան, կարծես թե կավիճով են եղել գրված գրատախտակի վրա, և Իգդիրի ծխական դպրոցի թվաբանության վարժապետ Ահարոնյանը աղյուսակը բացատրելուց հետո ջնջել է փոշու շորով և ինչպես սովորություն ուներ՝ գրպանը խոթել թաշկինակի տեղ... Իսկ դու, խնդրեմ, կաս, քորոցի թե սիսեռի չափ՝ կաս քարտեզի վրա և կա անգամ քո կողքին կպած Բլուր գյուղը, որտեղ էլ ծնվել էր Բագրատ վարժապետը՝ նույն ծխական դպրոցի լեզվի դասատուն:

Մի խոսքով՝ սիրելիդ իմ Իգդիր, քանի կա քո թիկունքում կանգնած Արարատ սարը, դու կաս, լինելու ես և, միևնույնն է, կարևոր չէ, թե այսօր ով է շնթռած քո հողին:

Եվ, ի վերջո, եթե չես ճանձրացել, որ էլ կասկածելու տեղ չունենաս, հիշենք Փավստոս Բուզանդի վկայությունը քո մասին, որն առնչվում է Պապ թագավորի՝ մեր թագավորներից ամենաշնորհաշատի, երիտասարդ Պապի եռանդուն գործունեության հետ, որ քո տեղանքն է ընտրում արքունի գանձարան, Բերդաքաղաք ստեղծելու: Եվ Փավստոսը ասում է. «Իգդիրը, իբր դաշտային վայր օժտված լինելով մերձավոր բլուրների վրա հաստատուն ամրոցով, ըստ ամենայնի պատշաճում է արքունի գանձարանի մեծ գյուղ լինելուն, և իբրև այդպիսին զուրկ չէ հավանականությունից, որ այն նույնացվում է Արդյանքի հետ: Որովհետև Երասխի այդ հովտի մեջ, իր դաշտերի ընդարձակ տարածությամբ, գեղեցիկ պարտեզների և այգիների շատությամբ և շրջակա «Ազատն Մասսյաց» բլուրներով ու բարձրավանդակներով իսկապես արքայավայել գյուղի տեսարան ունի Իգդիրը–Արդյանքը»:

Արքունի մեծ ու ամուր ավանի համար ուրիշ հարմարագույն տեղ չկար Ցոլակերտի և Փարախորի միջև, բացի Իգդիրից:

Իսկ ավելի հավաստին մեզ մոտիկ, քո երեկվա պատմությունից կա, մնացել է և կարելի է հիշատակել: Իսկ քո անունի զվարճալի մասի համար թող որ ներողամիտ լինեն նրանք, որոնք երբևիցե թույլ կտան իրենց կարդալու այս շարադրանքը և նամանավանդ այն գիտունները, որոնց լրջախոհ ուշադրությունից դու, սիրելի՛ս, մնացել ես «խաղից դուրս» վիճակում, լուսանցքում, առավել քան քո նոր բնակիչներին «Թարս նայողների» պատմությունը, որը մի

օրվա չէր, շաբաթվա չէր, տարվա չէր. հին ժողովուրդ էր իր արմատներով և մոռացվելու ոչ արժանի...

Ասեղ չէր, որ խոտի դեզում կորչեր, հայ, շատ հայ մարդիկ էին, հարգանքի ու կարեկցանքի արժանի, առավել ևս՝ հիշվելու:

Հիշենք և քո երեկվա պատմությունից. ինչքան էլ հաճելի չլինի քեզ, բայց փաստ է հավաստի, հիշված ազնվագույն պատմիչների կողմից, միանգամայն անկողմնակալ և ոչ զվարճալի:

«Իգդիր: Գյուղաքաղաք Արարատյան Ճակատք գավառի Սուրմարիի գավառի մեջ: Դիրքը դաշտային է, ընդարձակ պարտեզներով և բարդի բարձրաբերձ ծառերով զարդարյալ ու շրջապատյալ: Ունի 2912 բնակիչ, բաժանված 266 տուն, որոնց նախնիք գաղթած են Պարսկաստանեն (ասել է՝ Խոյից, Սալմաստից, Մակվից և այլն):

Ունին երեք եկեղեցի, որոնցից մինը Սուրբ Սահակ անվամբ, 1842–ին վերանորոգված է: Պարսից տիրապետության ժամանակ մատուռ է եղել, բայց վերջը (այսինքն՝ եկածներից հետո) ընդարձակվել է: Ունի նաև երկու վարժարան՝ իգական և արական:

Տեղույս օդը ջերմ է և վնասակար է, կխմեն պղտոր առվակի ջուրը, փողոցները հողոտ և կեղտոտ են, այնպես, որ քամին ելնելու ատեն մարդոց աչքերը փոշիով կլցվին:

Բնակիչների մեծ մասը ենթակա են տենդի, աչքացավի և այլ հիվանդությանց, որոնց պատճառը վնասակար կլիմայեն զատ ճահճային ջրերը, շամբուտ ու եղեգնուտ տեղերն ալ են, որոնք Այրարատ դաշտին համար ընդհանուր են:

Գովելի է (վերջապե՜ս...) հայոց եկեղեցասիրությունը, կրթասիրությունը, ճարտարությունն ու աշխույժն, բայց պարսավելի (լսո՞ւմ ես)... տարապայման հարբեցությունը, այնպես, որ ոչ մի գյուղաքաղաք այնչափ օղի կըգործածեն...

Տուներն աղյուսաշեն են, գերաններով ծածկված, մեկ մասը քարակերտ, բայց միահարկ, մեծ–մեծ պատուհաններով, որոնց բակերն ու տանիքները կննջեն ամռան ատեն:

Հայերն ունին հին ու նոր երկու գերեզմանատուն, հինը եկեղեցու բակինն է, Իգդիրը մոտ է Խոշխաբարի և Արևագի քարահանքերուն»:

Սա քաղված է Ս. Եփրիկյանի «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարանից» (1900 թ., Վենետիկ, էջ 66): Իսկ մինչ այդ հրատարակված Ղևոնդ Ալիշանի «Այրարատում» (Վենետիկ, 1890 թ., էջ 126) կարդում ենք.

«Բարգավաճագույն չեն կողմանցս և համօրեն գավառիս Իկտիր կամ Իգդիր, որի ուրույն մասն է Իգդիր Մավան արևելյան կողմից:

Ունի 550 տուն հայ և 70 տուն պարսիկ Մերազնյա առևտրաց և ժրության, միանգամայն և քաղաքական տեսչության և ի վերջին պատերազմին, 1877 թ. զինվորական շարժումների գլխավոր կենտրոնն է:

Իգդիրի եկեղեցին Ս. Սահակ, Իգդիր Մավայինը՝ Ս. Գևորգ, մոտակա գյուղերն են՝ Պահառլու, Բլուր, Բանիկ (Փանիկ), Ղազանչի... և այլն»:

Կարծում եմ, քեզ համար այս տեղեկությունները բացատրության կարիք չունեն, բացի մի հակասությունից, որ Ալիշանի հիշատակած 1890–ական թվերին ավելի շատ ծուխ ու բնակիչ ես ունեցել, քան Ս. Եփրիկյանի հիշատակած 1900–ական թվերին, երբ քո բնակիչները օրով էին բազմանում և Իգդիրում հինգ երեխայից պակաս ունեցող տուն չկար, և տասից ավելի ունեցողներն էլ քիչ չէին: Եվ եղել են առևտրի, քաղաքական, «ռազմական տեսչությունների կենտրոններ», բնակիչներդ կրթասեր են եղել, հավատասեր, նորից նոր եկեղեցի են ավելացրել և դպրոց՝ ռուսական, և ռուսական եկեղեցի, և քո քաղաքային «գարադսկոյ» դպրոցն ավարտողն իրավունք է ունեցել վարժապետության, և գնացել դասավանդել են հայաշատ կենտրոններում՝ Բաթումում, Սուխումում, Գորիում, Ախալցխայում, Արմավիրում և այլուր:

Ոչինչ, որ «առվակի պղտոր ջուրք են խմել և տառապել տենդից»: Հետո նրանք Զոռից (ամառանոց Մասիսի փեշերին) աղբյուրի սառը, շատ սառը ջուր կբերեն և ջրհորներ կփորեն քաղցրահամ ջրով, որ Արարատյան դաշտի տակ ծովի չափ կար և կա:

Տենդի դեմ Իգդիրի երևելի բժիշկ Ասլանյանը, որ պետերբուրգյան կրթություն ուներ, շատ խինին կպահանջի դեղատան համար և «տարապայման հարբեցողությունը» կմնա միայն «Պյան Առաքելի» մենաշնորհը, չնայած որ նույն հարգելի բժշկապետը խորհուրդ էր տալիս նույն խինինը օղիով գործածել, որ ազդեցությունը «զորավոր» դառնա: Նրա դեղատանը սեղանին մշտապես դրված է եղել խինինի թունդ լուծույթը ջրի հետ, և տենդի մեջ մարդը իրեն շտապ հասցրել է դեղատուն և մի բաժակ գլուխը «քաշելով» հանգստացած տուն է գնացել, ինչպես բազմաթիվ մանր ու մեծ խորովածանոցներ մտնողները հենց «դախլի» մոտ մի թաս օղի էին կոնծում ու տուն գնում՝ գործից հետո:

«Բարգավաճ» չեն ես եղել նաև «ճարտար արհեստավորներով» և, ավելացնենք, նաև ոսկեձեռ այգեգործներով, հողագործներով, բոստանչիներով: Քարե տներ են չինել, դրախտային բակ պարտեզներով, Պարսկաստանից, Խոյից բերված Շիրազի «հազար գլխանի» վարդի թփերով, նարգիզներով, նունուֆարներով, սուսամբարներով, յասամաններով և հաստաբուն բարդիներով, կաղա-

մախիներով զարդարված: Մաուզերիստներ չեն եղել: Մաուզերի հետ հետո ընկերացան, երբ զուլումը սև ամպի պես կախվեց հայի գլխին և մնաց՝ ոչ միայն Իգդիրում:

* * *

Զենքը պարտադիր էր ունենալ: Անգամ մեր տանը, ի կատարումն այդ պահանջի, հայրս, որ Իգդիրցի լինելով հանդերձ զենքի ձեռք տված չկար կյանքում, երկու մաուզեր էր պահում՝ փամփուշտներով, իսկ թե ով պիտի կրակեր՝ Աստծուն էր հայտնի: Այդպես էր, «որոշում» էր զենք պահելու մասին՝ բանի տեղ չդնելով պետության կողմից խստիվ արգելքը:

Զենք Իգդիրցին պարտավոր էր ունենալ, և դա որոշումն էր «կոմիտեների», որոնցով առատ էր Իգդիրը, ուր կային հայերի ստեղծած բոլոր կուսակցությունները և «մի բան էլ ավելի»...

Այդ «մի բանին» Իգդիրցիք չէին հավատում, որ կա, բայց կար այսպես ասած «ընդհատակյա», որի մասին տեր Մեսրոպը իր կիրակնօրյա քարոզներից մեկի ժամանակ ասել է՝ հեղինակավոր ցուցամատը վեր տնկած, որ «կնզովի, եթե Իգդիրում այդպիսին ծնվի...»:

Բայց կար, այդ «մի բանն էլ» կար:

Իգդիրը բացառություն չէր կարող լինել, կային, ծնվել էին դեռ տեր Մեսրոպի ձեռնադրվելուց էլ առաջ:

Եվ տարիներ հետո, արդեն Երևանում, երբ հարցրեցի հորս նրանցից երկուսի՝ «գլխավորների» մասին, պարզվեց անհավատալին:

Պարզվեց, որ նրանցից «ամենագլխավորը» հենց ծխական դպրոցում լեզվի վարժապետ է եղել և տեր Մեսրոպի հետ վարժապետություն է արել...

Ամեն օր բարևել են իրար ձեռքով, ողջություն հարցրել իրարից, իրար տուն ուղեկցել, տուն հրավիրել իրար:

Այդ «ամենագլխավորի» մասին հորիցս լսեցի տարօրինակ բնութագրումով... Ասաց.

— Մե խեղճ, ողորմելի պան էր...

Իմ ապուշ կտրած, չփոթված տեսքից ինքն էլ զարմացած՝ «վերծանեց» իր անհասկանալի, տարօրինակ բնութագրման իմաստը.

— Դե, ի՜նչ չհասկանալու պան կա, մե համեստ, խելոք, շատ պարի, պարկեշտ մարդ էր:

Եվ որպեսզի ինձ համար «չհասկանալու» տեղ չմնա, ավելացրեց, որ այդ «գլխավորին»՝ Բագրատ վարժապետին, բոլորը անխտիր հարգել են, պատկառել: Մեղմ, բարի ժպիտը մշտապես անպակաս է եղել նրա դեմքից, նրա ձայնը ոչ ոք բարձր չի լսել, երեխաներին չի պատժել, անպատիվ խոսքեր չի ասել, սակայն նրա դասերին «ճանճի բզզոց» չի լսվել:

Անգամ տեր Մեսրոպը, որ մյուս վարժապետներին «բանի տեղ» չի դրել, ակնածել է, հարգել է նրան և իրենց թևով քիթ սրբողներին հորդորանք է կարդացել, որ օրինակ վերցնեն Բագրատ վարժապետից, եթե ուզում են մարդ դառնալ...

Եվ ծնվել էր այդ «պարկեշտ» մարդը՝ Բագրատ վարժապետը, Իդդիրին կպած Բլուր գյուղում, որտեղ, ինչպես գիտենք, Նոյը տնկեց խաղողի առաջին մատները...

Եվ ծնվել էր, որ իր տարաբախտ ժողովրդին իր ջահել կյանքի գնով ցույց տար այն «միակ փրկարար կածանը», որ Մարգարայի կամուրջն անցնելուց հետո այնքան խճողվել էր անելանելի, անխորհուրդ, անհեռանկար...

Ահա թե ինչ էր նշանակում հորս ստուգաբանությամբ «մե խեղճ, ողորմելի պան էր» արտահայտությունը:

Իսկ ինչ վերաբերում է «գլխավորներից» երկրորդին, ապա այստեղ կատարվել է անուղղելի թյուրիմացությո՞ւն ասենք, թե՞ բախտի կատակ...

Բաքվից Իդդիր էր վերադարձել Մելիքյաններիի մեծ տղան՝ Հովհաննեսը, որ սովորելո՞ւ, թե՞ աշխատելու էր գնացել Բաքու, ինչպես շատերը և ոչ միայն Իդդիրից: Մի իսկական փեսացու, բարձրահա-

սակ, համակրելի, ասող–խոսող կատակասեր... Մի խոսքով՝ նախանձելի փեսացու, բայց արդեն վաղուց սիրահարված օրիորդաց դպրոցն ավարտած Սիրանույշին՝ Եփրեմ Կակոյի մեծ աղջկան:

Մելիքյանների առաջարկությունն ընդունվում է այրի մնացած Մային գալոյի կողմից, հարսանիքն էլ՝ ճոխ, բազմամարդ, և տեր Մեսրոպն էլ՝ պսակադրող քահանա, սեղանի թամադա: Մեծ շուքով սեղան է կառավարել մինչև լույս, ուրախացած նաև, որ Մելիքյանների նման խնամիներ պիտի ունենա, քանի որ Եփրեմի միջնեկ աղջիկն էլ՝ Եղիսաբեթը, իր հարսն էր, մեծ տղայի՝ Արշավիրի, ճեմարանի դասախոսի: Եվ միայն Երևանում կիմանա, որ իր «խնամին», իր «գովական նզովյալներից» էր և նորաստեղծ հանրապետության եռանդուն գործիչներից մեկը:

Նույնը տեղի կունենա իր միակ աղջկան՝ Վերգինեին ամուսնացնելիս, երբ նրան կամուսնացնի գյումրեցի Գալոյանների մեծ տղայի հետ, բայց այս անգամ նախօրոք իմանալով, որ այդ երիտասարդն էլ «եռանդուն գործիչ» է և իր նզովյալ-ների ցուցակից է եղել... Եվ թամադան էլ հարսանիքի, արդեն ոչ մի բանի վրա չզար-մացող ինքը՝ տեր Մեսրոպը, կլինի և երևի վերջին անգամ:

* * *

Եվ ինչքան էլ քեզ կցկտուր, անբավարար թվան մեր հիշած տեղեկություններ-ը, ավելին չհաջողվեց գտնել: Պիտի սպասես ավելի խելքը գլխին, ավելի «ուսյալ» մեկին, որ քեզ քո ուզածով գոհացնի:

Բայց և դժվար չէ պատկերացնել, թե ինչի ես նման եղել մինչև իմ նախնիներ-ի գալը՝ Խոյից, Սալմաստից, Մակվից, հաստատվելը քո հողում...

Մի բան չես եղել, հաստատ: Եվ այդ տեղեկություններն էլ նրանց գալուց հետո են, որ և զարմացրել են պարոն Եփրիկյանին և Ալիշանին...

Դու կարող ես մխիթարվել, որ միայն քո վիճակը, քո տեսքը այդպիսին չի եղել, եթե դա մխիթարվելու բան է...

Այդպես եղել են Արարատյան դաշտի Արաքսի երկու ափերին փռված բերրի, արգավանդ հողերը, որոնք դեռ Նոյ Նահապետից սկսած՝ եղել են եկող–գնացող կճղակավորների, մորեխի, քաղցած պարսերի նման հայտնվող քոչվոր ցեղերի համար կշտանալու շտեմարան, և առաջինն ընդունելով նրանց՝ հաճախ հանգիստ են ստեղծել բարձր լեռներում ծվարած շեներին, ժողովրդին գոյատևելու համար:

Մեկ եղել ես «Ազատն Մասսյաց» բլուրների վրա փռված շեն, մեկ հաստատուն ամրոց այդ բլուրների վրա, մեկ արքունի գանձարան՝ իր դաշտերի, այգիների շատու-թյամբ... Եվ... մեկ էլ ամայացել ես, ծածկվել քար ու տատասկով և ավելի շատ քար ու տատասկով...

Եվ քո տեսքը, սիրելի՛ս, մինչև իմ նախնիների գալը մի առանձին բան չի եղել, «գայթակղիչ» չէիր կարող լինել, բայց թե ինչո՞վ «հմայվեցին», ինչո՞վ հրապուրեցիր հաստակող խոյեցիներին... Սակայն ինչքա՜ն պիտի նրանք՝ իմ նախնիները, զզված լինեին թլպատված արիացիներից, որ թողեցին իրենց հեքիաթային այգիները, տուն ու տեղը ու եկան ոտքերը չռեցին, տնկվեցին ու մնացին քո հողում, այս «վնասակար կլիմայեն» զատ ճահճային ջրերով շամբուտ–աղուտ տեղերում:

Գոնե Բյուրական կամ Կոտայք գնային, որ անմահական ջուր խմեին Հատիսի քառասուն աղբյուրներից, մինչդեռ բնակվել են ճահճուտներում, որ դողէրոցքի դեմ ստիպված... «տարապայման հարբեցողությամբ» հայտնի դառնային պարոն Եփրիկյանին:

Բայց քո տեսքը նրանց չի խրտնեցրել, նրանք հասկացել են, թե ինչ կա այդ անհրապույր տեսքի տակ, և Նարնջենց Ենոքի պապը, երկար բարակ չմտածելով, տնկել է Խոյից բերած խաղողի մատերը հողաբաժանումից իրենց բաժին ընկած հողում, որ հետո դարձներ Իգդիրի ամենամեծ ու զարմանահրաշ այգին:

Եվ ոչ գավազանի զորությամբ: Ծով քրտինքով ու ոսկի ձեռքերով ծածկեցին հողդ, Խոյի հեքիաթային պարտեզները հիշեցնող այգիներով, պարտեզներով: Եվ որտեղ գնացին, նաև Կոտայք, Բյուրական, Գառնի մինչև Սիսիան, ծաղկեցրին, շենացրին:

Եվ մի՛ սրտնեղիր, սիրելի՛ս, բոլորովին էլ, այո՛, բոլորովին էլ կարևոր չէ, թե ինչ ես եղել դու, կարևոր է, թե ինչ դարձրին քեզ, որ հետո էլ երգ կապեին վրադ՝ «Դպրոցներով հարուստ գեղեցի՛կ գավառ, Հայաստանի փառք ու պարծա՛նք Սուրմալու»...

Քո անունի կամ եղած–չեղածի մասին շատ տարածվելը, եթե կուզես իմանալ, սիրելի՛ս, ես հարկադրված և



պարտավոր էի, և եթե մի երկու պարոն Եփրիկյան մի քիչ ավելի մանրամասն, մի քիչ էլ «ծաղկեցրած» գրած լինեին՝ ոչ միայն դու, ես էլ գոհ կլինեի և քո մասին գրելը կդառնար... «տարապայման» զբաղմունք, նամանավանդ եթե Յորդուխանը, Այվազը, Կանայը, քաչալ Կյասպարը, Նարնջենց Ենոքը, Ավագովները չմնային քո հողին և մոտովդ անցնեին... ինչպես նրանք, որոնք բարձրացան Բյուրական, հասան մինչև Սիսական: Եվ կարող ես չկասկածել, որ եթե նրանք՝ այդ «թարս նայողները», ոտքերը չռեին, ասենք՝ Գառնու վրա, որ հնարավոր է ավելի հրապուրեր նրանց... կապրեին՝ առանց քո շրջակա գյուղերի այլազգի խաժամուժը «վնասազերծելու», գլխացավանքը իրենց հոգսը դարձնելու, և կարող ես իսկապես չկասկածել, որ Գառնին էլ տեսնողները շատ ավելի երևելի շենների անուններ կմոռանային՝ հաստատ:

Բայց լավ բան արած չէին լինի... Ո՞վ կմնար քո հողին, ի՞նչ կդառնայիր... Չէ՛, վատ բան արած կլինեին, հաստատ: Նրանց մնալու մեջ երևի ճակատագրի մատը խառն էր... Այդպես պիտի լիներ երևի, ինչքան էլ որ վերջը շատ անաստված տխուր եղավ...

Եվ պարոն Եփրիկյանին ի՞նչ, նա ամենայն բարեխղճությամբ քո գոյության փաստն է արձանագրել, ծխերիդ քանակը, փողոցներիդ փոշին ու կեղտը, չի մոռացել անգամ «տարապայման» օղի գործածելուդ հանգամանքը... Իսկ թե Նարնջենց Ենոք է եղել կամ զավոդչիկ Վլաս, ուստաբաշի Ավետիս է եղել թե բրուտ Համբարձում իր երևելի տղաներով, կամ ինքը՝ յոթ թուրք ու քուրդ գյուղերի անփոփոխ գլավա Խաչատուր աղան... Գոնե այդ տարապայման խմողներից Առաքելին հիշեր կամ հավատասերներից տեր Մեսրոպին... Իր «բուն նպատակից» դուրս են եղել նրանք և պետքներն էլ չի եղել ոչ միայն Եփրիկյանի, ոչ ոքի պետքը չի եղել, թե ովքեր էին, որ դարձրին քեզ «բարգավաճագույն» շեն, ովքեր էին, որ արևը դեռ չծագած՝ բահը ուսներին այգիներդ

էին ջրում, ցորենիդ արտերը, ովքեր էին գարնանը կատաղած Արազի քանդած դամբերը ճմբերով, գերաններով, քարերով, մինչև կոկորդները ցեխաջրում կռիվ տալիս դամբ ու կամուրջ չսիրող կատաղի Արազի հետ... Ես շատ սպասեցի, որ մեկի սիրտն էլ նրանց համար ցավեր, որ հիշեին եղել է, ախար եղել է, եղել է այդ «դպրոցներով հարուստ» գավառը իր կենտրոնական քաղաքով, իր թարս նայողներով, որոնք ամեն գիշեր շվարած կանգնում են առաջս և հարցական նայում ինձ. «Հը, հո չե՞ս մոռացել, տե՛ս, հա՛...»:

Նրանք են իմ ցավը, նրանց հիշելուց է հոգիս մխում թաց ցախի պես... Իսկ դու մի՛ նեղացիր, սիրելի՛ս, կաս, չէ՞, կաս, կաս, և... Դու էլ սպասիր և մի՛ սրտնեղիր, մի՛ հուզվիր: Դու չպիտի մոռանաս, որ քո անունը իմաստ ու արժեք ստացավ այն օրվանից, երբ քո հողին «կարևորություն» տվեց այն զարմանալի, խստաբարո ժողովուրդը, որի խոժոռ նայվածքը՝ թանձր հոնքերի տակից, հեչ լավ բան չէր խոստանում քո շուրջը շնթռած թուրք ու քուրդ գյուղերի կարգուկանոն չճանաչող, իրենց քեֆի ուզածով ապրողների համար:

Նրանք՝ քո շուրջը շնթռածները, շատ շուտ հասկացան, գլխի ընկան, որ ինչ–որ մի բան փոխվեց. շատ տարօրինակ փոխվեց և շատ շուտ էլ հասկացան, թե «ինչպես պետք է պահեն իրենց» քո նկատմամբ, և պիտի կարծել, որ դժգոհ չես այդ ակնհայտ փոփոխությունից և նամանավանդ փափախը գործածելու նորաձևությունից...

Ո՛վ գիտի, գուցե և փոշմաներ իր արածից այն զարմանալի ռուս աստիճանավորը, քո այդ փոփոխությունը տեսնելով... Գուցե և ոչ, բայց որ քո կեցվածքը «Էրիվանսկայա գուբեռնիայի» գավառապետերի սրտովը չէր, նրանք դա չէին թաքցնում: Քո քաղաքացիներին ինչ ճիշտ է՝ ճիշտ է, ռուս գավառապետերը չէին սիրում: Իրենք էլ գիտեին, որ սիրելի չեն, չնայած և կարող էին սիրելի դառնալ, բայց հետո ինչպե՛ս հաց ուտեին, կուլ չէր գնա, իրենք իրենցից կզզվեին:

Բայց և չէին դադարում զարմանալուց, թե ինչու այդ քրիստոնյա ռուս մեծ աստիճանավորը իրենց ազատեց պարսիկ «կզլբաշներից», խաներից, որ բոգոսլավսկիների ու նրանց թուրք ստրածնիկների ձեռքը տա՞... Մեկ չէ՞ր, թե ով պիտի իրենց հացին լեզի խառնի, չսիրի... Կապրեին էլի իրենց հազար տարվա հողում... Եվ հետևելով հենց ռուսի ասած խոսքերին, որ՝ «զոռով սիրելի չես լինի», պետք է որ իրենք իրենց ճարը տեսնեին:

Դու շատ շուտ դարձար նրանց համար գլխացավանք, մեծ գլխացավանք: Եվ քեզ կարգի հրավիրելու, զսպելու համար նրանք ճարահատյալ՝ ջոկովի չինովնիկներ, հայատյաց պրիստավներ, նահանգապետեր էին ուղարկում Սուրմալու, Իգդիր, բայց չկարողացան, այդպես էլ չկարողացան քեզ «խելքի բերել»:

Զհաջողվեց անգամ Բոգոսլավսկի կոչված այդ հայատյաց, Կազանի թաթարներից իր սկիզբն առած ռուս նահանգապետին, որն իր դաժանությամբ ողջ Սուրմալուն ահուդողի մեջ էր պահում: Նրան էլ չհաջողվեց իր թուրք յասավուլների, թիկնապահների հետ երկար վայելել նահանգապետությունը: Եվ «վերացրին»,

այսինքն՝ սատկեցրին, ինչպես սատկեցրել էին իրենից առաջ «մի ուրիշ» ելուզակի, ինչպես արդեն ընդունված էր այդպիսիններին անվանել Իգդիրում՝ լիմոնադի գործարանի տեր Վլասի ասածով:

Ելուզակներից մեկը Օրգովի լեռնանցքի սահմանապահ կայազորի հայատյաց պետն էր, և քանի որ մատնել էր սահմանն անցնող երիտասարդ ֆիդայիներին, ուրեմն ապրելու իրավունք չուներ...

«Վերացնողները» երեք երիտասարդներն էին՝ Աթոյենց Գեղամը, մեր Վարդուհի զալոյի՝ ուստաբաշի Ավետիսի կնոջ եղբայրը, մյուսը՝ Կանայենց Գերդանը և դարբին Ավոյի տղա Պարույրը, որ հիսուն քայլից ատրճանակով թռցնում էր գինու շշի գլուխը՝ «թարս» կանգնած, հայելու մեջ նայելով: Իսկ ծխական քահանա տեր Մեսրոպը, որ չգիտես ինչու «հրավիրվում էր» այդ ելուզակների թաղումներին՝ ռուսաց եկեղեցու, տեր Մեֆոդիի կողմից մասնակցելու, իր ռուսերեն դամբանականները վերջացնում էր միշտ հայերեն երեք բառերով. «Շանը՝ շան մահ»... Եվ ներկա շատ ռուս զինվորականներ, ինչպես և տեր Մեֆոդին, չլսելու էին տալիս, իսկ հայերեն չհասկացողներն էլ ենթադրում էին, որ Սուրբ գրքից մայրենի լեզվով խոսքեր է ասում...

Բոգոսլավսկու «վերացումը» մեծ աղմուկ է բարձրացնում ողջ «Երևանսկայա գուբերնիայում», բայց հանցագործների ով լինելը պարզել չկարողանալով՝ գործը կարճում են:

Բոգոսլավսկին ինքն է իր դատավճիռը «փութացնում», ինչպես երևի կասեր պարոն Եփրիկյանը ու կավելացներ նաև «տարապայման օղի գործածելը գերադասելի չէ թագավորական ներկայացուցչությանը»... Եվ ճիշտն էլ ինքը կլիներ, քանի որ խնջույքի ժամանակ վայել չէ հյուրին վայրահաչել հյուրասիրողների հասցեին՝ հակառակ հազար տարվա հյուրընկալության սուրբ օրենքների, նույն սեղանից կերած հացի մեծ իմաստի... Բայց ռուսացած թաթարի սրբությունը ո՞րն է... Իր հոխորտալից բաժակաճառի մեջ ասածը հեչ տանելու բան չի եղել. «Բոլոր իգդիրցիներիդ հավաքել շիշն եմ խցկել և խցանել»,— հայտարարել էր այդ ելուզակը: Եվ ներկաներից դարբին Ավետիսը, զարմանալով իգդիրցիների լուռ համբերության վրա, բարկացած թևերն է քշտում՝ ասելով. «Էտ ինչի ախմախ, ախմախ խաչալի. էտ վիրնի ճխտի բութուլի մեջ... մե թողեք տսնամ տարը...»:

Ներկաները մի կերպ հանգստացնում են Ավետիսին, թե խմած է, թող հաչա և աչքով են անում՝ խորհրդավոր, անհասկանալի...

Իսկ այդ «թագավորական ներկայացուցչություն» կոչվածը, չբավարարվելով այդ անվայել հայտարարությամբ և որպես ապացույց իգդիրցիների «շշի մեջ լինելու» հանգամանքի, ցանկություն է հայտնում, որ... առանց թիկնապահների, կառքով պիտի զբոսնի Իգդիրում և թող հանդգնեն իր մազին դիպչելու իգդիրցիք:

Սակայն մենակ կլիներ Բոգոսլավսկին, թե թիկնապահներով, այդ գիշեր տխմար նահանգապետը չէր լուսացնելու իր ամառանոցում: Հենց այդ գիշեր էլ որոշված է եղել նրա «հաշիվը մաքրելու» հարցը:

Տղաներից Գերդանը, Գեղամը, Փոս թաղի ցածր տանիքների վրա պահ մտած, թիկնապահներին պիտի «զբաղեցնեին», իսկ Պարույրը՝ նույն դարբին Ավետիսի տղան, մենակ, հաջորդ խաչմերուկում ելուզակի պատիժը պիտի իրականացներ:

Պարույրը, կրակոցներ չլսելով, անհանգստանում է, բայց երբ փողոցի անկյունից լսվում է ձիերի զանգուլակների ձայնը և տեսնում է դեպի իրեն եկող կառքը առանց թիկնապահների, տանիքից իջնում է, որ անսխալ գործի, ցատկում է կառքի մեջ և դատարկում ատրճանակը Իգդիրի փողոցներում զբոսնող հիմարի ճակատին...

Բոգոսլավսկուն փոխարինող Երևանի գավառապետը երկար ժամանակ չի կարողացել «հարմար» թեկնածու ճարել: Վախն է եղել պատճառը, թե «հարմար» թեկնածուն, բայց մի օր նույն ֆայտոնով, որը և շատ հայտնի էր իր «գարի կերած» սև ձիերով և զանգուլակների շատությամբ, Իգդիր է ժամանում նոր նահանգապետը, իր ձիերի պես զարդարված բազմաթիվ մետաղի կտորտանքներով, մեդալներով: Ազգանունն էլ մի բանի նման չի եղել... Գնուտով, և իգդիրցիք, անմիջապես գլխատառը փոխելով, դարձնում են «Կնուտով» (այսինքն՝ Մտրակով) և այդպես էլ դիմում էին՝ գասպադին Կնուտով...



Իգդիրցիք, պատվով ընդունելով այդ Կնուտովին, Կուկուլի կազինոյում մեծ խնջույք են տալիս, ճառեր են ասում՝ Իգդիրի գլավան, պրիստավը, տեր Մեֆոդին, զինվորական նվագախումբը «Աստված պահի թագավորին» է հնչեցնում՝ հույս ունենալով, որ սույն նահանգապետը ինչ–որ բան պարգած պիտի լինի «ելուզակի» պատմությունից իրենց և իրեն համար...

Բայց պարզվում է շուտով, որ հարգելի իգդիրցիք սխալվել են:

Նորից բռնություններ: Նորից թուրք ու քուրդ յասավուլներ, թիկնապահներ, ֆայտոնի զնգզնգոց Սուրմալուի փոշոտ ճամփաներին...

Եվ տարին չլրացած՝ տեր Մեֆոդին չթաքցրած գոհունակությամբ արձանագրում է և հայտարարում. «Մոլոդչիկ տոժե պրեդստավիլսյա, պոժելավ նամ գրեշնիմ դոլգո ժիտ»...

Եվ վերացնողները՝ նորից նույն տղաները:

Այս անգամ աղմուկից խուսափելու համար «Սմիթվիլսոնի» փոխարեն սառը զենքով են զինված լինում: Մտնելով ամառանոցի բակը՝ Պարույրն ու Գեղամը վրա վազող շանն են հանգստացնում՝ խեղդելով, իսկ Գերդանը շան ձայնի վրա դուրս եկած «մոլոդչիկի» բերանը ձախ ձեռքի ափով փակում է, որ աղմուկ չհանի, աջով դաշույնը խրում է մինչև դաստակը «մոլոդչիկի» սիրտը... Բայց Գերդանի ճկույթն էլ է մնում նահանգապետի բերանում կրծված:

Այդ ճկույթով էլ սկսվում է սպանության քննությունը, բայց Իգդիրի բոլոր կասկածելի երիտասարդների ճկույթները իրենց համապատասխան տեղում են լինում, իսկ Գերդանն առանց ճկույթի նորից Պարսկաստանի սահմանն անցած է լինում:

Այդպես է եղել, այդպես են ապրել, միշտ վտանգի մեջ և քեզ համար, սիրելի՛ Իգդիր, քո պատվի, իրենց արժանապատվության համար. միշտ հանդուգն, բռնություն չտանող, հետևելով պապերից ժառանգած հին սովորությանը և միակ ճշմարտությանը, որ կանգնած է պետք ապրել, ճակատը բաց, գլուխը բարձր... Եվ բան է, եթե գլուխդ խոնարհեցիր, կտիպեն կռանալ և սողալ նաև... Իսկ հետո հացը կդառնա լեղի, և փափախն էլ պետք չի գա այլևս գործածել:

Կա՞ր ուրիշ ճար: Չկա՛ր: Չկար, չէր եղել և չեղավ հետո էլ: Մեզ համար ճար չէր լինում, ոչ միայն Իգդիրի համար:

Եվ նրանք էին, Իգդիրի երիտասարդները, որ ջահել գլուխները դրեցին Օրգովի լեռնանցքում, Արհաջի տակ, Մարգարայի, Եվջիլարի ճանապարհին, գաղթողներին հասցրին Էջմիածին և հետո էլ կանգնեցին մյուսների հետ՝ Սարդարապատում, Ապարանում, Քեչիշքենդում, Վեդիում, որտեղ հարկավոր եղավ մի թիզ հող պահել, սովալլուկ, տիֆի համաճարակից պատերի տակ անթաղ մնացած գաղթականների համար՝ մի թիզ ընդամենը մեզ բաժին մնացած հողը պահելու համար: Նրանց դեռ արգելված չէր այն ժամանակ արյուն թափել իրենց մնացած մի բուռ հայրենիք կոչված հողի համար և ոչ միայն չէր արգելված...

Արազն անցած Սուրմալուի ժողովուրդը ցրվեց Էջմիածնի շրջակա գյուղերում իրենց գլխին ճար գտնելու, իսկ քո քաղաքացիք շարունակեցին ճանապարհը՝ բմբուլներ շաղ տալով, թոզ ու դուման հանելով ուղիղ դեպի Երևան: Նրանց մտքով չէր էլ

անցնում, թե Զանգվի կամուրջն անցնելուց հետո ի՜նչ է սպասում իրենց այդ փոշոտ քաղաքում, իրենց չսիրող նահանգապետների նստաքաղաքում: Ի՜նչ իմանար քո տնավեր ժողովուրդը, որ դեռ Մարգարայի կամուրջ չանցած... ոտքերը դրել են իրենց սեփական տերության, իրենց պետության հողին... Հրաշք էր տեղի ունեցել՝ իրենք անտեղյակ:

Աշխարհի ծեր քարտեզի վրա եղած տերությունների անունների արանքում նորից հայտնվել էր այն անունը, որ գրված էր եղել հազար–հազար տարիներ առաջ Եփրատի ափերից սկսած մինչև Քռի ափերը՝ Արմենիա–Հայաստան... Բայց հիմա սկսվում է Արազի ափից և Քռին էլ չի հասնում: Թող որ հիմա էլ Արազից սկսվի այդ իսկապես հրաշքը, անհավատալի, հեքիաթային հրաշք–հանրապետությունը, որի ստեղծողներն էլ նույն հայերն էին՝ Եփրատի, Վանա ծովի ափերից գաղթածները, սովորական հայեր, հրաշքների հավատացող միամիտ հայեր:

Այ թե զարմացած էին քո երիցս միամիտ քաղաքացիները. հանաք բան չկարծես՝ եկել լցվել էին ոչ թե մի «ինչ–որ քաղաք», այլ ոչ ավել, ոչ պակաս իրենց հանրապետության... մայրաքաղաքը...

Եվ հավատաց այդ հրաշքին շատ բան տեսած քո ժողովուրդը. և ոչ միայն հավատաց, այլև ուրախացավ, հպարտացավ, որ նորից գաղթական դարձած չի ապրելու սրա–նրա «հյուրընկալ» հողում՝ Բոգոսլավսկիների ողորմածությամբ... Ապրելու է իր տերության հովանու տակ և ոչ որպես «հյուր», այլ որպես իրենց տերության և մայրաքաղաքի քաղաքացի...

Ախար, սիրելի՛ս, մարդ արարածը մի սեղան կամ աթոռ չինելիս չի կշտանում վրան հիանալուց, իսկ այստեղ... հանրապետություն էր, հանրապետություն էր՝ այո՜, և հանրապետություն էր՝ իր պառլամենտով, մայրաքաղաքով, իր դրոշակով եռագույն, իր գերբ–զինանշանով՝ վրան Սիս–Մասիսը նկարված, և հիմնով իր՝ գրված գրչով իր մեծ զավակի.



Մեր հայրենիք թշվառ, անտեր,
Մեր թշնամուց ոտնակոխ...

Բայց... Ո՛չ, սիրելի՛ս, ոչ թշվառ էր, և ոչ էլ անտեր, քանի որ տերեր ուներ հանձինս իր նախարարների. մի քիչ անփորձ, մի քիչ վարժապետ... Դե այդ հանրապետության ախար ամեն ինչն էր «մի քիչ», սիրելի՛ս... Մի քիչ հող ուներ, մի քիչ զորք ու զենք, մի զրահագնացք՝ «Վարդան Մամիկոնյան» հորջորջված... Մի քիչ, շատ քիչ հաց և շատ սրբեր, գաղթած անտուն ժողովուրդ... Եվ շա՛տ–շատ թշնամիներ, ինչքան հարևան՝ այնքան թշնամի...

Եվ որտեղի՞ց պիտի փորձառու լինեին, երբ ընդամենը վարժապետ ու տերտեր ունենալու իրավունք են ունեցել իրենց, բայց իրենց չպատկանող երկրում, հողում: Իսկ հիմա՝ իրենցն է, քիչ է, բայց իրենցն է, իրենք են տերը, իրենք՝ գաղթողները, Վանից, Մուշից, Ալաշկերտից, Բայազետից, Ղարսից, Սուրմալուից, որոնք էլ կշենացնեն Արարատյան երկիրը՝ Բյուրականից, Կոտայքից սկսած մինչև Սիսական:

Եվ իսկապես հրաշք էր կատարվել. և հատկապես՝ միամիտ, ուղտի ականջում քնած երևանցիների համար, որոնք չէին էլ նկատել, որ պարզապես պաշարված են քաղաքի մի փոքր տարածքում, կենտրոնում, «Աստաֆյան» կոչված փողոցի շուրջը եղած փողոցներում՝ բոլոր կողմերից օղակված թուրք ու պարսիկով: Դժվար, ծանր էր լինելու այդ միամիտ երևանցիների վիճակը մի օր, եթե... «չգար» այդ գաղթականությունը. իսկապես որ չկա չարիք՝ առանց բարիքի:

Եվ Երևանը հայացավ, դարձավ հիրավի հայի մայրաքաղաք և խոսեց հայերեն, հայի ստեղծած բոլոր բարբառներով՝ մեկը մյուսից անուշ, նախշուն:

* * *

Քո գաղթած քաղաքացիք ապրում էին խմբերով. ինչպես ասվում է՝ «էծը էծի համար լավ է, քան մի սուրու ոչխարը»... ինչպես Իգդիրում, հարևաններով, բարեկամներով, մի մեծ մասը Սուրբ Սարգիս եկեղեցու ծուռումուռ փողոցներում, Կոնդի տակերը, «Գուբերնսկի» կոչված փողոցի շրջակայքում, Գետառի ափերին, «Դամբ Բուլախում», մի խոսքով՝ թուրքերի բուն դրած բոլոր թաղամասերում: Ապրում էին՝ թուրքերի տները վարձելով կամ պարզապես զավթելով և ճիշտ այնպես, ինչպես նման դեպքում ինքը՝ թուրքը կաներ:

Ախար, սիրելի՛ս, դրանք, էդ հեռուն, շատ հեռուն մտածող թուրքերը, միամիտ երևանցիներին հակառակ, ամեն մեկը երկու, երեք տներից պակաս չունեին, անգամ դրա պետքը չունենալով, ինչպես մեր «խազեինը», տանտերը՝ Հաջին, որ երեք քարա-կերտ տներ ուներ երկհարկանի և չորրորդի համար էլ հիմք էր դրել... Իսկ իր եղած–չեղածը, «ընտանիքը» իր չոր գլուխն էր, տղան՝ Հասանը, իր կնոջով, և թոռը՝ Հուսեինը, որի աչքերից մեկը մեր տան կողմն էր նայում, մյուսը՝ Կոնդի տակի տան կողմը, և դեռ չէր հասցրել Հաջու «ազնիվ» ցեղը բազմապատկել «խումար» աչքերով...

Այդպես խմբերով էլ ապրում էին մյուս գաղթականները: Ալաշկերտցիք՝ «Նազարովկի» փողոցի շրջակայքում, վանեցիների մեծ մասը «Զառաբի խան» կոչ-ված իջևանատան մեջ բոլոր հարկերն էին զբաղեցնում, և, ըստ «կոչումների», աղա-ները (իսկ վանեցիների ամեն երրորդն աղա էր)՝ վերի հարկերում, ոչ աղաները՝ ներքևի հարկերում: Վանեցիք մեզանից շուտ էին գաղթել, և երբ նրանց գաղթը անց-նում էր Իգդիրով, զարմանում էին մեզ՝ իգդիրցիներիս վրա, որ գաղթելու մասին ո՛չ մտածում էինք, ո՛չ էլ մտադիր էինք:

Այդպես խմբերով էլ ապրում էին քո քաղաքացիք՝ քեզ էլ չմոռանալով սակայն...

— Համա թե բան ասեցիր... Էդպես շուտ, վռազ պիտի մոռանայի՞ն...

Մի՛ նեղացիր, մոռանալու բան չես, էսօր էլ դեռ զառանցողներ ունես, ո՛ւր մնաց էն ժամանակ, որ հացն էլ կուլ չէր գնում, համակ սպասողական վիճակում էին... Սպասում էին, հիշելով նաև իրենց խմբապետի «պատմական» խոսքերը, որ ասվեցին «նույնքան պատմական» հանդամանքներում, Գարեգին աղայի դաստակերտում «խորհրդավոր ընթրիքի» ժամանակ, որ տունդարձի քեֆ ու ուրախություն են անելու իրենց տներում... Հիշում էին՝ վստահ լինելով իրենց խմբապետի ասածին... Գիտեին, որ Դրոն պարապ խոսքեր շռայլողներից չէր: Եվ եղավ, ինքդ էլ ականատես եղար, նման փորձն էլ եղավ: Եթե անգամ քո քաղաքացիք մոռանային, նա չէր մոռանա. համոզվա՛ծ եղիր... Նամանավանդ քո Հմայակ քաղաքացին, որը առաջիններից էր Իգդիր մտնողներից, երբ քո խմբապետը, որ այդ հրաշք հանրապետության զինված ուժերի հրամանատարներից էր, Սուրմալուն մաքրեց թուրքերից և գաղթածների մի մասը վերադարձավ իրենց քարուքանդ եղած տները: Բայց երկար չտևեց, մանա-վանդ... «քեֆ, ուրախություն» չեղավ: Ուրախանալու բան չկար:

Բայց ինչքան էլ որ կարճ տևեց, իմ անհամբեր Հմայակ հայրս հասցրեց քեզ տեսնել, մի վերջին անգամ: Ես էլ տեսա, ինձ էլ էր հետը վերցրել, երևի մենակ չլի-նելու համար, քանի որ մայրս լսել անգամ չէր ուզում վերադառնալու մասին:

Մեր տանը բան չէր պատահել, նույնն էր, ինքդ էլ տեսած կլինես: Մեր տունը պահ էինք տվել մեր հարևան պարսիկ Մուսա Մալիմին, և ինչպես թողել էինք, այնպես էլ կար... Բայց ապրելու պետք չէր արդեն, ինչ–որ բան էր կատարվել հետը, աննկատ,

քստմնելի, ինչպես վարակվածը վատ հիվանդությունով: Տեսքը նույնն էր, բայց... Հմայակ հայրս էլ էր ինչ–որ շվարած, ուրախություն չկար երեսին, իսկ գալուց՝ ուրախ էր, կատակում էր. հիմի սկվել է: Մուսա Մալիմի հարցերին էլ չի պատասխանում, դուրս ու ներս է անում. գոմը մտավ, զերզամբին, հացի ճոճը հրեց կամացուկ, նա էլ գնաց–եկավ պատի ժամացույցի ճոճանակի նման: Ի՞նչ էր մտածում էդ մարդը... Վիհ էր բացվել մեջը երևի, ուզում էր լցնել երևի... չէր լցվում: Կոնյակով արկղներն էլ չկային ծիրանի ծառի տակ, գուցե թե օգնեին...

Մուսա Մալիմն էլ շվարած, լուռ նայում էր հորս գնալ–գալուն, չէր կանգնեցնում, սպասում էր, որ հերս ինքը խոսի, նստի գոնե, և երբ նստեց պատշգամբում թախտին, Մուսա Մալիմը կամացուկ ասաց.

— Էդպես է, Հմայակ, ճիշտը չապրելն է, չի ապրվի... Ճիշտը հետ գնալն է, հե՛տ գնացեք... Ես էլ չեմ մնալու... Հարաքյաթ չունեմ դրանց նորից տեսնելու, որ հետ գան... Հետ են գալու...

Իսկ Հմայակը չէր լսում, քարացել է, գունատ, անգույն երեսին արտահայտություն չկար, ո՛չ տխուր էր, ո՛չ զայրացած, սառած աչքերով ինչ–որ կետի էր նայում, և աչքերից հոսում էին արցունքները՝ կաթիլներ չդառնալով...Հոսում էին... Ծանր, դաժան բան է հոր արցունքները տեսնելը...

Այդպես եղավ, չստացվեց մեր տունդարձը:

Բոլորն էին թևակոտոր եղել, մենակ Հմայակը չէր թևակոտոր... Իմացել էին, որ հետ են գալու թուրքերը... Մեր խմբապետն էլ, հանրապետությունն էլ չէին կարողանալու պահել Սուրմալուն, հազիվ հասցնում էին լկտիացած հարևաններին դիմադրել: Այս տունդարձն էլ՝ շտապ, անհաշվենկատ էր, անհեռատես–լավատեսություն... Մեզ չսազող: Մեզ լավատես լինել չի կարելի, չի վերապահված: Բայց մարդը անհույս չի կարող ապրել և մեղավոր փնտրել էլ չի կարելի, դու էլ փորձ մի՛ արա, սիրելի՛ս, առավել քան քո խմբապետին, որ անհամբեր եղավ: Նրա սևացած սիրտն էլ էր մղկտում քեզ համար...

Օ՜, եթե նրա ուզածով ստացվեր... Շատ չէր ուզածը, գոնե Սուրմալուն, Արազը երկու ափերով,



Օրգովի լեռնանցքը, նախկին սահմանը... Շատ չէր, երևի վստահ էր, որ կկարողանա պահել: Նրա պես էին մտածում նաև նրա անբաժան համախոհները՝ գնդապետ Պերեկ-ռեստովը, Կարելկովը՝ հետը եկած: Նրանք էլ էին անհամբեր, նրանք էլ ոչ մի կերպ չէին կարողանում համակերպվել այն մտքի հետ, որ խախտվի ռուսական սահմանը... Որ կարող են սահմանները հոժարակամ թողնել թուրքին... Իսկ հետո, ինչ անեին իրենց զինվորական պատիվը, թագավորին տված երդումը... Եվ պատահականություն չէր կամ զարմանալի, որ մնալով նորաստեղծ հանրապետության զորակազմում՝ համոզված էին, որ պահպանում են ռուսական տերության հողը, իրենց զինվորական պատիվը, տված երդումը:

Նույն համոզմունքին էին նաև ռուսական զորքերի կազմում ծառայած հայ զինվորականությունը՝ Ղարսի, թուրքական ճակատը թողած, բայց դեռ չհուսալքված, և շտապելով Հայաստան կազմեցին, դարձան այն հուսալի նեցուկը նորաստեղծ հան-րապետության, որի կարիքը այնքան պետք էր, անգնահատելի...

Նրանք՝ այդ կանոնավոր զորամասերը, ամեն տեղ էին, որտեղ մեր վիճակը դժվար էր լինում, իսկ մեր վիճակը այդպես էլ չհեշտացավ: Նրանց ներկայությու-նը միայն բավական էր, որ մեր՝ համազգեստ չհագած, սպանվածի հրացանով կռվող զինվորները հրաշքներ գործեն... Բայց հրաշքն էլ երևի թե չէր օգնի մեր հանրապետությանը:

Հրաշքն էլ մեկ անգամ է լինում. եղել էր:

Եվ եթե հարևանդ է աչքերը չռել ունեցածիդ՝ կա՛մ պիտի թքես հեռանաս, կա՛մ... Բայց «կամ» չկար: Մահու–կենաց կռիվ էր: Կռվում էին հուսահատ խիզախությամբ և կռվում էին իրենց նախկին... «դաշնակիցների» դեմ, որոնք Ղարսում, թուրքական ճակատում՝ փամփուշտ չէին կրակել, խնայել էին և խնա-յած փամփուշտով... իրենց երեկվա դաշնակցի վրա էին կրակում նույն այդ «հեղափոխական» Քեմալ փաշայի խրտվիլակ մուսավաթականները, նույն այդ թուրքերի անլվա տեսակը, վարձու դյադաները, որոնք շատ կուզենային «քաջա-բար» կռվել, եթե կռվում սատկելու տխուր հանգամանքը չլիներ, և որ ամեն անգամ իրենց վախկոտ խուժանի առաջից գնային՝ նավթահոտը քթներին եկած գերմանական, անգլիական «փրկարար» ջոկատները, թուրքական ասկյարները, կամ... ռուսական զորքը, Կովկասը «ազատագրող» 11–րդ կարմրագույն «փառա-պանծ» բանակը Օրջոնիկիձեի, Կիրովի առաջնորդությամբ, իսկ իրենք համեստո-րեն, լեշակեր չախկալների պես՝ հետևներից, անզեն, անպաշտպան հայկական գյուղերը ավերելով, կոտորելով...

Իսկ Ղարսում էլ զբաղված էին միամիտ հայերից թաքուն փաշաներից «բախ-շիշ» հավաքելով, որ Թիֆլիսում կիսեն սեյմի մյուս անդամի հետ: Այդպես են «դաշ-նակցել» էդ աղվեսները:

Եվ մյուս «դաշնակիցն էլ»՝ բատոնո կնյազները, մեր հազար տարվա քրիստոնյա հարևանները, նույնպես կգան «մեր հալը» հարցնելու՝ Ալավերդու պղնձահան-քերին աչքերը տնկած, և կհասնեն Սանահին ու միակ զրահագնացքը կթողնեն Լոռվա գյուղացիներին ու շունչ կառնեն Թիֆլիսում՝ իրենց քալբատոնոների փեշի տակ...

Եվ երբ Դրոն, Պերեկրեստովի հետ Նավթլուղը գրված կկանգնեն Հավլաբարի բարձունքին, կնյազ Զխենկելին վարտիքը բռնած կվազի Դրոյի մոտ «թյուրիմացությունը» սվաղելու և հրավիրելու ճոխ հացկերույթի մինչև լուսաբաց, «ախալի սուփրայով», Արամյանցի հյուրանոցի շքեղ սրահներում:

Դու էլ կարող ես պատկերացնել՝ ի՜նչ սրտառուչ ճառեր, կենացներ ասած կլինեն Կախեթի գինուց հուզված բատոնո կնյազները: Իսկ թե ինչ կասեր Արչիլ Նեստերովիչը, քո քաղաքացին դարձած, որը Իգդիրի քեֆ–ուրախությունների մշտական թամադա էր հռչակված և գիտեր՝ կերած աղուհացի սուրբ իմաստությունը... Կասեր՝ ամոթ, խայտառակություն: Արչիլը կնյազ չէր, սովորական վրացի էր, որ իր նման սովորական հայի հետ պիտի ապրեր...

Իսկ Ղարաբաղի, Զանգեզուրի վրա «արշված» ոչլոտ խաները ամեն անգամ Նժդեհից քոթակ կերած՝ նամազ կանեն Գյանջայում, Նուխիում...

Ախ, թե դրանք լինեին մեր հանրապետության «թշնամիները»... Հենց չակերտների մեջ էլ կմնային և երկար կմնային:

Մի խոսքով՝ ինչ գլուխդ ուռեցնեմ էդ պատմություն-ներով, որոնցից մինչև օրս էլ գլուխ հանելու չի, սատանան էլ գլուխ չի հանի, էնպես են մթագնել, խճճել: Հիմա ո՜ւմ է հար-կավոր, էն ժամանակներում շատ էր պետք մեր հարևանների, չասենք, օգնությունը, գլխներին լիներ իրենց օգնությունը՝ գոնե չխանգարեին, էդքան աչքածակ չլինեին... Եվ ասում եմ, որ իմանաս քո քաղաքացիների օր ու վիճակը՝ իրենց շատ հավանած մայրաքաղաքում: Եվ իմացա՜ծ եղիր, որ նրանք ո՜չ

գիտեին, ո՛չ էլ ուզում էին իմանալ, ինչպիսին է իրենց վիճակը: Գիտեմ, որ նվալով ապրողներից չեն եղել, ամոթից գետինը կմտնեին, բայց իրենց գլխներին եկածի պատճառը ուրիշի չէին վերագրի: Նվալու, ինչպես իրենք էին ասում, «ճռռալու» սովորություն չունեին, և պատահական չէր, որ Իգդիրում եղած միակ ճռռացողի պատճառով իմ Բանավշա տատիս ցեղակից Օրդոյանների «Ճռիկենք» էին կնքել, և դու, չգիտեմ ինչպես, բայց ես այդ ուղղամիտ, բաց ճակատով իմ հայրենակիցներին քիչ է ասել՝ սիրում եմ, «խելքս իմս չի», հպարտանում եմ իրենցով. և ո՞նց չհպարտանաս հենց իմ գիշերային այցելուներով, որոնք, իրենց անագորույն վիճակը մոռացած, մի աղերս ունեն իրենց տխուր, թախծոտ աչքերում, մի հարցական, որն էլ քեզ է վերաբերում.



— Հը, հո չե՞ս մոռացի, տես հա՛...

Եվ կարևոր չէ, որ նրանց ստվերներն են ընդամենը, կարևոր չէ, նրանք ինձ համար կան. և քանի դեռ ես կամ՝ կլինեն: Եվ կլինեն հաստատ, քանի որ կլինեն, կան նրանց թոռներն ու ծոռները և թող խմածս Արազի ջուրը հարամ լինի, եթե նրանք քեզ մոռանան:

Իսկ դու մի՛ նեղվիր, մի՛ ճռռա. թող նրանք լավ զգան իրենց իրենց մայրաքաղաքում, քանի դեռ իրենցն է: Շատ չի տևի, սիրելի՛ս. կգա նորից մի գետին մտած «հետո» և էդ «հետոյից» էլ չեն բողոքի, չեն ճռռա, ինչքան էլ դժվար լինի, անաստված դժվար և քո անունն էլ տալը դժվարանա: Իսկ նրանք ավելորդ հացակեր չեն դառնա հանրապետության համար, ամեն մեկը իր խելք ու շնորհքի չափով իր գործին կլինի, արհեստավորը՝ իր արհեստին, հողագործը՝ իրեն բաժին հասած հողին, առևտրականն էլ՝ իր առևտրին: Իսկ դրանց «տղերքը»՝ ջահելները, զորակոչի չեն սպասի. կլինեն հանրապետության մղած բոլոր կռիվներում, իրենց... «սեփական զենքով», զինվորի համազգեստ հագած թե չհագած, իսկ հետո իրենք էլ, իրենց ծնող հերն ու մերն էլ փառք կտան կռիվներում սպան-

վածներին և շատ քիչ ժամանակ կունենան մտածելու, որ կռվում զոհվելու համար էլ բախտ պիտի ունենալ...

Բայց մինչև այդ «հետոն» կգար՝ քո քաղաքացիք բախտին սպասելու, չէ՝ քիթ սրբելու դադար չունեին: Իրենք, փաստորեն, վերջին զանգվածային գաղթողները եղան «Ռուսահայաստան» կոչված հողից, և եթե իրենցից առաջ գաղթածները իրենց վրա եղածով, ունեցվածքով էին տեղ հասել, ապա քո քաղաքացիների, Սուրմալուի գաղթը կարելի էր համարել «արտակարգ», ոչ անսպասելի: Դու գիտես, որ քո քաղաքացիք «մի քոռ չոփ» էլ չթողեցին իրենց տներում, որ եկած խուժանը աչքերը խոթեին, եթե նկատի ունենանք, որ անգամ իմ «անբաշար» Հմայակ հայրս իր «առևտրական տան» ունեցվածքը գաղթից առաջ հասցրել էր տեղափոխել Երևան՝ զարմացնելով մորս իր «հեռատեսությամբ»...

Եվ իմացած կլինես երևի, որ Սեկոյենց, «Տաբակենց» ուստա Միքայելը (էդ Սեկոյաններին էլ «Տաբակենց» էին ասում, քանի որ ուստա Միքայելի հերը թութունի առևտրով է զբաղված եղել մի ժամանակ) Իգդիրում թողեց ընդամենը մի քանի կառքերի փտած մնացորդները, իսկ Երևանում բացեց նորից իր արհեստանոցը, «կառետնի դվորը»: Ուստաբաշի Ավետիսն էլ, իմանալով, որ եկողները կար անելու համար չեն գալիս, ո՛չ կարի մեքենան թողեց և ո՛չ էլ մահուդի «թոփերը», արդուկն էլ չմոռացավ, և ինքն էլ արհեստանոց կունենա ու դեռ որպես ուստաբաշի՝ պատվեր կունենա զուգելու նաև մայրաքաղաքի կառապաններին չքեղ համազգեստով:

Վլասը կամ Օդաբաշենց Երվանդը իրենց գործարանները չէին շալակելու բերեին: Վլասը կբերի իր լիմոնադների «ռեցեպտները» և մեծահարուստ Գիլանյանցի լիմոնադի գործարանում կաշխատի որպես «ավագ խորհրդատու» և Օվսաննա մորաքրոջս պլպլացրած «չիբլետներով» և օսլայած շապկով չի սպասի իր գործարանի «ճվվոցին»,—

կնայի իր բլիթի չափ «Սարքիսով» ժամացույցին ու պարոն Գիլանյանցից էլ վաղ կհայտնվի գրասենյակում:

Տեր Մեսրոպն էլ, որ արդեն Սուրբ Սարգսում ավագ քահանա էր կարգվել, նորից քիթ սրբելու ժամանակ չի ունենա, քանի որ ոչ ծնունդներն էին պակասել, ոչ զատիկ-ները և իր կիրակնօրյա քարոզներն էլ ավելի «բազմախոր-հուրդ» կդառնան:

Արզումանենց Տիգրանն էլ հենց Երևանում կտոնի իր երկրորդ տղայի ծնունդը, բայց ո՛չ դհոլ–զուռնայով, քանի որ զուռնաչի «Բլդուզ Օհաննեսը» մնացած կլինի Իգդիրում, իր զուռնաչի հոր կողքին, սուրբ Գևորգի գերեզմանատանը պառկած:

Եվ այդպես էլ բոլորը քո քաղաքացիներից, անգամ Խոռո դադոն «գործի վրա» կլինի՝ մեյդանում տաք–տաք «լաբլաբու» կծախի համբալներին:

Եվ թող քեզ վիրավորական չթվա, որ քո քաղա-քացիք Իգդիրից հետո էդպես «վռազ» հարմարվեցին, տեղավորվեցին... Երևանցի դարձան: Երևանցի չդարձան, սիրելի՛ս. քո կող ունեցողներին էնքան հեշտ չէր փոխելը, և քանի դեռ կար, դիմանում էր «իրենց», այո՛, իրենց հանրապետությունը, իրենք էլ դիմացան, և էդ ժամանակ էր, որ քո անունը ծամոնից ավելի գործածական դար-ձավ... Երանի՜ թե չդառնար:

Պարզապես մտահան էին արել, որ կարող է նորից «հետո» լինել: Ախար, սիրելի՛ս, քո քաղաքացիք հեչ իրենց գաղթականի պես չէին պահում. կարելի է ասել, որ մի փոքր անհամեստ, հպարտ էին պահում իրենց: Հանաք բան չկարծես, պառլա-մենտում իրենց երևելի հայրենակիցներից ունեին և... Դե՛, տեղից էլ մի քիչ «լոպազ», հպարտ էին կարծեմ, որ... Հիմա էլ քթները տնկած էին չորրորում Երևանի բուլվարում, Աստաֆյանում... Ինչպես ասում են՝ ոտքերը գետին չէր առնում, էնպես էին հմայված իրենց հանրապետությունով:

Եվ Տե՜ր Աստված, ինչո՞ւ չհմայվեին, ինչո՞ւ հպարտ չզգային իրենց, ինչքան կարելի էր բան ու գործ թողած՝ Բոգոսլավսկիներ «վերացնելով» զբաղվել... Իսկ հիմա իրենք են ու իրենց տերությունը. հազար տարվա սպասած, փափագած տերությունը, հանրապետությունը...

Եվ եթե իրենց բախտը բերել էր, որ ապրում էին իրենց տերության այսպես ասած հովանու տակ, ապա իրենց այդ տերությունը ո՛չ հովանի ունեցավ իր գլխին և ո՛չ էլ բախտ կոչեցյալը:

Իր ծննդյան հենց առաջին օրվանից մի փուշ դարձավ բոլորի աչքին. և ոչ միայն իր հարևանների, երեկվա «դաշնակիցների», այլև հեռավոր տերությունների՝ շատ հեռուներում շնթռած քրիստոնյա մեծ տերությունների, մեզ նման սովորական քրիստոնյա, որոնք քնից զրկվել էին այդ մեր պետության անսպասելի, «չնախատեսված» հայտնվելուց հետո...

Ախար, սիրելի՛ս, դրանք իրենց երկուկոպեկանոց շահը, հաշիվները մեզանից բարձր էին դասել և ժամանակին ինչպես հարկն էր մեզ խնամքով տրորել էին իրենց փայլեցրած սմբակներով՝ կարծելով, որ չկանք, ջնջվեցինք, այլևս չի լինելու հայի, «Հայկական հարց» կոչված գլխացավանքը, և գոհ իրենց արած ոճիրից՝ հանգիստ շունչ են քաշել: Եվ, խնդրեմ, մոլախոտի պես նորից ծիլ է տվել քարի տակից և նորից՝ գլխացավանք: Իսկ մեր գլուխն ու գլխացավը Աստված միասին էր ստեղծել...

Էլ ի՜նչ պետություն, որ գլխացավ չունենա, սիրտը չծակի:

Այդպես էր, սիրելի՛ս. դեռ նոր ոտքի կանգնած՝ արդեն գլխացավանք էինք պարզապես և փառավորապես: Խանգարում էինք բոլորին, ինչպես խանգարել էինք միշտ, հազար–հազար տարիներ: Եվ էլ ո՞նց քնեին, սրտները չծակեր, գլուխները չցավեր, եթե հայն էլ էսօրվա իրենց նման պետություն է դարձել: Եվ... պառլամենտ ունի, նախարարներ, զորք, դրոշակ և... փող, թղթադրամ է կտրել և թղթադրամի վրա էլ՝ տեսեք, իրենց խեղճությունն են նկարել՝ ճախարակ, իլիկ մանող կին՝ վանեցի, մշեցի կին, և ի՜նչ իմանան, թե էլ ինչ է մտքին դրել անելու, եթե զորք է ուղարկել Բաքու... Ո՛չ իրեն համար նավթ բերելու, ինքը ձեթի ճրագով էլ է ապրում,– ուղարկել է Բաքվի «արտակարգ» կոմիսարներին օգնելու, որ Ռուսաստանը նավթ ունենա...

Էլ խանգարելը հո պոզերով չի՞ լինում, էլ ի՞նչ էր սպասում, որ նույն այդ նավթահոտը պնչներին կպած պարոնայք անգլիացիք, գերմանացիք կամ փաշաները... չնորհակալական հեռագիր առաքեին պարոն Խատիսովին կամ Վրացյանին:

Բայց գոնե Ռուսաստանը, այդ նոր «կարմիր» Ռուսաստանը, հեղափոխական Ռուսաստանը, «ճնշված ազգերին ազատություն բերող»... Գոնե նա չլիներ մեզնից «խանգարվածների» մեջ...

Զեղավ, չստացվեց. իրեն էլ էինք խանգարում. Բոգոսլավսկիները մնացել էին դեռ, գույները փոխած, կարմիր Բոգոսլավսկիներ, որոնք էլ գերադասեցին... գունազարդված փաշաներին, «հեղափոխական» թուրքերին, որոնք կռիվ էին հայտարարել «Իմպերիալիստական» Հայաստանին: «Իմպերիալիստ» էինք դար-

ձել կարմիր Բոգոսլավսկիների համար... Եվ ի՞նչ էր անում այդ իմպերիալիստ հռչակ-ված պետությունը... Քաջ Նազարի, իշխան Սաքոյի ասածով՝ չէր ուզում իրեն մնա-ցած մի կտոր հողը «իրենց» տալ...

Եվ տեսեք՝ քարուքանդ եղած ճանապարհները, կամուրջներն է շինում, հիվանդանոցներ է բացել, որբանոցներ, դպրոցներ, համալսարան... ոչ ավել, ոչ պակաս՝ համալսարան, գիմնազիաներ... Վարժապետների, պրոֆեսորների էլ պակաս չունի այդ իմպերիալիստը... հավաքվել եկել են իրենց մարդավարի ապրուստը թողած և կես ֆունտ հացով ծառայում են իրենց իմպերիալիստական հայրենի-քում... Մի խոսքով՝ չի ուզում հոժարակամ «անցնել» պատմության գիրկը... Չի կշտացել, չի ձանձրացել հազար–հազար և նորից մի հազար տարի ապրելուց և նորից չիվ է տվել դալար, ոնց որ իր հեքիաթի պատանին, Վահագնը. նորից դուրս է պրծել եղեգնյա փողից...

Էդքանը հասցրեց անել, սիրելի՛դ իմ Իգդիր, երկուսուկես տարում ավելին չկարողացավ. էդ չորս կողմից կրակ տված տունը, մեր հրաշք հանրապետությունը՝ չթողին: Զոքեցրին, սիրելի՛ս, ինչպես եզն է չոքում ուժից վեր ծանր լծի տակ, որ էլ... վեր չկենա: Մի անգամ էլ փորձ արեց վեր կենալու՝ չստացվեց... Իսկ երբ պետությանն են չոքեցնում և ոչ թե եզին՝ այդ դեպքում ասում են՝ պարտվեց, հաղթվեց, իսկ թե ով հաղթեց՝ չիմացանք այդ «մեկին», որ ասենք այդ մեկը «եկավ հաղթեց»...

Ավելի կարճ, քան ինքը՝ Կեսարն էր ասել... Ախար, մեկին չէր խանգարել, խանգարվածները շատ էին. և շատ գիտուններ էլ փորձեցին «լուսաբանել» այդ «պատմական առեղծվածը»... Զլուսավորվեց, մթագնեցին, խճճեցին... Ինչ–որ «գաբոբիճայական» բան էր կատարվել, մեծ լոռեցու Գաբո բիճու շերամապահու-թյան նման բան...

Հորթն էր մոտ կապած, թե հավերն էին կոցում, անձրևն էր երդիկից թափ-վում՝ այդ շերամի վրա... Մի խոսքով՝ մեր «շերամն» էլ չապրեց, չդիմացավ, այսպես ասած բնության արհավիրքներին՝ «անբարենպաստ պայմաններին»...

Միայն հարևանները չէին մոտիկ–հեռու, մենք էլ «փութացրինք», ինչպես կասեր պարոն Եփրիկյանը. մենք, մեր ստեղծած, թե չստեղծած «կոմիտեականները», որոնք գաղթականներից շուտ էին հասել Երևան՝ մայրաքաղաք, խցկվել պառլամենտ, ամեն տեղ... «Պորտֆելներ» էին խլում իրար ձեռից... Հատկապես ամենա, ամենահե-ղափոխականները, «ամենասկզբունքայինները»... Բոլորն իրենց «փրկարար» էին հռչակել, այդ ձախողակ կոմիտեականները, մեր հին ախտով, անմիաբանության ախտով վարակվածները... որոնք բոլորը միասին վերցրած չարժեին իրենց ժողովրդի եղունգի տակ եղածին... Եվ չարժեր հավատալ դրանց կուրծք ծեծելուն, սիրառատ զեղումներին, հատկապես քո ծխական քահանայի, տեր Մեսրոպի «նզովյալներին», որոնք իրենց համարում էին «միակ փրկիչը» այդ միամիտ ժողովրդի:

Իրենք էլ հայ էին վերջապես, իրենք էլ էին... սիրում այդ ժողովրդին. բոլորը հո... Ավիս կամ Աթարբեկյան չէի՞ն... նրանց մեջ էլ կային ճշմարիտ հայրենասերներ... Բայց դրանց «սիրառատությունից» տառապողը մնում էր էլի տարաբախտ ժողովուրդը... և այստեղ է, որ չի կրկնվի հռոմեացու ասած արհամարհական խոսքը. «Կեսարին արժանի ժողովուրդ»...

Ինքը շատ բարձր էր իր «կեսարներից», այդ երկուսուկես տարին էլ չէր ապրի այդ հրաշք հանրապետությունը, եթե ժողովուրդը չլիներ այդպես հմայված, կախարդված իր ստեղծածով...

— Բայց ի՞նչ ունեին կիսելու, չէ՞ որ, ինչպես դու ես ասում, իրենց բոլորի ցանկությունը, երազածը, պետականությունն էր, և դա կատարվել, կար...

Ի՜նչ իմանաս, բան էլ չուներ, որ տար, կշտանային, հիվանդ էին... Անբուժելի հիվանդություն է դա. ուրիշ ժողովուրդները չունեն այդ հիվանդությունից. «անմիաբանություն» է կոչվում. անբուժելի է, վակցինա չունի, հին արմատակալած ախտ է, և չեն էլ ուզում բուժվել...

Բայց, սիրելի՛ս, կային և ուրիշ դժգոհներ, հասարակ, «անսկզբունք» դժգոհներ, ասենք՝ պապս, օրինակ՝ Գրիշ պապս ու իր նմանները:

Իմ անսկզբունք պապս կարող էր և դժգոհների ցուցակում չլիներ, բայց շատ էր վշտացած անսիրտ, անխիղճ վերաբերմունքից, անձնական... Գնացել էր Քեշիշքենդում ծանր վիրավոր քեռուս՝ Արշալույսին բերելու, որ տանը մի հրաշքով բուժեր... չէին տվել, ասել էին...

Թող էստեղ մեռնի, որպես հայրենիքի զինվոր...

Իսկ ինչո՞ւ մեռներ իմ անուշիկ քեռիս, չէ՞ որ կարող էր և բուժվել... Շորերը բերեց, որ հարս Շողակաթը, քույրերը, մերս, Եղաֆոն լաց լինեին վրան...

Հայհոյել չգիտեր իմ պապը, Արշալույսը վերջինն էր... Եվ հավաքեց որբերին, հարսին, գնաց հեռու Տաշքենդ... Հայհոյել գիտեր, ասել էր. «Ես էդ ավազակերանց հեղը չեմ կարալ աբրիլ...»:

* * *

Բայց գլխավոր դժգոհները դեռ ճանապարհին էին. դեռ նոր պիտի գային, Իջևան էին հասել, բոլորն էին սպասում, հույսով, թե վախով, անձկությամբ...

Եվ մի առավոտ, Քանաքեռի բարձունքից իջնող միակ, սայլի խճուղով, որտեղից առավոտ մութ–լուսին իջնում էր երևանցիների համար իշխան ձկնով բարձված էշերի քարավանը, «Քյավառա պոեզդը», ահա այդ խճուղով, փողային նվագախմբի ցնծալի հնչյունների ուղեկցությամբ իջավ... Ռուսական 11–րդ «փառապանծ» կարմիր բանակը, կաշվե, սև բաճկոններ հագած, մաուզերները, թրերը կողքներին կախած՝

կարմիր կոմիսարները առջևից, աչխույժ ձիերի վրա շորորվող, որոնց հետ էին նաև... մեր գլխավոր դժգոհները, «համար առաջին հայ փրկիչները»...

Եվ ինչպես հարկն էր որ լիներ, եկան ու բարձրացան թափուր մնացած պառլամենտի պատշգամբը՝ «բոցավառ ողջույն» հղելու իրենց անձկությամբ «սպասող», թուքները չորացած, բերանբաց երևանցիներին և ճառ ասելու:

* * *



Ինչ վերաբերում է մեզ, Կոնդի տակերի ու Զառաբիխանի երեխաներիս՝ «թևով քիթ սրբողներիս», որ ոչ մի բանից դժգոհ չէինք, մենք էլ անձկությամբ սպասողներից էինք վաղ առավոտից և հիմնական ուղեկիցը՝ նվագախմբի առաջն ընկած մինչև պառլամենտի հրապարակը շարժվեցինք եկած «պոպոզավոր» ռուս ու հայ զինվորների կողքին՝ հերթական ճառ լսելու. և մեր համերաշխության ձայնը խառնելու Բուլվարի թամբաքու ծխողների խառը–խուռը ձայնին, որոնք ավելի շատ հազում ու թքում էին, քան ձայնակցում մեր ծղրտոցին՝ «Կեցցե՛, անկախ Հայաստանը»... Ա՛խ, այդ անբախտ Հայաստանը:

Եվ զարմանալին ասեմ, թե... տարօրինակն այն էր, սիրելի՛դ իմ Իգդիր, որ մենք ինչքան էլ որ վարժվել էինք մեր վարժապետ նախարարների սրտաճմլիկ ճառերին, այդ օրը, երբ այդ նույն պատշգամբից ճառերին սև կաշվե բաճկոններ հագած կարմիր կոմիսարները, որոնց հայերենը ռուսերենին խառնած ճառերից էդ թամբաքու ծխող կամ բերանբաց երևանցիք էլ բան չէին հասկանում, երևակայիր, որ նույն ջանադրությամբ ու ոգևորությամբ ծղրտացինք, ավելի շուտ գոռացինք ոչ թե «Կեցցե՛ անկախ Հայաստան», այլ երկար ու ձիգ ուռռա՛... Մինչև խռպոտելը... Այսինքն՝ ձայնակցեցինք ռուս զինվորներին, որոնք «ուռա» գոռալու երևելի վարպետներ են:

Մեր պետքն էլ չէր, կամ ի՛նչ իմանայինք, թե ինչ է «տեղի ունեցել»... Մենք մի բան գիտեին, որ այդ պատշգամբից երբ ճառ է ասվում, պարտավոր ես, բարի եղիր ծափահարել կամ ծղրտալ. այսինքն՝ վերաբերմունք ցույց տուր, իսկ թե ինչ է «տեղի ունեցել, կամ ինչ պիտի տեղի ունենա»... էդ թամբաքու ծխողներն էլ գլխի չէին. շշկլված իրենք էլ էին բերանները բաց ու խուփ անում՝ կողքները նայելով:

Բայց որ «մի բան» տեղի էր ունեցել՝ կույր չէինք, մենք էլ պարզ տեսնում էինք...

Ո՛չ նախարարները կային...

Ո՛չ դրոշակը՝ մեր եռագույնը, շատ գեղեցիկը...

Ո՛չ էլ զինանշանը՝ վրան Սիս–Մասիս նկարած, պատշգամբի վերևում մշտական փակցրած...

Եվ ոչ էլ ճառերն էին հասկանալի... Եվ, ամենակարևորը, չերգեցինք «Մեր հայրենիքը», այլ էդ ռուս տղերքը մի երգ երգեցին, որին մենք չմասնակցեցինք. խոսքներն էլ էին ուրիշ, և եղանակն էլ՝ շատ ուրիշ...

Իսկ փոխարենը՝ դրոշակը կարմիր էր, ճառ ասողները՝ մռայլ, հերսոտ մարդիկ, լսողների մեծ մասն էլ պոպոզավորներն էին, և հայ զինվորներն էլ նույն պոպոզով և իրենք էլ հերսոտ... Հեչ նման չէին եկած ռուս զինվորներին՝ կապուտաչ, շեկլիկ մազ–մորուքով, ուրախ, ծիծաղն երեսներին, որ մեզ հետ կատակում էին, շաքար էլ բաժանեցին, սպիտակ «սոմի» հաց էլ հանեցին ուսապարկերից... Կարմիր ժապավեններ բաժանեցին... Իսկ մերոնք՝ տռզած, մթնած, կարծես թաղման են եկել...

«Տե՛ր, տու պարին անես»,— կասեր Խոռո դադոն, որ էնտեղ լիներ:

Կարծեմ, այդ փոփոխությունները բավական էին, որ մենք էլ՝ թևով քիթ սրբողներս էլ, համոզվեցինք, որ իսկապես «բան է տեղի ունեցել» և շատ «կարևոր»...

Եվ շատ շուտով էլ կիմանանք, որ փոփոխությունները միայն պառլամենտի բարձունքում չեն տեղի ունեցել... Դրանով սկսվել են:

* * *

Էդ օրվա ճառերը վերջացան: Զորքը մի ուրիշ, ուրախ երգ երգելով, շվշվացնելով, սապոգներով թմփացնելով գնաց դեպի «կազարմաների»՝ զորանոցների կողմը, ժողովուրդը մտքամոլոր ցրվեց տները, մենք էլ մեծ աղմուկով թեքվեցինք դեպի Զառաբիխան, դեպի սուրբ Սարգսի ծուռումուռ փողոցները:

Փողոցները դատարկ չէին, բայց շատ մարդ էլ չկար, խանութներն էլ փակ էին, կանայք էին դռների առաջ կանգնած զրուցում՝ երևի այդ օրվա «տեղի ունեցածի» մասին: Իսկ մեր տան դռանը, Բաննայա փողոց դ 8, այսինքն՝ Հաջու տան դռանը՝ ինքն էր տնկված, ներկած ցանցառ մորուքը քորելով ու... ժպտալով: Մի սրան տեսեք, ժպտում է, այսինքն՝ ուրախ է: Իսկ ինչո՞ւ է ուրախ, հարազատների՞ն է տեսել... Երբ մեզ՝ գաղթածներիս տեսավ, ներկած սփաթը ծռմռվեց քացախ խմածի պես... Իսկ հիմա ուրախ է...

Ես ինչքան հնարավոր էր աննկատ տուն բարձրացա, բայց տանը ոչ ոք չկար: Մտածեցի, որ Վալիենց տանը կարող է լինեն, անցա նրանց պատշգամբը, էն պատշ-

գամբը, որտեղից ինքը հաջող «թռիչք» էր կատարել մի օր, և տան դուռը բաց տեսնելով՝ ուզեցի ներս մտնել և... քարացա:

Մեծ աղմուկ էր, ուրախ ձայներ էին լսվում, ծիծաղ, քեֆի նման բան էր, որ զարմանալի չէր կարող լինել Վալու տանը, քանի որ Վալին «ուտող–խմող» մարդ էր, քեֆ–ուրախություն սիրող... Բայց այդ օրը ի՜նչ ուրախություն պիտի լիներ իգդիրցու տանը, երբ քո քաղաքացիներից շատերն արդեն Արազն անցել էին՝ դեպի Թավրիզ... Իսկ այդ Վալի կոչեցյալը, իգդիրցի լինելով հանդերձ, տանն էր, և քեֆն էլ իր տանն էր «տեղի ունենում»:

Բայց զարմանալին ուրիշ բան էր: Երկար սեղանը, որի գլխին սովորաբար ինքը՝ Վելիբեկն էր նստած լինում, նստած էր, թե կանգնած... սև, կաշվե բաճկոնով մեկը և ռսի պես էլ շեկ էր ու կապուտաչ, «կուբանկա» փափախը գլխին: Բայց ռսի նման չէր. Վալու պատկառելի արծվաքթից ինքն էլ ուներ շեկ բեղին կախված: Բայց հերսոտ չէր, ամբողջ երեսով մեկ ժպիտ էր, և Տե՛ր Աստված, սա էլ էր ճառ ասում:

Ես ահաբեկված ուզեցի ծլկեմ... Բայց ներս քաշեցին թևից ուրախ ծիծաղելով ու նստեցրին: Եվ նոր նկատեցի, որ այդ բաճկոնավորի աջ ու ձախ կողմերում նստած էին մերոնք՝ հերս, իմ Հմայակ հերս, որ... ընդամենը առավոտյան էր որոշել և, չգիտես ինչու, Թավրիզ ծլկել, բայց նստած, խուճուճիկ գլուխը կախ, պատառաքաղով ափսեի մեջ է քչփորում, իսկ Վալին... Վալին էլ թիկն է տվել աթոռին իր երկար, կարմիր փայտի «գյարմաշոյի» չիբուխն է փստացնում՝ մի երանելի, խորամանկ ժպիտ բեղի ծայրին...

Հետո մորս նկատեցի, որ գլխաշորի ծայրով շուտ–շուտ աչքերն էր սրբում, ինքն էլ ժպտալով... Եվ այնտեղ էին վանեցի Մարեի Դիքրանը, Արշոն՝ իր սիրունիկ տիկնոջ՝ Օսանի

հետ, և անգամ Խոռո դադոն, որը չէր լսում ճառողի անհասկանալի հայերենը, իր համար բլբլում էր կողքը նստածների հետ...

Եվ ահա, սիրելի՛դ իմ Իգդիր, ևս մի փոփոխություն, և զարմանահրա՛շ, որին արդեն մասնակից էին քո պատվելի քաղաքացիք:

Եվ նստել են, խնդրեմ, ուրախ, զվարթ, քեֆները «տնգոզ»: Քեֆ են անում, կարծես թե ոչինչ «տեղի չի ունեցել»...

Տե՛ր Աստված, էս ի՛նչ ժողովուրդ են էս իգդիրցի կոչեցյալները: Դրսում, փողոցում նորից շունը տիրոջը մոռացել է, իսկ սրանք...

Բայց էլի զարմանալի չէ. սրանք տխուր հոգեհանգստի ժամանակ էլ, երբ մի երկու թաս կոնծում են՝ հոգեհանգիստը դարձնում են հարսանքատուն, և երևի սրանց համար էլ միևնույնն է՝ ով է ճառում կամ կճառի պառլամենտի բարձունքից՝ վարժապետ նախարարնե՞րը, թե՞ հերսոտ կոմիսարները...

Էդպես է Աստված սրանց ստեղծել. մի պահ դադա՛ր տուր՝ քրտինք սրբելու, մեջք շտկելու մի պահ և... հրես, Խոռո դադոն էլ կարծես էդ մասին է բլբլացնում իր հարևանին:

— Հեչ մե պան էլ պետքս չի. ուզես եմ, Աստծմեն խնթրես եմ, որ խախանդություն ըլի, կապրենք, ձեռքներս քարի տակը չի...

Բայց Աստծուց չէր կախված, կարծեմ, ոչինչ:

Աստծու հետ գործ չունեին զորքի, ռուսների հետ եկած մեր հայ կոմիսարները. բարկացած էին եկել. շատ խիստ... Բայց ո՞ւմ վրա, մեկը հարցնող լիներ:

Գուցե թե մեր «իմպերիալիստական» հանրապետությա՞ն վրա, որը մահու–կենաց կռվի մեջ էր երկու տարի իր դազազած հարևանների դեմ, թե՞ վարժապետ նախարարների վրա, որոնք վաղուց Թավրիզ էին հասել: Իսկ իրենք... Ո՞ւր էին, ի՞նչ էին արել չորս կողմից կրակ տված իրենց երկրի համար, ժողովրդի, որ այդ երկրում սովի, համաճարակի մեջ էր...

Գուցե թե... Ղարսում էին կռվել կամ Սարդարապատում, Ապարանում, Քեշիշքենդում՝ Արշալույս քեռո՞ւս կողքին...

Չէ՞ որ իրենց հայրենասերներ էին համարում և համար առջի՛ն... Պառլամենտում էլ ներկայացուցիչներ ունեին... Սպասո՞ւմ էին...

Ո՞ւմ էին սպասում... Մեկը հարցնող լիներ, հարցնող չկար, հարցնողին էլ կասեին երևի.

— Հաղթողին չեն հարցնում:

Իսկ ո՞ւմ էին հաղթել. ծնկի եկած, արյունաքամ գաղթականությա՞նը, իրենց «սիրելի» ժողովրդի՞ն...

Հին խոսք կա իմաստուն, որ հայրենիքի դեմ կռվողին՝ դափնեպսակ չի վերա-պահված:

Դեռ փառք պիտի տալ, որ ռուսի հետ էին եկել... Կարող է և ուրիշի հետ գային... Եվ ինչո՞ւ են բարկացած եկել, հերսոտած...

Ուստաբաշի Ավետիսն ասում էր. «Բարկացած ժամանակ վճիռ չեն կայացնի»:

Իսկ իրենք՝ բարկացած, հերսոտած, վճռեցին չդատելով, չջոկելով, պատժեցին՝ թացը չորի հետ խառնելով, անողոք, անխոհեմ...

Եվ հատկապես անողոք եղան, սիրելի՛ս, քո քաղաքացիների նկատմամբ և հատկապես քո «տղերքի», երիտասարդության՝ «մաուզերիստների»...

Չէ՞ որ այդ զենքը ձեռքներին էին կանգնել թուրքի դեմ... Կռվել, սպանվել, ծակծկվել, վիրավորվել և հրաշքով կենդանի մնացել նաև... Իզուր, երև թե կռվում զոհվելն էլ բախտավորություն է եղել:

Գուցե չգիտեին կամ պետքները չէր, թե ինչեր էր պատմում «իրենց» մասին զարհուրելի լուրերից ահաբեկված ժողովուրդը...

Հո միայն նախարարները չէին փախել Պարսկաստան...

Սովորական վարժապետներ՝ համալսարանի, դպրոցների, ուսանողներ, սովորա-կան քաղաքացիք... Եթե Հմայակ հայրս էլ էր պատրաստվել ծլկելու, որ չհաջողեցրեց... Երբ, ինչպես ինքն էր ասում, «նման պարագաներում». «Մե մրճեմ չեմ տրորի»:

Այսինքն՝ մրջյուն չի տրորել...

Իսկ ո՞վ պիտի հարցներ՝ տրորել է, թե չի տրորել. բավական էր միայն, որ իգդիրցի էիր, այսինքն՝ մաուզերիստ:

Եվ ի՜նչ մի նորություն էր նրանց՝ Բոգոսլավսկիներ տեսածների համար... Բայց սրանց համար թաց ու չոր չկար, բոլոր գաղթածների մեջ էլ փնտրում, ճարում էին «թացը»:

Ա՜յ թե շատացան մատնիչները, ա՜յ թե դժվարացավ անունդ տալը... Եվ դա էլ կարևոր չէր, սիրելի՛ս:

Քո անունն էլ, մեզ էլ մի օր կմոռանային, ինչպես հետո եղավ, ցավալին այն էր, որ իրենց անունն էլ մի առանձին ուրախությամբ չէին հիշում: Բայց չէ՞ որ իրենց անունը, կոչումը՝ «փրկարար», իրենց շատ էր պետք, պարտավորեցնող...

Չէ՞ որ եկել էին տիրություն անելու իրենց հարազատին, որբերին, գաղթա-կանությանը...

Եվ որտեղի՜ց այդքան դաժանություն, քեն ու ատելություն... Օտարականներ կարծես լինեին անտարբեր, անսիրտ:

Եվ եղավ այն, ինչ կարող էր չլինել:

Մի քանի ամսում «հաջողեցրին» վանել, թշնամացնել իրենցից՝ հազիվ հողին կպած ժողովրդին, գաղթականությանը: Եվ ժողովուրդը ոտքի ելավ:

* * *

Մի ցուրտ փետրվարյան առավոտ... այդ էլ եղավ:

Թուրքի հրեշավոր սպանդից հրաշքով մնացած ժողովուրդը կիսվեց. կիսեցին, հանեցին իրար դեմ...

Բանն այն էր, սիրելի՛ս, որ փետրվարյան այդ օրը մեր Իգդիրի սովորական «տրնդեզի»՝ Տյառնընդառաջի օրն էր և ըստ սովորականի էլ մեր բակում և բոլոր բակերում օրվա վերջում խարույկներ վառվեցին, և մեծ ու փոքր հավաքվեցին խարույկի շուրջ պարելու, ուրախանալու իրենց հեթանոս պապերի օրինակով, հարսներ «թռցնելու» բոցի վրայից, որ ծնունդը արու զավակ լինի, մի խոսքով՝ սովորական տրնդեզ, որտեղ «ֆրշանգներ» էլ երկինք թռան և Սուրբ Սարգսի զանգերն էլ աշխույժ զնգզնգացին և, ըստ իգդիրյան սովորության, կրակոցներ էլ պիտի լինեին, որ եղան... Բայց սպասածի պես չլռեցին, գնալով սաստկացան, փոխվեցին համազարկերի...

Եվ այստեղ... քո ամեն ինչ տեսած քաղաքացիք գլխի ընկան, որ նորից ինչ–որ բան է «տեղի ունենում»: Ու շփոթված, վախեցած տները մտան, դուռ–լուսամուտ փակեցին, և Տյառնընդառաջն էլ, ուրախությունն էլ հարամվեց, պրծավ:

Հետո կրակոցների ձայները գնալով խլացան, հեռացան դեպի զորանոցների կողմերը, և կայարանի կողմից էլ դղրդացին թնդանոթները մինչև ուշ գիշեր, մինչև առավոտ:

«Տեղի էր ունեցել» այն, ինչ լինելու էր՝ այդ օրը թե մյուս, բայց լինելու էր, ինչքան էլ որ... «չէր սպասվում», «չէր նախատեսված» ինքնավստահ բաճկոնավորների կողմից, որոնք քաշվել էին, «նահանջել» Ղամարլու, Վեդիբասարի ուղղությամբ:

Մյուս օրը՝ հարամված Տյառնընդառաջից հետո, մեզ՝ երեխաներիս, արդեն տանը, բակում պահել չկարողացան:

Զորանոցների, Զանգվի ձորի կողմից դեռ կրակոցներ էին լսվում հատուկենտ, և մենք մեր խմբով պիտի տեսնեինք, թե ինչ է «տեղի ունենում» վերջապես...

Բայց մեր նպատակը միայն տեսնելը չէր. մենք բավականին միամիտ, անմեղ նպատակ էլ ունեինք. դատարկ պատրոններ, պարկուճներ պիտի հավաքեինք, որով խաղում էինք չճարվող պոպոկի փոխարեն. այդպիսի խաղ ունեինք:

Հիմա ես զարմանում եմ մեր այդ միամիտ «խիզախության» վրա... Բայց չէ՞ որ կարող էր մի «քոռ գնդակ» մեզ էլ փայ ընկներ, քանի որ իջել էինք Զանգվի

ձորը՝ կամրջի մոտ, որտեղ դեռ լսվում էին հատուկենտ կրակոցները գետի երկու կողմերից...

Եվ իսկապես, չէ՞ որ կարող էր մի տկարամիտը ճարվեր այդ իրար վրա կրակող հայերի մեջ և...

Բայց այդ օրը տկարամիտ չկար. Զանգվի երկու կողմերից կրակողները գիտակից հայեր էին, չա՜տ գիտակից:

Եվ այդպես խմբով, կուզեկուզ, իրար հետևից կամրջով, գնդակների սուլոցների տակով, որ թվում էր՝ մեր գլուխների վրայով էին անցնում, բայց այդպես չէր, կարող էինք և կռացած չանցնել: Եվ երբ հասանք... համարյա թե հիասթափվեցինք: Կարծում էինք՝ զինվորականների պիտի տեսնեինք... Սովորական մարդիկ էին, գյուղացիներ, ամեն տարիքի՝ ջահելներ, տարեց մարդիկ, իրարից անջատ–անջատ շարված ցածր ցանկապատի երկարությամբ, մեզ էլ բանի տեղ չդնելով, լուռ, մթնած դեմքերով, մազակոլոլ, անթրաչ... Եվ շատ նման էին մեր այգին եկած էն խոժոռ մթնած մարդկանց, որոնք եկել էին, Խաչոյի ասած, «իրենց այնոյինը» տանելու... Հանգիստ, անշտապ կրակում էին... Մեկը միայն ձեռքով նշան արեց, որ կռանանք: Մեր կողմն էլ չէին նայում, կրակում էին Շուստովի գործարանի կողմը, նրանք էլ՝ սրանց կողմը...

Երևի թե վերջին կրակոցներն էին:

Հետո, մի քիչ անց, այդ լուռ, անխոս մարդիկ, ինչ–որ տեղից իրենց ունեցած սայլերը բերեցին, եզան սայլերը, և այդպես, լուռումունջ՝ իրենց անելիքը իմացող մարդու նման, վիրավորներին առանձին սայլի մեջ տեղավորեցին, որոնք էլ էին լուռ, չէին էլ տնքում... Իսկ սպանվածներին էլ մի երկու սայլում, իրար կողք կողքի, իրար վրա, իրար կարծես գրկած... Ա՜խ, այդ սպանվածները... Հեչ նման չէին մեռածների, հոգնած ննջեցյալների էին նման, միայն շատ գունատ, աչքերը խուփ, կամ բաց ակնապիշ, երկնքի կապույտը մեջը... Տարիքով ու ջահելներ... Գեղեցիկ, շատ գեղեցիկ, մեկը հատկապես, որին պառկեցրին սպանվածներից վերև...

Պատանի էր համարյա, երկար, նիհար, ոսկեհեր էր, գանգուրները կպել էին սառած քրտինքին ճակատի վրա, խուփ էին աչքերը, երևի կապույտ էին...

Շարժվեցին սայլերը դառը ճռռոցով, առաջ ընկան, հետևից գլխաբաց հուղարկավորի թափորով գնացին այդ լուռ, մտքամոլոր մարդիկ, մենք էլ



հետևներից գնացինք՝ կամրջով բարձրացանք Շուստովի գործարանի կողմը, որի դիմացն էլ որբանոցներն էին:

Երբ հասանք գործարանի դիմացի ոչ մեծ հրապարակը... դիմացից թափորին դեմ եկավ սրարշավի ձիերի մի խումբ, առջևից՝ սպիտակ կատաղի ձիու վրա մեկը, որ շատ էր շտապում:

Թափորը կանգ առավ, հրապարակում եղած մարդիկ խռնվեցին սայլերի շուրջ, իսկ ձիավորները ծառս եղած ձիերից ցած թռան ու իրենց խմբի առաջնորդի հետևից արագ դեպի սայլերն եկան, և առջևից նույն սպիտակ ձիավորն էր: Տեր Աստված, աչքերիս չեմ հավատում... Բայց «նա էր», հաստատ նա... Մեր այգին եկած էն մարդը, նույն հասակը, նույն լուսավոր դեմքը, որ բոլորից մի գլուխ բարձր էր...

Եվ ես քարացա տեղումս. նա էր, անուշ ժպիտով մարդն էր, որին ես տխրեցրի իմ անհարկի ներկայությամբ, որ հարցրեց լեզուն կուլ գնացած Խաչոյին. «Էս ձագուկ քոնն է», որ մատներով քնքուշ դիպավ կապած թևիս ու ասեց. «Ջխանգարե, ձագո՛ւկ, ջխանգարե»...

Այլայլված էր, անճանաչելի, ձագը կորցրած գազանի նման դեպի սայլերն էր գնում մռնչալով, աջ ու ձախ ճեղքելով ամբոխը, որոնք գլխահակ ճանապարհ բացեցին:

Երևի թե մի բան իմացրել էին...

Վայրկյանում սայլի վրա էր ու ձեռքերը տարածեց, փռվեց, փլվեց էն պատանու վրա՝ ցնցվելով ամբողջ պարթև հասակով...

Քար լռություն տիրեց. լսվում էր միայն այդ ժայռի նման մարդու խուլ մռնչոցը, տղամարդու լացը, որ լացի նման չի լինում երբեք...

Եվ ակնթարթում էլ հանկարծ... Ձեռքը գոտկատեղի մաուզերը տարավ, քաշեց... Եվ մաուզերի գնդակները աջ ու ձախ մխրճվեցին շենքերի պատերին, փետրվարյան սառած երկնքում... Բայց վրա հասած թիկնապահները կարողացան, հասցրեցին գրկել թևերը և գնդակները իրենց սև նպատակին չհասան...

Ես, որ սարսափից մի ծառի բնին էի փաթաթվել, գլուխս խփում էի ծառի բնին ու վնգստում էի անտեր շան ձագի պես, Զանգիսս նման երևի, երբ իմացել էր, որ Զրանգին չկար...

Ո՞վ էր այդ տարաբախտ այրը, ո՞վ էր այդ պատանին,— տղա՞ն էր, թե՞ փոքր եղբայրը, թե՞ ջահել թիկնապահներից... Ի՞նչ տարբերություն. զոհ էր, զոհ էր անմեղ, սպանվել էր իր նման հայի արձակած գնդակից, դաժան, անխորհուրդ մահ:

Եվ դաժան, անողոք բան է անխորհուրդ մահը, չապրած կյանքը, որ մարդու միակ, մեկ անգամ վիճակվածն է և առավել քան հիշատակ:

Այդ փետրվարյան ցուրտ օրերին զոհվածներն էլ մնացին անհիշատակ, և ոչ միայն անհիշատակ, այլ հիշվելու չարժանի, ինչպես Սարդարապատում, Բաշ Ապարանում և այլուր զոհվածները:

* * *

Մենք, ընկերոջս հետ, շրջկոմի քարտուղարի հրավերով մեքենայով գնում էինք դեպի Արազի ափը, փշալարերից այն կողմ՝ մի գյուղ, որի կեսը մեր ափին է, մյուս կեսը՝ գետի այն ափին, ուղիղ Արազի ու Արփաչայի խառնվելու տեղում: Ուզում էր ցույց տալ այդ «կես արած» գյուղը:

Եվ օգտվելով հրավերից՝ կարող եմ և մոտից, ափից տեսնել... «Մայր Արաքսը». գուցե և հաջողվի մի երկու ափ ջուր խմել, որ խմում էինք կես դար առաջ Իգդիրում, առուներից վաղ առավոտյան վերցնելով... Իսկ հիմա աշնան մոտ է, ջուրը պիտի զուլալված լինի, Բինգյոլի աղբյուրներից իջած, անխառն զուլալ...

Ես Արազին եմ նայում: Բավականին նվազ, լղարիկ է երևում, և ես մտովի հաշվում եմ, որ մեկ կամ մեկուկես բոպե կարող եմ լողալով անցնել գետը, կանգնել բարձր լեռան տակ, որի վրա երկինք են մխրճվել հին բերդի ավերակները: Այդ լեռան հետևում՝ դեպի աջ, Կողբա սարն է՝ Թաքալթուն, որի փեշերին փռված է ինքը՝ Կողբը, այգիների կանաչի մեջ կորած:

Կողբը... Ախար մայրս Կողբից էր, Կողբից բերած հարս, և Կողբ անունը ինձ համար պակաս հարազատ չէ...

Կողբի տները չեն երևում, ծածկված են կապույտ մշուշով, եթե ոչ կարող էի ցույց տալ պապիս, Գրիշ պապիս խանութը, որ գյուղի կենտրոնում էր՝ փոքր հրապարակի վրա, և ծառերի խիտ կանաչը ինձ չէր խանգարի պարզ տեսնելու երեք «աչքանի» մեծ խանութը, ծալովի փեղկերը՝ երկնագույն ներկած... Չի երևում, ի՞նչ իմանաս՝ կա՞, չկա՞ հիմա. ներկը թողել է, թե բան հասկանա, կամ... Տեր Աստված, ինչ եմ ասում, չգիտեմ...

Շոգ օգոստոսյան օր է, բայց Արազում լողացող չկա, ոչ այս, ոչ այն կողմից, տարօրինակ է, չէ՞, գետ է անցնում գյուղի կողքով, Արազի սառը վճիտ ալիքներն իրար հրելով անցնում են և... լողացող չկա:

Խե՜ղճ, խեղճ իմ Արազ... Գետ լինելու հաճույքից էլ զրկվեցիր: Քո՝ «մեզ պատկանող» կեսի ջրում էլ չի կարելի գրկել կոհակներդ, «խայտալ ձկանց հետ», ալիքներիդ փարվել: Չի՜ կարելի:

Մոռացան, էլ ով է երգում երգդ, որ քեզ ավելի է սազում հիմա:

— Արազն եկավ լափին տալով,
Ժեռ քարերին, ափին տալով,
Որտեղ թաղեմ ես իմ դարդը՝
Չոր գլուխս տափին տալով...

Այս գյուղում ինձ ամեն ինչ տարօրինակ է թվում՝ սկսած համատարած անդորրից մինչև «չոչափելի» լռությունը...

Շներն անգամ կամաց են հաչում կամ չեն հաչում: Մարդիկ իրար բարձր չեն կանչում կամ խոսում, ինչպես ընդունված է գյուղում...

Ամեն ինչ նման է ծիսակատարության, մնջախաղի նման մի բան: Եվ այդ ամենը, երևի, ինձ թվում է, որովհետև երբ իմ կարծիքը հայտնեցի (այդ տարօրինակությունների մասին) շրջկոմի քարտուղարին, նրա դեմքի զարմացական արտահայտությունը դանդաղ փոխվեց տխուր ժպիտի, և մի քիչ լուռ մնալուց հետո ասաց, որ իրեն էլ է այդպես թվացել, երբ առաջին անգամ եղել է այս «խաղից դուրս» գյուղում:

— Դե՛, գիտե՞ս ինչ, ջա՛նս,— ասաց շրջկոմի քարտուղարը,— դու ես, քո մեջ է այդ բոլորը, և ոչ մի տարօրինակ բան չկա այս գյուղում, գյուղ է, էլի՜... Հիշում ես, ճանապարհին անցանք մյուս ափին գտնվող գյուղի ավերակների մոտով, չհարցրիր նրա ինչ լինելը, Սուրմարի կոչված գյուղն է եղել այդ ավերակների կույտը, տների պատերը տեսար, կեսը արդեն հողի մեջ էին... Անցար, չհարցրիր, չզարհուրեցիր տեսքից, իսկ ես փչաքաղվում եմ ամեն անգամ անցնելիս ու չեմ ուզում ասել... քո Իգդիրն ինչ է եղել. հրե՜ն, կանգնած է իր տեղում, իսկ Սուրմալուն, մի քիչ էլ անցնի՝ կհավասարվի հողին և կարծես տեղը հեչ բան չի եղել...

Եվ պատմեց այդ գյուղացի մեզ ծանոթ մի բարձրաս-

տիճան մարդու մասին, որն իր պաշտոնական իրավունքով կարող էր ուզած ժամանակ այցի գալ իր գյուղի ավերակներին... Եվ գալիս ուղիղ ավերակների դիմաց նստում էր այն քարին (ցույց է տալիս)... և լաց էր լինում: Քթի տակ մռմռալով երգանման մի բան, ետ ու առաջ օրորվելով՝ մղկտում էր, հետո վեր էր կենում, մի ահավոր «ախ» քաշում, երկու ափով սրբում արցունքները և լուռ, մեղավոր ժպիտը երեսին դառնում դեպի Երևան...

— Սուրմարի գյուղից էր այդ պատկառելի մարդը, քո հայրենակիցը: Քո աչքերն էլ ինչ–որ լցվել, կարմրել են... Մենակ, Աստված սիրես, լաց չլինես, խնդրում եմ, թե չէ... Ախար մայրս էլ այդ գյուղացի է եղել, իսկ ես Երևանում եմ ծնվել...

Եվ երգեց այն սրտամեռ երգը՝ տղամարդու խուլ խզված ձայնով... «Օձն է նստել բախտիդ վրա, Սուրմալո՛ւ, Սուրմալո՛ւ»...

Գյուղն այդ, ինչպես ասացի, նստած է Արազի ու Արփաչայի խառնարանի վրա և պիտի ենթադրել, որ ժամանակին մեծ գյուղ է եղել, քանի որ գյուղի մյուս կեսը, մեր դիմաց, Արփաչայի այն ափին է և այն կեսի վրա էլ թուրքեր են ապրում, սովորական թուրքեր... Իսկ Արփաչայը Վոլգա չէ, և այդ կեսերը իրարից բաժանում են ընդամենը 20–15 մետր ջուր, և ամեն օր այս կիսված գյուղի բնակիչները կուզեն, թե չեն ուզի, կարող են (պարտավոր են)... հիանալ իրարով. մի խելքից, բանականությունից դուրս բան, որից ես հաստատ կցնորվեի: Ամեն օր թուրք տեսնելը հեշտ բան չէ: Բայց սովորել են գյուղացիք, ապրում են...

Խորոված արեցին, գյուղի գինին էլ վատը չէր, և խմեցի մինչև հիմարանալս...

Զհիմարացա, բայց դարձա վտանգավոր այցելու և խնդրեցի, որ վերադառնանք... Քեզ մոտից նայել իսկապես վտանգավոր է, Արա՛զ: Եվ ճիշտ են արել, որ փշալարերով անջատել են մեզանից, թե չէ ի՞նչ կլիներ քո ջուրը խմածների վիճակը՝ քեզ մոտից նայելուց... Պարանով էլ չէին պահի... Ճիշտը փշալարերն են, երեք շարք, արանքներում փխրեցրած, փոցխած հող ոտնահետքերի համար... Նապաստակ էլ, մուկ էլ անցնի՝ կերևան հետքերը...

— Մի օր էլ չէի կարող այստեղ ապրել,— ասում եմ,— սա ի՞նչ կոտանք է, ինչպե՞ս են ապրում այս գյուղացիք այստեղ, չի տեղավորվում մեջս: Գնանք, ի սեր Աստծու, քանի չեմ կաղկանձել:

...Եվ լսեցիր, կարծեմ, ինչ ասվեց: Քեզ ի՞նչ է պատահել, «կանգուն ես», այսինքն՝ ավերակ չես Սուրմարի գյուղի նման, կաս, կանգուն ես, և մնում է, որ մի փոքր նեղություն քաշես, ինքդ գաս մեզ այցելության և, եթե կարող ես, Մասիսն էլ հետդ բեր... Ճիշտ հակառակը այն հայտնի առածի, որ՝ «Եթե սարը չի գնում «փեղամբարի» մոտ, «փեղամբարն» է ստիպված սարի մոտ գնում»:

— Դու պիտի գաս մեզ այցելության, սիրելի՛ս, քանի որ մենք ոտք չունենք, անդամալույծ ենք, արագիլ էլ չենք, առավել՝ փեղամբար... Եվ ի՜նչ իմանամ՝ ինչ ենք:

Մարդու համար ցավալի վիճակներ շատ կան, ինչքան ուզես: Բայց պարսիկ-ները նրանցից երեքն են համարում անտանելի. մեկ, և ամենաանտանելին, երբ ծնողն է թաղում զավակին, մյուսը՝ ծեր մարդու աղքատությունն է և, երրորդ՝ հայրենիքը կորցրած, հայրենիքից զրկված մարդն է...

Առաջին երկու վիճակները ցավալի, շատ ցավալի են, իսկապես դժբախ-տություն, սակայն ոչ անմխիթար: Կյանքի ճախորդ բերումով, «բախտի անիվ» կոչվածի քմահաճույքից, «թարս» աշխատելու հետևանք և սակայն մեղմելու, սփոփելու ենթակա:

Ինչ վերաբերում է երրորդին՝ հայրենիքը կորցրածին, հայրենիքից զրկվածին, բռնի զրկվածին... Այստեղ արդեն ոչ բախտի անիվին կարող ես մեղադրել, որ թարս է ֆռռացել և ոչ էլ ենթակա է սփոփանքի կամ մխիթարության: Ո՞ւմ մխիթարես և ինչո՞վ, ինչպե՞ս...

Հնարավո՞ր է սփոփել, մխիթարել մի ամբողջ հայրենազրկված ժողովրդի, ողջ մարդկության քար աչքերի առաջ օրը ցերեկով մորթվածների... Հայրենազրկություն, որ իր գոյության փաստի հետ միասին աճում, շատանում է՝ վերափոխվելով անբուժե-լի ցավի, մորմոքի, արյան բաղադրությունը հասցնելով լերդանալու, մակարդվելու աստիճանի... Քո քաղաքացիք, սիրելի՛դ իմ Իգդիր, և ոչ միայն քո, այդ բոլոր վիճակ-ներում եղան, կան...

Եվ եթե կան և չի կարող, որ չլինեն, ուրեմին՝ ամենադժբախտ մարդն աշխարհում պիտի որ համարվի հայրենիքից զրկված ժողովրդի զավակը, որ զրկված է նաև իր հայրենիքի համար մեռնելու, գոնե մեռնելու իրավունքից, որին «ապահով» կյանք են ստեղծել փշալարերով և զրկել, արգելել անցնելու փշալարերը, կռվելու, ատամներով կախվելու զրկողի կոկորդից, արյուն թափե-լու իր մորթած, կորցրած հայրենիքի համար, որ արյունը չմակարդվի, մածուն չդառնա, չբորբոսնի:

* * *

Քո քաղաքացիներից ոչ մի տուն «ռուսաստանները» չգնաց, անգամ Թիֆ-լիս չգնաց: Թագավորական խճուղիով ուղիղ Երևան եկան, իսկ Երևանում էլ ապրում էին խմբերով, ինչպես պատմել եմ արդեն, և համարյա թե «իգդիրավարի»՝ հարևանությամբ, բարեկամությունը՝ իրար տուն գնալ–գալը շարունակելով, իրենց ծխական քահանայով՝ նույն տեր Մեսրոպով, նրա տիրացուով, պահպանելով բոլոր

սովորությունները, նիստուկացը, զատիկները, պասերը, տոները, հարսանիքները, ծնունդները, անվանակոչությունները և սպասելով, սպասելով...

Ես, որ արդեն «մե ողորմելի պան» չէի, ինձ նորից Իգդիրում էի զգում, քանի որ փողոցում «մերոնք» էին, դպրոցում՝ նույնը և նույնը՝ Սուրբ Սարգիս եկեղեցում, որը իգդիրցիք լրիվ «օկուպացրել էին» և դեռ տեր Մեսրոպի քարոզներն էլ առանձին «իդեական» փոփոխություն չէին կրել:

Դժվար հարցը քո մոտիկությունն էր... Եվ երևի միայն հրաշքով քո նախկին բնակիչների արյունը չէր մակարդվում:

Էլի ովքեր միջոց ունեին, այգիների տեր դարձան: Էլի հողի տեր դարձան Զարբախում, Շենգավիթում, Նորագավիթում, հենց նույն Երևանում, հաց ցանեցին, լծկան ունեցան, բոստաններ... Սոված չմնացին և անգամ հավաքվեցին 40–50 տուն իգդիրցիք, հող ստացան Ղուրդուղուլի մեծ գյուղի մոտ, «Թափադիբի» տակ, քո նախկին մայրաքաղաք Արմավիրի շուրջ, նոր «իգդիրաշինություն» սկսեցին նույն քաչալ Կյասպարենք, Ավագովենք, Շաբոյենք, Իսաբեկենք և այլք...

Առաջին տները ցեխով, ցեխաղյուսով մի 2–3 ամսում կանգնեցրին և անունն էլ կնքեցին «Նոր Արմավիր»...

— Բայց ինչո՞ւ այդպես վարվեցին, ինչո՞ւ անունս չդրեցին և...

Ոչ հուզվիր, ոչ էլ զայրացիր: Քո անունը պարզապես չուզեցին «մսխել», չէ՞ որ նրանք հույսները քեզանից չէին կտրել և մի քանի ցեխով սարքած տունը չուզեցին կնքել քո անունով, ինչպես եղավ հետո, շատ թանկագին տեղանունների հետ Երևանի շրջակայքում, որոնց անունները հիշելիս կարելի է կարծել, որ ողջ Հայաստանը Երևանի շուրջն է, և որ Հայաստանի և հայերի հետ ոչ մի բան չի պատահել...

Եվ քո անունը դնելու իրավունք էլ չունեին, քանի որ ոչ բոլոր իգդիրցիք էին նստել այդ հողին, և այն էլ՝ ժամանակավոր...

Տեսնո՞ւմ ես, սիրելի՛ս, նորից, նորից շոռամներ, փուշ ու տատասկ և նորից հավատ ու սեր հողի նկատմամբ և երևի եկեղեցի էլ չինեին, եթե մնային այդ հողին... Եթե մնային: Բայց չմնացին, և ափսո՜ս, շա՜տ ափսոս, որ չմնացին: Նախախնամության, թե բախտի բերումով ժամանակը ինքը մատնացույց էր արել հին մայրաքաղաքը, Արմավիրի տեղը, ճիշտ քո դիմաց, հոյակապ բլրի լանջին, հին բերդաքաղաքի պարիսպների տակ անմշակ, անմարդ մնացած հողերը, որ կարող էր և... Իգդիր, նոր Իգդիր դառնալ՝ թեկուզ 40–50 տներով, ընտանիքներով...

Պատճառը բազմախորհուրդ էր, չկային արդեն Իգդիրի ծերերը, հողապաշտները, իսկ երիտասարդությունը արդեն սովորել էր մեծ քաղաքին: Սովո-

ում էին դպրոցներում, աշխատում էին, «գործի վրա» էին նորից, և... նորից Իգդիր չինելու գլուխ չունեին. չկան, տիրություն չարեցին, և արդեն երեսնական թվերի վերջերին, երբ նոր էր սկսվելու «համատարածը»... Նոր Արմավիրում իգդիրցիք արդեն բնակիչ չէին: Օ՜, եթե դա «սխալվել» կարելի է համարել, ապա դա քո քաղաքացիների վերջին և ամենամեծ ու անդարձ սխալն էր:

Դու, սիրելի՜դ իմ Իգդիր, այսօր էլ կարող էիր, թեկուզ ոչ շատ հեռվից, հիանալ քո քաղաքացիների «նոր սխրանքով» և համարյա թե «պատմական առումով»... Իսկ թե ինչ կդարձնեին այդ Նոր Արմավիր կոչվող գյուղը, եթե նկատի ունենանք նրանց զարմանալի եռանդը, փորձը, համառությունը «քաղաքաշինության» ասպարեզում, որ քո անջրդի հողը ինչ դարձրին՝ քեզ բացատրելու կարիք չկա: Գլուխը քարը, թե մի քանի տասնյակ «ուսյալ զավակներ» կամ երիտասարդություն կմնային Երևանում՝ Աստաֆյանի վրա վեր ու վար անելիս...

Զմնացին: Մի բան խախտվել էր անդարձ, և նրանց արյունը քրտինք չդարձավ այդ հողի վրա: Ինչքա՜ն, քանի՜ անգամ, Վլասի ասելով՝ քանդի–չինի, քանդի–չինի, որ ի՞նչ...

Այդ գյուղում ոչ մի իգդիրցի ընտանիք արդեն 30–ական թվերին չկար, չմնացին: Բայց երևի մի բան գիտեր քո ժողովուրդը, որ ասում էր. «Խալխի տված ալրով գաթա չի թխվի»:

Մի բան, շատ կարևոր բան հաստատ խախտվել էր անդարձ:

* * *

Մի զրույցի ժամանակ, երբ խոսքը մեր հողերի մասին էր, իմ ալաշկերտցի մեծ բարեկամը պատմեց մի իրական դեպք, որ ինքը լսել էր մեր քաջ զորավարներից մեկի պատմելով, որի հետ դեպքը պատահել էր:

Մեր երևելի զորավարը, որ դեռ Սարդարապատում հեծյալ ջոկատի հրամանատար էր եղել, մի առիթով հրավիրվում է «օֆիցիալ», կառավարական հացկերույթի կամ այսպես կոչված «բանկետի»: Իսկ նման տեղերում չես կարող գուշակել, թե քեզ ինչ հարևան կվիճակվի: Եվ պարզվել է, որ այդտեղ իր կողքին նստած քաղաքացիական հագուստով մարդը «այլազգի» է, որը և բավականին հասկանալի ռուսերենով խնդրել է թույլ տալ ծանոթանալու, և հայտնել է, որ ինքը... թուրք է: Զորավարի ձեռքը մի պահ քարանալուց հետո հետ է քաշվել, բայց արդեն ուշ է լինում, և ստիպված լսել է ռուսական «վոդկայից» բոշացած թուրքի բերանից հետևյալը.

— Այո՛, այո՛, ես թուրք եմ և այն թուրքերից, որոնց դուք՝ հայերդ, ատում եք և ոչ առանց պատճառի: (Լսո՞ւմ ես, սիրելի՛ս, «ատում ենք», կարծես կարող է լինել թուրք, որին հայը... սիրի նաև):

— Դուք զինվորական եք և գիտեք, որ մեզ ատելու պատճառը ձեր հողերն են, որ հիմա մերն են... (Լսո՞ւմ ես, իրենցն են, իրենն ես դու էլ, սիրելի՛ս...): Եվ մենք այդ հողերի վրա արյուն ենք թափել:

— Դուք միշտ քչացնում եք մեր թափած արյունը, բայց մենք հո գիտենք, թե ինչքան ենք թափել... այո՛, այո՛,— շարունակում է,— շատ ենք թափել, և եթե ուզում եք ձեր հողերը, իսկ մենք գիտենք, որ դուք երբեք չեք մոռանում և չեք մոռանա ձեր հողերը, դուք էլ արյուն թափեք: Առանց արյան հող չի վերցվի, չենք տա, այո՛...

Քարացել է զորավարը ռուսական օղուց «անկեղծացած» թուրքի խոսքերից... Օ՜, ինչ զարմանալի հատկություն և իմաստ ունի այդ օղին, մանավանդ ռուսական օղին, երբ խմողը մոռանում, չի էլ հիշում, որ վախկոտի, քնճռոտի մեկն է... և «ծովը դառնում է ծնկներից»... Ստուգված բան է դա, սիրելի՛դ իմ Իգդիր, զորքեր կան աշխարհում, որ օղու մի թասից հետո հրաշքներ են գործում... Եվ ի՞նչ զարմանալու բան կա, որ այդ օղուց քաջացել էր նաև այդ թուրքը, որը անճանաչելի քաջ է դառնում, երբ առջևում անզեն, անպաշտպան կին, երեխաներ են...

Դժվար, շատ ծանր է եղել վիճակը մեր զորավարի, որ երևակայել չէր կարող նման հանդիպում պաշտոնական սեղանի շուրջ, երբ ինքն էլ «հյուրընկալողի» դերում պիտի մնա...

Գիտակցությունը թելադրել է զսպել, սաղրանքի տեղի չտալ... Եվ հաջողվել է զսպել, բանտել ղարաբաղցու անհնազանդ արյունը և դողացող, ծանր ձեռքը, որ չէր ուզում հնազանդվել... Այն ձեռքը, որով Սարդարապատի ճակատում թրով կիսել էր մինչև գոտկատեղը առաջից լեղապատառ փախչող թուրք սպա-

յին... Իսկ այստեղ... պաշտոնական սեղան է և սեղանակիցների անհանգստությունն է նկատելի արդեն:

Իր անհաշիվ կռիվների մեջ մեր տարեց զորավարը իրեն այդպես անօգնական չէր զգացել՝ անթիվ անգամ մահի աչքերին նայելով... Լուռ է մնացել, նրա հայացքի սառը պողպատի փայլից՝ կարկամել, սկվել է թլպատվածը, իսկ զորավարը դառնությամբ ու զզվանքով գլուխ է օրորել և ատամների արանքից աներևակայելի ճիգով ասել է հանգիստ.

— Արյո՞ւն... Դուք երբեք սեփական արյուն չեք ունեցել... Դուք պարզապես հարբած եք, և սեղանը այն տեղը չէ, որ իրեն տղամարդ համարողը օգտվի անպատիժ մնալուց...

Բայց, սիրելի՛դ իմ Իգդիր, քեզ համար էլ նկատելի է, որ այդ օղուց «քաջացած» քնճռոտը շատ է անհանգստացած եղել, որ իմանա... Ե՞րբ, ե՞րբ, ե՞րբ պիտի զորավարը... Վախ է մեջը, հնուց մնացած վախ, որ չի թողնելու իրենց հանգիստ շնթռեն, քնեն ուրիշի տանը, հողում...

Նա գիտի, որ այդ տունը, հողը ուզողները, այդ տան տերերը կան, և չեն մոռանալու, իրավունք չի տրված, որ մոռանան, չլսեն անզեն, անօգնական մորթվածների մորմոքը, ձայնը հողի ընդերքից ամեն օր երկրաշարժվող... Եթե մածունի չի փոխվել նրանց արյունը երակներում: Այդ հողի տերերի վիճակը ավելի ծանր կլինի, քան զորավարինը... Ոչ մի զորավար չի կարող, չի ծնվելու, որ գլխավորի արյունը մածուն դարձած քնճռոտների... Արյուն է պետք և... Աղբյուր Սերոբի արյուն, քո՝ Գարեգինի, Շավարշի, Արամոյի արյունը... Լսո՞ւմ եք, Գարեգի՛ն, Հայրո՛, Մամիկո՛ն, Շավա՛րշ, Արամո՛, արյուն է ուզում նորից այդ մարդակեր Համիդի թոռը...

Եվ որտե՞ղ կարող է թափած լինեն իրենց սև արյունը, որ միտն է պահել այդ իժի ծնունդը... Գուցե Ուրֆայո՞ւմ, Վանո՞ւմ, Սասունո՞ւմ, Մուսա լեռան տա՞կ՝ Զեյթունում, Օրգովում... Որտեղ ամեն զինված տասը հոգու դեմ թնդանոթ են հանել, հավարը փաշաներին հասցրել Ստամբուլ, Անկարա... Օ՜, թափել են, իրենց սև արյունն էլ են թափել, բայց ափսո՜ս, որ ո՛չ իրենց հողում... Թափել են, երբ հանդիպել են Սերոբին, Զաուշին, Անդրանիկին, Քեռուն, Վարդանին, Դրոյին և քո տղաներին, քո «մաուզերիստ» տղաներին... Եվ թափեցին Սարդարապատում, Ապարանում, Զանգեզուրում, Վեդիբասարում, Դարալագյազում, Թալինում... Այդ անգամ էլ հավաքվել եկել էին՝ փափախներին կարմիր աստղ փակցրած Քեմալի փաշաները...

Այս մնացած մի թիզ հողն էլ աչքներին փուշ էր դառել, քուն չունեին... Բայց դիմացները անզեն կին, երեխա չէին, չնայած որ կռիվը էլի անհավասար էր, նորից մեկը քսանի դեմ էր...

Լռել է զորավարը, տխրել, հացը հարամված, մտքերի ծովն ընկած: Տանն էլ հանգիստ չի ունեցել. գիշերը քայլել ու ծխել,— շարունակում էր պատմել իմ մեծ բարեկամը, որ ինքն էլ պատերազմի սկզբից մինչև վերջ ճաշակել էր դառնությունն ու ուրախությունը հաղթանակի և շատ անգամներ հանդիպել, տեսել էր զորավարին կռվի դաշտում...

— Ախար ինքը այն զորավարներից է, որոնք ջարդուկոտոր արեցին գերմանական անպարտելի համարվող զորքի ողնաշարը, իսկ այդ թալանչու երկիրը Հիտլերի «սոյուզնիկն» էր, ինչպես և Առաջին համաշխարհայինի ժամանակ և իր անպատիժ մարդակերության փորձով Հիտլեր էր դաստիարակել...

«Ո՞վ է հիշում հայերի կոտորածները»,— կրկնում էր Հիտլերը... և ահա, խնդրեմ, նստած է եղել զորավարի հետ սեղան... Հրավիրված է եղել «պետական հյուրասիրության»՝ որպես «բարիդրացիական» երկրի ներկայացուցիչ... Փոխանակ ճոճվելու Նյուրնբերգյան կախաղաններից...— դառնացած պատմում էր իմ մեծ բարեկամը...

Բայց ինչ էլ զրուցած լինեին, սիրելի՛դ իմ Իգդիր, փաստը մնում է իր դաժան, անարդարացի եղելության մեջ. չճոճվեցին պարաններից, նորից «չոր» դուրս պրծան, իսկ կռիվը մեզ համար և բոլոր քեզ նմանների համար չէր, որոնք հիմա էլ մնում են Արագի ու Մասիսի այն կողմում և... կմնան, քանի դեռ մեր «բարիդրացիությունը» կմնա՝ կնքված ու ստորագրված պայմանագիր, և Էնվերի թոռները իրավունք կունենան մեր զորավարի հետ հավասար սեղան նստելու...

Այդպես է եղել զրույցը մեր զորավարի և իմ ալաշկերտցի մեծ բարեկամի միջև:

Կռիվը ձեզ համար չէր...

Շատ ավելի անկշռելի իմաստի մեջ էր: Քո կես միլիոն հայ երիտասարդների մասնակցությունը այս կռվում, նրանց արյունը՝ հեղված Քանաքեռի բարձունքից մինչև Բեռլին, տափաստաններում, ահռելի գետերի ափերին, դորշ ու փայլուն քաղաքների մատույցներում, փողոցներում նրա համար էր, որ գոնե այս անգամ քո հողը չտրորվի սմբակների տակ... Դա էր անկշռելի խորհուրդը այդ կռվի: Ինչքան էլ որ դաժան թվա քեզ, սիրելի՛ս, քո աստղային ժամը չէր և պիտի սպասես՝ կուզենաս թե չես ուզենա:

Քո պատմության շարունակությունը թավալգլոր, խառնաշփոթ՝ գնաց ժամանակների հետ, մահամերձ հիվանդի զառանցանքի նման, և հիմա քեզ կարող են այցի գալ միայն արագիլները, որոնք կնստեն մեր բակի հաստաբուն կաղամախիներին, իրենց հին բներում, ամեն գարնան հետ, եթե մնացել են դեռ:

* * *

Արևը մի հսկայական կորագիծ է անում Արարատյան դաշտի շուրջը, դեպի Սուրմարի՝ սկիզբ վերցնելով Գեղամա լեռներից և Իգդիրի գլխին ցցված ահռելի լեռան թիկունքով գնում մայր է մտնում Թաքալթուի, Կողբա սարի հետևում: Ամռան ամիսներին, հատկապես հուլիս և օգոստոս ամիսներին, արևի կորագիծը կեսօրին, կարծես, անշարժանում էր, «կանգնում» Իգդիրի գլխին և արտերի, այգիների ջրելը դառնում էր տառապանք: Մի օր առաջվա ջրած այգու թմբերը այնպես են ճաքճքում, կարծես թե մի ամիս ջուր չեն տեսել: Կեսօրին այգեպանները, քոլիկների հովին բերանները ճկան նման բացուխուփ անելով, քրտնամխած, մի կերպ օրը ճգում են, մինչև արևը թեքվի Մասիսի հետևը, որ շարունակեն իրենց գործը, լուռ, անձայն, մտքներին մի բան մխիթարության համար, որ «խաղողի խասնելի», այսինքն՝ ինքը, «մեծն» խաղողն է հասնում... Արևի տապն էլ պետք էր իրենց, որ խարջին, մովուզը քաղցրանան: Իսկ Իգդիրի միակ «գյոլը», որ գոյանում էր գարնանը հալված ձյուներից, անձրևներից և հայտնի էր իր գորտերի ահռելի շատությամբ, որոնց կռկռոցը, երբ բոլոր ձայները գիշերային Իգդիրում լռում էին, լսվում էր անգամ Փոս թաղում ու մեզ մոտ, և այդ անտանելի տապից օգոստոսին ցամաքում էր, և սատկած գորտերի գարշահոտությունը հովի հետ տարածվում էր շրջակայքով մեկ:

Իգդիրի արևամուտը շուտ էր սկսվում աշնան օրերին, երբ Արարատյան դաշտի, Արագի մյուս ափում աշնան ծույլ արևը դեռ խճճված էր լինում այգիներում:

Նրանք՝ իգդիրցիք, Մասիսի գեղեցկությունը չէին զգում, շատ էր մոտ, գիտեին միայն, որ բարձր է, շատ բարձր, և Մասիսն էլ Իգդիրից մի բանի նման չէ, շատ է անհրապույր, տձև, մի ահռելի սապատ ուսին, որ խանգարում է գագաթի պարզ

երևալուն, իսկ Փոքր Մասիսը այդ սապատի վրա ընդամենը փոքր սպիտակ վրանի չափ մի բան էր երևում:

Այդ ահռելի լեռը մենք հետո տեսանք հեռվից և մեզ էլ հայտնի դարձավ, թե ինչքան է... «անպարկեշտ» իր գեղեցկությամբ, և թե ինչու է նրան տեսնող օտարերկրացին անգամ մոռանում մյուս սարերի անունները:

Այդ ահռելի լեռան ստվերը ձգվում է մինչև Արազի ափերը, և աշնան երեկոներին ողջ Սուրմարին ծածկվում է մի զարմանալի լուսավոր, թափանցիկ, կապույտ շղարշով՝ ոսկեջրած թողնելով եկեղեցիների խաչերը, և բարդիները, կաղամախիները ոսկե ջահեր են դառնում կապույտ մշուշի մեջ՝ Մասիսից իջնող մեղմ հովի հետ օրորվելով:

Սուրբ Գևորգի զանգերը մի քիչ ավելի շուտ են սկսում իրենց ծկլթոցը, քան Էջմիածնի Մայր տաճարինը, որի համար մի անգամ չէ, որ ծխական քահանա տեր Մեսրոպը դիտողություն է ստացել հոգևոր իշխանություններից և ամեն անգամ էլ տիրացուի վրա բարդել անհարկի շտապելու մեղքը:

Սակայն և շուտ է սկսվում Իգդիրի առավոտը:

Արևը դեռ գլուխը չհանած Գեղամա լեռներից՝ արդեն շառագունած է լինում լեռան գլխի սպիտակ բաշը, և տների տանիքներին քնած իգդիրցիք առաջինն են դիմավորում Արարատյան դաշտի առավոտը:

Ես չեմ հիշում ինչպիսին են եղել տարվա եղանակները Իգդիրում:

Գարունը, ամառը, ձմեռը... Երևի մի բանի նման չեն եղել, որ չեմ հիշում:

Գարունը դե ամեն տեղ գարուն է՝ զուգված, զարդարված և կարծես թե ինչ–որ մեկի համար, մեկին սպասելով, իսկ ինչ վերաբերում է Իգդիրի ամառանը... Օ՜, «խավողի խասնելի»... Ասում էին ու քրտնամխած, սփռոցի չափ մեծ թաշկինակներով երեսից, վզից ծորացող քրտինքը սրբում՝ հուսահատ նայելով բարդիների անշարժ կատարներին, որոնք կարծես երբեք չեն շարժվել:

Աշունն եմ հիշում, Իգդիրի աշունը՝ այգիներում, խաղողաքաղին...

Տե՜ր Աստված, ինքդ տեսել ես, տեսնես կա՞ աշխարհում ավելի զարմանահրաշ գեղեցկություն, քան աշնան այգին, երբ նա պտուղների աստվածուհու պես հուռութքներով պճնված դիմավորում է այգեպաններին... Եվ միևնույնն է՝ Իգդիրի, թե Վանի այգեստանների, թե Աշտարակի...

Տարվա բոլոր եղանակները լուռ հնազանդությամբ, համբերությամբ տքնում են աշնան համար... Խնայում, թաքցնում՝ անձրևներից, կարկուտից, քամուց, երաշտից իրենց ողջ ունեցածը և սփռում այդ հեթանոս գեղեցկուհու բոբիկ ոտքերի տակ: Եթե կա աշխարհում մի հողակտոր, որտեղ բնությունը չի հասցնում այնպիսի աշուն ստեղծել, ինչպիսին Իգդիրում էր, Այգեստանում, Արարատյան հովտում՝ ուրեմն ինքը՝ բնությունը, չի կարող ասել, որ ինքը ամենակարող, կատարյալ է...

Աշունն Իգդիրում սկսվում է Մասիսի փեշերից, Իգդիրի թիկունքից, Իգդիրից մի քանի կիլոմետր հեռավորությունից, որտեղից և զգացվում է վերևից իջնող սառնության հաճելի փոփոխությունը ամռան տապից հետո: Մի պահ նրա լանջերի, անտառներից զուրկ լանջերի բուսականությունը, կանաչը, թփուտները սարսռալուց հետո գունափոխվում են, ծածկվում աշխարհի երեսին եղած բոլոր գույներով... Վայրի, անհամար, իրենց ջրհեղեղյան վիճակում մնացած կարճլիկ մրգատու թփուտները, որոնք բոլոր մրգատու ծառերի նախահայրերն են եղել երևի: Կարճլիկ խնձորենիներ, տանձենիներ, փշատենիներ, ծառաչափ մասրենիք, որոնց մատնաչափ պտուղները հավաքող չունենալով՝ տամկում կրակվում են արևի վերջին ցոլքերով, և Մասիսի փեշերը դառնում են բոցկլտացող կրակների անտառ... Իսկ ներքևում առաջին սարսուռից քաղցրանում են այգիները...

Այդպես էլ գիտեն, սպասում են դրան հին այգեգործները, որ սկսեն այգեքաղը...

Խարջին արդեն սկսվում է ոսկեզօծվել, մսխալին գունաթափվում, սպիտակ, խնկագույն է դառնում, իսկ մովուզի ողկույզները և հաչաբաչը ճաքեր են տալիս, գիլանները պայթում են քաղցրությունից, կարծրանում են... Եվ ճիլարը, որ ուտելու համար չեն պահում և միայն խարջու հետ գինի քամելու համար՝ դառնում է շագանակագույն և խարջուց էլ քաղցր...

Օ՜, ինչ այգեգործներ ուներ Իգդիրը և ի՜նչ գինի քամողներ և ի՜նչ գինի խմողներ, որոնք ամեն ումպը լեզվի ու քիմքի վրա ընդունում էին մեռոնի երկյուղածությամբ՝ կում–կում, և հետո հերսոտած՝ թասը ծծում էին ծարաված ձիու նման, որ գլուխը կախում է հորից դույլով հանած սառը ջրին...

Իրենց համար էին պահում հաչաբաչի, մխիթարու, մսխալու կախանները, իրենց համար էին քամում խարջու, ճիլարի սպիտակ թունդ գինին և մովուզի սև խաղողի կարմիր թանձր գինին, որ չէր հասցնում, չէին թողնում դառնանա, խմում էին դեռ գինի չդարձած՝ հողաբույր, արևահամ, լուսնի շողերից զտված, զուլալված... Ի՜նչ էին մտածում, խորհում, երազում այդ հողագործները, ի՞նչն էր նրանց ապրելու համա-

տը, ժամանակը, երկար, երկար ժամանակ պահանջող ապրելակերպը, որ ոչ մի կապ չուներ Իգդիրի վիճակի հետ, որ իրենց իսկ աչքի առաջ մաճառի նման տակնուվրա էր լինում, պղտորվում, որ հետո նստի, պարզվի... Բայց միայն պղտորվեց և չպարզվեց... Եվ իրենք՝ այդ զարմանալի մարդիկ, այդքան տեղահանություն, գաղթ, բռնություն տեսած մարդիկ, ինչից են թրծված եղել, որ այդպես կարծր, քար հանգստությամբ նայեին իրենց շուրջը քարուքանդ եղող աշխարհին...

Օ՜, զարմանալի և անհասկանալի է հայի գոյատևության իմաստը, մարդկային բոլոր ընդունված օրինաչափություններին հակառակ, բանականության սահմաններից դուրս, անենթակա, անբացատրելի «խելքից տուս պան»...

* * *

Իսաբեկի, Եփրեմի այգիները, որ մեծ Իսաբեկի տղա Յորդուխանի տնկածն էր, կիսված էր երկու եղբայրների մեջ, պատ էլ չկար արանքում, և այգեքաղին երկու ընտանիքներից մեծ ու փոքր այգում էին լինում, ինչպես և Իգդիրի ժողովուրդը ով այգի ուներ:

Գործատեր մարդիկ, ինչպես, օրինակ՝ մեր փեսա Վլասը, որ իր կարմիր քիթը սրբելու ժամանակ չուներ, վարձում էին քաղողների կամ հրավիրում այգի չունեցող հարևաններին օգնելու, որը և նշանակում էր, որ նրանք էլ այգու բարիքներից կունենան ճմեռվա համար:

Իսկ գործը միայն քաղելը չէր... Խաղողը պիտի տրորվեր, շիլա դառնար, տեղափոխվեր տան լվացած, ծխած կարասները լցվելու, դոշաբ պիտի եփվեր, սուջուխ թաթախվեր, ալանի, չիր ու չամիչ պիտի չորացվեր: Խաղողի թուփը թուջերը լցվեին ճմեռվա տոլմայի համար: Հազար ու մի հոգս, համաձայն Բանավչա տատի հազար տարվա բանաձևի, որ «ամառվա փուչը ճմեռվա նուշն ի»: Ամեն ինչ հավաքելու էր, սկսած «փոգած», հավաքած բոստանի մանր–մունր ճմերուկներից, սեխերից, դեղնած վարունգներից մինչև դանդուռը... Եվ ի՜նչ թթուներ էր դնում Բանավչան՝ հեքիաթայի՜ն...

Այդ հեքիաթային թթվի ջրից բավական էր մի փարչ առավոտյան «գլուխդ քաշեիր», ինչպես խոստովանում էին իրենք՝ խմողները, որ անցած օրվա խումարությունից ոչինչ չմնար...

Հաստաբուն մովուզի, սև խաղողի, խարջու, գառան դմակի ծանր ճութերին հազիվ էին դիմանում խչմարները...

Ի՜նչ տամուկ հով էր լինում վազերի տակ: Ես պառկում էի տաք, փուխր հողաթմբին, և պառկած տեղից իծապտկի գիլանները կարող էի բերանս առնել առանց

ձեռքի օգնության կամ նայել մեղուներին, թե ինչպես են զարմանալի վարպետությամբ ծածկում ողկույզը և անշտապ դատարկում մեղրից քաղցր հյութը...

Առավոտվա հացն էլ, ճաշն էլ մի երկու–երեք շաբաթ այգում էին ուտում:

Իսկ հնձանում, քոլիկում արդեն վաղուց թոնիր իջած կլինեն կրակների վրա՝ իր եռը առնելու մեծ ու փոքր պուտուկներով ճավարով շորվան, որ երեսը սեր բռնի, խարատվի: Եվ սերը փուչիկ–փուչիկ կբլբլթա, կպայթի, կրակի մեղմանալու հետ կհանդարտվի, և կրակի գույն կառնի շորվան...

Մի քանիսը առվի ափին պպզած պոմիդոր, բիբար, բադրիջան էին մաքրում, իսկ ընկուզենիների տակ՝ գետնին, սեղան էին զարդարում երկար յամանիների վրա, և այդ յամանիներն էլ մի սքանչելի բան էին, որ Իգդիրի կարպետի տեսակն էր և Իգդիրում էր գործվում: Հացի այս արարողությամբ հիմնականում զբաղվում էին տղամարդիկ, և դա շատ վաղուցվա սովորություն էր: Դաշտում, այգում, ուխտատեղում, քեֆի ժամանակ՝ տղամարդիկ, իսկ տանը՝ հարգելի տիկնայք: Եվ կանանց համար այգեքաղի այդ մի քանի օրերը դառնում էին տարվա ամենացանկալի օրերից, երբ իրենք հյուրասիրվում էին աստվածավայել՝ մոռանալով հոգս ու հոգնություն, նաև տունը կերակրելու ամենօրյա զբաղմունքը:

Այգեքաղին ժողովուրդ շատ էր լինում այգիներում, իսկ պուտուկների քանակը՝ նայած ուտողների քանակին:

Շորվայի կամ բոզբաշի միսը չափուջի «դոբի», որձ այծի միսն էր հարգի և հատկապես «դոշի քթի» մասը, որ յուղը կանգներ պուտուկի երեսին, կարմրեր, սեր բռներ: Այդ որձ այծը որպեսզի մսացու դառնար, «կռտում», ամորձատում էին, և Մասիսի լանջերի մարգաբոյ չիմաններում, արոտներում նրանք դառնում էին չտեսնված չափերի, համարյա թե մի հորթաչափ...

Մսացու անասունը Իգդիրին մատակարարում էին Սուրմալուի եզդիները, քրդերը, որոնց խաշների թիվը, քանակը իրենց համար էլ դժվար էր ստույգ իմանալ:

Ճաշերի «դասական» բոլոր տեսակները հարգի էին Իգդիրում, սկսած բոզբաշից, թփով ու «այենքով» տոլմայից, վերջացրած խաշլամայով, քյուֆթա–չիլայով, բրիանով, խորունով...

Մի խոսքով՝ իգդիրցիք իրենց բերանի համը գիտեին, զուրկ չէին պահում իրենց՝ գտնելով անվիճելի, որ մարդը մի անգամ է աշխարհ գալիս և չարժե զուրկ, կիսատ–պռատ ապրել այդ ի վերուստ սահմանված, առանց այն էլ կարճ, վայրկյանի նման անցնող այդ «մի անգամը», հողի մարդու և առհասարակ մարդու միակ և ճշմարիտ երջանկությունը:

– Կարո՞ղ է քո Երևանում կերած լինես Իգդիրի շորվայի, բոզբաշի նման բան, կամ քյուֆթայի:

— Ինչո՞ւ չէ, Երևանում իգդիրցի չկա՞ր, հո միանգամից չդարձա՞ն երևանցի: Կամ երևանցիք ի՛նչ պակաս ուտողներ էին...

— Է՛, սիրելի՛ս, ձեր կերած շորվան Խոռո դաղոն էլ էր ուտում՝ իր մարդու չոված աղջիկների հետ, իր աղքատ հալով...

— Իսկ որտեղից կհրամայեիր չափուջի միս ճարել, թոնիր, պուտուկները... կամ մովուզի գինին... Երևանում կարծես ամեն ինչը լրիվ էր, շորվան էր պակաս...

Այդու հացկերույթի արարողության տերը հորս զարմիկը՝ Վահագն էր լինում՝ Եփրեմի միջնեկը, և նա էլ փայտի շերեփով լցնում էր կավե թրծած ամանները՝ «քյասաները», և այնպիսի հանդիսավորությամբ, կարծես մեռոն էր բաժանում, և ինքն էլ՝ բիբարից դաղված...

— Օձի կծածի անտերը,— ասում էր Վահագնը ու ամեն բրդուճի հետ կրակված շուրթերը շեկ բեղերի հետ թաթախում կարմրապղտոր, դեռ պճպճացող մովուզի մաճառով լիքը կավե թասի մեջ և ամեն կումի վրա էլ ավելացնում,— վա՛խ, վա՛խ, վա՛խ, Տեր Աստված, էս ի՞նչ ես ստեղծի...

Իգդիրցիք՝ բոլորը, տղամարդիկ, կին ահավոր կծու, մռու ուտողներ էին, և նրանց բոլոր ճաշերը կծու էին, բացառությամբ զատկվա փլավի, որը քաղցրով, չիր ու չամչով, խուրմայով, նուշով էր համեմվում:

Ուտում էին մռմուռից խայթվելով, արցունքները պահել չկարողանալով, անբացատրելի հաճույքից տնքալով, սեփական անձից կարծես ոխ հանելով, տանջելով: Եվ հիմա էլ ծալապատիկ նստած, թևքերը քշտած նույն ծիսակատարությամբ էին զբաղված, և սուփրայի այս ու այն կողմից անպակաս էին հառաչանքները, ախ ու վախը՝ իրարից խնդրելով ավելի կծու բիբարից մի պճեղ...

— Տո՛ մե տո՛ւր է, տուր տսնամ, է՛...

— Ա՛ռ, առ ետի բիբար չի, շայմար օձի կլոխ ի...— և խայթված ինձ էին պարզում թասերը, որ վազելով հազիվ էի հասցնում իմ մատուվակի գործը:

— Մե լից է, լից թասը, բոյիդ մեռնեմ, թե չէ հավարը ազեիս կգցեմ...

Եվ այդպես եղել է ամեն աշնան այգեքաղին Իգդիրի այգիներում:

Հետո բոլորից շուտ սեղանից վեր է կացել կա՛մ Բանավշա տատը, կա՛մ Մային զալոն՝ մրմնջալով, երեսին խաչ հանելով, սովորական ուղերձով՝ առ Բարձրյալը...

— Տե՛ր, փա՛ռքդ շատ, ավելի պակաս չհամարես...

Եվ Աստված մոտիկ էր այն ժամանակ այդ հրաշալի հողագործներին, այգեպաններին, Մասիսի փեշերին թիկնած և... թե ինչու թարսվեց այդ հիմար ծերուկը... դեռ մինչև այսօր չեն հասկանում իգդիրցիք... Ի՞նչ են արել, ինչո՞վ դուր չեկան, որ խռովեց, թարսվեց, երեսը շուռ տվեց, և ոնց թարսվեց, մոռացավ, որ Աստված է... Չէ՞ որ կարող էր, իր իրավունքն էր ստեղծածին կշտամբել, թեկուզ հայհոյել և ավելի անվայել, քան քո քաղաքի միակ «տարապայման» հարբեցողը, «պյան» Առաքելը, որի մասին Ֆուրգոնչի Մճիկը (Մկրտիչը) ծպծպացնում էր լեզուն, թքում և վեր նայելով քեզ՝ Աստծուդ, ասում. «Տու էլ կասես մարթ ես ստեղծի, խա՞»...

Գուցե նախանձեցիր, որ հայը մի տեղ առանց ահուդողի հաց է ուտում, գինի խմում՝ իր, իր ստեղծած հացն ու գինին, և ով կխանգարեր քեզ ինջնեիր Վահագնի սուփրային՝ թաթխեիր աստվածային բեղ–մորուքդ կավե թասի մեջ, ջանդ դինջանար, հոգիդ փափկեր՝ խաղաղվեիր... Եվ գիտե՞ս ինչ, սիրելի՛ Բարձրյալ, դու լավ կանեիր, եթե չհիշեիր մեզ՝ Մասիսի շվաքում ապրողներիս, և առհասարակ մեզ՝ հայերիս թողնեիր ապրեինք առանց քո օրհնության, մեր կարճ խելքով... Քանի որ դու հայի համար միշտ մոռացել ես, որ ականջ–աչք ունես, իսկ թե ինչ ես ունեցել՝ այդպես էլ չիմացանք քեզ երկու հազար տարի էշի համբերությամբ, եզի կողով, հավատացյալի անհավատալի հավատով հավատացողներս, տեր Մեսրոպի գովական Գրիգոր Լուսավորչի պատգամներով, խոնարհությամբ ապրողներս... ամեն:

* * *

«Պյան» Առաքելը մի խեղճ, անբաշար, անարհեստ մարդ էր, տունը՝ լիքը երեխա...

Առավոտները «գործի» գնալուց ոչ ոք նրան չէր տեսնում: Մութը լուսին էր գնում, որ այս կամ այն խանութի դիմացը ջրցաներ, ավլեր, շուկայից սրա–նրա տուն բեռ տաներ, մի խոսքով՝ աներ, ինչ գործ որ ճարվեր:

Իգդիրում աղքատներ չկային, ձեռքի մատների վրա կարելի էր հաշվել նրանց, որոնք «զուրկ» էին ապրում, բայց ծերը ծերին հասցնում էին... Բավական էր, որ Առաքելը շուկայի մսի շարքով անցներ, որ դասաբներից մեկը ձեն չտար չկանչեր. «Առաքե՛լ, յար, յար տսնամ, մէ իշկա, ինչ ջիգյար եմ պախի քեզ խմա...»: Եվ դա նշանակում էր, որ Առաքելը առավոտյան պիտի գա խանութի հետևում օգնի մի երկու անասուն մորթելու և այդ դեպքում հնարավոր էր լինում շորվացու էլ տուն տանել, բոզբաշացուն էլ հետը: Այդ ռուսերեն «պյան» ավելցուկը Առաքելի վրա կպել էր այն պատճառով, որ նա իրեն թույլ էր տալիս ընդամենը խմած, փողոցում մի թեթև օրորվելով տուն գնալ: Դա Իգդիրում չտեսնված բան էր, որ իգդիրցին օրը ցերեկով խմի և դեռ փողոցում օրորվի: Իսկ անունների վրա մի բան ավելացնելը միայն Առա-

քելին չէր «պատիվ արվել»: Բոլոր իգդիրցիք մի մականուն, մի բանով հիշատակվում էին, և դա ոչ ոքի ո՛չ նեղացնում, ո՛չ էլ «խանչալի քարին» էր առնում...

Իսկ երեկոյան Առաքելը տուն վերադառնալիս, ձեռքին կամ շալակին մի մեծ տոպրակ, քայլում էր ուղիղ փողոցի մեջտեղով, կարծես դիտմամբ ի ցույց բոլորի, ինչ–որ բողոքի նման բան, երևի, որ՝ ըհը՛, ես եմ, էսպես է, բան ունեք ասելո՞ւ... Եվ անաստված հայհոյում էր իրեն բան չասողներին անգամ կամ՝ ում ուզենար, որոնք այդ ժամերին փողոցի աջ ու ձախ տների առաջ նստած էին լինում ճաշից հետո և մեծ մասամբ երեխաներ, ջահելներ ու կանայք: Առաքելի հայհոյանքները բոլորովին էլ այդ ջահելներին չէին վերաբերում, այլ ուղղակիորեն ուղղված էին «ըստ պատկանելության», այսինքն՝ նրանց ծնողներին և այդ ծնողների հանրահայտ ածականներով, որ հասկանալի լինի՝ ում է հասցեագրված:

— Տո քյո չարչի խոր քյալլան... կամ...

— Որբևերու պիճ, դու էլ ես խաչալ սովորի, ես քյո...— և կդառնար մորը,— Պարսեղի կնիկ, քյո չանան ե՞րբ բոշացավ, հը՞...

Եվ եթե իմ լուսեղեն մայրս էլ էր լինում նստած երեխաներիցս մեկի հետ, և երբ Առաքելը հավասարվում էր մեր դռանը, դառնում էր մորս կողմը և մատը շրթներին էր դնում ու կամաց ասում. «Տե՛ս, հա՞, Հմայակի՛ կնիկ, պան չխոսաս, հա՛, թե չէ քյաշում կտամ»...

Ի՞նչ պիտի ասեր խեղճ մայրս, որ շատ էր խղճում էդ մարդուն, նրա կնոջը, և ամեն առիթով օգնում էր շորով, հաց ու բրնձով... Մայրս Առաքելին տեսնելիս միայն աչքերն էր սրբում թաշկինակով՝ ամեն անգամ իր չմարող վիշտը՝ Արտաշես քեռուն հիշելով, և անիծում այդ հեղուկը հնարողին:

Իգդիրի առավոտը Առաքելով սկսելու գուցե և հարկ չկար, բայց նա էր մեր, Իգդիրմավա տանող մեծ փողոցի վրա ապրողներից բոլորից շուտ իր «գործին» գնացողը, ավելի շուտ, քան տավարը այդ փողոցի բնակիչները կհանեին նախրչի Նհոյին հանձնելու, և ավելի շուտ, քան սուրբ Գևորգի զանգերը տիրացուն կհասցներ ծլնգացնել...

Բայց չհիշել չի կարելի քաղաքի միակ և երևելի «տարապայման» օղի գործածողին, որին իրենք՝ քաղաքացիք, պատիվ էին վերապահել որոշ «տրադիցիաների» պահպանողը լինելու:

Հետո մեր տան դիմաց ապրող Ֆայտոնչի Եղիշի տան մեծ դարբազայի դռները կբացվեին շոնդալից աղմուկով, և Եղիշի կառքը իր կրակոտ, կարմիր ձիերով, զանգուլակների զվարթ, աշխույժ նվագով դուրս կպրծներ դռներից, և եթե մենք էլ երեխաներով դուրս եկած լինեինք փողոց, կլցներ մեզ կառքի մեջ և մի պտույտ կաներ լայն փողոցով փոշին հանելով, մեր՝ ականջ խլացնող աղմուկ, աղաղակի հետ միասին... Եվ նույնը կկրկներ երեկոյան, չնայած ձիերի հոգնած լինելուն:

Սակայն Իգդիրի առավոտը հավաստիացնող ամենակարևոր հանգամանքը, իհարկե, լիմոնադի գործարանի շչակի սուլոցն էր, մեր փեսա Վլասի գործարանի, և

բոլոր իգդիրցիք՝ քնաթաթախ, թե ոտքի ելած, ասում էին. «Վլասը ճվաց»: Նշանակում էր՝ առավոտյան ժամը 7–ն է:

Եվ քաղաքացիներից բոլոր նրանք, ովքեր ժամացույց ունեին, կարող էին ճշտել իրենց ժամացույցները, քանի որ Վլասինը՝ մի բլիթի չափ «Սարգիսով», հայտնի ֆիրմայինն էր, իսկ իր մեխանիկը, որը սպասարկում էր և՛ լիմոնադի գործարանին, և՛ ալրաղացին, ազգով գերմանացի էր, որի ժամացույցն էլ պակաս չէր. «Մոզեր» ֆիրմայի էր: Ուրեմն և սխալվելը բացառվում էր:

Եթե լիմոնադի գործարանը Վլասինն էր «անձամբ», ապա ալրաղացը Ավագովների հետ «կիսարար» էին բանեցնում: Ալրաղացը դիզելով էր աշխատում և իր «բնական արատն» ուներ, ձայնը ընդհատ–ընդհատ թմթմփոց էր հանում, և իգդիրցիք այդ ալրաղացին էլ իրեն սազական անուն էին դրել՝ «թփ–թփ ճաղաց»... Այնպես որ մեր փեսա Վլասը շատ կողմերով էր հայտնի:

Այդ երկու գործարաններին սպասարկողը գերմանացի մեխանիկն էր, որ առավոտից մինչև իրիկուն յուղելու ծորակը ձեռքին՝ յուղելով էր զբաղված, և Վլասի գործարանները աշխատում էին «Սարգիսով» ժամացույցից էլ անսխալ: Իսկ Վլասը որքանով որ արդեն սովորել էր այդ թմփթմփոցին՝ համարելով «բնական արատ», սակայն ոչ մի կերպ չէր կարողանում ընտելանալ իր գերմանացի վարպետի ահավոր փռշտոցին, Վլասը ամեն անգամ հանկարծակի եկած ցնցվում էր, ակնոցը օդում երկու ափով բռնում և ամեն անգամ էլ բարկացած նույն բանը ասում. «Հայ գլխկում քեզի, հա՛...»: Իսկ գերմանացին էլ, կարծելով, որ... «առողջություն» են ցանկանում երևի իրեն, շոյված այդ ուշադրությունից, ինքն էլ իր հերթին շնորհակալություն էր հայտնում՝ ձեռքը սրտին տանելով. «Դանքեն, դանքեն շոն»...

Իսկ թե ուրիշ էլ ինչով էր հայտնի որպես գործարանատեր, հորաքույրս՝ Օվսաննան, պարզ բնորոշում էր տվել...

— Թփթփոցը տրիր ի, շվշվոցն էլ խետը, մեջտեղը պան չկա... Ի՞նչ կա... Մե կոնաղ իկյալուց վռազ լիմոնաթի բութուլներնի շարելի առչները...

Օվսաննա հորաքույրս, իհարկե, մի քիչ չափազանցնում էր, բայց Վլասի գործարանատեր լինելու հանգամանքը, երկու գործարանները պահելու ծախսերը ինչքան էլ որ կիսվում էր Ավագովների հետ, բոլոր դեպքերում ծախսերը գործարանների շատ լինելով, իսկապես որ նրան չհարստացրին, և այդ գործարանատերն էլ էր ծերը ծերին հասցնողներից, քանի որ ծախսերը շատ էին, և օգուտը՝ շատ չնչին: Միակ բացատրությունն այդ՝ իսկապես որ մեծ հոգսի... մեր փեսայի սահման չունեցող փառասիրությունն էր: Միայն այն համբավը, որ անգամ Երևանում նստած գավառապետը գիտի, որ Իգդիրում «եստ զավոդչիկ Վլաս»՝ նրան բավական էր:

Վլասի լիմոնադը իսկապես որ փառահեղ էր: Իգդիրցիք դեռ ճաշից առաջ լիմոնադի շշերը դույլի մեջ իջեցնում էին ջրհոր, որ սառը մնա, իսկ խմելուց... քթնե-

րից գազը մխում էր, գխտացնում, հաճույքից անգամ ինքը Իսաբեկը (եթե իրեն թույլ էր տալիս երբեմն նման ավելորդություն) չէր կարողանում իրեն զսպել և, ի զարմանս բոլորի, բեղերը ափով սրբելով՝ ասում էր. «Ողորմի խորտ, Վլա՛ս, քյո ճվվոցն էլ, թմփթմփոցն էլ հալալ ըլի քեզիկ»:

Վլասի լիմոնադը իսկապես որ երևելի է եղել: Լիմոնադի ջուրը բերվել է Արհաջի քաղցրահամ սառը աղբյուրներից, դրանով արդեն ապահովելով լիմոնադի բարձր արժանիքները, իսկ արժանիքները ավելացվում էին նաև ընտիր մրգահյութերի տեսակներով, և Վլասի գործարանում մի քանի տեսակի լիմոնադ էր արտադրվում՝ բալի, թարխունի, սուրճի, լիմոնի և այլն: Լիմոնադը ծախվում էր առանձին խանութներում, մի քանի կրպակներ էլ ինքը ուներ և վաճառում էր լիմոնադը բաց տակառների մեջ լցրած սառույցի մեջ պահված վիճակում, և Վլասի լիմոնադի սպառողները անհաշիվ էին: Անգամ քրդերը, եզդիները քաղաք գալուց իրենց չէին զրկում այդ հաճույքից, մի լավ գխտալու հաճույքից և նրանց սիրած լիմոնադը բալինն էր. կարմիր էր և թունդ, «կծպծան», գազով...

Բայց Վլասը միակ գործարանատերը չէր Իգդիրում: Կար բամբակազտիչ և ձեթի գործարան, որի տեր Օգաբաշենց Երվանդը այնքան իր գործարանով չէր հայտնի, ինչքան իր գեղատեսիլ տիկնոջով: Եվ եթե իգդիրցիք, որ այնքան էլ առատաձեռն չէին գովասանքներ շռայլելու մեջ, գտել էին, որ գեղեցիկ է, ուրեմն իրոք որ շատ գեղեցիկ է եղել:

Իգդիրն ուներ նաև մեխանիկական գործարան—արհեստանոց, որը լրիվ ծանրաբեռնված աշխատում էր՝ կատարելով սահմանապահ կայազորների և Իգդիրով եկող—գնացող առևտրական քարավանների մշտական պատվերները: Բայց Իգդիրին պահողը ո՛չ Վլասի լիմոնադն էր և ո՛չ էլ մյուս գործարանները, որոնք հազիվ իրենց տերերին էին կշտացնում, նաև հնարավորություն տալիս, որ ամառվա շոգերին ամառանոց գնային Լոռի կամ Նոր Բայազետ, կամ Սիրանույշի «Համլետի», Ադամյանի «Օթելլոյի» համար տոմս ունենային և Թիֆլիսցի Նարիմանովների «Իլիգիոնը» հաճախեին:

Իգդիրին ապրուստ տվողը հողն էր, իր բաղերն էին, տնամերձ բախչաները, բոստանները և ամեն տնում եղած «թացանը»՝ կովը, մատակը, էծը, մաքին:

Նրանց ապրուստի, ձմեռվա բոլոր պետքերը հողն էր տալիս և տալիս էր ընտիր, առատ, քանի որ ինչպես դեռ հարգարժան Նոյն էր նկատել, հողը այստեղ հաստ էր, փուխր, խոնավություն պահող, որ գոմաղբի հետ տասնապատիկ էր վերադարձնում իր տիրոջը, մշակողին: Իսկ իգդիրցին հողը սիրում էր և գիտեր նրա լեզուն:

Ի՜նչ ասես չկար Իգդիրի բոստաններում, դաշտերում, բանջարանոցներում՝ քունջութ, կանեփ, լոբի, սիսեռ, ոսպ, բամիա, կարտոֆիլ, շաղգամ, գետնախնձոր, պոմիդոր, բադրիջան, բիբար... Ի՜նչ բիբարներ, որոնք աշնանը շարաններով, կրակի գույներով վառվում էին այուներից կախված, իսկ պատերի վրա շարված դեղնում, կարմրատակում էին դդումները... Իսկ դաշտերից, սարից բերած գյանդլան, մանդակը, ավելու-

կը, սիբեխը, բոխին անպակաս էին սեղանից: Ամենահամեստ, չունևոր տանը անպակաս էր ամառ–ձմեռ թանապուրը, հատիկով սպասը, իսկ չորացած բանջարեղենից ճաշերի անհամար տեսակներ էին հնարում, և պիտի հավատալ Խոռո դադոյին, երբ հպարտությամբ ասում էր, որ չորացրած կանաչ լոբին «Մե պուտուկ եղի խետ չեմ փոխի գանց խորոված ի խետը, էլ չեմ ասելի՝ ծիրանի չիրը տտումի խետ»:

Այգիներից ամենամեծը Բաղիլենց այգին էր, իսկ նշանավորը, հայտնին՝ Նարնջոնց Ենոքի այգին էր, որն իր անհաշիվ ծառ ու մրգի տեսակներով այգի–թանգարանի էր նման: Եվ շուկայում միրգ առնողները առաջին հերթին Նարնջանց բաղի միրգն էին փնտրում: Ինքը չէր ծախում, առնում էին իրենից և վերավաճառում: Իսկ այգին իսկապես տեսիլք էր: Միայն Արարատյան դաշտի մրգատեսակները չէին, այլ ողջ Հայաստանից, Մեղրուց, Որոտանի կիրճից բերել էր մեղրահամ թուզ, նուռ, դեղձ... Օրդուբադից ծիրանի զանազան տեսակներ և անգամ Վանից բերած Արտամետի խնձորներ... Հրաշագործ էր Նարնջենց Ենոքը:

Առհասարակ Իգդիրի բերքի ավելցուկը ուրիշ տեղ չէր գնում, արդեն տասը հազարին հասնող բազմաշերտ ընակչությունը սպառում էր:

Աշնանը Իգդիրի զերզամբիները պայթում էին հավաքած, ամբարված բերքից: Թուջերով յուղը, պանիրը, ձեթը, քնջութի ձեթը, որ յուղից գերադասում էին, և կարասներով գինին, մովուզի, խարջու գինին, որ մշմշում էին թանձր բուրմունքով, զերզամբու մթնում, կարծես հեքիաթի հսկաներ լինեին շնթռած, քնած պատերի տակ...

Իգդիրի գինին չէր հերիքում նրանց... Գինի վայելողներ էին, ծախելու համար չէր նրանց գինին, իսկ հունվարը անցած չէր հերիքում և բերում էին Օշականից, Աշտարակից, Էջմիածնից, Ղամարլվից... Եվ երևի Վլասի լիմոնադն էր պատճառ դարձել, որ իգդիրցիք սկսեցին գինին լիմոնադով խառնած խմել... Հռոմի կեսարների օրինակով, որոնք մաքուր, անխառն գինի խմողներին «բարբարոս» էին համարում: Բայց իգդիրցիք, ի տարբերություն կեսարների, միայն ամառվա շոգերին էին լիմոնադով խմում գինին, իսկ աշնանը, ձմռանը մնում էին բարբարոս:

Եվ հատուկ անունով էլ կնքել էին այդ խմիչքը՝ «Մավրո»:

Իրենց համար, ձմեռվա համար էին նաև կախանները՝ խաղողի, տանձերի և սուջուխի շարանները, փոքր թուջերի մեջ Վանա տառեխը, Սևանի կողակը՝ աղը դրած, և զերզամբու կենտրոնում տախտակի ճոճի վրա օրորվող լավաշների դաստաները:

Շաբաթ, կիրակի օրերին գործից շուտ տուն եկած իգդիրցին իր ընկերների հետ պատահում էր՝ տուն էլ չէին բարձրանում և զերզամբու մի անկյունում՝ լավաշի գրտնելու կլոր սեղանի շուրջը, նստում էին և դդումի «գոգրան» զգույշ իջեցնում կարասը, որ գինին «չանհանգստանա», որ աղի կողակի գլուխը, հորած պանիրը սոխի «գյալոչի» հետ ողողվի մովուզի կարմիր, դեռ կայծկլտացող թանձր գինիով, կավե փարչերով՝ ամեն թասի վրա նվաղած հոգոց հանելով, տիրոջն օրհնելով...

Դու, սիրելի՛դ իմ Իգդիր, պիտի որ ինձանից ավելի տեղյակ լինես քո բնակիչ-ների ապրուստի, շարժուձևի մասին և ինքդ պակասեցրու, եթե գտնես ավելորդ, կամ ավելացրու, բայց այդպես էին ապրում, այդպես եմ տեսել ու հիշում: Նրանք ծնված օրվանից դաշինք են ունեցել հողի հետ, հողագործ էին, այգեգործ, իսկ հողագործի տունը դատարկ չէր կարող լինել:

Սակայն քաղաք դառնալու հետ միասին ավելանում, շատանում էին նրանց հոգսերը, որ խաղողի «ժիժք»–ի պես փաթաթվում, փաթաթվում էր նրանց կոկորդին՝ քաղաք դառնալու տենդագին գալարումներով:

Իգդիրի գլավան՝ քաղաքագլուխը, ընտրովի էր, իսկ պրիստավն էլ՝ դե պրիս-տավ էր՝ նշանակովի, գավառապետի կողմից հատուկ ջոկած Իգդիրի համար:

Բայց թե ընտրովի կլինեին այդ երկուսը թե ջոկովի՝ միևնույնն էր իգդիրցիների համար, քանի որ նրանց գոյատևության ժամկետները իրենք՝ իգդիրցիք էին տնօրինում:

Գլավան իսկապես որ ընտրվում էր, և հաճախ ընտրվում էր այն ցեղախմ-բերի, «թայֆաների» թեկնածուն, որոնք ավելի ազդեցիկ էին՝ «զոռբա»: Բայց որովհետև թեկնածուները երկուսն էին լինում և համարյա թե «դեմոկրատիայի» նման բան, մեր փեսա Վլասը գտնում էր դա միանգամայն «չնչին», անբավարար՝ Իգդիրի նման քաղաքի համար, նկատի ունենալով «անհաշիվ թայֆաները», կու-սակցությունները, որոնցից ոչ մեկի անդամը չէր ինքը: Եվ թեկնածուները բնակա-նորեն պետք է որ պատկանեին տարբեր կուսակցությունների, որոնցից, ինչպես ասացինք, Իգդիրը պակասություն չուներ: Եվ մեր «թարս նայողների» գործը հեշ-տանում էր, կարող էին և ջոկել «չարյաց փոքրագույնը» և հակառակ անգամ զոռ-բա թայֆաների ցանկության:

Ում հիշողությունից մի բան մնացել էր, հիշում էին, որ ջոկելու լավ առիթ եղել էր, երբ առաջադրված էին եղել երկու՝ դաշնակցական և հնչակյան կուսակցու-թյան թեկնածուներ, որոնցից առաջինը... ոչ ավել, ոչ պակաս եղել էր այդ կուսակ-ցության «լիդերի» հայրը:

Այստեղ էր, որ հարգելի քվեարկողները պիտի չմոռանային այդ «լիդերի» ով և ինչ լինելը: Քանի որ ինքը գավառապետն անգամ նրա անունը լսելիս, չգիտես ինչու, իր համազգեստի կոճակները ստուգում էր մի անգամ ևս...

Եվ սակայն «թարս նայողները» սևացնում են, «սև քվե» են տալիս «լիդերի» հորը՝ Մարտիրոսին՝ գերադասելով Իսաբեկի եղբորը՝ Եփրեմին: «Թարս նայողների» պետքն էլ չի եղել, թե ում են «սևացնում»...

Տարբերությունը բավականին «շոշափելի» է եղել, քանի որ Մարտիրոսը նորից էր ուզում գլավա դառնալ, իսկ իգդիրցիք արդեն նրա «չենք ու շնորհքին» լավ ծանոթ էին... Զէին ուզում նորից սխալվել: «Դուզ մարդ» չէր,— ասում էին հիշողնե-րը,— խառնակիչ էր, բոլորին թշնամացնող»...

Իսկ նրա հակապատկերն է եղել Եփրեմը՝ Իսաբեկի փոքր եղբայրը, որին հնչակյաններն էին առաջադրել:

Բայց Եփրեմը «ոչմիական» էլ չէր: Իր պապերի նման հողագործ, շիտակ, ազնիվ մարդ էր՝ կարգ ու կանոն, մեծ ու փոքր ճանաչող:

Նրա մասին ասում էին «ռուսականի», այսինքն՝ ռուսական պետականության կողմնակից, «պահպանողական», կարգ ու օրենք հասկացող, ընդունող, որ քիչ բան չէր Իգդիրի նման՝ թայֆաներով, կուսակցություններով վխտացող քաղաքում, որտեղ չէր խանգարի, որ մի քիչ էլ կարգ ու կանոն լիներ: Իսկ դա էլ նշանակում էր, իր հերթին, հակադրվել բոլոր թայֆաներին, կուսակցություններին և հատկապես՝ «ամենահեղափոխականին»...

Բայց և «թարս նայողները» հետո գլխի կընկնեն, որ իրենց «թացը չորից» ջոկելը արջի ծառայություն էր ընդամենը Եփրեմի համար:

Ես նրան չեմ տեսել, չէի կարող տեսնել, քանի որ երիտասարդ էլ հեռացել է, «հեռացրել են» կյանքից... Գուցե դու, սիրելի՛դ իմ Իգդիր, դու ասեիր քո անկողմնակալ խոսքը նրա մասին:

— Օ՜, Եփրեմը, Եփրեմի նման մարդ էլ Իգդիրը չծնեց:

Էդ լուսանկարը, որ դրել ես սեղանիդ, ի՞նչ է, դու նրան պիտի տեսնեիր իր կապույտ խալերով, սպիտակ ձին նստած իր երկու ջահել թիկնապահների, ղարաբաղցի եղբայրների հետ: Երբ նա հայտնվում էր Իգդիրի շուկայում, տաքագլուխ իգդիրցիք, որ էն է խանչալները պիտի քաշեին իրար վրա՝ խաղաղվում էին, գլուխները ամոթով կախում...

Ձայն չէր հանում: Աչ ձեռքը, որից կախ էր արծաթ կոթով մտրակը, կողքին կանթած՝ լսում էր և հաշտեցնում, խաղաղեցնում մի երկու խոսքով: Կռիվ ու վեճ չէր բորբոքում Իգդիրի ու Հարևան թուրք ու քուրդ գյուղերի միջև, պատահել է անգամ, որ գող, սանձարձակ, ղաչաղ թուրքի կամ քրդի բերել, Իգդիրմավայում հող է տվել, տանտեր դարձրել: Նրանք, ովքեր նրա այդ «տարօրինակությունները» այնքան էլ չէին արդարացնում, հետո համոզվում էին, թե ինչքան հեռատես էր Եփրեմը, որ ղաչաղներին նույնիսկ մարդու տեսքի էր բերում, դարձնում հողի մարդ:

— Բայց տաքարյուն էր, ազնիվ, արդար էր, բայց տաքարյուն էր: Մարտիրոսի վրա ձեռք չպիտի բարձրացներ խալխի առաջ, շուկայում... Գլուխը քար, որ նորից մի խարդախություն էր արել... Մի եզդուց երկու ոչխար էր վերցրել ղավուրմացու և հրաժարվում էր փող տալ՝ ասելով, թե քուրդը չի հիշում, որ փողը վերցրել է... Ձպետք է ծեծեր: Լավ բան չարեց, իրեն սազական չէր, դե տաքարյուն էր...

Մեր լուսանկարից ինձ է նայում Միքելանջելոյի Բրուտոսի խոհուն նայվածքով, մի քիչ երազկոտ, մի քիչ տխուր, մեծ նշաձև աչքերով մի այր, տղամարդ, բեղերը մի թեթև կեռված սեղմ շրթներին, որոնց մեջ ժպիտանման բան կա: Կլոր մեծ մեդալիոն է կախ կրծքին, ոսկի հաստ շղթայով, երևի գլավա եղած ժամանակ է նկարվել: Երիտասարդ է, բայց ինչքա՜ն լուրջ է... Լուսանկարից

անգամ կարելի է պատկառել և պատկառում ես. ի՜նչ լուսավոր հուսալիություն, վստահություն է առկայծում այդ անկենդան լուսանկարը: Զարմանալի են, տխուր՝ այդ հին լուսանկարները:

Զլսեցի՞ր՝ ինչ ասաց Մարտիրոսը ատամների արանքից՝ գետին ընկած գլխարկը թափ տալով...

— Լա՛վ, Եփրե՛մ, տու իմ ջանին վայ տաս...

Բա դու վախ չունեիր, չէ՞ որ նա էլ էր իգդիրցի: Ինչքան էլ վատ, բայց իգդիրցի էր, չէ՞, և ո՞ւմ հայրը... Ինքը չէ, բայց որդին կմոռանա՞ր, կտանե՞ր այդպիսի չտեսնված անպատվություն...

Բայց դու չէիր կարող տաքարյուն չլինել, այդ քաղաքում բոլորն էին տաքարյուն, իսկ տաքարյուն մարդն էլ զգույշ ինչպե՞ս լինի:

Եվ տունն են մտել երեկոյան, երբ նա նստած է եղել թեյի սեղանի, մեծ սեղանի շուրջ, երեխաների հետ, որոնք լուռ, դպրոցական գիրք, տետրակ առաջները՝ կարդում էին, գրում, մեկ–մեկ էլ հարցնելով՝ խախտում լռությունը: Մեծ, «չարովի» լամպը, որ կախված էր սեղանի վրա առաստաղից՝ իր տաք փափուկ լույսով սեղանն էր լուսավորում և ոսկեծամ ու խարտյաշ մանկական գլուխները՝ հակված սեղանին, գիրք ու տետրակին, թեյի բաժակներին՝ արծաթե գդալներով, բալի, ծիրանի մուրաբաներով լիքը սկահակներին, մի անբացատրելի քնքուշ թրթռացող լույսի ամեն վայրկյան իջնող, իջնող անդորրով, ընդարձակ ճաշասրահի մյուս մասը թողնելով կապույտին գնացող կիսախավարի մեջ:

Սրահի դռնից, որ կիսաբաց էր, անշշուկ ներս են մտնում երկու մարդ, երեսները բաշլուղով ծածկված, որոնց վրա ուշադրություն էլ դարձնող չի լինում, քանի որ կարող էր նաև Մային զալոն լիներ ներս մտնողը... Թիկունքին կրակած երկու գնդակների թափից Եփրեմը երկու ձեռքերով սեղանին է ընկնում և դանդաղ շրջվում դեպի դուռը և ձեռքերին ուժ տալով՝ բարձրանում... Դեռ տաք, ցավին անզգա՝ մի կողմ է հրում աթոռը և նետվում դեպի դուռը, խանչալը ձեռքին հասնում է մինչև բակ և փռվում գետնին: Երեխաները, որ սառած, կարկամած, քարացած են եղել, նոր միայն ճչում, վայնասուն են գցում, և կրակոցի, աղմուկի վրա դոմից կովկիթը ձեռքին բակ է վազում Մային զալոն, տեսնում գետնին փռված Եփրեմին ու ձեռքից թողած կովկիթը փշրվում է... Կաթն ու արյունը իրար են խառնվում...

Մարդասպանների համար ամեն ինչը հարմար է լինում այդ օրը:

Այդ օրը Եփրեմը իր թիկնապահներին, որոնք տանն էին ապրում իրենց հատկացված սենյակում, ուղարկած է լինում Խաչատուր աղայի մոտ՝ Սինչանլու, կարևոր հանձնարարությամբ (մի խումբ ֆիդայիների սահմանն անցկացնելու հարցով), և առավոտյան

նրանք հազիվ հասցնեին վերադառնալ: Այդ բանը իմացած են եղել մարդասպանները, չնայած որ միայն ինքը գիտեր այդ մասին:

Եփրեմը ինչքան էլ որ «ոչմիական» լիներ, կամ, ինչպես ասում էին, «ռուսական», չէր կարող իրեն հեռու պահել, անտարբեր մնալ Իգդիրի անհանգիստ, «եռացող» կյանքից, «քաղաքական» անցուդարձից, և իրեն ընտրող «թարս նայողներն» էլ չէին ընտրի իրեն գլավա, իրենց ինչի՞ն էր պետք «ոչմիականը»... Այդպես ասում էին նրան չուզող թայֆականները, իսկ ինքը նույն իգդիրցին էր՝ իր բոլոր «թերություններով» հանդերձ, բայց կարգ ու կանոն հարգող և մի քիչ էլ շրջահայաց՝ թերևս դժվար ճարվող բան դյուրաբորբոք իգդիրցու համար: Եվ նրա «ոչմիականը» առերես էր:

«Իր մարդիկ» ուներ ամեն տեղ, նահանգապետարանում, Բոգոսլավսկու քթի տակ, սահմանապահ կայազորում և այլուր՝ իրեն նախազգուշացնող սպասելիք խստությունների, ձերբակալությունների մասին, և հասցնում էր զգուշացնել ում պետք էր եւ կանխել հետևանքները: Եվ Եփրեմը կանխում էր... խորամանկելով անգամ Բոգոսլավսկուն, համոզելով հողաբաժանման հարցը թեկուզ, որի հետևանքով թուրք հարուստ հողատերերը զրկվելու էին զավթած հողերից...

Առավոտյան Իգդիրը ալեկոծության մեջ էր: Բոլորի հուզմունքը, խոսակցությունը Եփրեմի տմարդի սպանությունն էր:

Հուզվել էին նաև հասկանալով, որ այդ «կոմիտեներ» կոչված աղտեղությունների համար իրենք էլ անպաշտպան են, և նրանց համար միևնույն է, թե ում սպանեն՝ Բոգոսլավսկիների՞ն, թե՞ Եփրեմի...

Գերեզմանոցում, որը գտնվում էր մեր տնից քիչ վեր՝ «Գորոդսկոյ ուչիլիշչայի» դիմաց, որը կառուցվել էր Եփրեմի ջանքերով, հավաքվել էր ողջ Իգդիրը:

Շվարած կանգնած են եղել Եփրեմի գլխավերևը Խաչատուր աղան, մելիք Վրթանեսը, Գարեգին աղան և եզդի, քուրդ ցեղապետներ Ջհանգիր աղան, Ուսսուբ բեկը և ուրիշ երևելի անձնավորություններ, չինովնիկներ, իշխանության մարդիկ: Կանգնած էր իր հինգ տղաների հետ Խաչատուր աղան, յոթը թուրք ու քուրդ գյուղերի անփոփոխ գլավան, որից և՛ վախենում, և՛ պատկառում էին բնակիչները: Եփրեմի մտերիմ ընկերն էր և դառնացած քարացել, արձանացել էր... Այդ պարթև հասակով, բրոնզագույն դեմքով, ապառաժի նման մարդը չէր կարողանում զսպել արցունքները, որոնք գլորվում էին կրծքին, հետո արծաթ գոտուց կախ խենչալին՝ փշրվում...

Կանգնած է եղել և Իսաբեկը՝ անարցունք, մթնած, սևացած, և մերոնք բոլորը: Իսաբեկի դեմքը տխրություն չի արտահայտել, սևացած, քարացած դեմքին դաժանություն է եղել, զսպված ցասում, բարկություն... Ասում են՝ Իսաբեկը շատ է սիրել իր փոքր եղբորը, բայց չի հավանել նրա «բռնած գործը», չէր էլ կարող հավանել՝ հակառակ խառնվածքի տեր լինելով, բայց և ուրիշի գործերի մեջ խառնվողներից չէր... Ասել էր երևի ցավով, ափսոսանքով մեկ–երկու անգամ...

— Ախար մե ասա տանամ, քյո ինչ խորդ ցավնի էդ մեյմունների խետը յաշ-վելը... Քյոնը՝ բաղնի, քյո տուն–տեղը, արտը, խողը...

Տեր Մեսրոպը չփոթված, չվարած կանգնել է, չիմանալով ինչ անի, ինչից սկսի... Եվ միայն տիրացուի խզված ձայնը լսելով, կարծես ուշքի է գալիս ու միանում նրան՝ թառամած կերկերուն ձայնով... երբ կարող էր շանթեր արձակել իր հզոր ձայնով: Կորա-ցել էր... Բայց վերջում բարկացած, ձայնը հզորացնում է և խաչը վեր տնկելով ազդա-բարում իր անեծքը «Հուդային», վարձու սպանողին դժոխքին արժանի լինելու մասին... Իսկ պակասը կլրացնի Խոռո դադոն, որ դաղված, անմխիթար՝ չոքած Եփրեմի դագաղի մոտ, ձեռքերը տարածած կասի երգաձայն. «Գյուլլախորով ըլի քյո վրա կրակողը, Կակո՛, բրիչակ ըլի տուն ու տեղը, էն մէ պուռ խողին կարոտ մնա»...

Այդպես վերջանում է Եփրեմի տասներկու տարվա գլավայությունը՝ անհե-թեթ, անխորհուրդ, անիմաստ մահով:

Տանը, ողորմաթասին Նարնջենց Ենոքը կասի. «Սև ըլեր էն բաղը իրանց հոգուն... Բաղի համար, Եփրեմ, սարի պես մարդ կսպանե՞ն...»:

Նա էլ կարծում էր, որ գուցե իր այգու վերադարձնելն է եղել պատճառը, բայց շատ էին պատճառները:

Մինչև ուշ գիշեր կնստի ժողովուրդը, տղամարդիկ ներսը, կանայք երկար պատշգամբում և կպատմեն, գլուխները հետ ու առաջ տանելով, երկանք աղալու նման, և Խոռո դադոն էլ կպատմի մի քանի օրվա պատմություն՝ ամեն թեքվելուց ծնկները շփելով, գլխաշորի ծայրով կարմրած աչքերից արցունքը սրբելով...

Եվ այդպես, մինչև ուշ գիշեր՝ կխոսեն, կզրուցեն, կպատմեն Եփրեմի գլավայու-թյան մասին, թե ինչպես խելքով ու հեռատեսությամբ հողաբաժանումը կարգավորեց, թե ինչպես ջրբաժանությունը հայ ու թուրք գյուղերի մեջ կարգավորեց՝ վերջ դնելով անվեր-ջանալի վեճ ու կռիվներին, որոնք առանց արյունի չէին վերջանում... Ինչպես չորացրեց Արհաջի աղբյուրներից, ջրաղացներից աննպատակ հոսող ջրերից առաջացած ճահիճնե-ը, որոնք մոծակների բուն էին Իգդիրի համար և տեղը դարձրեց խոտհարքեր՝ բաժանե-լով անասունների համար կերադաշտ չունեցող հողազուրկ գյուղացիներին...

Պատմում էին այդպես դառը կսկիծով և «յոթին», և «քառասնեկին» և տարելիցին...

Այդպիսին է եղել այդ երևելի իգդիրցին, որը, «ոչմիական» լինելով հանդերձ, գտնում էր, որ չի խանգարի Իգդիրում էլ կարգուկանոն լինի մի քիչ:

Եփրեմից հետո փոփոխություններ եղան և, առաջին հերթին, իրենց՝ Իսաբեկենց ցեղում: Մեծ Իսաբեկի ցեղը կիսվեց, պառակտվեց... Նրա միջնեկը՝ Այվազը, որն իր ներ-հակ բնավորության համար «Ծուռ Եվո» և «Ժնջիլ ճղող» էր հիշվում, այսինքն՝ շղթա կտրող, որին արժանացել էր մի օր, երբ հոր՝ Իսաբեկի, հրամանով շղթայված է եղել ծառից իր բազում չարությունների համար... և երկաթյա շղթան «ճղել է», կտրել ու փախել:

Եվ ահա այդ ծուռ Եվոյի տղաները դուրս եկան ոչ թե «ծուռ», այլ վախկոտ-ներ... Նույն ցեղի մարդիկ էլ տարբեր են լինում, վախեցան, վախեցան Կանայենց «գերհզոր» թայֆայից և որպես ապացույց իրենց «լոյալության»... փոխեցին ցեղին պատ-կանելու միակ ապացույցը՝ մեծ Իսաբեկի ազգին պատկանելությունը, ազգանունը:

Բայց գուցե ցավալին Իգդիրի համար Եփրեմի կորուստը չէր միայն:

Ամենաթունդ վեճերը, թայֆամիջյան գզվռտոցները արյունով չէին վերջացել երբեք: Իգդիրի համար դա «նորություն» էր: Այսպես ասած՝ հասարակական հարա-բերությունների «նոր փուլ», «նոր որակ», որը հետևանք էր խառը ժամանակների, սնկի պես աճած «կոմիտեների» վայրիվերո գործունեության, որի շարունակությունը կարող էր շատ ավելի տխուր հետևանքների սկիզբ դառնալ, քանի որ «թարս նայող-ները» բոլորն էին անգիջում: Եվ եթե քո գոյության «պերճախոս» սկիզբը այնպիսի անսպասելի «չնախատեսված» վերջ չունենար, և դեռ ինչե՜ր պիտի տեսնեիր, սիրելի՜դ իմ Իգդիր, եթե քո քաղաքացիք էլ սկսեին իրարից «արյան վրեժ» լուծել...

Բայց թող ինչքան ուզում էր պղտորվեր, թող հետևանքները տասնապատիկ «չնախատեսված» դառնային, կզուլալվեր նորից, թող չզուլալվեր, միայն թե ջրվորները առավոտ ծեգին, բահը ուսերին դաշտերը գնային... Սուրբ Գևորգի եկեղեցու զանգերը մեղմ ղողանջեին իրիկնամուտին և Վլասի լիմոնադի գործարանի «ճվոցը» նորից ավետեր լուսաբաց և միայն թե մեծ լեռան ստվերում, նրա հովանու տակ, այգեպաններիդ տանիք-ների ծուխը բլուր–բլուր բարձրանար, Մասիսի լանջերին փռվեր...

Դու էլ, սիրելի՜ս, պիտի որ համաձայնես երևի ինձ հետ, որ իսկապես ինչ–որ բան խարխլվեց հողագործներիդ, այգեգործներիդ, արհեստավորներիդ՝ հացն ու գինին սրբությամբ վայելողների Իգդիրը...

* * *

Իսաբեկ ծնեց՝ Այվազ, Յորդուխան, Համբարձում.
Այվազ ծնեց՝ Վարդան, Սամսոն, Գևորգ,, Սահակ.
Վարդան ծնեց՝ Հակոբ, Վարդ, Պարույր, Խորեն.
Սամսոն ծնեց՝ Համազասպ, Մեխակ, Գեղամ, Հովհաննես, Մկրտիչ, Մամիկոն.
Գևորգ ծնեց՝ Աբիսողոմ, Հարություն.
Սահակ ծնեց՝ Սարգիս, Բաբկեն.
Յորդուխան ծնեց՝ Իսաբեկ, Համբարձում, Եփրեմ.
Իսաբեկ ծնեց՝ Ավետիս, Արմենակ, Հմայակ.
Համբարձում ծնեց՝ Հակոբ.
Եփրեմ ծնեց՝ Գարեգին, Վահան, Ամասիա, Զավեն.
Ավետիս ծնեց՝ Հայրապետ.

Հմայակ ծնեց՝ Հրայր, Գուրգեն, Էդվարդ.
Հակոբ ծնեց՝ Համբարձում.
Վահան ծնեց՝ Գարեգին.
Ամասիա ծնեց՝ Ռուբեն, Արտավազդ.
Հայրապետ ծնեց՝ Ռուբեն.

Եվ Մեխակը ծնեց՝ 7 տղա.
Գեղամից չեմ հիշում և չեմ ուզում հիշել.
Մամիկոնից մի տղա մնաց...

Գարեգինը ժառանգ չունեցավ, սպանվեց Հայթաղթում, Սարդարապատի տակ...
Հայրոյի միակը՝ Ռուբիկը, սպանվեց Դնեպրի մոտ, 18 տարին նոր բոլորած...
Եվ ուրիշ՝ երկու տասնյակից ավելի տղաներ, չհաշված թուխ աղջիկներին: Նրանց հաշիվը չի պահվել և չի պահվում, չգիտես որ՝ օրենքով, իսկ եթե հաշվեին նաև



աղջիկներին, մեր հոքիրներին, մեր քույրերին, այդ ցուցակը՝ մեծն Իսաբեկի «տնկած ծառը», մի պատկառելի կաղնու ծառի կնմաներ...

Եվ դա, սիրելի՛ս, Իսաբեկի «տնկածը» միայն:

Իսկ տոհմեր կային, որոնց «կաղնիները» Իսաբեկի կաղնուն չէին զիջում, և միասին վերցրած՝ Իգդիրը կդառնար անտառ. ջահել, փարթամ անտառ, կդառնար հաստատ: Բայց և ինչո՞ւ պիտի այդ տոհմածառի հաշվից դուրս մնան Բանավշայի աղջիկները, իմ հորաքույրերը՝ Օվսաննան՝ Վլասի կողակիցը, կամ Նունե հորաքույրս, որոնք ընտանյոք հանդերձ հավաստեցին Վանա տառեխի արքայական ճուկ լինելու պատիվը... և Մանե հորաքույրս, որ քյաչալ Կյասպարի հարսը լինելու պատիվ էր ունեցել: Կամ մյուս հորեղբայրներիս թուխ աղջիկները, իսկ Արզումանենց Տիգրանի տասը աղջիկները, որոնց բոլորի ծնունդը Տիգրանը ընդունում էր ասպետորեն, դհոլ–զուռնայով, քեֆ–ուրախությունով՝ ի լուր ողջ Փոս թաղի:

Այդպես էիր բազմանում: Եվ եթե տեր Մեսրոպը իր երկու տիրացուներով չէր հասցնում կնունքի մեռոն ճարել և Շուստովի կոնյակին էր զոռը տվել, ապա Էջմիածնում նստած կաթողիկոսը մեղք չուներ, մեռոնը մովուզի գինի չէր, որ կարասներով լիներ:



Եվ մի զարմացիր քո թարս նայողների... ջանասիրության վրա, նրանք պարապ մնալ չէին սիրում և դեռ ինչերի՜ ականատես պիտի լինեին, եթե «ուրբաթ–շաբաթի» հարց չլիներ: Քո քաղաքացիք ապրում էին ոնց որ հեքիաթում, բայց երկնքից խնձորներ չընկան, հեքիաթն էլ կարճ էր՝ վերջացավ, փոխվեց անճոռնի ծամածռության:

Երևանում էլ նրանց ապրելաձևը, քեզ սպասելու հույսը մի օր սպառվեց, ինչքան էլ որ «կողով» էին... Փափկեցին, լուծվեցին, ինչպես շաքարը թեյի բաժակում, ինչպես աղը ջրում, ինչպես ձյունը գարնանը՝ հալվեցին, մաշվեցին, դարձան երևանցի, խաղաղ, «անկող» երևանցի...

Եվ այդպես եղավ: Գարեգինը ժառանգ չթողեց, չհասցրեց ունենալ: Տասնութ տարեկան էր, երբ զորակոչվեց: Եփրեմը չկար արդեն: Եփրեմի չորս տղաներից մեծն էր՝ Վահագն, Ամասիա, Զավեն և ինքը՝ Գարեգինը: Զոհվեց, սպանվեց Սարդարապատի կռվում, Հայթաղթ գյուղից թուրքերին հանելու ժամանակ: Վահագնը կողքին էր եղել, Վահագնը վիրավորվել էր, իսկ ինքը սպանվեց... Վահագնը չհիշեց հետո՝ որտեղ հողը դրեց եղբորը: Ոչ ոք չհիշեց հետո՝ ում որտեղ հողը դրին:

Գարեգինը սպա էր: Կրաս նոդարի սպայական դպրոցը վերջացրած՝ պորուչիկի ուսադիրներով և ուղիղ Ղարսի ռազմաճակատ էր ուղարկվել և Ղարսի անկումից հետո ուրիշ հայ սպաների հետ Երևան հասել «Աննայի» շքանշանով, իսկ Երևանից Ղարաքիլիսա էր գործուղվել զորակոչ կազմակերպելու: Զորակոչ, դեռ զորակոչի տարիքի չհասած երեխաների, որոնք մոր փեշից չէին ուզում պոկվել:

Ծանր, շատ ծանր էր եղել պարտականությունը, կռվելուց շատ ավելի դժվար: Չէին սիրում մայրերը այդ գեղեցիկ, բարձրահասակ, ձգված, խիստ, ժպիտը մոռացած սպային... Բայց ի՜նչ աներ, ինչպե՜ս հասկացներ անձայն արցունքներ գլորող լոռեցի զալոներին, նրանց երեխաներին, որ պե՛տք է, պետք, ուրիշ ճար չկա: Զորք, զորքանման բան է հարկավոր դառնալ գոնե, խուժան չմնալ, գոնե հրացան բռնել սովորել... Զեկույցները չէին օգնում հետ կանչելու համար այդ հոգեմաշ զբաղմունքից, և հաշված օրեր էին մնացել մինչև Ղարաքիլիսայի դաժան դեպքերը...

Հետ կանչեցին Սարդարապատի համար և զոհվեց... Զոհվեց՝ Հայթաղթում նստած թուրքերին դուրս հանելուց, հանեց, բայց զոհվեց:

Վահագնը թևից էր վիրավորվել, թողել էր եղբորը մխալով, ցնորած, որ հետո չհիշի որտեղ... Սպայական գլխարկն էր բերել ու թղթապանակը, պորտուպեն, որ Մային զալոն էլ վրան մղկտալու բան ունենա, և աղոթի, դեռ աղոթի մեր, հայի աստծուն, որ գոնե Վահագն է հետ եկել թևը՝ վզից կախ... Ոչ ոք հետո չհիշեց՝ ում որտեղ թաղեցին Սարդարապատի դաշտում: Գոնե եղբայրական գերեզմաններ մնային, հողի մեծ թմբեր, բլրանման բան... Չկա, Սարդարապատի դաշտում կարծես կռիվ չի եղել, մարդ չի զոհվել... Ավազուտներ են, աղուտներ, փուշ ու տատասկով ծածկված, ոչ մի գերեզմանի հետք... Որտե՞ղ թաղեցին այդքան զոհվածներին, Տե՛ր Աստված, դու էլ չտեսա՞ր...

Օ, ի՜նչ զարհուրելի տարողություն ունի այդ Արարատյան դաշտ կոչված հողը... Քանի՜, քանի՜ անգամ է այդպես ծածկվել աղուտներով, փուշ ու տատասկով: Ծաղիկներ չկան, չեն բուսնում այդ աղահամ, արյան համ ունեցող հողում... Երևի Ավարայրի դաշտում էլ ծաղիկներ չկան, և ինչո՞ւ պիտի լինեն. արնահամ, աղի հողում ծաղիկն ի՞նչ գործ ունի, չի բուսնի... Որդան կարմրի մանր բողոճներն են սիրում այդ հողերը, ապրում են այդ աղի ավազուտներում և հավաքվում եղինջանման թփուտների արմատներին, տերևներին... Ոչ ոք չգիտի՝ ինչով են սնվում այդ բողոճները որդան կարմրի... Ոչինչ չկա այդ այրող, մնձրող արևի տակ, բացի շոռամներից, տատասկից: Վախեցած, ճամփան չփոթած նապաստակի կհանդիպես պատահական կամ օձի, գյուրզայի, կարիճի...

Գարեգինը ժառանգ չունեցավ, չհասցրեց, տասնութ տարեկան էր, որ զորակոչվեց...

* * *

Եվ, սակայն, ամեն ինչ մի տեղ սկսվում է և մի տեղ վերջանում: Բայց մինչև քո վերջը, մինչև Մարգարայի կամուրջը մի քանի տարի էլ դեռ պիտի շարունակեիր քաղաք դառնալ՝ ոչ մի ուշադրություն չդարձնելով, թե ինչ է քարուքանդ եղել և շարունակվում է քանդվել շուրջդ:

Զարմանալի ժողովուրդ էր քո ժողովուրդը, որ ժամանակի իմաստը կարծես մոռացած լիներ, երբ գաղթականների քարավանները նաև Իգդիրով էին գալիս անցնում... Իսկ ինքը իրեն թվում էր անսասան, մշտական:

Զարմանալի էին իրենց միամիտ, հողի մարդու չգիտակցված բախտավոր երջանկությամբ, հոգու ու մարմնի ողջ պարզունակ խորհրդով ընդունելով, վայելելով կյանքը՝ ինչպես կա, ինչպես որ է, ոչինչ չփոխելով, չաղավաղելով՝ հողին վստահելով, կպած՝ աղոթարանից մինչև իրիկնամուտ և նորից ամեն աստծո օրը:

Դու, սիրելի՜դ իմ Իգդիր, «Երևանսկայա գուբերնիայի» քաղաքանման շենքերից անհամեմատ արագ էիր զարգանում:

Ինչ–որ տենդագին բան կար քո շտապ զարգանալու մեջ, քան, ասենք, Ալեքսանդրապոլի կամ Երևանի: Թե ինչո՞ւ էիր շտապում, ո՞վ էր շտապեցնողը, հիմա ոչ ոք պատասխան տալ չի կարող, բայց զարգանում էիր և ոչ տարով՝ օրով էիր զարգանում... Եվ եթե մինչև քո տեղահան լինելը նորից ճարվեր նույն պատվական Եփրիկյանը՝ կզարմանար, հաստատ կզարմանար քո «ճարտարության և աշխույժի» վրա և հատկապես «աշխույժի» վրա, երբ քեզ տեսներ կրկնապատկված, եռապատկված և ընդամենը ոչ լրիվ երկու տասնյակ տարիների ընթացքում՝ կզարմանար:

Քաղաքդ մեծանում էր: Մի կողմից՝ դեպի Իգդիրմավան, որն արդեն Ալիշանի հիշատակած առանձին գյուղը չէր, և գաղթել, քաշվել էին Թուրք, պարսիկ: Մյուս կողմից՝ գնում էր դեպի Ալի–Ղամարլուի կողմ, իսկ Բլուրը Իգդիրին արդեն միանալու վրա էր: Եվ ձգվում էիր նաև դեպի Էջմիածին տանող թագավորական ճանապարհը և դեպի Եվջիլար, Արազի Իգդիրի ափի Եվջիլարը... Բայց ժամանակը քո ախորժակին հակառակ գործեց, քանի որ ինչպես շտապով զարգանում էիր, այնպես էլ շտապով, անսպասելի, հանկարծակի կանգ առար՝ սոնիները ջարդված սայլի նման...

Ոչ ոքի մտքով էլ չէր անցնում քեզ «զարգացնել», մանավանդ գավառական իշխանությունների, որոնք քո եղածով հմայված չէին բոլորովին, բայց և ճար էլ չունեին խանգարելու: Նրանք էլ չգիտեին, որ իրենց համար էլ ժամանակը Շագրենի կաշի է դարձել և ընդամենը «ուրբաթ–շաբաթվա» պատմություն է առջևում: Բայց դու հասցրել էիր ունենալ այն բոլոր բարեմասնությունները, որով կարող էիր քեզ քաղաք համարել...

Քո Իգդիրի խանութների ցուցատախտակներից՝ «վիվիսկաներից», ոչ բոլորը, բայց շատերը Երևանում նորից իրենց նպատակին ծառայեցին:

Մեր «առևտրական տան» թիթեղյա շրջանակը ուրիշ տախտակների կտորտանքի հետ դարձավ պատշգամբի վերջում, բակի կողմից ծածկապատ, որտեղ հացի պահարանն էր լավաշը պահելու և ավելորդ իրերը տեղավորելու համար և ամեն անգամ հաց բերելուց կարելի էր պարզ կարդալ. «Իսաբեգյան առևտրական տուն», «Իգդիր»:

Թե ինչպես էին անդրադառնում այդ ամենօրյա հիշեցումները այդ առևտրական տան նախկին տիրոջ նյարդային համակարգի վրա, մեզ հայտնի չեղավ, բայց որ ցուցանակը մնաց տեղում մինչև բոլորովին ներկաթափ լինելը, դա պարզ նշանակում էր, որ նրա նյարդերը իր առևտրական տան «փլզումը» ընդունել էին որպես «պատմական անխուսափելիություն», ես կասեի նաև՝ անտարբերությամբ, և դրա վրա մայրս էլ չէր զարմանում՝ տեղյակ լինելով իր «առևտրական» ամուսնու գործունեության շենք ու շնորհքին...

Այդ առևտրական տան «ընդհանուր տնօրենը» ինքը՝ Իսաբեկն է եղել, իսկ «կառավարողը» հայրս՝ Համոն, Հմայակը:

Առևտրական տներ, խանութներ շատ կային Իգդիրում, որոնք և կապ ունեին մեծ քաղաքների առևտրական տների հետ և ստանում, վերավաճառում էին ամեն ինչ՝ սկսած մեխից, չթից, պատրաստի հագուստեղենից, մինչև Կոստրոմայի յուղը տակառներով, Կերչից, Սարատովից խավիար, ընտիր ապխտեղեն, խմիչքներ՝ կոնյակներ, լիկյորներ Ամստերդամի... Մի խոսքով՝ ինչ կարող էր լինել Թիֆլիսում, Բաքվում, Արմավիրում, Ռոստովում և Երևանում հատկապես: Հմայակի խանութն էլ պակասություն չուներ: Բայց Իգդիրի բոլոր խանութները մի կողմ, իսկ Հմայակինը «ուրիշ էր»... Երևի իր նմանը չունեցող, և ո՛չ միայն Իգդիրում: Նրա՝ հորս խանութից էին ամեն ինչ տանում, առնում զինվորականները, չինովնիկների մեծ մասը և ինչպես իրենք

էին ասում՝ «Ամայակ, դորոգոյ, դո պոլուչկի»... այսինքն՝ «նիսյա», որ ամեն խանութ իրեն թույլ չէր տա Իգդիրում: Այդ խանութն էր սպասարկում նաև Իգդիրի մեծամեծ-ներին, Խոռո դադոյի նմաններին ևս... Խանութ էր գալիս նաև Իսաբեկը:

Շաբաթը, երկու շաբաթը մեկ գալիս նստում էր խանութի դիմաց հատուկ իր համար դրված աթոռին և թագբեհ քաշում, բարև վերցնում, տալիս կամ... նաև «ստուգում» հաշիվները, «նիսյաների դավթարը» նայում, շոշափում ստացված ապրանքները, ցուցումներ տալիս՝ գինին, տառեխը պահելու մասին, և լուռ գլուխը տանում–բերում, երբ աչքը ընկնում էր լիկյորների, «Ժորժբորման» թխվածքեղենի, կոնֆետ–շոկոլադների արկղերին, դարակներին, հետո նստում էր «դախլի» մոտ և կարծես ի միջի այլոց ասում.

— Պեր–պեր տըսնանք...— այսինքն՝ բեր տեսնենք: Հմայակը պիտի ցույց տար հորը «նիսյաների դավթարը», որ միասին «քննարկեին»...

Օ՜, և տեղի էր ունենում մի զարմանահրաշ երկխոսություն՝ Իսաբեկյան առևտրական տան մեծի՝ իսկական տիրոջ, և փոքրի՝ հորս միջև, որը լսելուց, եթե ծիծաղելու ընդունակ լինեին խանութում դարակներին դարսված ապրանքները, անկ-յուններում դրված թուջերը, կարասները, պիտի որ ծիծաղից ուշագնաց լինեին...

Եվ այսպես:

Իսաբեկ— Պեր, պեր տսնանք...

Հայրս— Ի՞նչը պերեմ (կարծես չգիտի՝ ինչը պիտի բերի)...

Իսաբեկ— Էլ ի՞նչը կըտ պերես...

Եվ Հմայակը դավթարը, որ դրված էր լինում «դախլի» վրա պատրաստ, հրում էր հոր կողմը՝ ինքը իբրև թե նեղացած մի կողմ նայելով:

Իսաբեկ— Կարթա, կարթա (կարդալ չգիտեր, ինչպես Իգդիրի հալիվորներից շատերը)...

Եվ հայրս կարդում էր՝ շատ բաներ նաև բաց թողնելով, և դա այնքան անշնորհք էր անում (այդպես էլ իր ողջ կյանքում առևտրական լինելով՝ մի փոքր սուտ կամ կեղծիք չկարողացավ ցուցադրել), որ Իսաբեկը գլխի էր ընկնում և գլուխը տխուր դժգոհությամբ տանում–բերում էր...

— Կարթա՛, կարթա՛, ընձմե պախես, իրմե (այսինքն՝ Աստծուց) չես պախի, կտսնա...

Եվ շարունակում էր Հմայակը՝ թուքը դժվարությամբ կուլ տալով, դասը չսո-վորած երեխայի նման հեգելով, կմկմալով...

— Նարնջենց Ենոքին՝ մի ֆունտ շաքար, երկու ֆունտ բրինձ, չեթվեր թութուն...

Իսաբեկ— Տվի՞ր ի փողը...

Հմայակ— Շաքարինը, պրնձինը տվիր ի...

Իսաբեկ— Թութունը ճնջի:— Իսկ թե ինչու, չի ասում: Հայրս լուռ ջնջում է:

Հմայակ— Անուշկա, կես ֆունտ կանֆետ...

Իսաբեկ— Անիշկան վա՞վ ի (այսինքն՝ ո՞վ է):

Հմայակ— Խոռռ դադոյի աղջիկը...

Իսաբեկ— Խացի ծերը իրար չի խասնելի, կամփերտ են գխտվե՞լի... Ճնջի, դար խոր քյալլան...

Այստեղ կարող էր տառեխի թուջը ավելացնել, որ Անուշկան տարել է նաև առանց կշռելու տառեխ, և հայրս, օգտվելով պապիս բարյացակամ վերաբերմունքից, որն արտահայտվեց՝ «խոր քյալլայի» ձևով... ջնջում է նաև տառեխի հաշիվը:

Հմայակ.— Շաբոյենց Ասատուր, մի չիշ Շուստովի կոնյակ, մե ֆունտ կանֆետ, երկու ֆունտ պանիր...

Իսաբեկ— Ի՞նչն ի տվի...

Հմայակ— Պանիրը մնացիր ի...

Իսաբեկ— Պա, պա, պա, կոնյակի խմելի, կինին ծեռ չի տալի... պանիր էլ չունեն տունը, խողը Շաբոյիդ կոտին, որ պանիրը դուքանեն կըտ առնեն... Ճնջիր դար...

Բայց Հմայակը այդ մեկը չի ջնջում:

Հմայակ— Կանայենց Մարտիրոս... Երեք ֆունտ մակարոն, երկու ֆունտ շաքար, երկու չիշ կոնյակ, երկու «բոդլո» սապոն...

Այստեղ Իսաբեկը ակնհայտի անհանգիստ է պահում իրեն, դա երևում է նրա աջ ձեռքի մատների անհանգիստ շարժումներից, որը հետո սովորություն կմնա իր ժառանգներից շատերին: Եվ անհանգստությունն էլ բնական պիտի համարվեր, քանի որ Կանայենք, մանավանդ Մարտիրոսը, հորս խանութից առևտուր անելու սովորություն չուներ, և Իսաբեկը, զսպելով հուզմունքը, «հանգիստ» հարցնում է.

Իսաբեկ— Ի՞նչն ի տվի...

Հմայակ— Սապոնի փողը մնացիր ի...

Իսաբեկ— Ճնջի դար խոր քյալլան... Սապոնով թող իրա անլվա իրեսը լվա, մեկ ի մուռտառ ի մնալու:

Հմայակը չի առարկում, մի բան էլ իր սրտով է, և շարունակում է.

Հմայակ— Ավաքովենց Նիկողոս, հինգ շիշ Շուստովի կոնյակ...

Իսաբեկ— Ելը խմելի՞, ոտն էլ կռին (այսինքն՝ կտրեցին), ելը խմե՞լի...

Հմայակ— Չէ, չի խմելի, կարող է ղոնաղներ ունի... Ինքը էլ չի խմելի:

Իսաբեկ— Լավ, լավ, ինչի՞ տվի:

Հմայակ— Բան չի տվել, ուղարկիր եմ ծառայի խետ, կբերեն, մի մտածի...

Իսաբեկը չի էլ մտահոգված Նիկողոսի տալու–չտալու մասին, լուռ է և սա «էն» դեպքը չէ նրա համար: Լուռ է և մտածմունքը երևի ուրիշ է, և Հմայակն էլ չի խանգարում նրա լռությունը...

Նիկողոսը Իգդիրի միակ և զարմանալի հմուտ գինագործն էր և ոչ միայն Իգդիրում: Իգդիրում չէր կարող չլինել գինագործ, քանի որ գենքի հետ խաղացողները անհամար էին, չհաշված գինվորականների նույնքան ոչ պակաս շատությունը, և Նիկողոսը իր երեք աշակերտների հետ հազիվ էր ծերը ծերին բերում: Նիկողոսը, որ ատամները մշտական սեղմած, խիստ քչախոս, համարյա թե դաժան մարդու համարում ուներ, իր օրում հրազենից կրակած չկար և երևի դա այն խորհուրդն է, որ զարգյարը մատանի չպիտի ունենա իր մատին, կոչկակարը՝ կարգին ոտնաման, իսկ գինագործը չպիտի կրակի... Բացառությունը երևի հորեղբայրս էր՝ ուստաբաշի Ավետիսը, Իսաբեկի ավագ որդին, որ դերձակ էր և հագնվում էր անթերի, ճաշակով, կարծես կենդանի ապացույց իր նույնքան անթերի արհեստի:

Նիկողոսը գենքի «լեզուն» ավելի լավ էր հասկանում, քան իր բոլոր պատվիրատուները: Եվ կարող էր ինքն էլ՝ գերմանացի Մոուզերի նման նոր, ավելի սարսափելի գենքի տեսակ հնարել, քան այդ հռչակավոր «տասնոցը»... և, սակայն, ինչպես արդեն գիտենք, մի պարզ իրավիճակում մնացել էր առանց ձախ ոտքի:

Հմայակը երևի դեռ շարունակեր իր ընթերցանությունը, բայց Իսաբեկի հոգնած գլուխը մի ուսին էր թեքվել, և բեղի ծայրը վեր ու վար էր անում...

Եվ այսպես՝ ունևորի պարտը ջնջի, չունևորները՝ ջնջի... Որ ի՜նչ, որ ինչ, վերջը ինչ պիտի լիներ, եթե... երկար տևեր այդ «Իգդիր» հորջորջված առևտրական տան «գալիքը», որը իսկապես տխուր էր լինելու, բայց դեռ ընդամենը զավեշտական էր:

Խոռռ դադոյի Անուշկայի տարած տառեխի հաշիվը մոռացության տալը պատահական չէր: Այդպես շատ էր «խորամանկում» իր երիցս միամիտ հորը Հմայակ հայրս, գիտակցելով, սակայն, որ «հորը խաբելը» լավ բան չի... Բայց ի՞նչ աներ, արդեն ի սկզբանե՝ այդ «առևտրական տան» հիմնադրման օրից, այդ «ոճով» էր առևտուրը գնում: Անուշկայի տարած տառեխը, ինչ էր՝ համեմատած երկու քթոց տառեխի հետ, որ իր փեսան՝ Նունե քրոջ ամուսին Նիկողոսն էր վերցրել «վերավաճառելու», իսկ տեղը «դավթարում» ընդամենը մի հարցական էր դրված... Քանի որ Նունե հորաքույրը հայտնել էր իր փոքր եղբորը, որ տառեխը «շրջանառություն» չի ունեցել, «կերվել է»:

Նիկողոսը որպեսզի հարևաններին ապացույցի տառեխի արտակարգ և համեղ ճուկ լինելու փաստը, վաղ առավոտից Նունե հորաքրոջս հետ զբաղված են եղել տառեխը տարբեր «վիճակներում» հարևանների հետ համտես անելով՝ խորովելով կրակի վրա, թոնրի կողերին խորովելով, թավայի մեջ ճվով տապակած՝ նախաճաշին, ճաշին, ընթրիքին և այդպես ոչ լրիվ երեք օր...

Է՛, ի՞նչ պիտի աներ Հմայակը, երբ ինքն էլ գիտեր, որ այդ «Վանա տառեխ» կոչեցյալ ճուկը զարմանահրաշ ուտելիք է, մանավանդ թոնրի կողին կպցրած... Գիտեր նաև իր փեսա Նիկողոսի՝ ապացույցի կարիք չունեցող ախոր-ժակի մասին և իր քրոջ բազմանդամ ընտանիքի, որոնք բոլորն էլ առողջ, աշխույժ երեխաներ էին, մի քիչ էլ՝ իրենց հորը քաշած, և առանց հարևանների էլ կարող էին... Մի խոսքով՝ Նիկողոսը, որ իր ինժեներական բարձր կրթությամբ դեռ մշտա-կան զբաղմունք չի ունեցել, համոզվել է, որ առևտուրը իր գործը չէ, մանավանդ «կերվող»... ապրանքը...

Միակ համառողը շարունակել է մնալ Հմայակը: Բայց դա համառություն չէր:

Հմայակը մինչև գաղթելու օրը, երբ իր խանութի ծալովի փեղկերը բացեց, ծածկեց և մեծ կողպեքի բանալին երկու անգամ պտտեց՝ մտքովն էլ չէր անցել, որ ինքը... «սխալ է» առևտուր անում:

Նա Արշալույս քեռու բացատրությունից գիտեր, որ ինքը պիտի «ինչ–որ բաներ» անի, որ «շահույթը»... զգալի լինի, գոնե այնքան, որքանից պակաս լինելու դեպքում ոչ մի իմաստ չունի «պար մտնելը», առևտուր անելը:

Պիտի խորամանկեր, խաբեր... Իսկ միակ մարդը, որին իրեն հաջողվում էր... խորամանկել, մենք տեսանք՝ ով էր, իրենից երիցս միամիտ իր հայրն էր՝ Իսաբեկը:

Բայց այդ խանութն էլ էր պետք Իգդիրին, գուցե և ավելի, քան մնացած խանութները, վաճառատները:

Առանց այդ «Իգդիր» առևտրական տան, ինչքան էլ որ չակերտների մեջ լինի, շատ վատ կզգային ոչ միայն Խոռո դադոն ու իր նմանները, կամ իր փեսա Նիկողոսը, այլև ինքը, Իգդիրի պրիստավը անգամ, որ իր տարածի հաշիվը փակում էր՝ «Օտ պոլուչկի, դո պոլուչկի»...

Այդպես է եղել կարծեմ, և դու գոնե համաձայն պիտի լինես ինձ հետ, որ Հմայակ քաղաքացիդ ուրիշ կերպ չէր կարող վարվել, «ուրիշ կերպ» սխալ կլիներ, սիրելի՛դ իմ Իգդիր, և ոչ միայն համաձայն, այլև գոհ պիտի լինես, որ անունդ այդ-պիսի պատվի էր արժանացրել Հմայակը...

— Ես, սիրելի՛ս, չեմ ուզում հասկանալ և ոչ էլ բաժանում եմ քո զարմանքը կամ հեգնանքը պապիդ և հորդ նկատմամբ... Ավելին՝ անպարկեշտ եմ համարում, եթե կուզես իմանալ... Կուզեի՞ր, որ նրանք էլ «Մսենց» Այվազենց Գեղամի նման առևտուր անեին՝ խաբելով, խարդախելով...

Եթե քո քեռի (լուս գա վրան) Արշալույսը քաշվելով, ամաչելով կշտամբում էր հորդ, մի քիչ էլ քթի տակ ծիծաղում հորդ միամտությունների վրա, նա գոնե մի բան հասկանում էր առևտրից, իսկ դու...

— Հմայակի ինչին էր պետք շահը, հարստությունը... Քո Բանավշա տատը մենակ մի տուն կպահեր... Իսկ Իսաբեկը, Իսաբեկի այգին... Դու Իսաբեկին այգում պիտի տեսնեիր, որ իմանայիր նրա շենք ու շնորհքը...

— Ճիշտ է, նրա այգին Նարնջոց Ենոքի այգու նման չէր, ոչ էլ Բաղիլենց մեծ այգու, որ նույնպես հայտնի էր Իգդիրում, բայց դե Իսաբեկի այգու բերքը ոչ ոք չուներ ողջ Իգդիրում: Նրան օգնել կամեցողները միայն խանգարել կարող էին և չէին միջամտում, չէր թողնում մոտենան: Նա ինքն էր որոշողը այգու թաղելու, բացելու ժամկետները, թմբերի հաստությունն ու խորությունը, ջրելու, էտելու ժամանակը և մանավանդ էտելը, որ ոչ ոքի չէին վստահում: Մնացած գործերի համար վարձվում էին գործակալներ, և նրանք էլ՝ ջոկովի: Ինքն էլ որոշում էր քաղի ժամանակը, օրը: Եվ երբ ասում էր «էլ չճրեք բաղը», նշանակում էր, որ 17–20 օրից այգին պիտի քաղվի, իսկ այդ 20 օրում բաղը պիտի «քաղցրանար»... Ոչ այսօրվա ձեր այգի պահողների նման, որ քաղելուց առաջ մի լավ ջրում են, որ «ծանրանա»... Հասկանում էր «վազի լեզուն» և խոսում էր հետները, ինչպես շնչավորի հետ:

Էտելուց կբռներ երկարած մովուզի ճյուղն ու կասեր. «Ի՞նչ ես հոռացի, մկը կկռեմ անգյաճըտ՝ խելքի կիկյաս...»: Եվ մովուզի վազը աչանը հորթի գլխից մեծ ճիթերով կկախվեր՝ հաչանները ջարդելով... Հետո կդառնար դեղձի ծառին, որ կարգին բերք չէր տալիս, ու բեղի տակ ժպտալով՝ կասեր. «Հը՞, զայլադ կյնացիրի ապրելուց...»: Հաչաբաչի կախանի վազը էտելուց կասեր. «Դե՛, քեզի տանամ, ընցած տարվա նման օյինբազություն չլի, թե չէ կփոշմանես, հա՛...»,— ուրեմն բերք չի տվել կարգին: Իսկ խարջու թմբերը մտնելուց խոժոռ հոնքերը կբացվեին, աջ ու ձախ կնայեր ինչպես զորապետը իր փորձառու զինվորներին ու կասեր. «Տո՛, որ տուք չլեք, բաղն ումնի՞ պետքը»... Եվ իսկապես առանց խարջի խաղողի այգի իմաստ չունի պահել, հաստատ որ չունի:

Իսկ տուն գնալուց կմոտենար «դավրեշին», ծեր սև ձիուն, կազատեր ոտները բխովից, կմաժեր կապի տեղերը և կասեր. «Տնաշե՛ն, խոտը քյոնը չի, խո փորը քյոննի, մկա

կպատռվես ախբը»... Հետո սանձը բռնած կքայլեր հետը, որ ձին թեթևանա, միանգամից չէր նստի ու կշարունակեր զրույցը ձիու հետ, որը գլխով հավանություն կտար տիրոջ ասածներին՝ միաժամանակ փնչացնելով ու քշելով աներես մլակներին:

— Այդպես էր պապդ, մարդկանց հետ քչախոս, լսողի դերում էր մնում, բայց և տանել չէր կարող շատախոս մարդկանց: Ձեր փեսա Վլասը որ սկսում էր բլբլոցը, պապդ կասեր. «Հալլա հա՜, ելը նստավ ձին»: Բայց և տեղն եկած տեղին մի բան կասեր և ո՛չ զրույցը «չաղացնելու» համար. կասեր մարդու, որ դրա կարիքն ուներ, և ոչ իր անունից, այլ հոր՝ Յորդուխանի անունից՝ «հեղինակային» իրավունքը պահպանելով և ամեն անգամ նրան հիշելով, որ «օղորմածիկը կասեր»...

— Օղորմածիկը կասեր՝ մե օրվա խացի տերը խացեն կվախենա...

Մի ուրիշին, որ երևի կնոջից է գանգատվել, ասել է՝ հանգստացնելով երևի. «Ամենադուզ կնիկը մանգյաղի չափ ծռությունը կունենա...», և երևի մտքում ծիծաղել լսողի վրա, քանի որ իր Բանավշայի վրա իր ասածը չէր տարածվի: Եվ այդպես՝ հնարելով, թե իսկապես «Յուրդուխանի ասածով» կասեր՝ առանց բացատրության, որ լսողը ինքը փիքր անի իր կնոջ «մանգաղի չափ» ծռությունները շտկելու մասին... Իսկ մի ուրիշին, ավելի երիտասարդին, երևի, կհիշեցնի, որ «Ով ծառ չի տնկի, իրա պախի (բահի) խովին կնստի...»: Այսինքն՝ իր բահի հովին կնստի...

Այդպես է մասնակցել խոսք ու զրույցին Իսաբեկը. կատակի ձևով, բեղի տակ աննկատ հեգնանքով ու առանց կոմենտարների:

Պապս՝ Իսաբեկը՝ Յորդուխանի երեք տղաներից մեծը, երևի թե իմացած է եղել մարդու գոյի հեղհեղուկ, բայց թախծոտ երջանկության խորհուրդը, որ տեսել է արևի, կապույտ երկնքի, Զոռի սառցահամ աղբյուրների, ծառի, խաղողի վազի, Բանավշայի ամոթխած ժպիտի մեջ, իր դավրեշ ձիու սևակարմիր թավշապատ կողերը շոյելուց՝ իր կոշտացած ափով, և իր բեշմեթի լայն գրպաններում հոտավետ շամամ ու խնձոր լցնելով, որ բաժանի մեկ–մեկ հարսին, նախշուն թոռներին...

Օ՜, Իսաբեկը այն երջանիկներից է եղել մարդկանց մեջ, որոնք ապրել են բնության բազմախորհուրդ իմաստությամբ, նրա մասնիկը դարձած, փշատենու, ընկուզենու, ծիրանենու նման, դավրեշի, մեր Ծաղիկ կովի, կաղամախիների վրա ապրող արագիլների նման... Եվ կարող էր քթոցի, եղանի, գոմի դռան հետ էլ խոսելու բան գտնել: Նրա համար մեկ էին փոցխն էլ, մարդն էլ: Եվ երբ նկատի պատին տխուր հենված փոցխը, մի քանի ատամները թափված, նախ կգուշակի, որ իր Հմայակ տղան է երևի «գործ» արել պարտեզում և բեղի տակ ժպտալով կասի փոցխին.

— Էտ ինչի՞ քյո հալը, ատամներդ իշխո քյաչալ Կյասպարի ատամներն են տարցի, էդ ե՞րփ «փեկրատացար»...— և կժպտա խորամանկ, և բեղի տակից կփայլեն իր սադափի նման շարված խոշոր ատամները, որոնցից ոչ մեկը դեռ չունի փչացած...

Այդպիսին էր Իսաբեկը, այդպիսին էին իր տարիքի «թարս նայողները»՝ բոլորը ծիրանենու, ընկուզենու պես արմատներով մխրճված հողի մեջ, ճյուղերը փռած...

* * *

Որ Հմայակ հայրս Իգդիրի առևտրականների մեջ «եզակի երևույթ» էր, դրանում առաջին հերթին համոզված էր քեռիս, Արշալույս քեռիս, իր քրոջը այդ «եզակի» մարդուն տվողը: Իսկ թե ինչ էին մտածում այդ «առևտրական տան» մասին իգդիրցիք, դա կարևոր չէ, քանի որ Խոռո դադոն միայն բավական էր, որ ողջ Իգդիրը իմանար, որ Հմայակը ամենաքիչը... պիտի բարձրյալի կողքը նստեր: Եվ որքանով էլ որ Խոռո դադոն կողմնապահ լիներ «որոշ նկատառումներով», սակայն չի կարելի ժխտել, որ նա՝ Հմայակը, իսկապես եզակի երևույթ էր առևտրի ասպարեզում: Իսկ եզակի անձանց, եթե կարելի է ընդօրինակել, բայց լավ կլինի ձեռնպահ մնալ, մանավանդ առևտրում: Բայց կյանքը առանց կրկնությունների, մինչև անգամ անհասանելի թվացող «եզակիների» չի կարող շարունակվել:

Իր ամենասիրելի զարմիկը՝ Վահագնը՝ նույն Եփրեմ Կակոյի միջնեկ որդին, որ երկրորդ անձն էր Հմայակի խանութում, և բացի քեռուցս, նա էլ էր օգնում Հմայակին, գոնե «նիսյանների դավթարը» թերևացնելու գործում, մի օր՝ օրը ցերեկով, պիտի ապացուցի, և վերջնական, հաստատ, որ այդ ազգի մարդիկ և առևտուրը... շատ են իրարից հեռու եղել և այնքան, ինչքան լուսինը Իգդիրից:

Երևանում, դեռ նոր գաղթած, իր նման խելոք մի նորքեցի ընկերոջ հետ մտածում են... մսի առևտրով զբաղվել: Մսի, որի «տերերից» առաջինները իրենց ազգանունները փոխած իր հորեղբոր որդիներն էին, Այվազենք, «Մսենց» եղբայրները...

Այդ նորքեցու հետ միասին, որը ոչինչ կորցնելիք չուներ, վերցնում են Վահագնի կնոջ օժիտ բերած մի քանի ոսկիները և... (մտածելու ժամանակ չի մնում, որոշած են եղել) վարձում են Երևանի կենտրոնում (ոչ մսի շուկայում) «Ցարսկի» փողոցի վրա մի խանութ: Մի առավոտ եզդիներից գնում են ոչ ավել, ոչ պակաս մի 10–15 ոչխար և կեսից ավելին մորթելով՝ Երևանի տոլմա ու բոզբաշ ուտողների առաջ մսավաճառ Վահագնը բացում է խանութի դռները: Ընտիր, ջոկած ոչխարներ, գառներ, լիքը, չաղլիկ դմակներով, նոր մորթած, կեռերից կախված, քար ու կշեռքը դրած, ինքն ու նորքեցին «դախլի» հետևը, սպիտակ խալաթ հագած կանգնած սպասում են...

Առավոտն անցնում է... Կեսօրն է մոտենում... Միս առնող չկա: Ճանճերը շատանում են, ճանճ քշելով են զբաղվում, միս առնող չկա: Մի երկու շփոթված, տեղը կորցրած երևանցիք կասկածանքով մտնում, դուրս են գալիս, մի քանիսն էլ մի բան վերցնում են և վերջ:

Ընդամենը երկու օր է տևում Հմայակի անմիջական «աշակերտի վաճառակա-նական գործունեությունը»... Երրորդ օրը տանում են չորացած, ճանճածերտի մեջ կորած, Երևանի շոգից հոտել սկսող մսերը և հանձնում սապոնի գործարան, Զառատի խանի վանեցիներին:

* * *

Հմայակի խանությունը, բացի իր առևտրական գործունեությունից, իր ընկերների համար ծառայում էր նաև որպես հավաքատեղի և անհամեմատ հաջողակ: Քեռիս չէր սիրում այդ անժամանակ ներխուժումները՝ այն համարելով մորեխի պարսից վտան-գավոր: Իսկ Իսաբեկը...

Բշտում, ամոթանք էր տալիս, բայց արգելել բոլորովին չէր կարող, նրանք էլ գիտեին՝ երբ գան, որ Իսաբեկը չլինի խանությունում:

Մի անգամ Իսաբեկին չտեսնելով խանության մթնում նստած՝ ներս են խուժում աղմուկ–ծիծաղով՝ չնկատելով նաև Հմայակի զգուշացնող նշանները... Իսաբեկը հան-գիստ, առանց ձայնը բարձրացնելու, ասում է.

— Յարեք, յարեք, իսկը վախտին եք եկի... Աշտարակեն պերած կինու բոշկան հլը չենք պացի, հրամեցեք, հրամեցեք... Հմայա՛կ, սուփրան պաց, ի՞նչ ես փետացի...

Իսկ Հմայակի ընկերները բոլորը համարյա բարեկամ, հարազատ էին, «յադ» մարդ չկար նրանց խմբում, և Իսաբեկը ինչքան էլ փնթփնթար, մի տեղ, երևի, համա-րում էր դա չարյաց փոքրագույնը, քանի որ Հմայակը կարող էր նաև շատ սխալվել ընկերների ընտրության մեջ՝ լինելով անհույս, անուղղելի, միամիտ, ի վերջո՝ ուրիշնե-րի նման կարող էր Կուկուլի կազինոն այցելել, թուղթ խաղալ և կամ շատերի նման «կոմիտեական» դառնար... Զէ, Իսաբեկը էնքան էլ դժգոհ չէր իր տղայից և իր խստու-թյունն էլ ըստ կարգի էր, «համենայն դեպս», վասն սթափեցման: Եվ իր բշտոցները, խստությունը ամփոփում էր խրատական ոճով.

— Տնաշեննե՛ր, տուն կա, տեղ կա, դուքանը խո Կուկուլի կլուբը չի՞...

Այո՛, Իսաբեկը ինքն էլ համոզված էր, որ դուքանը Կուկուլի կլուբը չէ և... տարօրինակ չպիտի համարել, որ ես էլ նույն խոսքերով եմ դիմել (բավականին անպատշաճ և ներողություն եմ խնդրում, սիրելի՛ Իգդիր) քո հարգարժան քաղաքա-ցիներին իրենց «տարաժամ» այցելությունների համար, որոնք տունս դարձրել են հորս խանությունը, իրենց հավաքատեղին...

Հմայակի ընկերները, նույն այդ խումբը լրիվ կազմով լինում էին նաև մեր տանը, տոներին, ծնունդներին, Նոր տարվա լրիվ 13 օրը... Ամեն առիթով, որ մեր տանը երբեք պակաս չէր լինում:

Առանձին հրավերների, որտեղ ներկա էին լինում բարձրաստիճան զինվորական սպաներ, երևելի իգդիրցիք՝ նույն Խաչատուր աղան, Գարեգին աղան, Ջհանգիր աղան (եթե Իգդիրում էր) և շատ ուրիշներ, ինքը՝ Վլասը, հերթական ճառ (ռուսերեն) պատրաստած, նույն տեր Մեսրոպը, Ավետիս հորեղբայրը, որ թամադան պիտի լիներ, իսկ եթե չկար՝ տեր Մեսրոպը: Նստում էին մեր ընդարձակ ճաշասրահում՝ «զալում», որի նմանը ամեն իրեն հարգող իգդիրցու տանը կից պիտի լիներ՝ հարսանիքների, տոն ու տոնախմբությունների համար: Խոսում էին հայերեն ու ռուսերեն, և եթե պետք էր լինում, նաև քրդերեն...

Նման օրերին Հմայակի ընկերները և՛ հյուր էին, և՛ ամեն ինչը կարգադրող, անող: Բոլորը լինում էին ոտքի վրա, ինչպես ինքը՝ Հմայակը: Նրանց գործին չէր խառնվում հորեղբայր Ավետիսը, տան մեծի իրավունքով՝ Իսաբեկից հետո, և հյուրերին զբաղեցնողը ինքն էր, ուստաբաշին. և ինչ շուք ու փայլով, արժանապատվությամբ, աննկատ, առանց ճիգ ու ջանքի...

Ի՜նչ աստվածային պարգև է բնատուր խելք ու շնորհքը: Ոչ մի բարձրագույն ուսում ու կրթություն մարդուն չեն կարող դարձնել իմաստուն, եթե ի վերուստ չկա:

Իմ անունը, որ մեր ցեղում «եզակի» էր, այսինքն՝ ոչ հայկական, արդյունք է եղել նման տոնախմբության ներկաներից մեկի՝ ռուս սպա Նևերտի, որը և խնդրել է ինձ կոչել ի հիշատակ ինչ–որ կռվում հերոսաբար զոհված իր եղբոր... չնայած տեր Մեսրոպի ակնհայտ դժկամության, որ խառնվում են իր ծխի գործերին:

— Դժգոհելու ի՞նչ ունես, անուն է, էլի, ինչո՞վ է պակաս քաղաքացիներիս անուններից, որոնց կեսը պարսկական են կամ եսիմ ինչ...

Ճիշտ ես, ես էլ շուտ վարժվեցի, մանավանդ երբ կրճատում էին՝ Էդո, Էդիկ: Իսկ ահա պատրաստի հագուստեղենի խանութի տերը՝ Արզումանենց Տիգրանը, ուր տարել էին ինձ «մատրոսկա» հագցնելու, վերցրեց անունս՝ իգդիրացրեց, շորը փաթաթեց, տվեց ձեռքս ու ասաց. «Պարով մաշես, Էդո՛ւյդ...»:

— Դե՛, անունների նկատմամբ ինչ ուզեին կանեին իգդիրցիք, հենց իմը, իբր թե շատ երկար է, կրճատել, չինել են Իդրը...

Եվ առաջին զարմացողներից, որքանով էլ տարօրինակ լինի, տեր Մեսրոպի ավագ որդին՝ Արշավիրն է լինում, որ Գերմանիայից վերադարձած՝ ճեմարանում դասախոս էր: Իգդիր է գալիս արձակուրդներին և առաջին պատահած ծանոթի հետ ողջագուրվելուց հետո լսում է ծանոթի պատասխան խոսքը.

— Ա՜յ պարով ես էկի, խազար պարին, էկիր ես որ Իդը՞ր...

Ճեմարանի ջահել դասախոսը գլխի է ընկել, որ լսածը հավանաբար նշանակեր պիտի. «Բարո՛վ եք եկել, հազար բարին, եկել եք Իգդի՞ր նորից...»:

Իսկ տանը նորից պիտի դժվար կացության մեջ լինի, երբ միամտորեն հորը կհայտնի իր «գիտական տարակուսանքը»... Իգդիրի բարբառի կոպտության, չափից ավելի բաղաձայններ ունենալու մասին...

— Ինչի՞ է նման՝ մկը կյիկյամ... կամ յուր ես երթալի... Մի՞թե դժվար է ասել. հիմի կգամ, կամ ինչ բանաստեղծություն կարելի է...

Տեր Մեսրոպը, որ աշխարհաբար գիտեր և գրաբար էլ (գիտենք նաև դեպի «ուսյալ զավակները» նրա ունեցած «թուլությունը»)՝ քարացած, ապշած իր «ուսյալին» է նայում և իր տակնուվրա ելած խռովքը, վիրավորանքը զսպելով, երկար լուռ մնալուց հետո ուժ է գտնում՝ ասելու.

— Դե, բարբառ է, էլի, բոլոր բարբառների նման... Ի՞նչն է զարմացրել քեզ, երբ դեռ պատանի՝ արդեն բլբլացնում էիր այդ բարբառով, բաղաձայնները չէին խանգարում...

Սխալվել է ճեմարանի ջահել դասախոսը, բայց արդեն ուշ էր:

Տեր Մեսրոպի խոսքերը իր քարոզների նման չէին: Խոսում էր գլուխը կախ, տխուր, շատ տխուր...

— Օ՜, կլինի ժամանակ, որ կփնտրես ու չես գտնի մեկին, որ քեզ ասի. «Ա՜յ պարով, խազար պարին ես էկի»...

Կարծես զուշակելով՝ ինքն իր հետ խոսում էր տղայի խոսքից փլված քահանան...

Զես զգում արդեն այդ «կոպիտ» բարբառի համ ու հոտը, մեր պարտեզի սուսամբարի բույրը, նունուֆարների նախշունությունը... Ի՜նչ զվարթ ջահելություն կա մեջը, ի՜նչ իմաստ, երբվանի՞ց են այդպես խոսում և այդքան տարբեր՝ Վանում, Տարոնում, Շիրակում... Արմատով նույնն են, բայց հին են, ինչպես հողը, ջուրը, արևը, երկնքի կապույտը... Դա հարստություն է, բեռներով թանկագին քարեր, մեկը մյուսից նախշուն, ծիածանի գույների նման տարբեր, մի գոտի են կապում երկնքում... Բանաստեղծություն էլ կգրվի... Մոռացել ես երևի... Կոմիտաս վարդապետն էր եկել, դեռ չկայիր, Գերմանիայում էիր: Մի լսեի՜ր... եկել երգեր էր հավաքում Կողբում, Իգդիրում, երգեց մեզ համար մեր երգերը...

Եվ երգում է, ինքն էլ՝ խուլ, խզված ձայնով՝ ուրախ երգը տխրեցնելով, ձգելով և շատ անուշ...

Տոլմա կեփեմ այենքով,
Ջա՜ն, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛...

Սխալվել էր որդին, սխալվել, բայց գոհ էր ու ցնցված անհուն հմայքից վերացած... Ուզում էր չոքել գետին, հոր ծնկները գրկել, ձեռքը համբուրել:

— Եվ ինչպե՞ս կարդացիր Խաչատուրի «Վերքը» մի գիշերվա մեջ, մինչև լուսաբաց... Հաշվեցի՞ր բաղաձայնները, բարբառով է գրված, չէ՞, էն էլ ի՜նչ բարբառով, ով կկարդար էդ գիրքը, եթե...— չի շարունակում երևի, որ կոպիտ բան չասի...— Դեռ կհիշես նրա խոսքերը լեզվի, ժողովրդի լեզվի մասին, օ՜, կհիշես...

Քանի՜ ճեմարաններ արժեն նրա «Վերքը»՝ չես հաշվի: Դու մեղավոր չես, մարդուս անգիտությունը ավելի խորն է արմատավորված, քան իմացությունը... Իմացությունը արմատ չունի, սահման էլ չունի...

* * *

Բայց, սիրելի՜ս, ախար իմ «օտարացումը» անունիս այլափոխությամբ միայն չի վերջանում:

1914 թվի նոյեմբերի 8–ին քո քաղաքացիների օր օրի վրա աճող քանակը ավելացնելու պատիվն ունենալուց մի երկու–երեք ամիս դեռ չանցած՝ ինձ, պարոն Ասլանյանի կարգադրության համաձայն, մորս կաթից կտրում են նրա հիվանդ լինելու պատճառով և իմ արդեն բացված ախորժակը բավարարելու համար ստնտու են ճարում, որ հեռու էլ չէր ապրում:

Այդ տիկինը, ծագումով գերմանուհի, իր ամուսնու՝ Նևերտի հետ, որ ռուսական սպա լինելով՝ լեհական ծագում ուներ, ապրում էին իմ «բիծլոյի» տանը, նրանց կենվորն էին, մեր տանը՝ կպած: Այդ բարի գերմանուհին, որ դեռ կերակրում էր իր երկու տարեկան տղային և կարող էր ինձ նման մի երկուսին էլ կերակրել, սիրով հանձն է առնում բավարարելու, ինչպես ասացի՝ արդեն բացված ախորժակս... Տեսնո՞ւմ ես, սիրելի՜ս, սխալներն էլ են շարունակություն ունենում և իմ «օտարացումը» կաթի հետ է սկսվել...

— Այդ երեք ամսվա կերածն էլ բավական է, որ դու քեզ համարես «Արազի ջուրը խմած»... Եվ հետո նրա՝ այդ գերմանուհու մեջ ի՜նչ գերմանուհի էր մնացել, երբ նրա երկու տարեկան տղան «ընտիր իգդիրերենով» էր արդեն խոսում իրենց «դենչիկ» Խրաբրիայի հետ, երբ իր... «պետքը» վերջացնելուց հետո, «գարշոկի» վրայից նրան էր դիմում. «Խրաբրիա, պատրաստիր եմ»...

Եվ երբ Խրաբրիան աչքերն էր ճպճպացնում չհասկանալով, նոր միայն կրկնում էր ռուսերենով. «Խրաբրիա, հոտովո»:

Բա՜, սիրելի՜ս, սպայի տղա էր, բայց իգդիրավարի հրամայել գիտեր:

* * *

Տեր Մեսրոպը մինչև քահանա ձեռնադրվելը հայոց լեզու, կրոն և աշխարհագրություն է դասավանդել Իգդիրի ծխական դպրոցում, և մի երկու տարի էլ Նոր Բայազետում՝ «Քյավառում», որտեղ և ծնվել էր իր ավագ որդին՝ ճեմարանի դասախոսը: Ուղղամիտ էր, բոլոր ընդունված չափերից ավելի, ասելիքը, մտածածը ուղիղ ճակատին ասող, որի համար իրեն հարգում էին: Եվ նրա անունից էլ դեռ «անկեղծանալով»՝ կարող էին իրար շշպռել...

— Տո, որ տեր Մեսրոպը ըլեր, կասեր, չէ՞, որ կյող ես...

Իսկ դիմացինն էլ, իրեն չկորցնելով, կասեր.

— Տեր Մեսրոպը քեզիկ էլ կասեր, որ պիճ ես...

Առավոտյան ժամերգությունների հետ այնքան գլուխ չուներ, քանի որ առավոտյան բարեպաշտները պառավներ, կանայք էին, և թողնում էր հաճախ տիրացուին զբաղվելու նրանցով, իսկ երեկոյան ժամերգությունների տերն ինքն էր, մանավանդ տոնական օրերին, Նոր տարուն, անվանակոչության օրերին, զատիկներին: Այդպիսի օրերին Իգդիրմավայի Սուրբ Գևորգ եկեղեցու երկու զուգահեռ նեֆերը լիքն էին լինում ոչ միայն Իգդիրմավայի իր ծխի, այլև Իգդիրի տարբեր փողոցների բնակիչներով:

Կանգնում էին իգդիրցիք փափախները կամ գլխարկները («շլավկաները») թևերի տակ, ձեռքերը պորտերին՝ իրար վրա, և սպասում էին տեր Մեսրոպի ցուցամատի տնկվելուն, որ ավետելու էր ուշադրություն և լռություն:

Եվ լսում էին տարօրինակ, Սուրբ գրքի հետ կապ չունեցող «քարոզներ», որ ավելի ուղղակի իրենց էին վերաբերում: Եվ քրտնամխած, դժգոհ, փնթփնթալով, բամբասելով տուն էին գնում, երբ քարոզը իրենց սպասածից էլ ավելի զարմանալի, ապշեցուցիչ էր լինում: Եվ այդ դեպքերում ասում էին իրար. «Ելը տնգիրի»... — այսինքն՝ տեր Մեսրոպը լուրջ չի: Իսկ տեր Մեսրոպը լուրջը՝ լուրջ էր լինում, բայց առանց «տնգելու» ժամերգություն չէր անում: Վասն ոգևորության:

Եվ նման օրերից մի օր, երբ Մեսրոպների, Սահակների և այլոց անվանակոչության օրն է լինում, և խոսքը ու քարոզը, հասկանալի է, որ կլավ Սարգիսենց Մեսրոպի մասին չէր լինելու կամ իրեն՝ տեր Հոր, այլ պատշաճին Մեսրոպ Մաշտոցի, քարոզն սկսում է... հարցերով և չսպասելով պատասխանի՝ ինքն էլ պատասխանում:

— Ո՞վ եք դուք...

Գուցե մի սրամիտ իգդիրցի, «էնքան էլ լուրջ» չլինելով կամ սրամիտներից սրամիտը, որդուն մի բան ասեր... Նա էլ էր պապանձվել, ոչ մի ծպտուն: Սպասում են, որ ինքը գլուխ հանի իր խորամանկ հարցից, և «դառը փորձից» խրատված, չեն շտապում և ո՞ւր շտապեն: Տանը իրենց սպասող սեղանը չի փախչի և իրենց համար նորություն չի, որ հայ են և ոչ միայն սովորական հայ, ավելի հայ, քան ինքը՝ Էջմիածնում նստած Գևորգ կաթողիկոսը, եթե բանը դրան հասավ...

Իսկ տեր Մեսրոպն էլ գիտեր այսպես ասած «իր առաջիտորիան», իսկ առաջիտորիան պատահում էր, որ ուրիշ էր լինում, երբ, ասենք, Իգդիրի երևելի քաղաքացիներից մեկը–երկուսը ներկա էին լինում՝ խոսքը պաշտոնական ընթացքից չէր շեղում, իսկ հաճախ նրանց էլ նկատի չէր ունենում, և ներկայացումը դառնում էր ավելի «բովանդակալի»... Եվ հիմա ահա նախ կապացուցի, կհամոզի, որ հայ չեն եղել, այլ կռապաշտ, հեթանոս՝ Տրդատ թագավորի օրինակով, որը եղել է կնամոլ, որկրամոլ և խմիչքի նկատմամբ իր կոչմանը ոչ սազական՝ թուլամորթ... Կապացուցի՝ մատը սրա կամ նրա կողմը ուղղելով, որոնց ով լինելը լավ գիտի, և կհայտնի իր ափսոսանքը, որ չունի... Լուսավորչի աստվածային շնորհքը, որ կարողանա ներկաների վրա փորձել, այսինքն՝ խոզ դարձնել և կհամոզի, որ միայն ու միայն Լուսավորչի պատվիրանները խոնարհությամբ պահպանելով կարող են պատիվ ունենալ իրենց հայ համարելու... Եվ ձայնին ավելի ազդեցիկ շեշտ տալով՝ կանցնի պատվիրանները թվելուն, չնայած խուլ աղմուկին, որ չէր կարող չլինել... Կանայք վախվորած կխաչակնքեն երեսները, իսկ քրտնմխած իգդիրցիք հսկայական թաշկինակներով կսրբեն դեմքից, վզից ծորացող քրտինքը և կհաստատեն իրար, որ տեր Մեսրոպը «չատի տնգի» և քարոզն էլ Սահակների, Վարդանների հետ ոչ մի կապ չունի... Բայց ի՞նչ կարող էին անել, բացի թողնել հեռանալուց, որ չէին համարձակվում, և հետո՝ ուզում էին լսել Լուսավորչի «պատգամները», որ մի անգամ չէին լսել, և որոնք երբեք, ոչ մի քարոզի ժամանակ իրար նման չէին լինում... Եվ հետո ո՛ւր շտապեին: Տեր Մեսրոպը լավ գիտեր իր ծուխը... Սպասում է, իր սև, տափակ, թիակի նման մորուքը շոյելով, իր ասածի



տպավորությունից գոհ լինելը չթաքցնելով, որ հանդարտվեն: Եվ հանդարտվում են մինչև ցուցամատի բարձրանալը:

Եվ Սուրբ գիրքը իբր թե թարգմանելով՝ խոսում է՝ թերթելով ձեռքի Ավետարանը...

— Եվ ասեմ ձեզ, իմ սիրեցյա՛լ ժողովուրդ, որ չապրեք հոռի, սանձազերծ, ձեր հարևանների նման բազմակնությամբ, խառնածիններ ժառանգելով և գտնեք և տիրանաք ձեր կեսին, որի հետ ամբողջանաք, կազմեք ընտանիք, օջախ, որ ճանաչեք ձեր երեխաներին, և նրանք էլ՝ ձեզ:

— Ուտելու, խմելու մեջ լինեք չափավոր, սակավապետ, պաս պահեք, ձմեռվա ամիսներին անասուններ չկոտորեք և չափավոր գործածեք ոգելից ըմպելիքներ... որ չթավալվեք ցեխի մեջ, խոզի նման՝ փողոցում, անցյալ տարվա պրիստավի նման, որ ամոթից թողեց փախավ Իգդիրից...

Այստեղ ներկաների խոժոռված սփաթները մեղմանում են, փոխվում ժպիտի, մանավանդ որ «ոգելից ըմպելիքների» օրինակը այս անգամ իրենց չէր վերաբերում:

— Արգելում եմ ամեն միություն ցեղակիցների մեջ, ազգս հիվանդ, թուլակազմ, խառնածիններով չայլանդակելու համար...

Ցանկանամ՝ մեծը մեծություն անի, փոքրը՝ փոքրություն, խոսքը մեծին լինի և ոչ վայրիվերո և տկարամիտ, այլ իմաստուն, մեծավայել...

Պատվիրեմ մեծահոգի լինեք, առատաձեռն, ունեցողը բաժին տա չունեցողին, կարոտյալին և ո՛չ լինեք չարչի, փերեզակ և ո՛չ աչքածակ, անկուշտ... ոմանց նման... և այստեղ մի պահ նրա մատը մնում է օդում վերև տնկած և ոչ ուղղված այս կամ այն կողմ, թեկուզ այն պատճառով, որ այդ «ոմանց»–ի ենթական չկար ներկաների մեջ և չէր կարող լինել: Եվ լսողները բազմախորհուրդ գլուխները վեր ու վար են անում ճանճերին քշող ձիու նման՝ ասել ուզենալով, որ հասկանում են, թե տեր հայրը ում նկատի ունի այդ «ոմանց»–ը ասելով...

Տեր Մեսրոպը, ակնհայտ գոհ լինելով իր ասածի ընդունելությունից, արդեն իր անունից շարունակում է. «Եվ ասեմ և ցանկամ, որ լինեք աստվածավախ, բարեպաշտ, գիր սիրեք և ձեր լեզուն... Իսկ ո՞վ տվեց ձեզ գիրն ու լեզուն, որ տարբերվեք ձեր շուրջ վխտացող բազմալեզու խաժամուժից և բարբառեք՝ առվակի կարկաչի պես քաղցրահնչյուն և որոտի պես ահեղ...»: Եվ ավելացնում. «Ոչ ձեր պիղծ լեզվի պես, որ բերեցիք կռապաշտների երկրից, և որից միայն դուք եք բան հասկանում...»: Իրենց Խոյի, Սալմաստի բարբառի մասին է խոսքը, որ մնում է անհասկանալի ներկաներին, և բոլորը դժգոհ, թթված դեմք են ընդունում՝ չհավատալով տեր հոր անկեղծությանը...

— Տվեց մի այր իմաստուն՝ Մեսրոպ Մաշտոց անվանյալ...— այստեղ, վերջապես գոհունակությունը դառնում է ընդհանուր, քանի որ արդեն երկարած քա-

շելիքներին վերջ է լինելու: Իսկ նա կրկնում է՝ շեշտավորելով և սպասելով, որ հանդարտվեն.

— Տվեց մի այր Մեսրոպ Մաշտոց անվանյալ՝ հոգով, մտքով արթուն, բոլոր հայերից հայ, անզուգական սիրող իր ազգը և ժողովուրդը...

Բազում տարի նա տքնեց ձեզ համար: Քննեց, բաղդատեց մարդկանց ստեղծած բոլոր գրերն ու լեզուները... և աղբյուրից վճիտ, բյուրեղից բազմաբյուրեղ ստեղծեց ձեզ համար գիր ու լեզու, որ բյուր դարեր անցնելուց հետո էլ անթիվ տարիներ մնա հաստատուն, անփոփոխ:

Կվերջացնի քարոզը արդեն գրաբարով, իր ասածներին խորհրդավորություն, հանդիսավորություն տալու մտադրությամբ և նորից զվարթացնելով ձայնը վանկ առ վանկ, կավետի՝ «Եվ օրհնություն աստվածային և աղոթք Լուսավորչին և սուրբ Կարապետին և ամենայն սրբոց... եկեսցէ և հանգիսցէ ի վերա ձեր»... Ինչ–որ բաներ կրճատելով... «Այլև փրկեսցե, ազատեսցե ձեզ՝ ամենայն փորձանաց, հանօրինանց և հանիրավից, ի կեղծավորաց, բռնավորաց, սուտ եղբայրաց և ընկերաց, այլև բառնա ձեզ զհպարտություն, զնախանձ, զծուլություն, զագահություն, զանառակություն, զարբեցողություն... Ամեն»:

Այդ վերջին «ամենի» վրա նա վերջապես լռում է և ակնոցի վերևից զննող հայացքով նայում աջ ու ձախ, բոլորին՝ մի զարմանալի արտահայտություն պահելով դեմքին, որի մեջ կար և՛ մանկան խորամանկություն, և՛ չթաքցրած հպարտություն՝ իր քարոզի փայլուն լինելու համար, և՛ տխրություն նաև, որ նշանակում էր՝ գիտեմ, գիտեմ, որ իմ ասածները ձեր ականջներից ներս չեն մտնի, երբ նստեք սեղան, որի վրա շարված կլինեն այն ամենը, ինչից ձեր Լուսավորիչը սուրբ զգուշացնում էր...

Եթե քարոզները ուշ չէին վերջանում, տեր Մեսրոպը անցնում էր «օրակարգի» երկրորդ հարցին՝ հաղորդման և կնունքի արարողությանը, որին ներկաներից միայն երեխաների հարազատներն էին մասնակցում: Դեպի տեր Մեսրոպն էին հրում մեծ ու փոքր երեխաներին՝ մինչև նոր ատամ ծլածները: Իսկ երեխաների բերանը այնքան ապահով էլ չի կարծես մատ խոթելը... Եվ տեր Մեսրոպը բավական էր, որ մատը շուտ չհաներ այդ փսլնքոտների բերանից՝ և առաջին երկու–երեք ատամ ունեցողը փակում էր բերանը: Դրա ճարն էլ էր գտել վաղուց, մյուս ձեռքի միջամատով արագ տկացնում էր մատը կծողի ճակատին և ազատում մատը ապշած փսլնքոտի բացված բերանից: Եվ ոչ մի մեռոն: Շատ քչերին էր հայտնի, որ մեռոնի թասի մեջ եղածը... պարզապես Շուստովի կոնյակ էր, որով և ապահովում էր «պրոֆիլակտիկայի» ընդամենը կարգուկանոնը՝ հնարավոր վարակ չտարածելու համար...

Հումորից զուրկ չէր մեր ծխի առաջնորդը, իսկ Իգդիրմավայի բժիշկը՝ նաև երեխաների միակ բժիշկը՝ մեռոնի «գաղտնիքին» ծանոթ պարոն Ասլանյանը, ասում էր. «Խելքի ծով է մեր քահանան»: Նույն մեռոնով նաև կնունք էր անում և եթե «երևելի» քաղաքացու ժառանգ էր լինում կնքվողը, իրեն՝ տիրոջը, դիմելով (կարծես նրան է

կնքում), թաթախում էր երկու մատը թասի մեջ և քսում աչքերին, ապա ճակատին և ասում. «Բաց ճակատով, պայծառ նայի մարդկանց և աշխարհին»: Հետո կրծքին և սրտին, որ վախկոտ չլինի, լինի բարեսիրտ, չար մտքերից հեռու... Մեջքին, թիկունքին՝ որ չվախենա, հոգսերի ծանրությունից չկեռվի... Ձեռքերին, ափերին, որ առատաձեռն լինի և ունեցածից բաժին հանի չունեցողներին... Փորին, որ որկրամոլ չլինի... Եվ այս հորդորը ասում էր՝ աչքերը երեխայի տիրոջ երեսին մեխած և շեշտելով:

Մի համեստ ծրագիր երեխային դաստիարակելու համար, որ ասվում էր կատակի ձևով, բայց վկաների ներկայությամբ՝ տիրացուի և կնքվողի հարազատների:

Քարոզից հետո տեր Մեսրոպին տուն հրավիրողները շատ էին լինում, հենց նույն «կռապաշտներից», «որկրամոլներից» շատերը, որոնք տեր հոր հետ թաս բարձրացնելը համարում էին ամենամեծ պատիվը, որ իգդիրցուն կարող էր վիճակվել:

Անգամ պրիստավը, Իգդիրի ռուսաց եկեղեցու տեր Մեֆոդին՝ նույն էշի բժշկի հայրը, հաճախ հրավիրում էին նրան հացի և, ըստ երևույթին, նրանք էլ պահանջ ունեին այդ շիտակ մարդու խոսքն ու զրույցը լսելու՝ բութ միօրինակությունից սթափվելու համար երևի: Տուն չէր գնում այդ օրերին՝ տխրությամբ հիշելով հազար տարվա իմաստությունը, որ տեր հորը «օրհնյա ի տեր» չկա սեփական տանը:

Ամենամոտ տունը Սուրբ Գևորգ եկեղեցուց նախ իրենց տունն էր, հետո մերը, ուր նրան սպասում էր իր սիրած «բազում տեսակի ուտելեղեն», որը, սակայն, չէր համապատասխանի ո՛չ Գրիգոր Լուսավորչի պատգամներին և ոչ էլ իր երկարած քարոզի բուն էությանը... Այս «երկընտրանքը», նրա համար նորություն չլինելով հանդերձ, անլուծելի հարց չէր, և տեր Մեսրոպը ընտրում էր երկու կետերի «ամենակարճ» մոտիկությունը, մանավանդ երբ ծարավից նեղված հիշում էր նաև Իսաբեկի մեծ կարասի «աստվածային» պարունակությունը: Եվ աստվածային չէր կարող չլինել մովուզի խաղողի գինին: Իսաբեկը, ինչպես և իր հասակակից իգդիրցիք, իր խմելու գինին ինքը իր ձեռքով էր պատրաստում և խանութի համար Հմայակի բերած գինուց բերանը չէր վերցնի, եթե իրենը վերջացած էլ լիներ: Այդ գինիները նա ընդամենը մի երկու ումպ կաներ ստուգելու համար նրանց արժեքն ու համը, և անսխալ կորոշեր խաղողի տեսակը, որտեղից լինելը, թնդության աստիճանը և ինչպես նաև պահվելու կարգը, որ շուտ չթթվի և այլն:

Ժամերգությունից հետո, ինչպես ասացինք, տեր Մեսրոպի «երկընտրանքը» երկար չէր տևում, երբ ծարված հիշում էր Իսաբեկի մովուզի թանձր, կայծկլտացող կարմիր գինին, իսկ մերոնք՝ տանեցիք, բոլորը սեղան չէին նստում, համբերությամբ սպասում էին տեր հոր երկար տևած քարոզի վերջանալուն, որ գա, սեղանն օրհնի, որ հալալ հացի նստեն:

Ճաշասենյակի մեծ սեղանին, ձյունափայլ սուփրին ի՞նչ չի եղել... Խավիարների բոլոր տեսակները, խոզի ապխտած կողը, մեծ թավայի մեջ ձվով տապակած արքայական Վանա տառեխը, Բանավշայի թթուները. բոխին, գյանդլան, ավելուկը, դանդուռը և մատղաշ գառը կամ ուլը մեծ սինիի մեջ՝ լավաշների վրա, թոնիրից նոր հանած...

Սեղանը օրհնելուց հետո իրեն պարգած խաչը Բանավշան երկյուղած կհամբուրի և ավելի շատ սեղանի առատությունը նկատի ունենալով՝ մեղավորի խոնարհությամբ կմրմնջա նույն իր խնդրանքը բարձրյալին ուղղված, որ «շատ չհամարի»...

Բոլորից շուտ սեղանից վեր կկենա Իսաբեկը, որ և՛ քիչ էր ուտում, և՛ քիչ խմում, բայց շուտով հոգնում էր աղմուկից, երկար–բարակ բաժակաճառերից՝ խնդրելով սեղանակիցներին, որ շարունակեն ուրախանալ:

Իսկ Բանավշան «մեր մարդուն» պառկեցնելուց հետո կվերադառնա, քանի որ սիրում էր խոսք ու զրույց, մանավանդ եթե իր որդին՝ ուստաբաշի Ավետիսը, մեր տանն է լինում, իսկ նրան լսելը... Տեր Մեսրոպն անգամ գլուխը տաք չէր խանգարի, եթե նա էր խոսող–պատմողը:

Ուշ էր գնում նման օրերին տեր Մեսրոպը տուն, որ բոլորը քնած լինեին և գիշերվա ճրագը ձեռքին անշշուկ շրջի բոլոր սենյակները՝ մեկ առ մեկ լուսավորելով ճրագի աղոտ, թրթռացող լույսով և աղոթքի սովոր շուրթերով մրմնջա... Ո՞վ իմանա՝ ինչ խոսքեր ուներ նրանց համար, իր անհանգիստ զավակների համար պահած: Քանի՞սն էին՝ դեռ պատանի, սև, ոսկեծամ, խարտյաշ գանգուրներով սպիտակ բարձերին, ամեն ինչից անտեղյակ, միամիտ անուշ քուն եղած...

Արշավիր, Վերգինե, Շավարշ, Խորեն, Նորայր, Արամո, որոնցից միայն ու միայն ավագ որդուն՝ Արշավիրին կվիճակվի մնալ նրան մխիթարություն...

* * *

Այդպես ապրելու իրավունքը Իգդիրին երկնքից չընկավ: Դեռ տարիքով իգդիրցիք չէին մոռացել, որ կար ժամանակ, որ իրենք գլավա ընտրելու իրավունք չունեին, և Իգդիրի գլավան էր գավառապետի նշանակած... քուրդ Հասան բեկ Շամշադինովը, իսկ Դաշբուրունինը՝ թուրք Ռաշիդ խանը իր թուրք ստրաժնիկներով, որոնցից Դաշբուրունի և շրջակա գյուղերի հայերը ահուսարսափի մեջ էին, ինչպես գրում է մի տեղացի «Մշակ» թերթին ուղղված իր նամակում (1905 թ. հուլիսի 9, «Նամակ Իգդիրից»): Կարդանք մի քաղվածք երկար նամակից. «226 գյուղ ունեցող Սուրմալուի ընդամենը 23 հայ գյուղերից 6–ը Աբասգեոլը, Գյուլլիջան, Մոլլա զամարը, Ազիզլուն, Դաշբուրունը և Կողբը մեկուսացած ընկած են գավառի զանազան վայրերում («Մշակ», 1905 թ., շաբաթ, հուլիսի 9, հմ. 132, «Նամակ Իգդիրից» հունիսի 13–ին):

«Իսկ մնացած տասնյոթ գյուղերը (թվում է, և որոնց մեջ են Բլուրը, Իգդիրը և Իգդիրմավան, որն արդեն միացել էր Իգդիրին), կազմելով մի խումբ, ընկած են գավառի (Սուրմալուի) կենտրոնում, շրջապատված հարավից՝ քրդաբնակ, իսկ հյուսիսից՝ թուրքաբնակ բազմաթիվ գյուղերով»:

«Այժմյան դրությունը, մի կողմից պարսկական սահմանը, մյուս կողմից տաճկական սահմանը... ստեղծել են Սուրմալուի հայ ժողովրդի համար մի ծանր կացու-

թյուն... Դաշտային աշխատանքները համարյա մոռացվել են, և ժողովուրդը զբաղված է միմիայն ինքնապաշտպանության միջոցներ հայթայթելու գործով...»:

Ահա թե ինչ «հարևանություն» է ունեցել Իգդիրը, և անողոք փաստ է նաև, որ Իգդիրի և ողջ Սուրմարիի թուրք ու քուրդ շրջապատին անհանգստացնող չի եղել և, ընդհակառակը, ջոկովի հայատյաց «բոգոսլավսկիներ» էին ուղարկում Սուրմարիի հայ խեղճ ու կրակ բնակչությանը «սանձած պահելու»... Եվ նույն Իսաբեկը, կամ քյաչալ Կյասպարը, Վլասը զարմանում և զարմանում էին «քրիստոնեական» ռուսաց թագավորի նման անհասկանալի, անիմաստ վարմունքի վրա:

Ավելի քան տարօրինակ է, չէ՞, սիրելի՛դ իմ Իգդիր, այդ քրիստոնյա «փրկչի» առաքելության իմաստը, երբ հանուն այդ «առաքելության» զոհում էր անգամ իր լավագույն զավակներին... Եթե հիշենք թեկուզ Գրիբոյեդովի ողբերգական վախճանը, որը և Երևանը գրավող «գրաֆ Երիվանսկու»՝ Պասկևիչի հարազատն էր, բայց և որը կուլ տվեց այդ անպատվությունը, չպատժեց պարսիկներին և... բավարարվեց պատերազմական տուրքը գանձելով ընդամենը... Հը՞, ի՛նչ կասես:

— Ի՞նչ ասեմ... Շահ Աբասը տարավ, ինքը բերեց, ինչո՞ւ բերեց, եթե տիրություն չպիտի աներ... և ո՞վ է բան հասկանում ռուսաց թագավորներից, որ ես գլուխ հանեմ...

Բայց կարծեմ, որ քո «թարս նայողները» երկար–բարակ մտածելու ժամանակ չունեին և, երևի, ճիշտ են ասում, որ հային իրենց խելք ու արշինով չափողները շատ անգամ (և միշտ) սխալվել են...

Ռուսաց թագավորի սխալն էլ հարկ եղավ «վերանայման», և ստիպված ուղղեցին, շտկեցին, ինչքան էլ տհաճ էր իր «նամեստնիկներին»... Արյուն էլ եղավ և շատ: Եվ իգդիրցիք իրենք վերացրին իրենց շուրջ շնթռած թուրք ու քուրդ բեկերին, խաներին, բոգոսլավսկիներին... Եվ «դաշտային աշխատանքներն» էլ չմոռացան... Իսկ ինչ վերաբերում է «ինքնապաշտպանության միջոցներ հայթայթելու գործին», ապա այդ հոգսը իրենց վրա էին վերցրել առատությամբ գոյություն ունեցող «կոմիտեները» և կատարում էին ամենայն բարեխղճությամբ և «բարձր մակարդակով», եթե նկատի ունենանք այդ «միջոցների» հայտնի տեսակները...

Զգրեցին այլևս «Մշակին», «Տարազին», «Նոր դարին» լացախառն թղթակցություններ, աղերսագրեր, փրկություն խնդրելով...

Եվ Իգդիրը ապրեց իր ուզած կյանքով, իր ընտրած գլավաներով, տանուտերերով, անգամ իր ուզած պրիստավներով:

Սակայն եղավ ժամանակ, որ քո քաղաքացիների, անգամ երևելի քաղաքացիների համար դու նեղ թվացիր, և ոմանք գերադասում էին ապրել Էջմիածնում, Երևանում, գնում էին ավելի հեռուները: «Գորոդսկոյ ուչիլիշչեն» ավարտողը

իրավունք էր ստանում վարժապետություն անելու որտեղ կուզենար: Գնում էին նաև հոգնած, ճանճ-ռացած, զզված՝ թայֆամիջյան գզվռտոցներից, մանավանդ հոգնել էին գիշերները տեղաշորից սար-սափահար վեր թռչելուց, տարբեր փողոցներից լսվող մաուզերների համազարկերի կաղկանձից, որ անպակաս էր, ինչքան որ անպակաս էին հարսանիք-ները, ծնունդն ու տոն օրերը:

Եվ քնահարամ լինելուց անմասն չէր մնում անգամ ինքը՝ Իգդիրի պրիստավը, որը եթե «անզգուշ-որեն անտեսվել էր», նա էլ քունը խանգարված կնս-տեր անկողնում, կմռթմռթար՝ բավականին լսելի իր սովորական հիշոցներով և նախանձով նայելով իր կողակցի հանգիստ խռռացող մեծածավալ կույտի կող-մը, վեր կկենար մի թաս թթվի ջուր խմելու՝ մտքի մեջ շարունակելով վաղվա ասելիքը այդ սանձարձակների հաս-ցեին և անսխալ գուշակելով, թե որ թաղից, ում տանից կլի-նեին կրակողները:

Օ՜խ դու շան տղի արմյաչկա, Նիսանով, դու դեռ վաղը առավոտյան կպարես առաջս... որ լայաղ չես արել անձամբ հրավի-րել «ձերդ պայծառափայլությանը» և տունդ էլ մի ամբողջ պահեստ ունես արգելված զենքերի...

Իսկ առավոտյան Նիսանովը կամ Պողոսը մի «չեթվեր» խաղողի ընտիր օղին թևի տակ, մի պատկա-ռելի կապոց «զակուսկեղենով» կտնկվի պրիստավի առաջ՝ սուտ մեղավորի կեղծ ժպիտը բեղի տակ, վիզը ծռած ուսին...

— Ահա, ներկայացա՜ր... Դե՛, ի՞նչ կհրամայեք, ճակատդ համբուրե՞նք, թե՞ շալվարդ հանել տամ...

Բայց բանը շալվարին չի հասնում, վերջանում է խաղաղությամբ:

Այդպես էր Իգդիրում, գնացողը գնում էր, իսկ մյուս-ները առավոտյան իրենց սովորական գործին էին գնում:

Քիչ չէին նաև գնացողներից նրանք, ովքեր արդեն «համազգային գործիչներ էին» հռչակված, ազգի փրկության

հոգսով էին տառապում Երևանում, Թիֆլիսում, ավելի հեռուներում՝ Մոսկվայում, պետրոգրադներում...



Բայց նրանց այդ աննշան մասի բացակայությունը քո կյանքի մեջ առանձին փոփոխություն չմտցրեց, քո անհանգիստ ապրուստը ավելի անհանգիստ դարձավ: Ժամանակն էր փոխվել:

Օր օրի վրա ավելանում էին սահմանների խախտումները դեպի Պարսկաստան, Տաճկաստան անցնող, եկող խմբերի թիվն ու քանակը, զենքի ու զինվորության տեղաշարժերը՝ Երևանից Իգդիր, Իգդիրից Վան, Բայազետ և այլուր:

Ինչքան էլ դա արվեր աննկատ՝ նկատելի էր, մանավանդ հրետանի էր տեղափոխվում՝ «թոփ» ու թնդանոթ...

Եվ այդպես, սովորական դարձած օրերից մեկ օր, երբ ծանր հրանոթը խրվում, մնում էր Իգդիրի հռչակված ցեխաջրի մեջ, ձիերը անկարող են լինում հանել, բերում են լծում Շաբոյենց հայտնի գոմեշին՝ «Քյալաշին», որը ճկռտալով, չոքեչոք հանում է «թոփը» ցեխից: Զարմացած ու հիացած ուղեկցող սպաները, որպես հատուցում այդ աննախընթաց իրադեպի, բերում են կախում ինչ–որ «մեդալ» Քյալաշի վզին, ըստ ռուսական հանրահայտ սովորության, որ ամեն մի նշանակալից բան պիտի վավերանա մի որևէ նշանով, մետաղով... Բայց այդ մեդալը երկար չի մնում Քյալաշի վզին, որը տեղեկություն չուներ, թե ինչ պատվի էր արժանացել: Շաբոյի տղան ինքն էր կախում իր վզից և ոչ պակաս հպարտությամբ:

* * *

Իգդիրում գոմեշ շատ կար, և՛ լծկան, և՛ հատկապես մատակ գոմեշ, որի մածունը, կարագը և մանավանդ թանը փրկություն էր Իգդիրի շոգերն ընկնելուց: Պահում էին նաև ցուլ գոմեշներ՝ կռվեցնելու համար, ինչպես զոչերին: Գոմեշները կռվում էին «գյաշտին», դա գարնանային տոն էր՝ «Ծառզարդարը», որ անցնում էր մեծ շուքով, աղմուկով, մի շաբաթից էլ ավելի տևելով, որին բոլորն էին սպասում և նախապատրաստվում:

Գյաշտին փահլևաններ–լարախաղացներ էին գալիս, փահլևան–ըմբիշներ, զոչեր էին կռվեցնում, աքլորակռիվ, գնչուներ, «բոշաներ» էին հայտնվում մաղերով, գործած կողովներով, «սարի ծամոնով»: Հրավառություն՝ «ֆրշանգ» էին թողնում գիշերները, մի խոսքով՝ տեսնելու, ուրախանալու շատ բան կար, իսկ մորթած, մատաղի անասուններին և խմած գինուն հաշիվ չէր լինում:

Ըմբշամարտին՝ «գյուլաշին», Իգդիրից էլ մասնակցողներ կային և ամենահայտնին ու սիրելին Իգդիրի Խոնդկարենց Կորյունն էր, որին հաղթող չէր լինում...

Եթե գոմշակռվին համարյա թե ճայն–ծպտուն չէր լսվում, ապա գյուլաշին և երբ Կորյունն էր կռվողը, համատարած ոռնոց էր տիրում: Եվ երբ Կորյունը իր փոքր գլուխը (երևի ուսերի, թիկունքի հզոր լայնությունից էր այդպես թվում) դեմ էր անում հակառակորդի գլխին և մի պահ թավ հոնքերի տակից միայն աչքերի սպիտակուցներն էին երևում՝ մխրճված դիմացինի ճակատին... ոռնոցը կտրվում էր, շունչները պահում և սպասում էին, որ մյուս րոպեին հակառակորդը պտույտ անի օդում և ծեփվի «տառթին»՝ տրորված պնդեցրած գոմաղբի վրա, Կորյունի ծնկի տակ, մեջքի վրա ճապաղած... Ու ոռնոցը ականջ էր խլացնում:



Գոմշակռիվն ուրիշ էր: Ես շատ հետո ցլամարտ տեսա Իսպանիայում, Տոլեդոյում... Մի ամբողջ բեմադրություն, թատերախաղ, որը ինչքան էլ շուքով էր, հանդիսավոր, բայց վերջում տխուր, շատ տխուր էր, երբ հալից ընկած, չփոթված, արդեն բան չհասկացող, բթացած, հարյուր տեղից սրով ծակծկված անասունին տորեադորը մի վերջին հարվածով փլեցնում է, հսկա, հոյակապ ցուլին... Եվ ոռնոց, ծաղիկներ, ուրախություն... Ոչ մի ուրախություն, վայրենություն էր պարզապես, և ես չկարողացա նայել, թողեցի դուրս եկա առաջին մարտից հետո հաստատ որոշած, որ էլ երբեք չեմ նայի այդ արյունոտ ուրախությունը, այդ անհավասար մարտը դատապարտված անասունի հետ...

Գոմշակռիվը մարդու միջամտության կարիք չուներ, որ թատերախաղ դառնար... Գոմեշներին բերում էին հրապարակ, որը մեր տան ու Սուրբ Գևորգ եկեղեցու արանքում էր, կանգնեցնում էին հրապարակի երկու ծայրերին, իրար

դիմաց, և մի կողմ քաշվում պարանները ձեռքերին: Մի քանի րոպե իրար էին նայում, նռռալով, ոտքերով հողը փորփրում, հզոր գլուխները թափահարում և միանգամից անսպասելի կողեկող վազում իրար վրա... Առաջին բախվելուց չնկարագրվող խուլ որոտ, ձայն էր լսվում և ոտքերով խրված հողի մեջ՝ մնում էին գետնին գամված: Հետո սկսվում էին կարճ վազքերով ընդհարումները: Գոմեշները իրենց շրջապատող մարդկանց բանի տեղ չէին դնում, և նրանց օղակը մե՛կ ընդարձակվում էր, մե՛կ նեղանում: Նրանց ուշադրությունը իրար կողերն էին, և ուզում էին հաջողեցնել կոտոշներով դրանց մեջ մխրճվել: Ուժեղ բախվելու ժամանակ պատահում էր, որ նրանց աչքերը դուրս էին գալիս, խնձորաչափ կախվում, ռունգերից արյուն էր հոսում, բերաններից փրփուր շաղ լինում... բայց ինչքան էլ որ շունչները պահած էր նայողների, ամեն բախվելուց մի ընդհանուր «վախ» էր լսվում:

Զէին թողնում իրար «փչացնեին»: Հաղթվողը պարզ նկատվում էր: Հաճախակի կողքերն էր նայում, և ամորձիները կախվում էին թուլացած... Եվ այդտեղ լսվում էր տոնակատարությանը ներկա և ցլամարտի պատվավոր դատավոր կարգված պրիստավի ազդեցիկ սուլիչի ձայնը, որ ոչ մի սուլիչի ձայնի հետ չէր խառնվի, և խմբով տղամարդիկ պարաններով հարձակվում էին գոմեշների վրա, իրարից բաժանում, հետ քաշում:

Նույն պահին մի քանի ուրիշ հրապարակներում շրջան կազմած մատաղի ղոչերն էին կռվեցնում, կատաղած աքլորները արնակալած կատարներով իրար աչք էին կտցահարում, կաքավներ երգեցնում... Սրանց «կռիվներն» էլ սկսվում էր երգելով, և որը դադարում էր կղկղալ, հոխորտալ, տերը պարտավոր էր իր կաքավի վիզը ոլորել... Եվ այդ հրաշալի տոնը, գարնան տոնը տևում էր մի ամբողջ շաբաթ, առավոտից իրիկուն՝ քեֆ–ուրախություն, երգ ու պար, ամեն կողմերից եկած աշուղներ՝ տարբեր ազգությունների, և նրանց վեճը կաքավների պես երգելով էր սկսվում և վա՜յ լռողին... Կաքավի պես վիզը չէին ոլորում, բայց վիզը ծուռ, գլխահակ մի կողմ էր քաշվում:

Եթե «գյաշտը» գարնան տոն, ուրախություն էր, ապա Արհաջի մոտ եղած մատուռը «Մարկոս Ավետարան» կոչվող ուխտատեղ էր, և այդ ուխտն էլ՝ «Սրբխեչը», համընկնում էր խաղողի հասնելու, այգեքաղի հետ, և այդ ուխտ գնալուն մաս-



նակցում էր ողջ Իգդիրի բնակչությունը: Շատ հեռու չէր Արհաջը Իգդիրից և հայտնի էր իր քաղցրահամ սառը աղբյուրներով, որոնցից գոյացած կար մի լճակ, իսկ Իգդիրցիք այդ լճակին, ինչպես և Խանոյենց ջրաղացների առուներից գոյացած լճակին «գյոլ» էին ասում՝ երևի շատ մեծ չլինելու համար:

Այդ ուխտին մատաղներ էին մորթվում, նորից քեֆ, ուրախություն, ճիավարժություն, պար ու երգն էլ՝ անպակաս, և այդ ուխտն էլ ժողովուրդը դիտմամբ ձգում էր մինչև մի քանի օր:

Բայց տագնապ էր զգացվում, ինչ–որ ծանր շունչ անհասկանալի, տենդագին, անբացատրելի, որ բացատրող էլ չկար, և որը հեչ չէր սազում քո բնակիչների զարմանալի անտարբերությանը, ասենք, թե սառնասրտությանը... Եվ ո՛չ այդ տագնապը, ո՛չ «ծանր շունչը» չէին խանգարում Արզումանենց Տիգրանին իր տասը աղջիկների հետ, կամ մեր փեսա Վլասին երեկոյան, Մասիսից իջնող զովին, պատշգամբում նստած իրենց թեյը իրենց սիրած մուրաբայով խմելու և մտքի մեջ «մենախոսելու», եթե անգամ զրուցակից չէին ունենում:

14 թիվը Իգդիրից «կողեկող», աննկատ էր անցնում, չնայած որ գաղթականները շատացան, շատացան պատահարները սահմանի վրա, ռսի ժամի զանգերը շատ ավելի աղմկեցին, շատացան կոզակները, որոնցից մշտական հիացմունքի մեջ էին Իգդիրցիք, և երևի նրանց ներկայությունն էր պատճառը քո քաղաքացիների վստահ անտարբերության... «Կոմիտեները» դարձան անճանաչելի, պարզապես ցնդել էին... Իսկ Վլասը պատշգամբում նստած իր սիրած դդումի (դոշաբով եփած) մուրաբայով թեյն էր խմում, և նրա երկար մենախոսություններից հորաքույր Օվսաննային թվում էր, որ իր Վլասը ինչ–որ կապեր ունի... Լոնդոնի, Նյու Յորքի, Պետերբուրգի հետ, ինչ–որ մարդկանց հետ, քանի որ այդպիսի մոլուցքով էր խոսում, ի թիվս Նիկոլայ թագավորի նաև, եթե իր սառը լիմոնադը խառնում էր տան գինու հետ, «մավրո» էր դարձնում...

Օվսաննա հորաքույրս՝ հոքիրս, երեխա չուներ և չէր սպասում, էլ ե՞րբ պիտի լիներ՝ չկար: Եվ այդ պարզ, հասարակ «չկան», մարդուս վերից վերապահված այդ միակ երջանկության չլինելիքը դառնում է ողջ ապրվելիք կյանքի տխուր,

անմխիթար ուղեկիցը... Եվ Վլասը կջղայնանար, թե չէր ջղայնանա «Ավետիսս, Հմայակս» լսելուց, շատ հեռուն չէր գնա: Եթե մյուս հորաքույրներս՝ Նունեն, Մանեն, ավելի Իսաբեկին էին քաշել, ապա Օվսաննա հորաքույրը Բանավշայի կրկնությունն էր, մի քիչ ավելի նրբագեղ, բայց իր ողջ էությամբ Բանավշան էր: Նրա նման անդադար, գործ ու հոգսի մեջ, վաղ առավոտից Վլասի լիմոնադի գործարանի «ճվոցը» չեղած՝ ոտքի վրա էր և ո՛չ իր տան գործին միայն: Ի՞նչ գործ պիտի տանը ունենար, պահածը մի Վլաս էր, և զոռով էլ չէր կարող «չարած» բան գտնել: Նրա սև սերթուկները միշտ մաքուր, արդուկած, սև «չիբլետները» պլպլան, սպիտակ բլուզները ձյան պես ճերմակ էին, իսկ կերած ճաշերը... Բանավշայի աղջիկը գիտեր ինչպես արարել, որ Վլասը ճաշից հետո մի ժամի չափ, բեղի, քթի տակ փստացնելուց հետո պատրաստ լիներ ճակատամարտի, այսինքն՝ վիճելու, ճառելու նույնիսկ առանց «առիթորիայի», որը ավելի հաճախ էր լինում և միակ ունկնդիրը Օվսաննան էր լինում, որ ճաշի ման–չամանը հավաքելու, լվանալու, տեղավորելու արանքում մի երկու խոսքով մասնակից էր դառնում...

Ասենք թե խոսքը Անգլիայի մասին է, նրա բռնած դիրքի, նոր սկսված պատերազմի «պրոբլեմների» և մեզ՝ հայերիս նկատմամբ, ու նա անունն է տալիս մի թուրք փաշայի կամ անգլիացի դիվանագետի...

— Էդ սևամեռն օ՞վի...— կհարցնի Օվսաննան մի բան ասած լինելու համար:

— Ի՞նչ կարևորի. անգլիացիի...

— Որ անգլիացիի, որ ի՞նչ...

— Իշխո, որ ինչ, անգլիացիի ու վերջ:

— Ինչը՞ վերջ...— կասի նույն անտարբերությամբ Օվսաննա հորաքույրս:

— Անգլիացիի, աղբի, զբիլի ու վերջ...— և այստեղ ձեռքը սեղանին կխփի Վլասը բարկացած, կաս–կարմիր կտրած:

— Լավ, լավ, թող քյո ասածն ըլնի, տնաշեն, խողս իրա էլ կոտին...

Բոլոր դեպքերում զիջողը Վլասն է եղել և այն պարզ գիտակցությամբ, որ իր քաղաքական նուրբ դիտողությունները տեղ չեն հասնի և մի քիչ թեթևացած լռել է, քթի տակ ինչ–որ բաներ մռթմռթալով, որ Օվսանը չլսի ու նոր հարցեր չտա:

Եվ որովհետև ազատ ժամանակ շատ էր լինում, Օվսաննա հորաքույրս Վլասի հետ կամ մենակ, մեր տանն էր լինում, որ Բանավշային օգներ հազար ու մի գործում կամ պար-

զապես զրուցելու, մեզ՝ երեխաներիս տեսնելու, դոշակ–վերմակ չրփելու Սաթենիկի համար, որին շատ էր սիրում, իր ասած «նախշուն բալաների» համար, կամ գնում էր Ավետիս եղբոր տուն, որ Վարդուհի հարսին օգնի նույն գործերում՝ միակ վարձատրություն ունենալով մեզ՝ երեխաներիս ամբողջ օրը համբուրելը, համբուրելը իր հյութալի համբույրներով՝ մինչև քնացներ, ծածկեր իր չրփած փափուկ, արևահոտ վերմակներով և նստեր կողքներս, հեքիաթ ասեր...

Ես, որ չէի սիրում մեր բարեկամների սիրառատ զեղումները, փաթաթվում էի նրա վզովը, որ ամեն մի պաչի հետ նաև լսեմ՝ «նախշուն բալաս, նախշուն բալաս...»:

Իմ նախշուն հորաքույրս նույնը կրկնում էր նաև Երևանում, երբ ո՛չ կողակ–տառեխ կար աղ դնելու, ո՛չ սուջուխ–ալանի, բայց դոշակ–վերմակ չրփելը կար դեռ, և մենք էլ երեխաներով կայինք ու կայինք:

* * *

Տեր Մեսրոպը ամեն երեխա կնքելիս, հաղորդելիս երկինք էր նայում և մոռանում ցուցամատը առաջին երկու ատամներ ունեցողների բերանում և ցավ չէր զգում՝ միտքը ուրիշ տեղ էր սավառնում...

Տեր Մեսրոպը տեր Մեֆոդիի հետ ամեն օր զորակոչիկներ էին ճանապարհ դնում՝ «նեմեցկի ֆրոնտ», թուրքական ճակատ, և եթե տեր Մեֆոդին երբեմն ճառ էլ էր ասում շալվարները բռնած կիսատկլոր զորակոչիկների գլխին խաչը պարզած, ապա տեր Մեսրոպը բավարարվում էր լուռ խաչակնքելով:

Եվ ի՜նչ իմանար, որտեղի՜ց իմանար ծխական քահանան, թե ինչ է փուլ եկել իր ժողովրդի գլխին...

Տեր Մեսրոպը ամեն անգամ ընդամենը հիշում էր որբևայրի մնացած Շողակաթին, որ պրիստավի առաջ չոքած խնդրում էր, որ իր մինուճարին գոնե խնայեն սալդաթությունից, և պրիստավի զզվանքով ասած խոսքերը Շողակաթին.

— Պշել վոն, պշել վոն...— ոնց շանն էին սովորել իրենք՝ իգդիրցիք ասել,— պաշոլ վոն: (Եվ, չգիտես ինչու, ընդունված էր շան հետ ռուսերեն խոսել)...

Եվ այդպես էլ անցավ 14 թիվը՝ Իգդիրի գլխի վրայով... պաշոլ վոն:

Իգդիրցիք մի բան հաստատ գիտեին, որ քանի դեռ Իգդիրում կոզակներ կան, իրենք կարող են պատշգամբում նստած իրենց թեյը մուրաբայով խմել...

Եվ ինչքան էլ զոռ տային իրենց գլխին, մտքներով էլ չէր անցնի, որ այդ կոզակը կարող է թողնի, թքի մի օր իրենց Իգդիրի, Վանի, Ղարսի, Ալաշկերտի էլ վրա և գնա իր «կարավայ» բոքոնը թխելու... Բայց նրա կարավայ բոքոնն էլ հարամվեց, չկերավ: Նստելու, մի բոպե նստելու ժամանակ չտվին՝ ոչ ոքի...

Վերջացնելու վրա էին Զոռի աղբյուրներից խմելու ջուրը Իգդիր բերելու հողային աշխատանքները: Զարմանալի աշխուժացել էր կյանքը, շատացել էին զորամասերի կապալները, Նիկոլայի «ճռճռան» հարյուրանոցները, հինգ հարյուրանոցները՝ Եկատերինայի, Պետրոս Մեծի նկարներով դարսվում էին իրար վրա, որ հետո, Երևանում... երեխաների ձեռքին դառնան խաղալիք, բայց դեռ դարսվում էին և ավելի գերադասվում, քան ոսկին: Խելոքը ոսկի հավաքողները եղան: Իսկ «Իգդիր» առևտրական տան տերը՝ Հմայակ Իսաբեկովիչը, ինչպես պետք է որ սպասվեր, հակառակը կանի: Գաղթից առաջ ունեցած ոսկեդրամը «թուղթ փող» կդարձնի, շորի մեջ փաթաթած մեջքին կկապի, որ թեթև լինի, անձայն, աննկատ: Իսկ Երևանում կբացի ճռճռան հինգ հարյուրանոցների կապոցը, կնայի ոչինչ չտեսնող կարմրած աչքերով, շվարած, մտքամոլոր, գլխին եկածից բան չհասկանալով, զարմանքից ու վշտից քարացած...

Շատացավ գաղթականությունը, Իգդիրը ընդունում, ճանապարհ էր դնում, և քաղաքացիների դռները երբեք փակ չեղան նրանց համար: Ծլեցին գաղթականությանը օգնող «կոմիտեներ», որոնց մեջ մեծ տեղ էր տրված քո քաղաքի տիկնանց, և նրանց ջանասիրությունը ոգևորելու կարիք չէր զգացվում: Շատացան սահմանը, լեռնանցքերը պահող զորամասերը և դու քո քաղաքացիների հետ, սիրելի՛դ իմ Իգդիր, քեզ շատ ապահով էիր զգում ռուսական երկգլխանի արծվի հովանու տակ և քո ամենակասկածավորի կամ վախկոտի մտքով էլ չէր անցնում, որ թուրքի ոտքը Օրգովից այս կողմ կարող է անցնել, քանի որ երբեք դա չէր եղել: Քո տղաներից էլ միացան կամավորների երամներին և 14–15 թվերի խորշակը անցավ քո մոտով... Ցավը ո՛չ քոնն էր, ո՛չ Երևանի կամ Թիֆլիսի հայությանը կամ Ռոստովի, Արմավիրի...

Շատ շատացան հայրենասիրական երգերը, երգ ու բանաստեղծություն հնարողները: Դու էլ ունեցար քո երգերը, որ պակաս լացուկոծ անող չէին: Բայց քո հաստաբուն կաղամախիների վրա բուն դրած արագիլները տեղահան չեղան, այգիներիդ բերքը չպակասեց, և արևը դեռ չծագած՝ քո ջրվորները դաշտերում, այգիներում էին: Բայց շատացան նաև զգույշ քաղաքացիներդ, ավելի հեռատես գտնվողները հեռանում էին անխուճապ, աննկատ: Բայց գնացողները հողի մարդիկ չէին: Եվ ե՞րբ է հողի աշխատավորը, հողին կպած մարդը թողել հողը՝ մինչև դանակը ոսկորին չի հասել... Գնացողները հողի մարդիկ չէին:

* * *

Տարիքով մարդիկ Իգդիրում խայտաբղետ շորեր չէին հագնում: Նրանց հագածը ամառ–ձմեռ սև շալի երկար չուխաներն էին, տակից կապույտ սատինի բեշ-մեթներով, իսկ շատ ցրտերին ծածկվում էին տնագործ մեծ շալերով, գլուխները բաշլղներով փաթաթում: Ջահելի հագածն էլ բազմատեսակ չէր: Նույն չուխաներն էին կամ բարակ մահուդի զինվորական ձևի բաճկոններ, «ֆրենչ», շալվարները երկա-րաճիտ կոշիկների մեջ դրած, իսկ ձմեռը ավելանում էր հաստ մահուդից մուշտակը՝ «Վենգերսկի» մոդայի կարված և նույն բաշլղները:

Տատիս՝ Բանավշայի հագինը սև, մուգ կապույտ գույներ են եղել և ընդամենը սև գլխաշորի տակից մի սպիտակ գլխակապ, որը բարձրացնում էր նաև ծնոտին, բերանին, երբ տղամարդկանց հետ էր խոսում: Եվ առհասարակ Իգդիրում կանայք չէին կարող ավել–պակաս պճնվել, եթե հյուր կամ եկեղեցի չէին գնում, հարգի չէր, լուռ համաձայնություն էր և «թարս նայողները» չէին հանդուրժի, հնից էր եկած, դեռ Խոյից, Սալմաստից, և այդ լուռ համաձայնությունը չէր խախտվում, անգամ երիտա-սարդները փորձ չէին անում մինչև Իգդիրի քաղաք դառնալը:

Տատս փոքրավուն է եղել, կազմվածքով հավաք, արագաշարժ, ցորենագույն դեմքին՝ ծիծեռնակի թևերի նման քթարմատին միացած հոնքերի կամարով, սև աչքե-րի բարի ժպիտը անպակաս, հակապատկերը Իսաբեկի խոժոռ հայացքի: Օրդոյենց ցեղից էր, որոնք հայտնի էին Իգդիրում «Ճռիկենք» մականունով, և ո՞վ իմանա՝ այդ ցեղի որ երևելի ներկայացուցչի փնթփնթան, չհավան, սրա–նրա վրա «ճռռացողի» պատճառով: Բայց ոչ ոք տատիս ճռռալը չիմացավ, նկատողություն կամ կշտամբանք, անտեղի շատախոսություն չլսեց: Նրա խոսքը սկսվել–վերջացել է «ջան»–ով կամ «բոյիդ մեռնեմ»–ով: Ըստ երևույթին, ճռռացող մարդը պիտի պարապ լինի կամ ավելորդ ժամանակ ունենա, որ շրջապատի «ոչ իր ուզածով» լինելը նկատի ու ճռռա: Տատս ժամանակ չի ունեցել, չնայած աղոթարանը դեռ չբացված՝ ոտի վրա է եղել, և նրան ոչ ոք շոր հանելուց–հագնելուց չէր տեսել: Ի վերջո, Իսաբեկի «կեսն» էր, որից երկար–բարակ ի՞նչ պիտի լսեր, որ նրան նմանվեր, շատախոս դառնար: Իսկապես որ մարդ ու կին, միասին երկար ապրելով, նմանվում են իրար:

Բայց Բանավշան, ինչպես և բոլոր կանայք, ինչքան էլ քչախոս լիներ, սիրում էր խոսք ու զրույց հարսների հետ, կամ արդեն տուն ու տեղի տեր իր աղջիկների, հարևանների հետ: Հատկապես կնստեր, կհանդարտվեր, երբ իր մեծ որդին՝ Ավետիս ուստաբաշին էր մեր տուն գալիս: Երևի տատիս սիրելին է եղել, բայց սիրո վրա ավելացել էր հետո անսահման ակնածանքը, պատկառանք իր որդու նկատմամբ: Նրա ասածները տատիս համար օրենք, էին և, առհասարակ, հորեղբորս ասածը երբեք վիճելի չէր դառնա որևէ մեկի համար: Ավետիս հորեղբայրը նաև մորս պաշտամունքն էր, որին տեսնելիս չգիտեր՝ ինչ աներ, երևի օջախից ատամներով կրակ հաներ, եթե պետք լիներ հորեղբորս... Բանավշան, բացի մեր մեծ տան հոգսերից, հազար ու մի գործից, որ սկսում էր պանիր բռնելուց (մի քանի տեսակ՝ անալի, այծի, թել–թել պանիր և, իհարկե, հորած պանիր իր բազմապիսի համեմունքներով), թուջերում Վանա տառեխը, կողակը աղ դնելուց, յուղ պիտի հալեր, թթու բռներ, սուջուխ, ալանի, կախաններ շարելը, և ո՛րը թվես: Բանավշան հեքիմ էր, զարմանալի հեքիմ: «Բժիշկ» չեմ կարող ասել, քանի որ Իգդիրում հայտնի բժիշկ էր պարոն Ասլանյանը՝ Պետերբուրգում սովորած, որը և էն գլխից որոշած ուներ, որ իգդիրցոց բոլոր հիվանդությունների սկիզբն ու պատճառը ջերմն էր, իսկ իրենց՝ իգդիրցիների տերմինով՝ «տաքոց–դողոցը»... Բայց մի բան հայտնի էր նաև, որ պարոն Ասլանյանի չբուժած բոլոր հիվանդների մի մասի ճարը ինքը՝ տատս էր տեսնում, իր «ասիստենտ» Գևորգի հետ: Իրար չէին խանգարում: Պարոն Ասլանյանի հաբերը, հիմնականում խինինը՝ «քինա–քինան», ինչպես ասում էին Իգդիրում, երեխաները կուլ էին տալիս մուրաբայով և լացուկոծով, իսկ մեծերը «ողողում էին» բերանները ավելի դառն օղիով, որ դառնությունը թուլացներ... Դեղատանն էլ սեղանի վրա մեծ ամանով մշտական դրված է եղել խինինի ջրով թունդ լուծույթ՝ բաժակը կողքին, և «տաքոցը» բռնած իգդիրեցին իրեն հասցնում էր դեղատուն, մի բաժակ «գլուխը քաշում» այդ լուծույթից, ինչպես խարշևնյայի տիրոջ «կապեկ Ակոփի» մոտ օղին էին գլուխները քաշում, և օղի խմածի պես երեսները ծռմռելով՝ «դինջացած» գնում տուն՝ մի կոպեկանոցը թողնելով սեղանին:

Ի տարբերություն պարոն բժշկի, որ հիմնականում պատրաստի դեղերով էր բուժում իր հիվանդներին, տատս նաև դեղագործ էր՝ «ֆարմացևտ»: Իր բոլոր խմելու դեղերը, քսուքները, մահլամները ինքն էր պատրաստում՝ բույսերից, ծաղիկներից, արմատներից՝ անհաշիվ վերք ու ցավերի դեմ: Ե՛վ հիվանդներն էին անպակաս, և՛ բուժվողները... Փորացավի, սրտի, երիկամների քարի, աչքացավի,

ի՜նչ իմանաս՝ էլ ինչ ցավերի և հատկապես անբուժելի «յարաների», վերքերի համար քսուքներ, մահլամներ...

Ինքը իր մորից էր սովորել՝ «Ճռիկենց» Սեմիզարից, նա էլ երևի՝ իր մորից... Բայց ահա իր աղջիկներից ոչ մեկը «մջես», ինչպես ինքն էր ասում, ջանք չարեցին սովորել այդ հրաշագործ արվեստը... և հազա՜ր ափսոս:

Այդ «պրակտիկայում» նրան արգելող, խանգարող չկար, քանի որ ինքը՝ Իսաբեկը, դեմ չէր: Նա էլ իր «նկատառումն» ուներ, իր «հաշիվը» և բավականին ծանրակշիռ... Վերքերով, «յարաներով» հատկապես տառապում էին շրջակա գյուղերի եզդիները, քրդերը, որոնք, ծնված օրից բաղնիքի երես տեսած չլինելով, հասնում էին Իգդիր՝ ճար անելու: Եվ բուժվելուց հետո չէին մոռանում նաև վարձահատույց լինել՝ ով ինչքան և ինչով կարող էր: Որպես «կլինիկա» էր ծառայում բակում՝ ցախատան կողքին եղած առանձին մեծ սենյակը, որտեղ ոչ մեկս ոտք չէինք դնում և միակ «ասիստենտը»՝ տատիս օգնականը, Գևորգն էր՝ Տաճկահայաստանից մի որբ տղա, որին համարյա թե որդեգրել էր տատս և «վիրաբույժի» գործը նրան էր պատկանում:

Հետո այդ Գևորգին տատս կամուսնացնի մի նախշուն աղջկա հետ, լավ բաժինք կտա, և կգնան Թիֆլիս ապրելու...

* * *

Իսաբեկին կերակրողը տատս էր, երբ նա վերադառնում էր այգուց կամ քաղաքում շրջելուց: Մայրս հորից ջուր կքաշեր և սրբիչը ուսին՝ ջուր կլցներ ձեռքերին, և Իսաբեկը՝ բավականությունից տնքալով, փնչալով սառը ջրով կլվացվեր, կսրբվեր՝ մորս մի ժպտանման բան բաշխելով, և եթե այգուց էր եկած լինում, կասեր, որ կողովում բան կա, տար երեխեքին, և այդ «բանը» կլիներ այգու ամենաընտիր մրգերից, որոնց տեղը միայն ինքը գիտեր: Ապա բեշմեթի գրպանից կհաներ մի հոտավետ շամամ և կասեր. «Էս էլ քեզիկ»:

Մայրս երևի Իսաբեկի սրտովն է եղել:

Ամառվա բոլոր ամիսներին, աշնանն էլ նստում էին հացատանը, որտեղ փոքր թոնրում իր «եռն առած» բոզբաշն էր կամ իգդիրցիների ամենօրյա ուտելիք ճավարով շորվան, իսկ բացած կապույտ «դաստախոնին» շարված ավելուկ, գյանդլա, խորոված բադրիջան, պոմիդոր և հորած պանիր, պարտեզից քաղած բուրումնավետ կանաչիներով, սոխ «գյալոշով» և այլն: Եվ որովհետև մայրս էր նաև պատրաստ, ականջը՝ ձենի, ապա Բանավշան ձայն կտար մորս.

— Սաթենի՜կ, բոյիդ մեռնեմ, մե ես գյուգոմը լից պեր քյո ազիզ ծեռով...

Եվ պատահում էր, որ կրկնվում էր կամ չէր կրկնվում, նայած Իսաբեկի տրամադրությանը: Բայց իր չափը գիտեր. մեկ–երկու փարչ՝ իր համար հատուկ կարասում պահվող գինուց:

Հաց էին ուտում, մեկը մյուսին մի բան հրամցնելով, և Բանավշան էր, որ մե՛կ ավելուկը կմոտեցներ, մե՛կ թասը կլցներ, մե՛կ լավաշի մի լավ «ծաղիկ» կմեկներ իրեն... Եվ զրուցում էին իրար հետ կես բառից հասկանալով, կիսատ նախադասություններով՝ տնից, երեխաներից, այգուց, «դուքանից»...

— Բաղի լոբին հավաքելուի...— կասեր Իսաբեկը, իսկ տատս գլխով կաներ, որ կնշանակի՝ վաղը հավաքված կլինի:

— Ավետիսը ասաց՝ բաղի խաղողն ուզող կա...— Իսաբեկն էլ գլխով կանի և կավելացնի.

— Թող իկյան տսնամ: Էն ի՞նչ են պերի բալկոնը,— առանց պատշգամբի կողմը նայելու կհարցնի, և Բանավշան կասի, որ «շկաֆ» են առի՝ շորի պահարան, և իմանալով Իսաբեկի առանձին սեր չունենալը «նորամուծությունների» նկատմամբ՝ կավելացնի. «Քյո չուխաները, պալտոնը չեմնալի որտեղ կախեմ, սնդուկը խո զերզամբի՞ չի»...

Իսաբեկը չի շարունակի՝ երևի պատասխանից գոհ լինելով:

— Ուսաբեգի նոքյարը պանիրը պերե՞ց...

— Քյո պանը չի, կպերի... Տու էն ասա, մեշկտ իշխոլի էսօր...

— Մե քիչ լավ ի, էն դեղեն էլը քյսի էսօր...

— Ասա, քյո ինչ պանն ի սելի ակը փոխելը, գո Աբասը, Հայրուն ինչի՞ համար են, խո էն ջահելը չե՞ս, տնաչե՛ն...

— Կողբեն մարդ չի էկի՞...

— Զէ՛, ի՞նչ կա...

— Մե խաբար արեք թող Արշալույսն իկյա, քյանի վախտի չի եկի...

Իսկ սա էլ նշանակում է, որ խանութի հաշիվները դուր չեն գալիս, և հարկավոր է, որ Արշալույս քեռիս կարգի բերի...

Եվ այսպես՝ ամեն աստծո օրը:

Հետո, այդպես էլ ծալապատիկ, Իսաբեկը կթիկնի բարձերին և գլուխը թեքած կրծքին՝ կննջի, մի թեթև փստացնելով, որից բեղի ծայրը ամեն անգամ վեր կթռչի, կիջնի:

Բանավշան անշշուկ կհավաքի սուփրան, կարպետի ծայրով կծածկի Իսաբեկի ծնկները և խաչակնքելով երեսը՝ կմրմնջա. «Տե՛ր, փառքդ շատ, քյո տվածն ի»...

Իսաբեկը հիվանդանալը չի իմացել՝ ինչ բան է: Մի անգամ է հիվանդացել «սաթրջամով»՝ երևի թոքերի ծանր բորբոքումով... և տատիս հրաշագործ դեղերը չեն օգնել, ինչպես և բժիշկ Ասլանյանի հաբերը...

Բանավչան, խոնարհ հանդարտությամբ հալիվորի գլուխը ուղղելով բարձի վրա, իր փոքրիկ ափով կարծես շոյելով փակել է աչքերը և հավաքվածներին ձեռքով հասկացրել, որ հեռանան:

Նստել է գլխավերևը և խոսել, մրմնջացել է, սովորական, օրվա ինչ կա–չկայից, արածից, անելիքից... Կարծես լսելիս է եղել Իսաբեկը՝ հպարտ գլուխը բարձին, դեռ սև–սպիտակ խառն ալիքվող մազերի պսակով, և դողդոջուն մատներով մերթ–մերթ ուղղել է ճակատին ընկած մազերը և խոսել, խոսել... Եվ շտկելով հոգնատանջ մեջքը՝ վեր է կացել և հայտնել իր վերջին ասելիքը Իսաբեկին անհասկանալի դաժան վճիռով...

— Շատ չեմ թողնի, որ սպասես, օխտնեն կիկյամ...

Այսինքն՝ դեռ յոթը չլրացած՝ կգնա իր հալիվորի մոտ...

Բանավչան Ավետիսի հետ լողացրել է Իսաբեկին, նոր, սպիտակ փոխնորդ հագցրել, հագցրել են իր տոնական սև չուխան, կապույտ բեշմեթը և սև չաքմանները... Եվ Իսաբեկը պառկած է եղել, ոնց որ քնած: Գեղեցիկ, հպարտ, բոլորին անտարբեր, հեռու, անհասանելի, ինչպես միշտ եղել էր... Հետո լացը չատացել է հակառակ Բանավչայի դժկամության: Իսկ ինքը՝ Բանավչան, չի լացել. նստել է ապշած, զարմացած պատահածի այդքան անսպասելի, արագ տեղի ունենալու վրա, մտքերի փակուղին ընկած, մոլորված, չտեսնող աչքերը՝ անորոշ հեռուներին, Իսաբեկի տերողորմյան ափի մեջ սեղմած, քարացած...

Իսաբեկին Բանավչան էր լողացնում:

Իգդիրում բաղնիքներ կային, բայց մերոնք տանն էին լողանում:

Շաբաթ երեկոյան, երբ այգուց վերադառնար, արդեն լողանալու ամեն ինչը պատրաստ էր լինում:

Մեծ, ղավուրմայի ղազանը լիքը՝ մեծ թոնրի վրա էր լինում, իսկ փոքր թոնիրների վրա պարզաջրելու փոքր ղազաններն էին:

Մեր տանը պուտուկ՝ ղազան, շատ կար, ամեն մեկը՝ իր տեղը, ժամանակին

գործածվում էր, իսկ տանը՝ դարակներում, հայտնի ֆիրմաների ընտիր ամանեղեն կար մեզ և հյուրերի համար:

Անասուններին տեղավորելուց, խոտ տալուց հետո հացատուն կմտներ Իսաբեկը, որտեղ լվացքի մեծ թեշտը իրեն էր սպասում: Եվ նստել է Իսաբեկը տակի «չամաշորը» չհանած, խոնարհ, ժպտանման բան բեղի արանքում, սպիտակ մարմնով, թեթև, հաճելի սրթսրթալով, ուժեղ մազակալած կուրծքը քորելով...

Եվ Բանավչան սկսել է իր արարչությունը: Գլուխը մի երեք անգամ սապոնելով՝ իր կոշտ, պինդ մատներով այնպես է տրորել Իսաբեկի հոգնատանջ գլուխը, որ Իսաբեկը գերագույն հաճույքից կռնչացել է միշտ ու մռթմռթացել քթի տակ, երևի հաճոյախոսել Բանավչայի հասցեին: Իսկ տատիս դեմքին ողջ արարողության ընթացքում մի խորամանկ, անուշ ժպիտ է եղել այն պարզ գիտակցությամբ, որ իր արածը միայն գոհունակություն կարող է պատճառել «մեր մարդուն»...

Հետո մեկ–մեկ սպիտակեղենը թոնրի տապի վրա տաքացնելով՝ «մեր մարդուն» է տվել, նաև նոր, նախշուն գուլպաներ, ու Իսաբեկը, գոհունակությունը չպահելով, կատակով իրեն է դիմել. «Այ օղորմի ճռիկիդ խորը, որ քեզ նման ախչիկ ի ստեղծի, Մանուշա՜կ (որ պարսկերեն նույնն է՝ Բանավչա)»:

Այդ օրերին խաղաղված, ճակատի խոր ակոսները հարթված սեղան է նստել բոլորի հետ, անշտապ հաց կերել, հարսին, երեխաներին ժպիտներ բաշխել և այդպես՝ ամեն աստծո շաբաթ կամ կիրակի: Իսկ Բանավչան մինչև հոգու խորքերը գոհ, խաղաղված չի մոռացել բարձրյալին հանգստացնել իր սովորական խոսքերով, որ «շատ չհամարի»...

Բայց շատ է թվացել երևի այս աշխարհի բանից անտեղյակ տիրոջը...

Տատս դեռ առողջ, ամուր է եղել՝ «զրինդ», ինչպես ասում են իգդիրցիք... Բայց ասածը արել է: Ճիշտ է՝ քիչ ուշացումով, բայց մի ամիս թե երկու, ընդամենը: Չի ուզել առանց իր Իսաբեկի ապրել և վերջ:

— Դու ասա, սիրելի՛դ իմ Իգդիր, ինչի՞ է նման, ո՞ւմ է պետք էն մարդը, որ չի կարող իր նախնիների շիրիմներին այցելության գնալ... Գուցե իմանաս. ի՞նչ է մնացել, ծածկվե՞լ են փշով, եղինջով, քար մնացե՞լ է վրաները, թե՞ փլվել, հավասարվել է հողին... Հետք մնացե՞լ է սուրբ Գևորգի գերեզմանատնից... Բայց չէ՞ որ պետք է, շատ պետք է, որ մարդը իր հարազատների շիրիմներին մոտ լինի... Չի կարելի, մարդկային բոլոր օրենքներին հակառակ է... Էլ ո՞վ, եթե ոչ ես, պիտի ամեն գարնան հետ Մանուշակ տատիս գերեզմանին մանուշակներ փռեի...

Լուռ ես, բան չգիտես: Ո՞րը հիշես, ի՞նչ հիշես: Չկան... Եվ ի՞նչ ասել է «չկան»: Չէ՞ որ կային, հարյուր տարի կային, հազար եղել են, կային: Տարօրինակ բառ է այդ չկան: Չկա և չկա:

* * *

Երևանից Իգդիր այդ «Ժիգուլի» կոչված մեքենայով կարելի է մի ժամ հետո կանգնել մեր տան դռանը՝ հողագույն կարմիր ներկած մեր «դարվազայի» առաջ: Հացատունը դարվազայի աջ կողմում է, շարունակության վրա՝ գոմը, որտեղից կլսվեր մեր Ջեյրանի փռնչոցը և ոտքերի անհանգիստ դոփյունը հատակի տախտակների վրա, ինչպես և Վայսկայի ջահել խրխնջոցը, որ կնշանակեր՝ ուզում է, որ մեկը գոմ մտնի, ջուր բերի դույլով կամ խոտը փոխի թարմ, ծաղկաբույր խրձով... Ես մի անգամ նեղացրի Վայսկային: Գոմ մտա իմ սիրելի հորթուկին՝ Ծաղիկին տեսնելու և տեսա, որ խոտ չկա նրա առաջ, իսկ Վայսկայի առաջը լիքը խոտ էր: Միամիտ վերցրեցի մի բռաչափ և տարա դրեցի հորթի առաջ և ետ եկա... Վայսկայի կողքից անցնելիս Վայսկան բերանը բերեց դեպի երեսս և բերանն առավ թուշս... Իմ ճչոցի վրա եկան, բայց և տեսան, որ ոչ մի հետք չկար երեսիս, ցավ էլ չկար, վախից էի ճայնս գլուխս գցել: Վայսկան պարզապես ուզել էր ձիավարի ինձ կշտամբել իմ վատ, շատ անշնորհք վարմունքի համար, և ինչպես անշնորհք երեխայի ականջն են քաշում կամ թուշը կսմթում, մատներ չունենալով՝ իր հաստլիկ, փափուկ պռոշներով էր թշիցս բռնել... Եվ զարմանալի, ապշելու բան է, որ կես դար անցել է, ավելին, և դեռ ռունգերով զգում եմ Վայսկայի մռութի խոտաբույր հաճելի շունչը, փափուկ–փափուկ պռոշների հպումը երեսիս...

— Է՛, սիրելի՛ս, Վայսկան եթե լեզու ունենար, քեզ կասեր, որ դու ոչ միայն անշնորհք ես, կույր շան թուլա ես եղել, որ չես տեսել հենց գոմի կողքին խոտի դեզը... Կասեր նաև, որ դու բոլորովին էլ իգդիրցի չես, եթե կարող ես ձիու առաջի խոտը վերցնես ու տաս փսլնքոտ հորթին...

Մեր ձիերի քանակը կապ չուներ մեր տան ձի նստողների քանակի հետ: Մեր տանը «ջիգիթ» չկար, պապս էր, որ այգի գնալուց մենակ չմնալու, զրուցակից ունենալու համար «դավրեշին» հետը տանում էր, իսկ մեծ եղբայրս Ալեքպոլում սովորում էր՝ Կամերչեսկի ուշիլիշչայում, որ երևի արժանի փոխարինող դառնա Իսաբեկյան առևտրական տան համար: Մեր եզդի նոքյարն էր Վայսկային նստում՝ Աբասը՝ պետք լինելուց:

Մեր ձիերի քանակը կախված էր հորս պարտք ունեցող զինվորական սպաների Իգդիրից հեռանալու փաստի հետ, որոնք պարտքի դիմաց՝ փողի փոխարեն, թողնում էին ձի կամ ուրիշ արդեն ավելորդ բան իրենց ունեցվածքից, անգամ զենք: Բակում պարապ կանգնած էին երկու բաց կիսակառքեր ևս, գաղթելուց միայն պետք եկան: Առնող չկար, պատահում էր՝ հավերն էին թառում վրան, և մեկ էլ մորս ծաղրանքին էին պետք գալիս, երբ հարկավոր էր լինում հորս «թոթխարությունը», ոչ ձեռներեցությունը երեսով տալ:

Եվ ահա «Ժիգուլիով» ես մի ժամից կարող եմ Իգդիր հասնել նախկին թագավորական խճուղով:

Կանցնեմ փոստի երկհարկանի շենքի մոտով, դիմացը՝ աջ կողմում, կլինի Իգդիրի բուլվարը, որի ծայրում ռուսաց եկեղեցին կլինի իր գերեզմանատնով:

Եկեղեցին սև քարով, տուֆով էր շինված, մեծ ու փոքր երկու գմբեթներով և զանգակատնով:

Աղավնիներ չկան, կորել գնացել են իրենց տեր Մեֆոդիի հետ: Նրանք էլ երևի իմացած են եղել, որ թուրքը աղավնու հետ գլուխ չունի: Ձախ կողմում փոստից մի քանի շենք հետո մեր խանութն է Իգդիրմավա, մեր տուն տանող խաչմերուկում: Խանութի ցուցատախտակը չկա, տարանք Երևան... որ նորից հետ բերեինք երևի, բայց հետ չեկավ, մնաց մեր Երևանի տան պատշգամբում՝ ծառայելով որպես «պերեգարոդկա» պատշգամբի ծայրում, որտեղ հացի, լավաշի մեծ պահարանն էր դրված, «չկաֆը», որ Իգդիրում էլ կար և կար բոլոր իգդիրցիների տներում, քանի որ բոլորը լավաշ հաց էին ուտում և միակ հացի փուռը Իգդիրում, որ «սոմի», կաղապարով հաց էր թխում, նա էլ ռուս բնակչության համար էր: Մեր խանութի կողքից սկսվում էր Իգդիրմավայի լայն փողոցը, ուղիղ դեպի մեր տուն տանող, որը նման չի Իգդիրի նեղլիկ, ծուռումուռ փողոցներին, քանի որ նոր էր ստեղծվել և, ժամանակին գուցե և... «պողոտա» դառնար մի որևէ պատկառելի իգդիրցու կամ որևէ զորավարի անունով և հավանական է՝ զորավարի, քանի որ հարգելի իգդիրցիք մի առանձին համակրանք ունեին դեպի այդ զբաղմունքի տեր մարդիկ:

Մինչև մեր տուն արանքում եղած տներին ուշադրություն չեմ դարձնում, մտքիս մեջ թվելով՝ շտապում եմ: Մեր դարվազայի կարմիր գույնը շատ է խունացել, վաղուց ներկ չի տեսել, բայց դուռը կա: Երկաթի մուրճիկը չկա, տեղը ծակ է, տակի սալիկը մնացել է: Տան առաջի առվի ափի ջահել բարդիները չկան, տեղը կտրած բներն են մնացել՝ շիվակալած: Օ՜, ի՜նչ սնկեր էին լինում նրանց բների տակ, ամեն մեկը մի բահի չափ և ի՜նչ խորոված էր լինում սնկից... Դուռը թակելու կարիք չկա, ես կամացուկ հրում եմ, և նա խուլ ժանգոտ նվոցով տեղի է տալիս... Ոչ ոք չկա բակում, ինչո՞ւ, մեզանից հետո մարդ չի ապրել այստեղ, ի՞նչ է: Ուղիղ դեմս ջրհորի բաց բերանն է սևին տալիս, կողքին թթի ծառն է, որ շատ է հաստացել, սաղարթակալել: Թթի ծառի հետևից երևում է լուսամուտները թափված տատիս «կլինիկան»...

Դեպի աջ՝ դռան պատի երկայնքով, հացատունն է, թոնրատունը, նրան կպած ցախատունը, հարդանոցը, բայց կտրին և կողքին խոտի դեզեր չկան, իսկ մեծ, երկար գոմը կա: Դուռը ծղների վրա բաց է, և, եթե շատ ուզեմ, կարող եմ Ջեյրանի,



«Դավրեշի» խռպոտ փնչոցները լսել, կամ Վայսկայի ուրախ խրխինջը, որ ոտնաձայն լսելուց չէր կարողանում իր ուրախությունը պահել:

Ձայն չկա, լռություն է: Իսկ լռությունը եթե երկար, անհասկանալի երկար տևի, կարող ես և անտեր շան նման կաղկանձել... Գլուխս շրջում եմ ձախ՝ տան կողմը, որտեղ մեր «զերզամբին»՝ մառանն է ձգվում, այդպես էլ կիսատ, «անգլուխ» մնացած: Մի հարկ էլ վրան պիտի չինվեր՝ չհասցրեց հերս և կիսատ էլ մնացել է: Պետք չի եղել ավելորդ շինություն մեր տան թուրք տիրոջը, իսկ մեզ պետք էր, մեր մեծացող ընտանիքին: Եվ զարմանալու էլ բան չկա, թուրքը խալխի հողում քոլիկ էլ չի շինի, եթե համոզված չի, որ իրեն է մնալու: Բայց տարօրինակ է, էլ ինչ կասկած կարող էին ունենալ էդ «տերերը», երբ արդեն կես դարն անցել է, ինչ «իրենցն» է... Երբեք, երբեք «իրենցը» չի եղել ոչ մի ժամանակներում Սուրմարիի հողը... Եվ մեր ո՞ր առատաձեռն նախնիները հրամցրին, ինչպես ասվում է, «սկուտեղի վրա» շեն ու գեղեցիկ գավառը էդ ոջլոտներին... Եվ վաղեմության օրենքն էլ իրենց օգտին է աշխատել, աշխատում հաստատված պայմանագրով, հանուն բարիդրացիական ազնիվ զգացմունքների և ամեն անգամ նորոգվում է այդ պայմանագիրը, ամեն 10–20 տարին անցնելուց, զարմանալի ճշտապահությամբ, հոգատարությամբ... Անունդ փոխեին գոնե, ինչպես փոխել են կողքիդ ցցված ահռելի լեռան անունը, որ հազար–հազար տարի աշխարհի բոլոր ծայրերից երևացել է որպես Արարատ սար... Իսկ հիմա դարձել է «Աթաղաղ», «Հայր» լեռ, սար, իրենց Նահապետ Նոյն է իջել էդ սարից, Նոյի սունաթած տարբերակը, և տղաներն էլ Սեմ, Քամը, Հաբեթ չեն եղել՝ Հասան, Հուսեյն, Ալի՝ «ետի տերը զոռբա կլինի»՝ ասում են, իրենք են...

Զերզամբու դուռը կիսաբաց է, և ինձ չի հետաքրքրում, թե ինչ կա ներսում՝ մեր մառանում... Եվ ի՞նչ կարող էր լինել քաղցած մորեխից հետո մեր մառանում: Իսկ ի՞նչ չկար մեր մառանում: Գուցե թռչնի կա՞թ, «պտիչի մոլոկո»... Այդպիսի կոնֆետ էլ կար կարծեմ, որին իգդիրցիք բանի տեղ չէին դնում, և սպառողները «աֆիցերի կնիկներն էին»՝ Իգդիրի բուլվարում կիրակի օրերը զբոսանքի դուրս եկած, երբ կայազորի փողային նվագախումբը պատահում էր, որ համերգ էր տալիս: Իսկ առավոտյան ամեն անգամ այդ համերգներից հետո բուլվարը ավելու ելած ռսի ժամի «դվորնիկը»՝ մի աչքը շիլ կոզակը, «շաշ

պինչուկը» հերսոտած կկանգներ ցախավելը ձեռին, բուլվարի ծայրին, մի երեքհարկանի հիշոցով կձևակերպեր իր կարծիքը այդ «օկայանի սուկին կոտերի» հասցեով, որ բուլվարը ծայրեծայր ծածկել էին կոնֆետի գույնզգույն թղթերով և չրթած արևածաղկի մնացորդներով, և փոչին կկանգներ բուլվարով մեկ...



Բայց մառանը դատարկ պիտի լինի և լավաչի ճոճն էլ, որ եթե մնացել է դեռ կախ, պիտի օրորվի, գնա–գա կամացուկ, դատարկ:

Մեր կողքին ապրող, ապրած թուրքերը այդպես էլ չիմացան լավաչի համը: Նրանց կերածը սաջի վրա (կլոր վահանաձև թիթեղ) անեկ խմորից տափակացրած բլիթանման բան էր, ինչը կերել էին և ուտում էին դեռ ո՛վ գիտի երբ և որ ժամանակներում և ումից ողորմած կամ գռփած ալյուրով, երբ ելած իրենց տափաստաններից արշավում էին դեպի տկարամիտ Կոնստանտինի քաղաքը՝ շտապելով, վռազ, ձիերից իջած դադարի ժամանակ... Եվ նույն, անեկ «կլոճն» էին ուտում և կերել էին երևի, երբ իրենց էինք թողել Իգդիրի հոյակապ թոնիրները:

Մառանի վերջում երևում է մեր պատշգամբի ծայրը, որի տակ հողում թաղված հորած պանիրի թուջերը պիտի լինեին... Ի՞նչ պիտի լինի եղած–չեղածը՝ խժռել են ու վերջ, «հարամ» չեն հաշվել...

Ուզում եմ առաջ գնալ, ոտքերս չեն ենթարկվում: Նստում եմ ջրհորի փոշոտ սալին և նոր եմ զգում, թե ինչքան եմ հոգնած:

Ես սիրում էի մեր ջրհորի մեջ նայել: Մեր ջրհորի ջուրը՝ պարզ, վճիտ աղբյուրի ջուր էր և մեջը նայելիս, ինչպես հայելու մեջ, ինձ էի տեսնում, և մի կտոր կապույտ, կապույտ երկինք...

Ո՛չ ես կամ, ո՛չ էլ կապույտ երկինքը... Հողով է, լցված, աղբով, և խոնավ, ծանր գաղջ հոտ է ներսից երեսիս խփում, և ես գարշանքից հետ եմ քաշում գլուխս, որ շնչահեղձ չլինեմ...

Ապակյա աչքերով նայում եմ մեր բակի կողմը, դեպի մեր պարտեզը... Հատուկենտ ծառեր են մնացել:

Պարտեզի կենտրոնում տաղավարը չկա, բայց ծիրանի ծառը մնացել է, մի քիչ ճղակոտոր է, բայց կա... Դիմացկուն են ծիրանի ծառերը, հին ծառերը, ջրել էլ պետք չի, դիմանում են...

Բան չկա վրան, բայց ի՜նչ ծիրան էր բռնում... Միամիտ հետաքրքրությամբ վիզս ձգում եմ իր կողմը... և ուսիս իջած մի ձեռք հետ է պահում ինձ: Սարսուռով վեր թռչում: Անկողնում եմ, շուրջս խավար է, սառը քրտինք ճակատիս: Ձեռքով լուսամփոփի կոճակն եմ փնտրում, չեմ գտնում: Երբ աչքերս մթին սովորում են, դիմացս նկատում եմ մեկին, որ աղոտ երերալով պարզվում է, տեսնում եմ հորս լուսավոր, անգույն դեմքը:

Ուշ է եկել այսօր, եթե շուտ եկած լիներ, այդ մղձավանջը չէի տեսնի, ա՜խ, պետք չէր տեսնել: Վերմակի ծայրով քրտինքս եմ սրբում, իսկ նա ինձ է նայում շփոթված հայացքով՝ «Երևի վախեցրի»: Ձեռքով հասկացնում եմ, որ նստի, բան չկա, ասում եմ, և երևի բարձրաձայն եմ ասել այդ «բան չկան», հարցական ինձ է նայում...

— Ինչը չկա... Բա խոսում էիր բարձրաձայն, անունս տվիր... Մեր ձիերի՝ Ջեյրանի, Վայսկայի...

Նստի՛ր, ասում եմ, ա՛յ հեր, թող շունչս առնեմ, ախար, Իգդիր էի գնացել... Նրա սպիտակ անգույն դեմքը ցավալի կծկվում է և տխուր, շատ աննշան ժպիտը աչքերում՝ կախում է ալեհեր գլուխը և ինձ չնայելով՝ ասում է.

— Երազիդ ես գնացել... Ես էլ մի քանի անգամ, արագիլների հետը... Քնի՛, բալա՛ս, ուշի, ես էլ էթամ...

Ու մարում է երեսը մոմի լույսի պես խավարում:

Բայց կողքիս մայրս է, երազ չի արդեն, մերս է վախվորած, անհանգիստ աչքերով... Լույսն էլ ինքը վառեց, և միանգամից ուշքի եմ գալիս ուրախացած:

— Ի՞նչ է պատահել, բալա՛ս, մյուս սենյակից լսվում էր ձայնդ... տնքում ես, քեզ–քեզ խոսում, ո՞ւմ հետ էիր խոսում,— և ճակատս է շոյում իր հրաշագործ մատներով...

— Էս ի՞նչ օրի ես, ջուր ես դարձել, հո հիվա՞նդ չես... հո... խմա՞ծ... Ինչքան եմ խնդրել...

— Չէ՛, խմած չեմ, ոչ էլ հիվանդ եմ, տեղ էի գնացել:

— Ո՞ւր, էս կեսգիշերին...

— Իգդիր էի գնացել:— Սա էլ տխուր–տխուր ինձ է նայում:

— Երազ ես տեսել կա–չկա:

— Տո ի՞նչ երազ, Իգդիրում էի, մեր տանը... Մի ջուր տուր, մի բաժակ հորի ջուր՝ մեր սառը...

Գլուխն է աջ ու ձախ տանում, բերում. «Մեր ջրհորն էլ ես տեսել»...

— Էլ ի՜նչ ջրհոր, ա՛յ մեր, հող, ցեխ էր լցված, աղբ...



— Վա՜յ, քոռանան աչքերս, բա էն տեսակ անուշ ջուրը կմուռտառե՞ն... Պապդ որ խմում էր, մի օխա՛յ էր անում, կարծես Զոռի աղբյուրի սառցահամ ջուր էր խմածը... Ախար մեր ջրհորի նման ջուր չկար Իգդիրում...

— Էլ ի՞նչ տեսար, Էդի՛կ ջան,— հարցնում է մոռացած արդեն, որ տեսածս երազ է եղել:

Ես էլ նստում եմ տեղաշորումս և պատմում մանրամասն, մի բան էլ ավելացնելով, կարծես իսկապես Իգդիրից եմ գալիս... Ես պատմում եմ, իսկ նա ծնկներն է շփում՝ հետ ու առաջ անելով և լուռ արցունքներն է սրբում գլխաշորի ծայրով...

— Հե՜յ վախ, տո՛ւն քանդող... բա քո տո՞ւնը երբա բրիշակ ընելու, ոնց մերն արիր... Տեր Աստված, ինչի՞ ես քոռացել. բա էդ ձևի մա՞րդ են ստեղծում, բա դրանց մե՞ր չի բերել... ջուրը ցեխ կանե՞ն...

— Բայց ոնց որ մեկը կար սենյակում, հետը խոսում էիր... Ես ձենիդ վրա եկա... Զլինի՞ թե էլի եկել էր էն անդադարը...

Մորս պատմել եմ իմ գիշերվա այցելուների մասին, և գիտի մերս, որ բոլորից հաճախ ինքը՝ հերս է գալիս, և հիմա էլ բարկանում է միամիտ լրջությամբ:

— Բա ինչի՞ իմ երազին էլ չի երևում, քո զահլան ա տանում, քունդ խանգարում:

— Կարգին խոսա, ա՛յ մեր, զահլա տանելս ո՞րն է, հո քեզ չի խանգարում, գիտի, որ կարոտում եմ, գալիս է, իսկ դու չես հիշում իրեն...

— Ո՞նց չեմ հիշում, Էդի՛կ ջան... Մեղք էր, ախար, դեռ ինչքան կապրեր, ի՜նչ էր եղել իրեն, ում էր խանգարում: Իգդիրն էլ չտեսավ... Մե օր չէր մոռանում, էդ հույսով էր ապրում, էնքան վստահ էր ասում, որ Իգդիրը նորից է տեսնելու...

Եվ վեր է կենում տնքալով, գնում գլխիկոր՝ մտքերի փակուղին ընկած, ի՜նչ հիշելով, ո՜ւմ հիշելով, մտքի մեջ Իգդիրո՞ւմ է, թե՞ Կողբում:

— Ձեզ՝ իգդիրցիներիդ վրա զարմանալուց չես ճանճրանա... Ոչ մի թուրք մայր կամ կին չասեցին իրենց լամուկներին: Ա՜յ դոնղուզներ, ինչո՞ւ եք հարամում ջուրը, թոնիրները,— և իրենք էլ օրվա տան աղբը լցրին ձեր ջրհորները, թոնիրները հողին հավասարեցրին... Իսկ քո բարեգութ մայրիկդ դեռ ասում է. «Վա՜յ, քոռանան աչքերս...»: Չի ասում՝ քոռանան ձեր տանը ապրող թուրքի վարձկողի, բերողի աչքերը... Իսկապես որ զարմանալուց չես կշտանա:

Դե՛, մենք էլ ծնվել ենք երևի բոլորին զարմացնելու համար... Զգիտենք էլ, որ զարմանալի ենք. ապրում ենք, և ինքներս ենք զարմանում ուրիշների արածի, չենք ու շնորհքի վրա... Շատերն են նայել մեզ, ինչպես... Գուլիվերը լիլիպուտներին: Չկան, ավազ է, փոշի, եղինջ է տեղները, իսկ մինչև փոշի դառնալը տրորել են, ջնջել, հողին հավասարեցրել և գոհ իրենց շնորհքից, թեթևացած շունչ են քաշել, որ չկանք, վեր-ջացանք... Բայց երբ հետ են նայել՝ զարմացել են տեսածներից:

Մեզ ստեղծողն էլ է զարմացած մինչև օրս, քանի որ երբ ուզել է օձիքն ազա-տել մեզանից, տեսել է՝ անհնար բան է: «Տաշտաքեր» երեխայի նման միշտ, անդադար անհանգստացրել ենք մեր ծեր, հոգնած ստեղծողին: Մեղքը իրեն, թող չստեղծեր: Իսկ եթե ստեղծել էր, տիրություն աներ՝ ինչպես բոլորին: Մեծացել ենք առանց «մուհտա-ջի», երախտիքի, և ոչ ոքի պարտական չենք, որ կանք: Եվ այդ իսկ պատճառով ազատ, անկախ, անգամ անհոգ ենք մեզ զգում «մեր ծննդյան փուչ օրից»... Եվ տան փոքրի նման կարծել ենք ու կարծում ենք, որ բոլոր «մեծերին» ինչ–որ բանով պար-տական ենք, իսկ ինչո՞վ, ինչքա՞ն տաս, որ պրծնի, չգիտենք հաստատ, քանի որ ծնված օրից ուզող եղել է, և դեռ տալիս ենք և մի օր չասինք ուզողներին.

— Հերի՛ք եղավ, կերաք, ծվատեցիք կյանքներս, զզվեցրիք, թողե՛ք ապրենք, էլի՛... Փորձել ենք չտալ,— տարել են զոռով, խնդրելով, մի չոփ չթողնելով... Ուզո-ղից մի պրծում կար՝ չտալ, բայց տվել ենք, տվել ենք, չուզողին անգամ... Կանչել տվել ենք... «Բարեկենդանի» անխելք կնկա նման... Օ՜, եթե մի օր մերժենք էդ ուզողներին, դուռը ուզողի քթին չխկացնենք ու ասենք. «Հերիք եղավ, «Աստված տա», ռա՛դ եղեք»...

— Չի ասի, չեք ասի: Եվ ո՞նց պիտի ապրեք ձեր բարեգութ սրտով էդ գուլում աշխարհում, գլուխ չեմ հանում ձեզանից... Քո անսովոր այցելությունը, սիրելի՛ս, քո հոգնած ուղեղի հնարածն է, ցավալի է, որ հանգիստ չունես... Իսկ իմ տեսածը... Ես կայի, չէ՞... Հիմա էլ կամ և լինելու եմ՝ ձեր քարտեզների վրա քորոցի գլխի չափ, թե ոսպի, կորեկի, կամ, և լինելու եմ, ու տեսա էդ խոզերի, շնագայլերի ոհմակին, երբ լցվե-ցին քաղաքս ձեր գաղթելուց հետո... Ի՞նչ արեցին, ո՞նց քրքրեցին տուն ու շենս...

Զորքը չմնաց Իգդիրում, քաշվեց դեպի Արազ՝ Մարգարայի կողմերը... և Սուրմարի լցվեցին թուրք ու քուրդ գյուղերի, սարերից իջած և զորքի հետ եկած խու-ժանը, բաշիբոզուկները...

Առավոտից իրիկուն շշեր, քլունգ ու բահ առած, տուն ու բակ չթողեցին, քանդեցին, տների հատակի տախտակները պոկեցին, թոնիրները, ջրհորները մտան, ապականեցին ու գերեզմանների տակերը մտան... Ամեն ծակուծուկ մտնելուց հետո երեք եկեղեցիները գոմ ու մարագ դարձրին, բախչաները կտրատեցին, վառեցին, քաղաքային դպրոցը դարձրին գոմ ու պահեստ... Ձեր թողածից չկշտացան... Հորած, պահած բան էլ կար, գտնելիս՝ իրար ձեռքից խլխլում էին, իրար խեղդում...

Մի շաբաթ, երկու՝ քանդում էին, քանդում... Հետո մի մասը քաշվեց, ռադ եղավ, ովքեր որ հասցրել էին՝ խցկվեցին ձեր տները, սսկվեցին: Քաղցած շան պես էին ապրում, հետները բան չունեին բերած, ձեր թողածը կերան, վերջացրին, էլ ի՞նչ պիտի անեին... Եվ մի ժամանակ Իգդիրը համարյա դատարկվեց: Եվ նմանվեց քո տեսածին: Իսկ հետո փոխվեց: Նոր խալխ եկավ, ախար մեր հողերը լավն էին, լավ մշակված պատ-բաստի հող, այգի, պարտեզ, տնկած, պատվաստած ընտիր, մրգատու... Շրջակա գյու-ղերից եկան՝ ապրում էին: Ոչ մոտիկից էին բանի նման, ոչ հեռվից... Իրար երես էլ չէին նայում, մի «սալամ» էին ասում ու անցնում, կարծես բորոտ լինեին... Գողի պես էին ապրում՝ վախվորած, վախը մշտական մեջները, ինչպես գողի, ավազակի, որ ուրիշի շորեր է հագել և գիտի, որ կարող է մեկը կանգնեցնի ու հարցնի.

— Էս ո՞ւմ շորն ես հագել, հը՞...

Բայց հարցնող չեղավ, չեկաք, ա՛խ չեկաք...

Ձեր տանը մի տարուց ավելի ապրում էր ձեր հարևան պարսիկը՝ Մուսա Մալի-մը, պիտի որ հիշես, բայց նրան էլ քշեցին էդ մուռտառները, գնացին դեպի Պարսկաս-տանի կողմերը... Օ՜, մի՛ խոսեցրու, Աստված սիրես, հոգիս մի՛ քանդի, կարծում ես ես հիվա՞նդ չեմ, իմ հալը ո՞վ է հարցրել... Էն Մուսա Մալիմը, պիտի որ հիշես, ասում էր, որ խոսք է տվել ձեր տունը պահի, մինչև հետ գաք՝ չեկաք:

Գաղթին պատրաստվելուց էլ մեր տանն էր և մորս հանգստացնում էր իր սովորական, հանգիստ, անշտապ խոսքերով.

— Ես տունը կպահեմ, Սաթենի՛կ քույրիկ (հայերեն լավ գիտեր, խոսում էր), հանգիստ մնա... Ցալագ է, թարսվել է, նորից հետ կֆռռա, էսպես էլ չի մնա...

Էդ մարդն էլ չէր հավատում, որ մեր գնալը «էն գնալն» է լինելու:

Հորեղբայր Ավետիսը, երբ մեր տանն էր լինում «խորովածի օրերին», կանչել էր տալիս Մուսա Մալիմին, որ երևի ինչ–որ ժամանակ «Մալիմ»՝ ուսուցիչ էր եղել, իսկ այդ ժամանակ արհեստավոր էր, հմուտ թամբագործ, և երբ խորովածի հետ իրենց ղորանի արգելված մովուզի գինուց գլուխն էր քաշում (և իրեն մխիթարելու համար «շերբեթ» էր ասում)՝ Խայամ էր արտասանում երգաձայն, Հաֆեզ, Ռումի՝ ֆարսերեն: Հասկացող չկար ֆարսերենը, բայց շատ անուշ լեզու էր, քաղցր, ինչ–որ մի տեղ անգամ հարազատ էր այդ ֆարսերենը: Հետո ասածը հայերեն էր թարգմանում: Եվ ուստաբաշու աչքերը փոխվում էին, տխրություն էր իջնում վրան և բան չկարողա-նալով գտնել ասելու՝ քթի տակ «մաշալլա» էր կրկնում:

Եվ «պղծվում» էր Մուսա Մալիմը մեր տանը՝ խոզի մսով խորովածը և գինին վայելելով, իսկ իմանալով կերածի ինչ լինելը, ձեռքը թափ էր տալիս և ասում.

— Եղածը եղած է, ուստաբաշի՛, խոդան ողորմած է...

Բայց նրանց խոդան էլ երևի առանձին մի բան չէր:

* * *

Կա մի տարօրինակ հիվանդություն, որ հիվանդություն էլ չի կարգին, մարդավարի: Ո՛չ դեղերով է բուժվում, ո՛չ վիրահատության է ենթակա... Բայց մարդը կորցնում է քունը, հանգիստը, տեղ չի գտնում իրեն, ձեռքից գնում է՝ ինչպես ասում են: Այդ հիվանդությունից ո՛չ գլուխն է ցավում, ո՛չ էլ հոդերը, այլ ինչ–որ մի տեղը, որի տեղն էլ մինչև այսօր չեն կարողանում բժիշկները մատնացույց անել... Հին է էդ ցավը, ասում են այդ ցավով տառապել են դեռ Ոդիսևսի զինվորները՝ հիշելով իրենց Իթական, որ մնացել էր հեռվում: Հունարեն խոսք է՝ նոսթալգիա է կոչվել դեռ հնում, և եվրոպացիք են հիմա գործածում, բայց թե ինչու են եվրոպացիք գործածում այդ հիվանդության անունը, հասկանալի չէ, պատճառ չկա, քանի որ այդ ցավը սկսվում է... կորցրած հայրենիքից, ծննդավայրի կարոտից, կորստից, և ցավացող տեղը մարդու հոգին է...

Փարիզի մի երևելի հոգեբուժարանում քսան տարիներ չկարողացան այդպես էլ բուժել մի վարդապետի՝ այդ ցավից քրքրված հոգին: Ճար չգտնվեց: Վարդապետին մեր ուզեցել է օգնել իր հին՝ մանկության ընկեր վանեցի մի կտրիճ այր և այցելել է նրան, Փարիզի այդ երևելի հիվանդանոցը, ու չի կարողացել համոզել վարդապետին, որ թողնի հիվանդանոցը և իր հետ գնա... Իսկ վարդապետը, որ ճանաչել է, ողջագուրվել է իր ընկերոջ հետ, հարցրել է.

— Ո՞ւր գնանք, Փանո՛ս...— Եվ լուռ մնալուց հետո ավելացրել է.— Ո՞ւր ես գնում, Փանո՛ս, դու էլ մնա,— և լռել է:

Բայց թե ինչու է այդ ցավը «եվրոպականացել», շատ անհասկանալի է:

Ի՛նքդ դատիր, սիրելի՛դ իմ Իգդիր, այդ ո՞ր եվրոպացու տուն ու տեղն է գտնվում «Ժիգուլիով» մի ժամվա հեռավորության վրա, կամ երեք շար փշալարերից այն կողմ, որ կարոտից չնչահեղձ լիներ, ձեռքից գնար, հիվանդանար անբուժելի...



Մի սովորական առավոտ տանեցիներից ոչ մեկին ոչինչ չասելով, չզգուշացնելով մեծ հորաքրոջս՝ ողորմածիկ Նունե հորաքրոջս մեծ աղջիկը, որ տարիքով ութսունից անց էր, ինքն էլ երեխաների, հարսների, թոռների տեր, առավոտ մութը լուսին վեր է կենում, ավտոբուս նստում, իջնում Մարգարա գյուղի մոտ և մտքամոլոր, անշտապ քայլերն ուղղում դեպի այն կամուրջը, որով մի օր քեզ «լքեցինք»: Թե ինչպես է պատահել, որ աննկատ հասել է

կամրջին՝ Աստծուն է հայտնի: Իրենք՝ սահմանապահներն էլ են ապուշ կտրած լինում, երբ տեսնում են դեպի կամուրջը գնացող պառավին...

Այստեղ արդեն իրարանցում է լինում՝ «տրևոգա», կանգնեցնում են մեծ քույրի-կիս և զարմացած, տագնապած հարցնում՝ որտեղի՞ց լույս ընկավ, ո՞ւր է գնում, ինչո՞ւ և այլն, և այլն... Գալիս է նաև այդ սահմանապահների պետը, և նրա հարցմունքին մեր մեծ քույրիկը՝ Ամալյան, պարզ, հասկանալի ռուսերենով (Օրիորդաց գիմնազիա էր ավարտել) բացատրում է պետին, որ՝ այսպես–այսպես, կարոտել է, շատ է կարոտել իր ծննդավայր Իգդիրը և ուզում է գնալ իրենց տունը տեսնելու: Ինչ է, չի՞ կարելի...

Իսկ պետն էլ նույնքան հասկանալի ռուսերենով բացատրում է, որ անհնարին բան է (խելքից դուրս բան չի ասել), որ այստեղ սահման է, իսկ այնտեղ ուրիշի պետություն է, Թուրքեր են... Եվ հասկանում է նաև այդ պետը, որ ծալը պակասի հետ գործ չունեն, այլ մարդու «անհասկանալի» միամտության, տարօրինակության: Եվ այդ հասկացող պետը հրամայում է, որ մի ութոռ տանեն դնեն հենց Մարգարայի կամրջի այս ծայրին, և «հարգելի մամաշան» ինչքան քեֆը կտանի, թող նայի իր ծննդավայրի կողմը, իր «Ռոդինայի» կողմը, որը կամրջի ծայրից (միևնույն է, որ ծայրից) չի երևում, բայց «կողմը»... Քո կողմը, սիրելի՛դ իմ Իգդիր... Քո կողմը, ինչպես տեսնում ես, նայել չի արգելվում:

Եվ նայում է Ամալյան չտեսնող, ջրակալած աչքերով Իգդիրի կողմը...

Արագից թեթև հով է փչել, և ալեհեր գլուխը բաց՝ խոնարհելով, ուղղելով, երկար նայում է ու մղկտում անձայն... նույն այն սուրմալեցի մեծ պաշտոնյայի նման, որը երևի նույնպես այդ «եվրոպական» հիվանդությամբ է տառապելիս եղել... Հետո փառավորապես կերակրում են Հարգելի «մամաշային» և «վիլիսով» առոք–փառոք բերում տուն՝ Երևան, որտեղ գլուխները ծեծող հարազատները իմանում են սույն պատմությունը:



Իսկ պատմությունից մի քանի օր առաջ իրենց տատ Ամալյան ավելի քան տարօրինակ է պահել իրեն: Շատ անհանգիստ, ցրված, խոսքը մոռանալով, սովորական գործը կիսատ թողնելով, հայացքը՝ ոչինչ չտեսնող, մի կետի կամ անորոշ հառած, լուսամուտի մոտ կանգնած... և ամենից շատ լուսամուտի առաջ կանգնած: Ճաշին ասել է. «Մի բան լցրեք խմեմ»: Ասել են՝ հիմի թեյը պատրաստ կլինի: Հետո ասել է. «Սիրտս մի տեսակ լավ չի»... վալիդոլ են խմեցրել... Ասել է. «Մրսում եմ», երբ դրսում շոգ ամառ է եղել... և վերմակով նրան ծածկողները իրար երես են նայել՝ ցուցամատերը քունքերին դնելով...

Գիշերը լսել են, որ հառաչում է, ման է գալիս իր սենյակում... Բայց չեն իմացել, որ այդ գիշեր, որի առավոտյան պիտի անհետանար, գիշերը խոսել է մոր հետ՝ լուսահոգի Նունե հորաքրոջս հետ, որն էլ ասել է նրան.

— Ախչի՛ Ամալյա, ի՞նչ ես տունը խառնի իրար՝ մրսես եմ, չոգես եմ, դեղ ես խմելի... Ե՛լ, ե՛լ, վե՛ր կաց, առավոտը գնա Իգդիր...

Ամալյան ուզեցել է հարցնել. «Ա՛յ մեր, ո՞նց գնամ, ո՞ւր, ի՞նչ ճանապարհով, ինչո՞վ, ախար...

Նունե հորաքույրս երևի լսել է հարցը և ձեռքով մի անորոշ շարժում է արել դեպի լուսամուտի կողմը, ինչպես որ իմ այցելուները՝ ձուլվել խավարին:

Իսկ հիմա տանն է: Եվ ի՜նչ թամաշա, տանը ասեղ գցելու տեղ չկա: Բոլորը դարձել են հարցական նշան և սպասում են բացատրության: Էլ ի՜նչ բացատրություն, նստել է լուռ, հանգստացած և երանելի ժպիտը չի իջնում երեսից: Դեմքի արտահայտության մեջ ինչ–որ խորամանկ բան էլ կա, ու գոհ է: Գոհ՝ ինչպես չարաճճի երեխան, որ իր ուզածը արել է հակառակ չուզողների... Եվ գոհ է նաև, երևի, որ իր համար այդպես անհանգստացած են... Իրար են անցել, և ինքը մի բան արժե սրանց համար: Հետո վալիդոլ տվողը կասի. «Բա ասում էիր, ա՛յ տատ, որ սիրտս «մի տեսակ լավ չի»... Վերմակով ծածկողները թե՝ «Մրսում եմ, ցուրտի»... Բա ո՞նց գնացիր հասար «Մարգարյա»:

— Ոչ մի Մարգարյա, Մարգարա, և իր կամուրջը, որտեղից պիտի թեքվեի ձախ, Իգդիր տանող ճանապարհը...

— Դու էլ,— մեջ է ընկնում թոռներից մեկը,— ա՛յ տատ, քոքել ես՝ Իգդիր,- Իգդիր...

— Ձե՛նդ, անպետքի՛ մեկը,— և սև խաղողի գիլանների նման սև աչքերը՝ կայծերով լիքը, իսկ ձայնը՝ համարյա թե ահարկու, հրամայական...

— Էլ չլսեմ Իգդի՛ր... Ձեր խելքի բանը չի Իգդիրը, ա՜խ, ձեր խելքի բանը չի...

Եվ ախն էլ հո ախ չի եղել, ոնց որ պատը քանդվի:

— Էլ Իգդիր անունը չտաք, ձեր խելքի բանը չի: Այ ձերը հրեն Ձերեմուշկա, Բանգլադեշ... Էս «Մասիվը», էն «Մասիվը»... Ձեր անլվա բերանով «ՆՐԱ» անունը չտաք... Էն ընկեր գեներալը ընձի հասկացավ, դրությանս մեջ մտավ, իսկ դուք ոնց էոր յահուդի, թուրք ըլեք...— և խաչ է անում բերանին թուրքի անունը տալուց, ինչպես ընդունված էր մեր կանանց մոտ՝ մի անպարկեշտ բանի անունը տալուց, և դառնում աղջկան. «Ախչի՛, Վարդո՛ւշ, մե չայ դիր»...

Եվ մինչև թեյը կդնեն, թեքվում է բարձին, հենց հագի շորերով՝ փոշոտ, հոգնած, շատ հոգնած ու քնում, քանի գիշերներ տրորվելուց հետո:

Բոլորը մատների ծայրերի վրա, զգույշ դուրս են գալիս սենյակից, կողքին մնում է մեծ աղջիկը և ողջ գիշեր լսում քնի մեջ զառանցող մորը...

— Գնացիմ, ա՛յ մեր, տեսամ, տունն էլ, տունն էլ...— և ժպտացել է, ժպտացել հետը հառաչելով...— տունն էլ, տունն էլ, բախչան էլ...

Հիմա ի՞նչ կասես, սիրելի՛դ իմ Իգդիր, բուժվե՞ց մեր մեծ քույրիկը, որ մղկտալով քո կողմն է նայել, ոչինչ չտեսնող, ապակյա աչքերով «գեներալի» դրած աթո-

ռին նստած... Միակ հավաստին եղել է Արազից փչող անուշ զովը, ալիքների խուլ ճողփյունը կամրջի ժանգոտած, գույնը կորցրած երկաթներին, Մարգարայի կամուրջի, որով քեզ «լքեցինք» մի անիծյալ օր...

Եվ, սիրելի՛ս, դա բուժվելու բան չի, որ դեղ կուլ տաս, լավանաս, ի՞նչ իմանաս՝ ինչ է: Մի բան գիտեմ, որ դա մարդու հոգու հետ կապ ունի և ասյան, որ չի ուզում լերդանալ... Դա մեր՝ հայերիս հիվանդությունն է՝ կարոտի կսկիծը, հոգու մորմոքը, իսկ մարդու հոգին երբ լցվում է, շատ է ծանրանում, մենակ տանել դժվար է...

Մեր մեծ քրոջ՝ Ամալյայի բավականին պերճախոս օրինակը նկատի ունենալով՝ մենք, սիրելի՛ Իգդիր, հարկ է մտածենք նաև, որ քո հարգելի քաղաքացիները միայն տղամարդիկ չէին, որ քնից զրկվել էին, տեղ չէին գտնում իրենց... Ո՞ւմ մտքով է անցել, քո որ տղամարդն է փորձ արել նայելու նրանց՝ Ամալյաների հոգու մեջ, որ հատակ չունի, ո՞վ է հարցրել նրանց քո կարոտի չափի ու կշռի մասին... Օ՛, եթե նրանց հարցնեին, ո՛վ գիտի, գուցե և թույլ չտային նրանք քեզ լքել... Ո՞վ գիտի...

Ի՞նչ են տանում իրենց հետ անվերադարձ, ի՞նչ զարմանահրաշ հուշեր, պատմություններ՝ չպատմած, չասած–պահած, քո հողե կտուրների տակ աղջիկ դարձած, մեծացած՝ մայրիկ–տատիկ դարձած թուխ, հաստածամ իգդիրուհիք, որոնք ծերանալուց փոքրանում, դառնում են աշնան լորի նման փոքրամարմին, շատ անուշիկ, թախտի վրա մի բռան չափ տեղ զբաղեցնող, տերողորմյայի հատիկները անշտապ համրելով, և ի՞նչը համրելով. անցա՞ծը, թե՞ մնացածը...

Իմացա, որ հողին են հանձնել մեր հեռու բարեկամներից մի պառավի, քո Իգդիրիդ երկարակյացներից մեկին էլ, Փառանձեմ զալոյին (իգդիրցիք բոլորը բարեկամ են գալիս իրար ինչ–որ մի կողմից): Հուղարկավորությունից տուն են դարձել հարազատները և հարկ է եղել հավաքելու Փառանձեմ զալոյի տեղաշորը: Եվ տեղաշորը փաթաթելու համար ներքնակի տակից վերցրել են Իգդիրից մնացած հին յամանին և ծալի միջից սահել է թախտին մի սև բան: Հարսի լեղապատառ ճչոցի վրա զալոյի տղան վազել է ու տեսել թախտին... այդ «սև բանը» մաուզեր է եղել պարզապես՝ արծաթ կոթով: Եվ դողացող մատներով ձեռքն է առել ծանր, լցրած այդ զարհուրելի զենքը... Քանի՛–քանի անգամ են հավաքել, թափ տվել, արևին փռել այդ յամանին: Տե՛ր Աստված, որտեղ է ամեն անգամ պահել, որ ձեռք չկպչի, տեղը չիմանան...

Քո ո՞ր տղամարդն է փորձ արել նայելու նրանց հոգու մեջ, ո՞վ է հարցրել նրանց քո կարոտի չափն ու կշիռը, իսկ ցավն ու զայրո՞ւյթը... Պահել էր զալոն: Այդ լորի չափ զալոն մաուզեր էր պահել... և լցրած, միայն բլթակը պիտի քաշեր մեկը: Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ այդպես էլ չծնվեց մի սիրտ տաք, գոնե ծալը պակասի մեկը, որ քո թուխ, հաստածամ աղջիկների, հարսների համար մինչև նրանց մի լորիկի չափ դառնալը, մինչև նրանց թախտի վրա մի արշինանոց տեղ զբաղեցնելը, մինչև նրանց... թեթև դագաղը երկու հոգով տանելը նրանց համար էլ մի երգ հնարեր՝ «Հայո՛ց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ»...

Էհ, կարող եք դուք էլ ձեր սրտին մոտ համարել այդ սիրտը լցված երգչի խոսքերը՝ իմ նախշուն հարսներ, իմ չխոսկան զալոներ, թեև հատուկ ձեզ չի ուղղված և չէր էլ լինելու երևի, քանի որ ձեր անիմաստ հույսը «վերադառնալու» ձեր կաթը մակարդելու ուժ է ունեցել և երգելու տեղ չի թողել «ուտողների» մոտ, նրանք էլ են հետաձգել, հետո էլ մոռացել, որ Իգդիրի արյուն ունեն երակներում, որ երգ պիտի գրվեր, խոսք պիտի ասվեր ձեր մասին էլ... Եվ երգն այդ՝ տաք պիտի լինի, տաք թոնրից հանած լավաշի բուրմունքով և զուլալ, ինչպես նոր բացած կարասի երեսի գինին և համն էլ՝ կարասի գինու նման թունդ, հերսոտ ու անուշ, շատ անուշ, խելքամաղ, ցնորալի...

Ձեր մտքով էլ չէր անցնում, որ կարելի է, պարտավոր են ձեր մասին էլ երգ հնարել, երբ... չէիք հանդգնում ձեր տեգրերի, կեսրարների առաջ բարձր խոսել: Մեզ՝ երեխաներիս էիք խնդրում, որ «միջնորդ» դառնանք և ինչ անհրաժեշտ էր լինում ասել ձեր «մարդուն», կռանում, մեր ականջին էիք ասում, իսկ մենք անհարկի բարձր կրկնում էինք մի քանի անգամ՝ մինչև «ձեր մարդը» գլխի ընկներ մեր ամեն անգամ սխալ կրկնելուց, և եթե մեր «թարգմանության» իմաստը ընդհանուր առմամբ անախորժ բան չէր լինում՝ կարող էինք արժանանալ նաև մի «շահանոցի», հինգ կոպեկանոցի՝ մեծ պղնձից ձուլված, որով մեյդանում կարելի էր մի պատկառելի «գոզինախ» ուտել կամ «ֆռիկ Գեղամի» չարխը տասը անգամ ֆռռացնել, որ մի բան շահենք... և խաբված տուն վերադառնանք:

— Բայց մե՛ր տղա, ինչո՞ւ հեռու գնանք, մտքովդ չի՞ անցել, որ դու էլ ես... մի քիչ էդ ասածդ «եվրոպականով», մի թեթև հիվանդ, քո պատմած հիվանդներից ումի՞ց ես պակաս որ...

Դե, իմ օրն էլ մի օր չի: Կարծես թե ամեն ինչ տեղս է, ողջ, առողջ եմ, բայց այ, նրանց՝ քո հարգելի քաղաքացիների այցելությունից հետո դառնում եմ անկողնի հիվանդ... Գլուխս «էն» չի, սիրտս, ճիշտ Վլասի «թփ–թփ ճաղացի» նման է աշխատում... Պատահում է՝ փակում եմ աչքերս, զոռ եմ տալիս երևակայությանս, որ հետ բերեմ, գոնե զրույցը շարունակենք, գիշերը լուսացնենք, բան չի ստացվում, չեն գալիս... Հիմար բան է ստացվում, իրենք երբ ուզում են, գալիս են, իսկ իմ ցանկությունը բանի տեղ չեն դնում, իսկ ես կարծել եմ նրանք իմ երևակայության այսպես ասած «պտուղն» են... Պարզապես տունս իրենց համար Կուկուլի կազինոն է, կամ այսօրվա ասելով՝ ակումբ... Գալիս են ժամանակ անցկացնում, «որոշ հարցեր» պարզում և «բարով տեսանք», իսկ ես էլ ակումբի վարիչն եմ իբրև թե...

Ճիշտ է, իսկապես հիվանդ եմ և անբուժելի երևի, նմանվել եմ արդեն քո բժիշկ Ասլանյանին երբեմն այցելող պառավներին, որոնք ժամերով զբաղեցնում էին նրան՝ իրենք էլ չիմանալով, թե ինչ–որտեղներն է ցավում...

— Պժժկիս ասեմ... սիրտս մե տեսակի... թե մեչկսի ցավալի, թե...— Իսկ խեղճ Ասլանյանը, համբերությամբ լսելով, քննելով, ժպտալով կասի. «Սրտին բան չկա և մեջքին էլ»...

Բայց և քաղաքացիներիդ վրա փորձած դառը խինինի հաբեր կտա խմելու՝ հանուն պատշաճի...

Իսկ տանը զուռնաչի «բլդուղ Օհաննեսը» կիմանա իր պառավի բժշկի մոտ լինելու պատմությունը, մի քանի հատ լավ կհասցնի իր պառավի մեջքին, կողերին՝ ամեն խփելուց կրկնելով. «Տաղի ցավալի՞, տաղի ցավալի, խա՞... ես քյո ախմախ կլոխը հա՜»...

Ես էլ ճիշտ նրանց նման չգիտեմ ցավիս տեղը, բայց որ ցավում է, մխում է թաց ցախի պես՝ կասկածելու չի... Եվ այս թուղթ մրոտելն էլ այդ «մխից» է հաստատ...

Ասում են, եթե կարող ես չգրել, պետք չէ փորձել... Բայց երևի չգրելը ավելի դժվար է և գիտեմ, որ «գայթակղություն» չի արածս, կամ պարապ մարդու զբաղմունք... Զբաղմունք ունեմ, շատ, գրում եմ պարզապես օձիքս ազատելու համար քո հարգարժան քաղաքացիներից, իմ «անհրավեր այցելուներից», որ գիշերները չվախեցնեն ամեն անգամ ու նորից՝ «հը՞, հո՞ չես մոռացել, տես հա...»:

— Ուզում ես ասել, որ արածդ իզուր, ավելորդ բան է... էլ ինչո՞ւ ես, ինչպես դու ես ասում, «թուղթ մրոտում»...

Մեկ է, դու չհարցնեիր, մի ուրիշ խելոքը կտար այդ հարցը: Դու պիտի չտայիր այդ հարցը, քեզ են յոթ տասնյակի մոռացության փոշով ծածկել այդ բոլոր «խելոքները»... Մի ամբողջ քաղաք՝ իր կյանք ու ապրուստով, կնունք ու հարսանիքով, պապ ու գերդաստանով, սեր ու մահով...

* * *

Իգդիրում, ինչպես հիշեցինք, հմուտ արհեստավորներ շատ կային, որոնք արհեստանոցներ ունեին, աշկերտ–օգնականներով, ենթավարպետներով: Այդպիսիներից էր դարբին Օհաննեսը իր աշակերտներով, և որի տղան էր Պարույրը, Բոգոսլավսկու «հաշիվը մաքրողների» գլխավորը, որին դարբին Օհաննեսը իր ամեն իմացածը սովորեցրել էր, բացի... «թարս» նայելով հայելու մեջ կրակելուց:

Սեկոյենք, բացի իջևանատնից, ունեին նաև կառքերի վերանորոգման արհեստանոց ուստա Մուխաիլի գլխավորությամբ, որը հայտնի էր ողջ Սուրմալվում: Ի՜նչ ընտիր, անզուգական կառքեր... Դիմացկուն, ներկած, նկարած նախշուն, գեղեցիկ՝ «իշխո պատկերք ըլի»,— հպարտությամբ ասում էին իգդիրցիք: Եվ, ինչպես արդեն գիտենք, կային զինագործ վար-

պետ Ավագովենց Նիկողոսը և այլոց արհեստանոցները՝ բրուտների, ոսկերիչների, դազանչիների, ներկարարների և այլն:

Իգդիրցի արհեստավորների խմբին ավելացան ջրհոր փորողները, որոնց մեջ ամենաշնորհքով վարպետը վանեցի էր: Շատ հազվադյուտ կարող էր սխալվել այդ վարպետը բակերում արտեզյան ջրերի կամ աղբյուրների երակները գտնելու հարցում, որոնք տարբեր խորությունների վրա էին լինում:

Փորողները, հորերի կողերը ամրացնողները տարբեր բանվորներ էին լինում, բայց տեղը գտնելու համար հրավիրվում էր փորողների վարպետ Փառնակը: Սակայն պատահում էր, որ նա էլ էր սխալվում, ինչպես տեր Մեսրոպը, որը համառորեն չուզեց վարպետ հրավիրել: Գուցե և պատճառը միջոցներ չունենալն էր, մեծ ընտանիքի հոգսի տակ լինելով, բայց փաստը մնում է փաստ, որ տեր Մեսրոպը երկու անգամ փորեց իր հորը, բայց ջուր ունեցավ: Եվ փորեց առանց իր տղաների օգնության, պարապ ժամերին, քանի որ, ինչպես ինքն էր ասում, «Օրհնյա ի տեր» չկա սեփական տանը...

Ինչևէ, այդ ջրհորները պակաս գործ չարեցին Իգդիրում «տաքոց–դողոցը» պակասեցնելու հարցում, բժիշկ Ասլանյանի խինինի հետ միասին:

Եվ շուտով իգդիրցիք դադարեցին առվի ջուր խմել ու ապացուցեցին նաև, որ պարոն Եփրիկյանը չէր սխալվել Իգդիրի ժողովրդին «ժրաջան» անվանելով: Եվ պիտի ասել, որ ջրհոր չունեցողներն էլ էին ունեցող հարևանի ջրից օգտվում և արգելող չէր կարող լինել:



Իգդիրի ուստաբաշիներից նշանավորը պիտի համարել Իսաբեկի ավագ որդուն՝ ուստաբաշի Ավետիսին, որ իր աշակերտ–օգնականներով հայտնի էր տղամարդուն անհրաժեշտ հագուստեղենի կարելու վարպետությամբ: Նրանք կարող էին «զուգել» և՛ գեներալի, և՛ գնդապետի, և՛ ՋՀանգիր աղային, և՛ Ուսուբ բեկին, և՛ նրանց «նոքյարներին», թիկնապահներին, ինչպես և Իգդիրի, Օրգովի սպայությանը և, իհարկե, առաջին հերթին պատվարժան իգդիրցիներին, որոնք, թաքցնելու բան չի, սիրում էին «պճնվել»... Գալիս էին թուրք, քուրդ բեկեր Երևանից և այլ տեղերից: Ես մի անգամ ներկա էի, երբ «զուգում» էին Երևանից ժամանած մի բարձրաստիճան զինվորականի, որ եկել էր իր պատվիրած տոնա-

կան, շքերթային, կովկասյան համազգեստը տանելու: Դա սպիտակ կերպասից չեր-քեզկա էր, մուգ կարմիր բեշմեթով, բաճկոնակ, սպիտակ «փրչոտ» փափախը և «չաքմանները», որ բերեց Հարևան կոչկակարը: Եվ նրա փքված. շոյված դեմքի արտահայտությունից կարելի էր ենթադրել, որ ինքն իրեն շատ էր դուր գալիս, երբ նայում էր խանութի մեծ հայելու մեջ և պիտի ենթադրել նաև, որ հավանում էր կարվածքը ու «մաղարիչը» աշակերտներին՝ աղավայել պիտի լիներ, և եղավ: Ինձ էլ մի... սուլիչ հասավ:

Երևելի էին նրա կարած ձմեռային «շուբաները» «վենգերս-կի» մոդայով, որը փոխարինում էր իգդիրցիների վերարկուին: Գեղեցիկ հագուստ էր, խիստ սեղմած «տալիայով», գոտկատեղով, որի վրա գոտի ավելորդ էր կապել: Մուգ կարակուլի մորթիով երիզվում էր հագուստի փեշերը: Եվ այդ հագուստով անհնար էր փնթի, թափթփված ման գալ, և ուզած–չուզած պիտի ձգված, կուրծքը դուրս ցցված շորորային, ճիշտ քյաչալ Կյասպարի հնդուհավերի պես: Երևելի էին կառապանների ձմեռային հագուստները՝ նույնպես ճոխ ծալքերով, «բուզմաներով», լայն թևքերով, նորից մեջքի մոտ սեղմած... Նրանք էլ պակաս չէին իրենց տեսքով քյաչալ Կյասպարի հնդուհավերից, հատկա-պես փքված, ուռած ժամանակ, երբ ուր որ է պիտի ղլղլոցը դնեն: Տարեց իգդիրցիք հագնում էին երկար սև չուխաներ կապույտ բեշմեթներով՝ գոտկված կաշվե բարակ արծաթա-պատ գոտիով, որից անպակաս կախված էր լինում խանչա-լը՝ հարուստ պատյանով:

Ուստաբաշի Ավետիսի և՛ համբավն էր մեծ, և՛ պատիվն ու հարգանքը: Ապրում էր մեր հին պապենական տանը՝ իր չքնաղ պարտեզով, որի կենտրոնում տաղավարն էր, «բեսեդկան» էր, ինչպես մեր նոր Իգդիրմավայի տանը, որտեղ ամառները, աշնանը հացկերույթներ էին լինում, քեֆեր: Ուստա Ավետիսը, չնայած իր լուրջ, համարյա թե խստաբարո կեցվածքին, ապրուս-տին, սիրում էր նաև քեֆ, ուրախություն, և՛ իր տանը, և՛ ուրիշների սեղաններին դառնում էր ուշադրության կենտ-րոն, իր զարմանալի թամադայի բաժակախոսքով, անուշ, համուհոտով, «մասալաներով», սրամիտ պատումներով, և խոսում էր հանգիստ, անշտապ՝ բոլորի ակնածանքի, լռության և ուշադրության տեր և տիրակալ լինելով:

Եվ գեղեցիկ էր, բարձրահասակ՝ ջահել բարդու պես, ճակատը բարձր՝ հակառակ իր փոքր եղբոր ճակատի, որ հոնքերից երկու–երեք մատ վեր էր սկսվում, ինչպես և իմը: Հայացքը լուրջ էր, կարող էր և սառը թվալ, բայց մեջը բարություն կար անսահման: Իգդիրի նախանձելի փեսաներից էր համարվել՝ ինքը լինելով համակ պարկեշտություն: Ամուսնանում է Աթոյանների աղջկա հետ Իսաբեկի, Բանավշայի ընտրությամբ՝ մի անգամ տեսած լինելով ընդամենը իր հարսնացուին: Գեղեցկուհի չէր Վարդուհի զալոն, բայց նրբակազմ էր, փոքրամարմին, նուրբ, մանր դիմագծերով և զարմանալի աշխատասեր, Բանավշային հիշեցնող: Երկու երեխա՝ աղջիկ ու տղա ունեին... Տղան՝ Հայրապետը (Հայրոն)՝ նրբագեղ, մորը քաշած... Բայց այդ նրբագեղ պատանին ալմաստի կարծրություն ուներ, անզիջում կամք, տարիքից շատ ավելի հասուն, լուրջ և որի «նրբագեղ» սառը հայացքից ուստաբաշին անգամ «մի տեսակ» էր լինում, մտածմունքի մեջ ընկնում...

Դեմք ու դիմագծերից մարդու մասին կարծիք կազմողը միշտ կարող է սխալվել:

Ահա այդ պատանին, որի դեմքի աղվամազը նոր էր հայտնվել, բայց դեռ չէր կոպտացել, կարող էր ուրիշ ենթադրություններ ծնել, երբ մի բան իր ուզածով չէր... Սառը, դաշույնի փայլ էր աչքերում, և հանկարծ էլ՝ ամոթխած ժպիտ, երեխայի մաքուր, անբիծ ժպիտ: Բայց ծիծաղել չգիտեր... Եվ դա երևի բնականից զսպված բնավորության արտահայտությունն էր, որ այդ ցեղին հատուկ էր: Ես այդպես էլ չտեսա, չլսեցի այդ ցեղի բարձր, լիաթոք ծիծաղը... Իսկ ես ում եմ քաշել՝ չգիտեմ...

Փոս թաղի և իրենց փողոցի քարե կռիվների սկիզբն ու վերջը նրա ուզածով էր լինում: Իգդիրմավայի «խարաբաներում» «տակտիկական վարժությունները» ինքն էր գլխավորում: Միակը ինքը ձի նստած՝ մեր Դավրեշին կամ Վայսկային, որ Սաթենիկ զալոն չէր կարող արգելք լինել, կամ թեկուզ Հմայակ հորեղբայրը... Քանի որ ինչպես Ավետիս եղբոր նկատմամբ՝ սերն ու պատկառանքը տարածվում էր նաև Հայրոյի վրա:

«Կռվող» զինվորները ուսադիրներով էին, ինչպես և «զենքով», նկարված, ճիշտ նույն չափերով՝ մաուզեր, մոսին, նագան՝ ըստ աստիճանի և այդ բոլորը նկարում, ներկում էին, սղոցով կտրում զարմանալի նմանությամբ, որի հեղինակը իմ մեծ եղբայրն էր՝ Հրոն՝ Հրայրը: Տակտիկական զինախաղը սկսվում էր շարված զորասյանը ողջույնի խոսքով, որ նա ասում էր ռուսերեն, իսկ մնացածները անհասկանալի երկար պատասխանի փոխարեն վանկ–վանկ զիլ ծղրտում էին՝ հե՛յ, հե՛յ, հե՛յ, և վերադառնում էին տուն՝ խմբական երգով, ճիշտ բաղնիք գնացող կամ բաղնիքից վերադարձող սահմանապահ զինվորների նման ոտքերով

թմփացնելով Իգդիրմավայի փողոցի ալրանման փոշու մեջ, իրենց հետևից թողնելով իսկական զորքից շատ ավելի փոշի...

Օ՜, ես նախանձից սևանում էի, որ նրա զինվորը չեմ, և հանուն մխիթարության նստեցնում էր ինձ իր «թամբի» առաջը, երբ կախված շրթունքս պատրաստ էր լուրջ իրավիճակը փչացնելու, զավեշտական դարձնելու, և նաև նրա համար, որ մեծերի մոտ ավել–պակաս չբլբլացնեմ...

Ի՞նչ կարող էր դառնալ այդ պատանին՝ Աստծուն մնաց հայտնի: Բայց նա հասցրեց լինել և Ապարանում: Իսկ քո ո՞ր երիտասարդը կարող էր չլինել, բացի ինձ նման կաթնակերներից, որոնք մեծացան Երևանում: Հիմա ո՞վ չի խոսում Սարդարապատի, Ապարանի մասին: Ախար նրանց անունն էլ քոնի նման դժվար էր արտասանվում, սիրելի՛դ իմ Իգդիր, համարյա թե «մաուզերիստի» նման՝ կասկած և տարակուսանք առաջացնելով միամիտ երևանցիների մոտ: Սարդարապատի անունն էլ դժվար էր տալ, ավելի, քան այն գերմանացու հնարած զենքի, որն իր իսկ անունով էր կոչվում և հասել էր Վան, Ալաշկերտ, Իգդիր, Երևան, որ եթե հայերենի վերածես՝ կդառնա մի զարհուրելի իմաստ՝ մահ–ուզեր: Այդպես, ճիշտ այդպես նրա ճշմարիտ կրողների համար այդպես կիսված երևի ավելի հասկանալի կլինի, քանի որ նրանց՝ այդ զենքը կրողների համար «մահ ուզելը» հավասար էր հող ուզելուն, մի բուռ հող, որ Սարդարապատից, Ապարանից հետո իրենց, մեզ պիտի մնար և մնաց:

* * *

Ավետիս հորեղբայրը՝ Իգդիրի երևելի ուստաբաշին, արդեն տարիքն առած, բայց իր հպարտ գլուխը ձիգ պարանոցին, որ միայն կարի մեքենայի առաջ էր թեքվում, մի փոքրիկ, տախտակից շինված մի «բուդկա»՝ կրպակ ուներ Երևանում, ուր հազիվ կարի մեքենան էր տեղավորում և մի քիչ էլ տեղ, որ պատվիրատուն կանգներ «չափսը» վերցնելու համար: Իսկ պատվիրատու մնացել էին մի քանի՝ իր նման տարիքն անցած քո քաղաքացիներից, իր ընկերներից, եզդիներից, որոնց հագուստի մեջ փոփոխություն չկար դեռ, և իր նախկին աշակերտներից ուղարկած մանր–մունր պատվերներ... Այդ կրպակը Գյոյ մեչիդի դիմաց մեծ հրապարակի վրա էր, մեր տնից ոչ շատ հեռու, որտեղ ես գնում էի ամեն օր հորեղբորս համար կուլայով սառը ջուր բերելու մեչիդի բակի սառը աղբյուրից, խանութը ավլելու և այլ մանր–մունր բաների համար: Գնում էի նաև հորս թախանձանքով, որ ուզում էր մի բան սովորեմ՝ հուսահատված իմ սովորելու բացահայտ դժկամությունից... Իմ կապած միջամատը, որ այդպես պիտի սովորեր

կեռ մնալ՝ մատնոցով ասեղի պոչը հուպ տալու համար, մի օր քանդվեց, երբ աղբ-յուրից ջուր բերելուց կուլան կոտրվեց:

Հորս այդ հույսն էլ չկարողացա «իրականացնել» և, զարմանալի էր, չբարկացավ, ոչինչ չասաց: Երևի հորեղբայրն էր ասել, որ իմ «միջամատը» ասեղի պոչի համար չի ստեղծվել: Հետո՞: Հետոն միշտ էլ քո քաղաքացիների համար ուրախ վերջավորություն չէր ունենում այն ժամանակներում: Հետո մի քանի կոպեկ կհավաքի, կգնա կհասնի Ռուսաստան՝ աքսորավայր՝ հեռու Սիբիր, կբերի Հայրոյի, Հայրապետի, իր միակ, միակ, անբախտ որդու՝ աքսորում մի բարի ռուս պառավի մոտ մնացած հագուստեղենը, որ Վարդուհի զալոն լաց լինի վրան...

Հայրոյի ճակատին երևի էն գլխից ուրիշ բան էր գրված եղել, ինչպես Իգդիրի շատ երիտասարդների:

Նա Երևանում չհասցրեց երկար ապրել, Երևանի բնակիչ չմնաց... Զթողին, որ մնար: Բայց հասցրել էր արդեն գիմնազիա վերջացնել և աշխատել որպես հաշվապահ՝ Երևանի նոր բացված պետական թատրոնում:

Հորեղբայրն արդեն կրպակ էլ չուներ և տանն էր աշխատում՝ առիթից առիթ, և երևի դրա կարիքն էլ չկար, Հայրոն էր տունը պահում: Ամուսնացել էր, նորից ճանաչում ուներ, հարգանք՝ իր շրջապատում, որ չէր կարող չլինել իր զարմանալի, բնածին խելքի ու վարվեցողության, մարդկանց գերելու հմայքով:

Հիշում եմ, նրա հարսանիքն էր: Հորեղբորս տանը, Երևանի տանը, որի երեք սենյակները լիքը հրավիրվածներ էին, մեծ մասը իգդիրցիներ և Հայրոյի նոր ծանոթ-ները: Հարսանիքը թառ–ղավալով էր, «արևելյան դաստայով», գինին էլ երևի առատ էր, որովհետև ճառեր էին ասում, աղմկում, քեֆ անում...

Սեղանի ծայրին, Հայրոյի կողքին նստած էր իր նման փոքրակազմ մի մարդ, որի մասին հավաքվածները իրար բացատրում էին, որ «հայտնի կյրող ի»... Դեմքի վրա երևելի քիթ ուներ այդ հայտնի «կյրողը» և ամենամեծ աղմկողը ինքն էր՝ չնայած իգդիրցիների ղալմաղալի վարպետ լինելուն: Եվ երբ քեֆը «սազա-ցավ», այդ մեծ քթով մարդը քեֆի թունդ պահին ցանկություն հայտնեց, թե սեղանի վրա է ուզում պարել, և թույլտվության չսպասելով, մի թղթադրամ շրխ-կացնելով ղավալչու քրտնած ճակատին, զարմանալի ճարպկությամբ թռավ սեղանին ու շորորաց «Թարաքյամա»՝ ոտքերի տեղ բացելով շշերի, բաժակների ու ափսեների արանքում...

Ոչ ոք չզարմացավ այդ մեծ «կյրողի» անսպասելի վարմունքից, քանի որ իգդիրցիների մոտ քեֆերին սեղանների վրա պարելը վաղուց ընդունված «համար» էր, էն գլխից... Եվ քեֆը թնդացավ հարսանքավորների ծափերից, զար-մանքից, հիացմունքից: Այդ հարսանիքից, եթե մի բան պակաս էր, դա մառուզերի

վաղ առավոտյան կրակոցները պիտի լինեին, որ չէր կարող լինել և չեղավ:

Հայրոն մի քիչ գունատ էր, բայց գոհ էր. երկու մատով ինքն էլ ճթթացնում էր ղավալի տակտի հետ, և մի քիչ էլ հպարտ իր երևելի ընկերոջ «իգդիրային» պահվածքից:

Այդ ազդեցիկ քթով մարդը, որ արդեն հասցրել էր ավելի զարմանալի արարմունքներով հիմարացնել պարկեշտ երևանցիներին, անհասկանալի, անբացատրելի մոտիկություն ուներ Հայրոյի և առհասարակ Իգդիրի մի քանի երիտասարդների հետ, և շրջում էր Աստաֆյանով՝ հորեղբորս կարած կարակուլի կարճ փափախով՝ մի քիչ հետ և թեք դրած, որ մազերի «քյաքուլը» կախվեր ճակատին... Գուցե «ժամանակի մոդա» է եղել երիտասարդների մոտ, կամ, ո՜վ գիտե, հին Խոյի, Մակվի արյան խլրտումն էր նրան մոտեցնում իգդիրցիների հետ, որ այնքան էլ խելամիտ չէր կարելի համարել, քանի որ Իգդիրի անունը արդեն կասկածի տակ էր վերցված:

Հայրոյի և այդ երևելի գրողի մոտիկությունը սկսվել էր Երևի «Պետթատրոնից», որ նոր էր բացվել, իսկ Հայրոն գլխավոր հաշվապահն էր թատրոնի, որի մշտական այցելուն, ցանկալի հյուրը այդ մարդամոտ, անհասկանալի պահանջներ ունեցող, այդ անհանգիստ, ոչ մի պայմանականություն չճանաչող մարդն էր:

Թե ինչով վերջացավ Հայրոյի և այդ մեծ «կյրոդի» ընկերությունը՝ չիմացանք: Եվ ի՜նչ վերջ կարող էր ունենալ: Տարան, աքսորեցին Հայրոյին էլ, իգդիրցի և ոչ իգդիրցի ուրիշ շատ երիտասարդների էլ, և ոչ միայն աքսորեցին...

Հայրոն, Հայրապետը հասցրեց գիմնազիան վերջացնել, որը հիմնադրված էր դեռևս Աբովյանի կենդանության օրոք, 1832–1868 թվերին, իր տարրական վիճակում՝ Երևանսկոյե ուեզդնոյե ուչիլիշչե էր, հետո՝ Երևանյան պրոգիմնազիա 1868–1881 թվերին և, վերջապես, 1881–1920 թվերին՝ «Էրիվանսկայա կլասիչեսկայա գիմնազիա»:

Ահա այդ դասական գիմնազիայում սովորեց և վերջացրեց Հայրոն, որտեղ լատիներեն էին անցնում, երկու օտար լեզու պարտադիր՝ ֆրանսերեն և գերմաներեն, բարձրագույն մաթեմատիկա, ֆիզիկա:

Այդ գիմնազիայում սովորողների մեծ մասը համբավավոր մարդիկ դարձան՝ հետագայում ուսումը շարունակելով Մոսկվայում, և շատ պետքական մարդիկ դարձան իրենց ժողովրդի համար: Արարատ Ղարիբյան, Կարո Մելիք–Օհանջանյան, Ջանփոլադյան, Պարգև Մարգարյան, Վարդան Ավագյան և բազմաթիվ ուրիշներ, ռուսներ, վրացիներ: Դիրեկտորը վրացի է եղել՝ Զոկոշվիլի, տեսուչը՝ ռուս, Ռոժդեստվենսկին: Դասավանդումը ռուսերենով էր տարվել և դասախոսների որոշ մասը եղել են ռուսներ: Հայ ուսանողների համար «բացառության կարգով» դասավանդվել է նաև հայերեն և կրոն:

Կրոնը անցել է Տեր Խաչվանքյանը, Խաչվանքյանների տոհմից, որոնցից մեկն էլ երևելի նկարիչ, պոլիգրաֆիայի բարձրագույն կրթությամբ Տաճատ Խաչվանքյանն էր, որը հետագայում 30–ական թվերին Զարենցի գլխավորությամբ հիմք կդնի գրքի հրատարակման, ձևավորման գործին՝ սկզբից ևեթ աննախընթաց բարձր մակարդակով, հրավիրելով նաև աշխատակցելու Թավրիզից վերադարձած Հակոբ Կոջոյանին:

Հիմա այդ գիմնազիայում սովորողներից հատուկենտ մարդիկ պիտի մնացած լինեին՝ 30–ական թվերի... քիչ մնացածներից, որոնցից մեկի հետ պատահական բերումով պատիվ վիճակվեց ծանոթանալ Աշտարակում՝ Սուրեն Սուքիասյանն էր, բնիկ աշտարակցի, նույն գիմնազիայում Հայրոյի հետ սովորած, և Հայրոյից շուտ կամ ուշ կամ միասին աքսորված...

Երեսուն տարիների աքսոր, արդեն 85 տարին բոլորած՝ «ներված», «արդարացված», վերադարձած: Այդ ջլուտ, փոքրամարմին ծերունին, իրեն վիճակված կյանքի բոլոր փորձությունների դառնությունը ճաշակած այդ հայ ծերունին, դիմացել էր՝ պահպանելով նաև մտքի պայծառությունը, կորովը և մարդուն այնքան հարկավոր հումորը՝ տխուր, թախծի հետ ընկերացած:

Օ՜, այդ փոքրամարմին, ջլուտ հայերը, ի՜նչ անբացատրելի զորություն ունեն կյանքի քմահաճույքներից չընկճվելու և դեռ հեգնանքով ընդունելու իրենց բաժին հասած դաժան փորձությունները: Կա՞մք է, թե՞ ոգի: Երևի և՛ մեկը, և՛ մյուսը: Եվ ճշմարիտը՝ դեպի հայրենի հողը սահման չունեցող սերն է եղել նրանց պահապան:

Տե՛ր Աստված, ի՞նչ կա, ի՞նչ ես դրել այդ մի բառի մեջ, և ի՞նչ է անում այդ մի բառը մարդու հոգու, սրտի, ողջ էության հետ, երբ մարդը գլխի է ընկնում այդ մի բառի բացատրություն չունեցող իմաստը, բայց հասկանում է, որ վեր է մարդուս ամենաթանկագին, անգամ մոր սիրուց, հարազատների, անգամ՝ քո ծննդավայրի օրորոցաչափ հողից... Մանավանդ այն ժողովրդի զավակի համար, որին նույն տերը բաժին է հանել դառնությունների ամենամեծ թասը...

Բայց Հայրոն չդիմացավ, նա էլ կլիներ հիմի Սուրեն եղբոր հասակակից, բայց երբ տարան... հիվանդ էր արդեն, թոքերից էր բռնել ցավը, երբ կանգնեց աքսորի ճանապարհին:

Սուրեն եղբայրը նկատելի հուզվում էր, ոգևորվում Հայրոյի մասին հիշելուց, և, սակայն, նրա սև, նշաձև աչքերը տխուր ջերմությամբ էին լցվում իրենց ընկերությունը, անցյալը հիշելիս:

— Իգդիրցիներ կային մեր գիմնազիայում, նրանցից մեկը հենց մեր հայոց լեզվի դասախոսն էր՝ Մելիք Ստեփանյանը, որը, ինչպես և մյուս բոլոր դասախոսները, մի առանձին ակնածանքով էր վերաբերվում Հայրոյին, նախ, որ սովորում էր հինգ ու խաչով և... կռվել էր Ապարանի տակ... Իսկ մենք՝ ուսանողներս, պարզապես սիրահարված էինք իրեն, իրենից տարիքով, բեղ–մորուքով ուսանողները, բոլորս նրան «Քեռի» էինք ասում...

Ես, իհարկե, էս օրերիս չէի, ինչպես հիմա եք տեսնում... Տանը, գյուղում մեծացած տղան ինչպես կլինի՝ լիքը, պնդակազմ էի, իսկ Հայրոն՝ նազուկ էր, իր տարիքից էլ փոքր էր թվում. բայց մի զարմանալի, արտասովոր բան կար մեջը, էդ նազուկության տակ ուրիշ մարդ էր. ասածը՝ ասած: Կրկնել ասածը՝ չկար:

Այդ վտիտ 18–19 տարեկան պատանուն, Տեր Աստված, «Քեռի» են կոչել... Ախար հեչ քեռու նման չէր մեր Հայրոն: Բայց «քեռիներ» այդ դժնի տարիներին պետք են եղել և շատ կային, և նրանց մեջ նաև այն միակ Քեռին, որի քաջության մասին լեգենդներ էին պատմում իր կենդանության օրոք դեռ:

— Այո՛, «Քեռի» էինք ասում և մեր «շտաբը» ունեինք այստեղ, մեր տանը, Աշտարակում, հրեն այն սենյակը, որ հիմի ուրիշ մարդիկ են ապրում... Այստեղից Ապարանը մոտ էր, իսկ մենք հատուկ հանձնարարություններ էինք կատարում իր գլխավորությամբ... Եվ, մի խոսքով... էլ ի՞նչ պիտի անեինք, ի՞նչ պիտի աներ 17 տարեկան պատանին, այն ժամանակ կարո՞ղ էր տանը նստել... Եվ ի՞նչ կլիներ, ի՞նչ էր սպասում Երևանին, եթե բոլորը տանը նստեին և թուրքերն էլ Ապարանով իջնեին Սարդարապատի թիկունքը... Չէ՛, տանը նստելու մասին մտածելն անգամ մեզ պարզապես դավաճանություն էր թվում...

Այդպես է եղել: Ապարանում Դրոյի զինվորների շատերի դեմքին աղվամազ էր դեռ...

— Դասարան էինք մտնում,— շարունակում է Սուրեն եղբայրը,— եթե բոլորի չասենք, շատերի մոտ զենք կար՝ ծոցագրպաններում, գոտկատեղերում խրած: Մի անգամ տղաներից մեկը հանել էր ատրճանակը և կրոնի դասին մաք-

ըելով էր զբաղված... Տեր Խաչվանքյանը մի երկու անգամ թարս նայեց վրան, բայց չդիմացավ, հետ տարավ փարաջայի փեշերը՝ երկու մաուզեր գոտկատեղում խրած, և բարկացած դարձավ այդ ուսանողին. «Ա՛յ տղա, ա՛յ սիրելիս, ախար ո՞ւմ ես ուզում զարմացնել քո ունեցած–չունեցածով, թաքցրու ատրճանակը, քանի ականջներդ տեղն են»:

Այդպես է եղել: Եվ վրացի տնօրենը և տեսուչը՝ Ռոժդեստվենսկին էլ գիտեին այդ մասին, բայց ի՞նչ կարող էին անել, երբ «նրանք» իրենց «շտաբը» ունեին, իրենց «քեռին», որ հեչ քեռու նման չէր: Օ՜, այդ նրբագեղ «քեռին» ի՞նչ խորհուրդ ուներ իր հոգում, ի՞նչ էր ծվարում նրա դեռ չկարծրացած սիրտը... Բայց հասցրեց գիմնազիան վերջացնել փայլուն (5 ու խաչով), որ արդեն նորից պետքական լինի իր ժողովրդին, և մնացին նաև նրանք, որոնք ուսումը շարունակելու գնացին, ինչպես իր դասընկերներից շատերը, որոնք կենդանի մնացին ռուսաստաններում: Ինքն էլ կարող էր գնալ և գուցե ամեն ինչ ուրիշ կերպ դասավորվեր, ուրիշ շարունակություն լիներ և ոչ այդքան քարսիրտ, անգութ, դաժան...

Հաշվապահ դարձավ նոր ստեղծված պետական թատրոնում, ամուսնացավ, մի տղա ունեցավ իր նման նրբագեղ: Երևելի քթով մեծ գրողի ընկերը հասցրեց դառնալ և հասցրեց նաև ինձ դպրոց տանել, երբ մեր տանեցիների բոլորի ջանքերը անցել էին ապարդյուն:

Չէի ուզում սովորել, դպրոցի մասին լսելուց փշաքաղվում էի վախից ու զայրույթից և մեր տան բոլոր մեծերի (սկսած հորիցս) այդքան «ջերմ» ցանկությունը՝ ինձ դպրոցական դարձնելու, գտնում էի անարդար, անխիղճ ոտնձգություն իմ ազատության նկատմամբ:

Մի առավոտ ներս մտավ այդ նրբագեղ «նախկին քեռին» և բոլորին սիրալիր, ժպտալով ողջություն հարցնելուց հետո հայացքը հառեց ինձ վրա: Ես մատնությամբ դատապարտվածի նման նայեցի շուրջս կանգնածներին, այդ դավադիրներին...



— Գնանք, սիրելի՛ս:— Եվ ինձ ոտից գլուխ տնտղելով դարձավ մորս.

— Ուրիշ բան չկա՞ր հագցնելու...

— Չկա, Հայրո՛ջան, էդ ա, ուրիշ բան չկա հագցնելու... էդ ա...

— Լա՛վ, գնա՛նք, սիրելի՛ս, հետո կմտածենք, հիմի... դե շարժվի, Էդո՛ջան, Անդրանիկը քաջ... և առաջ... Եվ ես, համարյա թե ոգևորությամբ առաջ ընկա դեպի դպրոց:

Այդպես էր, նրա խոսքը չկատարել չէր կարելի:

* * *

Աշնան բարակ անձրև էր մաղում Երևանի վրա, Գյոյ մեչիդի զմրուխտե գմբեթը պլպլում էր անձրևից լվացված:

Մենք՝ բոլոր տնեցիներս, վաղ առավոտից «դիրք» էինք բռնել նրա մոտակայքում՝ իմանալով նախօրոք, որ բանտարկյալներին բաղնիք պիտի տանեն այդ օրը, մեր տան մոտ եղած երեք բաղնիքներից, բայց չգիտեինք, որ մեկը և Սունդուկյան փողոցի ու մեչիդի արանքում սպասում էինք, քանի որ կարող էին նաև «Ինժեների» բաղնիքի կողմը տանեին:

Եվ վերջապես երևաց շարասյունը բանտարկյալների՝ ձին նստած, առջևից եկող պահակապետի և ուղեկցող զինվորների ուղեկցությամբ: Խումբը բավականին մեծ էր, քառասուն–հիսուն հոգի կլինեին և հեշտ չէր գտնել նրան՝ մեր կարճլիկ Հայրոյին այդ խմբի մեջ: Բոլորը մի ձևի, մի վիճակի վատ հագնված, մազակալած, խոժոռադեմ մարդիկ էին, մեծ մասը՝ երիտասարդներ... Բայց տեսանք իրեն: Ավելի շուտ ինքն էր մեզ տեսել և բարձրացրած ձեռքով մեզ ողջունում էր... Մի խունացած բլուզ էր հագին՝ շալվարի վրա թողած, առանց գոտի, մի թևի տակ կապոց էր, երևի լողանալու փոխնորդը... Ինքն էլ սափրված չէր, կծկվել էր ցրտից, գունատ էր և ավելի գունատ էր երևում սև չածիլված դեմքի պատճառով... Ժպտում էր: Պարզ երևում էր, որ ուզում է անհոգ, ուրախ երևալ: Նիհարած էր, բարակ, թրջված բլուզի տակից՝ նիհար, սրված ուսագլուխները շատ անօգնական էին թվում, փոքր, շատ փոքր էր թվում իր տարիքից, որ քսանհինգն արդեն անցել էր: Ոտքերին իր ճտքերով սապոգներն էին, որոնցից բան չէր մնացել, երբ մշտական փայլեցրած էին լինում, կոկիկ, գալիֆեն մեջը դրած... քայլում էր շարասյան հետ՝ ռիթմը չկորցնելով ու ցեխաջրերի փոսերը չնկատելով, բարակացած վիզը մեր կողմը թեքած, ժպիտը արդեն սառած դեմքին անփոփոխ...

Օ՜, դեռ ինչքան պիտի քայլեր այդ «քաղաքական վտանգավոր» հանցագործը մեծ Ռուսաստանի անծայրածիր ճանապարհների ցեխերում, որի միակ մեղքը եղել էր այն, որ ծնվել, պատանի էր դարձել դժնդակ տարիներին և տանը չէր նստել իր տարիքի շատ շատերի նման սպասելու, դիմավորելու թուրք ասկյարներին Երևանում...

Ապարանի տակ էր նրանց դիմավորել:

Վազում էինք շարասյան կողքով, և լացողները միայն մենք չէինք, ուրիշ վազողներ էլ կային, մենք չէինք մենակ, բայց չթողեցին, օ՜խ, ինչո՞ւ չթողեցին գիշերը պատրաստած մի քիչ թխվածքեղենը իրեն տալու, թուրթունը, լուցկիները, մի երկու զույգ տաք գուլպաները իրեն տալու... ինչքա՜ն պետք կլինեին մրսած, գունատ մեր Հայրոյին...

Իսկ ես մտքով թռել էի Իգդիր, Իգդիրում էի, և աչքիս առաջ ինքն էր ձիու վրա նստած, և ես՝ իր առաջ, և վերադառնում էինք «տակտիկական» վարժություններից՝ դոփելով Իգդիրմավայի ալրի նման փոշու մեջ, Իգդիրի զալոների և փսլնքոտ երեխաների հիացած հայացքների ուղեկցությամբ, և ո՞ւր են, չեն երգում իր «զինվորները»...

Անդրանիկը քաջ...
Մի չիշ խորոված...

Օ՜խ, էլ ի՞նչ խորոված, անկրակ խորոված, էրված...

Հայրոն մի քանի անգամ էլ շուռ եկավ, բարակած վիզը մեր կողմ թեքեց, բայց արդեն չէր ժպտում, անհոգ չէր ուզում թվալ... Փոս ընկած աչքերը տխուր էին և դժվար չէր տեսնել սառած աչքերից կաթացող հատիկ–հատիկ արցունքները... Հայրոյի արցունքները, որ ոչ ոք չէր տեսել, նրա արցունքները, որ մայրը՝ Վարդուհի զալոն էլ չէր տեսել:

Շարասյունը թեքվեց դեպի «Ինժեների» բաղնիքի կողմը՝ հակառակ մեր ցանկության, և մենք բոլորս մոլոր ետ ընկանք:

Հայրոն էլ հետ չնայեց: Օ՜, ինչ անծայր թախիծ կար նրա վերջին հայացքում, անօգնական երեխայի նման աչքերը չռած–զարմացած, բան չհասկացողի, միամիտ, շփոթված, որ չէր կարող արդեն թաքցնել ահավոր թախիծը... Օ՜, և ի՞նչը, ի՞նչը թաքցներ, Տեր Աստված, և որտե՞ղ թաքցներ... Իր դատարկ, սառը գրպաններո՞ւմ, որտեղ սարսռում էր ձեռքերը տանել, որ չզգա, չշոշափի իր նիհարած, ոսկրացած ազդրերը... Եվ գնում էր, քայլում հավասար ռիթմով, որ չխանգարի քայլողներին, որ չտրորեն իր մաշված կրունկները, որ չբարկանան, որ խանգարում է... Եվ քայլում էր՝ չիմանալով արդեն ուր և որտեղ պիտի հոգնած, ուժասպառ վայր դներ իր խաչը, որ այդքան ծանրացել էր...

Հայրոյից մի տղա մնաց, իր նման նրբագեղ, վերջին ժառանգը ուստաբաշի Ավետիսի և... Նա էլ զոհվեց հետո Կիևի մատույցներում «Դնիպրոն» անցնելիս: Իսկ այդ Դնիպրոն էլ, սիրելի՛դ իմ Իգդիր, հեչ Արազի նման չէ, մի ծովի չափ գետ է, նրան անցնելը Արազ անցնել չէր, որ այդպես էլ չանցանք, չփորձեցինք... Եվ չկարծես, որ

վախեցանք Արազը, սահմանը պահող ոջլոտ թուրքերից: Օ՜, ոչ, պարզապես դու, սիրելի՛ս, մեզ պետք չէիր... Մեր մեծ հաշվից դուրս էր մնացել քո քորոցի գլխի չափ՝ քարտեզի վրա եղած ինչ կա՛ չկան...

Հայրոյի տղա Ռուբիկի շորերը բերող չեղավ, լացող էլ չկար: Ո՛չ պապ ուստաբաշին կար, ո՛չ տատը՝ Վարդուհի զալոն, ո՛չ էլ Հայրոն՝ «Քեռին»...

Աշխարհը լիքն է ցավով, անարդարությունով, բայց պարտադիր չէ, որ մեկին շատ ավելի բաժին ընկնի, իսկ մյուսին՝ ոչինչ...

Բայց Հայրոն և իր նման շատ երիտասարդներ կարող էին աքսորական չդառնալ իրենց... «ծանր», բայց չգործած մեղքերի համար. «կարող էին», բայց նրանց մեղքերը չափողները ուրիշ «արշին» ունեին, և այդ «նոր» արշինից բացի ուրիշ չափելու գործիք չունեին... Նույն՝ «թաց ու չորի» պատմությունները...

Հայրոն իր նման պատանիների և իր հասակակից հորեղբոր տղայի՝ Ամասիայի հետ Պարսկաստան էր անցել 11–րդ բանակի Երևան մտնելուց մի քանի օր առաջ...

Եվ եղավ երևելի «դեկրետը», ներման դեկրետը, որով կոչ էր արվում վերադառնալ «փախստականներին»: Վերադարձան համարյա թե բոլոր «փախստականները»: Վերադարձան և Հայրոն ու Ամասիան: Եվ ապրեցին, աշխատեցին այնքան, ինչքան այդ դեկրետը, ներման դեկրետը մնաց «ուժի» մեջ: Շա՜տ չմնաց: Հետո Ամասիան կհորդորի Հայրոյին գնալ ռուսաստանները՝ սովորելու, աշխատելու, բայց Հայրոն չի գնա, Ամասիան կգնա: Հայրոն կմնա, որ կոչվի «վտանգավոր քաղաքական հանցագործ» և... և գնա նույն ռուսաստանները, բայց ուրիշ ուղղությամբ և ոչ աշխատելու, ուսումը շարունակելու, այլ որպես իր հայրենիքի անբարեհույս, վտանգավոր քաղաքացի...

* * *

Սահմանապահի բարձր փայտե աշտարակից քո կողմն եմ նայում: Ինձ էլ, ինչպես Ամալյա մեծ քույրիկին, «գեներալը» ասաց. «Խնդրեմ, ինչքան կցանկանաք՝ նայեք ձեր Իգդիրին»:

Շատ ազնիվ էր, շնորհակալ եմ: Մի շեկլիկ սերժանտ էլ հետս է, որ չխառնեմ քեզ ուրիշ բանի հետ: Որ կողմն ես՝ գիտեմ, բայց Արարատյան հարթության վրա ի՜նչ իմանաս՝ ինչ է դիմացինդ՝ կանաչ կապտագույն բարդիների երկար շերտը, որ իբր թե դու ես... Բայց դու ես երևի: Ափսոս, որ երեք եկեղեցիներից ոչ մեկի զանգակատան ծայրը չի երևում, գուցե չկա՞ն... Ինչ–որ բարձր, բարդիներից բարձր մի բան է երևում: Սերժանտն ասում է, որ «էլևատոր է»... Խնդրեմ, ահա և նորություն, որ վկայում է շատ հասարակ բան. այդ անբաններին պարզապես կերակրում են բերած



հացով, երբ քո տասը հազարից անց բնակչությունը իր ցանած հացն էր ուտում... Բերում են երևի Ղարսից, Ալաշկերտից, քանի որ մեր ցորենի արտերը դեպի այս կողմ, Արազի ափը պիտի որ գոնե մի քիչ դեղնած լինեին՝ կերևային:

Մեծացնող հեռադիտակով եմ նայում... Բան չի երևում, ապակիներն իսկույն խոնավանում են, և ես մեղավոր ժպիտով շեկլիկ սերժանտին եմ անօգնական նայում: Իսկ նա զարմանում է, ասում է. «Դա վոն, վոն ժե, կակ նա լադոնի», այսինքն՝ հրեն, ոնց որ ափիս մեջ... Բայց առանց այդ հեռադիտակի էլ պարզ երևում են Արազի այն ափի ճահճուտները, մանր–մունր ջրափոսերը, որոնք հայելու պես պսպղում են, իսկ կանաչ բացատներում արագիլներ են շրջում շատ լրջախոհ, ոտքերը զգույշ, հանդիսավոր փոխելով, երկար կտուցները վեր են տնկում հաճախ, կափկափում, թեև ձայնը չի հասնում ինձ, և այնքան լուրջ են, կարծես փնտրածները գորտ ու ջրմուկ չի... Կարող է և օձ պատահի, որից իրենք վախ չունեն, կկտցեն ու դեպի քեզ... Մի երկուսը ինչ–որ բան վերցրին ու թռչում են դեպի քեզ... Ձեռքով քեզ բարև եմ ուղարկում, գուցե տեսնե՞ս՝ ումոնց բարդիների վրա է նրանց բույնը... Իսկ դու տեսնո՞ւմ ես ինձ, սիրելի՛ս... Ձես տեսնում: Ի՜նչ իմանաս՝ ով է ցցված աշտարակին, ամենուր կան... Այս շեկլիկ տղային ես չեմ կարող բացատրել, թե ինչու են հեռադիտակի ապակիները խոնավանում, վայ թե ծիծաղելի թվա իրեն և կթվա, հաստա՜տ: Դու ի՜նչ նրա համար: Դու «օբյեկտ» ես ընդամենը, հսկողության արժանի մի բան և շատ, շատ հասարակ բան, քորոցի գլխի արժողության բան... «Իրենց ափին» պարեկներ, պահակակետեր չկան, դաշտեր են մինչև քեզ, քո, «մեր հողերն են», մենք ենք հսկում քեզ փաստորեն, որ մնաս տեղումդ... Մենք չէ, հսկողը սա է, էս շեկլիկը, մեզ չի կարելի...

Հրեն մի երկու արագիլ էլ այս կողմ անցան: Հեչ պետքներն էլ չի, որ փչալարեր են երեք շերտ, սրանք էլ երևի այս՝ մեր կողմում բներ ունեն: Գնում են, գալիս են... Այո՛, ճիշտ ես մտածում, կուզեի, կուզեի արագիլ դառնայի, բայց չէ, չէի ուզի: Առանց արագիլ դառնալու էլ կարող եմ մտքով թռչել քեզ մոտ, բայց ինչի՛ս է պետք: Ես իմ զույգ ոտքերով և ոտաբոբիկ եմ ուզում կանգնել մեր Իգդիրմավայի փողոցի տաք փոշու մեջ, որ ներբաններս տաքանան շեկ հողից: Հետո կմտնեի բակ և սառը ջուր կքաշեի հորից դույլով և հենց դույլից կխմեի, որ ջուրը թափվեր կրծքիս, թրջվեին շորերս...

Չէի ուզի, որ արցունքներս տեսներ այս շեկ պատանին, բայց տեսավ: Լավ չի, երբ մեծ մարդը լալիս է, հեչ բանի նման չէ, իսկ մեծ մարդուն խղճալը զարհուրելի է: Իսկ այդ պատանին պարզ երևում է, որ խղճում է ինձ... Թևիցս զգույշ բռնած օգնում է ինձ, որ իջնենք աշտարակից, ուզում եմ անհոգ երևալ՝ չի ստացվում, ինչ–որ բաներ եմ ասում իմ լեզվով... Էլի էն չէ, նրա ասածն էլ մի բան չէ, ասում է՝ հիմա կիջնենք մի լավ բորշչ կուտենք, գուցե և օղի էլ թույլատրի ընկեր մայորը... Էհ, գուցե և օգնի՝ ո՛չ բորշչը, օղին գուցեև օգնի, սպիրտն էլ չի խանգարի, մի թեյի բաժակ լիքը, որ «սատանան ոտ կախելու» տեղ չունենա:

Մայորը հին զինվոր է, գիտի ի՛նչ էի նայում, ինչի՛ համար էի խնդրել թույլտվություն, բայց թե ինչո՞ւ եկա... չգիտեմ: Ինչի՞ս էր պետք այս անիմաստ քչփորումը հին վերքի, որ ոչ մի կերպ չի ուզում սպիանալ... Ախար շատ, շատ մոտ ես՝ ինչպես այս պատանին է ասում. «Հրե՛ն, ոնց որ ափիս վրա»... Իսկ ափիս վրա ի՞նչ կա... Ոչինչ էլ չկա. չկաս, կլինե՞ս արդյոք, ո՞ւմ հարցնեմ... Կարող է էս պատանին կամ հարգելի մայորը պատասխանեն իմ «խելքից դուրս» հարցին...

Ախար, վաղը, մյուս օրը կգան էլի կցցվեն առաջս քո հարգարժան իգդիրցիք՝ հերս կամ Վլասը... «Հը, ի՞նչ կա»... Մի օր մի խելքը գլխին բան պիտի ասեմ դրանց՝ ի՞նչ ասեմ, հարգելի՛ մայոր... Եվ քո ի՞նչ ցավն է, քո ինչի՞ն է պետք էս քարտեզի վրայի սիսեռաչափ հողը, երբ քո հողի ո՛չ ծայրն է երևում, ո՛չ վերջը...

Կամ էն թլպատվածին ի՞նչ ասենք, որ մեր զորավարին ասել էր. «Հո՞ղ եք ուզում. մենք էդ հողի վրա արյուն ենք թափել, դուք էլ արյուն թափեք»...

Իսկ որտեղի՞ց թափենք, հարգելի՛ մայոր... Հրեն շարք–շարք փշալարեր են՝ արանքները հերկած, փոցխած, մուկն էլ անցնի՝ կերևա:

Եվ ո՞վ հաշվեց, թե ինչքան թափեցինք՝ մինչև... Օհանի, Օհանյանի, Հունանի ընկերները Բեռլին հասան. իրենք մնացին՝ չհասան: Էս մի բուռ ժողովրդի ամեն երրորդը կռիվ գնաց, արյունն էլ՝ ծով... Բայց քեզ համար չէր թափածը... Ասացին. «Ձեր սրբազան պարտքն եք կատարել հայրենիքի առաջ»... Իսկ դու, սիրելի՛ս, հայրենիք չես, դու սրա՝ էդ մայորի համար «օբյեկտ» ես ընդամենը, սահմանային օբյեկտ՝ ի պահպանություն, ու պահում է աչքի լույսի պես: Իսկ մենք, մենք էլ «դոնոր» ենք, երբ արյան պետք ունենան՝ կհիշեն, որ կանք...

— Ձեր օրն էլ օր չի. էդպես ապրելը... Ես էլ մեղքս ի՞նչ թաքցնեմ, կարծել եմ՝ մոռացել եք, խիղճներդ կորցրել... Եվ էդ փայտե խրտվիլակի վրայից նայելը հեռադիտակով... վիրավորական է շատ: Ի՞նչ է, թամաշա՞ եմ ձեզ համար, իլիզո՛ն...

— Ճիշտ ես, ջա՛նս, սա էլ մի բան չի, բայց ի՞նչ անես, երբ խեղդվում ես կարոտից, կարծում ես հե՞շտ է, պիտի խնդրես, դեռ միջնորդեն «վերևներից», որ բարեհաճեն թույլատրելու, արժանանանք տեսությանդ... Ինչպես խիստ ռեժիմի տակ պահվող բանտարկյալին... Եվ բանտարկյալ չես՝ ի՞նչ ես, ճամբարում ես, փշալարերի հետևում... Եվ այդպես էլ թվում է, երբ ամեն անգամ թույլատրում են տեսակցության: Հրեն, «պերեդաչա» էլ եմ վերցրել հետս ո՞չ քեզ հանձնելու: Վերցրել եմ, որ առիթ լինի նստելու նաև քեզ՝ աչքի լույսի պես պահողների հետ, այս սիրալիր մայորի հետ զրուցելու... Գուցե և քո մասին. չնայած որ քեզ պահողները այնքան էլ չեն սիրում խոսել իրենց «պահածոյի» մասին:

— Եվ ի՞նչ, հույս ունես «խելքի մոտ» բան լսելու էդ գեներալից... Փորձիր, բայց միակ խելքի մոտ բանը վաղուց ասվել է... Եվ հայրդ է լսել իր լավ ընկերոջից, Ջհանգիր աղայից, գաղթի ճանապարհին, ինքն էլ դաղված հիշելով թողածը՝ Մասիսի լանջերը, Զոռի սառցահամ աղբյուրները... «Հմայա՛կ, հույսդ մի՛ կտրի. խոդա եկա, դարդյա հազար»... Մի դուռ էլ մեզ համար կբացվի մի օր...

Ջհանգիր աղան երևի «օպտիմիստ» էր, և էդ դուռն էլ մի երկու անգամ կիսաբաց եղավ, բայց... կիսաբաց էլ շրխկացրին հենց երեսին, որ ներս չմտնի, և ասացին՝ ընկե՛ր, քեզ չի կարելի, դու ի՞նչ է, մոռացե՞լ ես, որ Սարդարապատում ես եղել, ձեզ նմաններին մուտքն արգելվում է:

Իմ «գեներալը» հին զինվորական է, բայց այնքան էլ հին չէ, որ քո մասին շատ բան իմանա. «կադրավիկ», այսինքն՝ այսպես ասված, մեր զորքի ամենահուսալի, անփոփոխ կազմից, որտեղից ուղիղ թոշակի է գնալու, եթե ինչպես հարկն է ծառայել է, ինչպես իրենք են սահմանել՝ «կակ պալոժենո»...

Եվ այդ «պալոժենոն» բացատրություն չունի, կարող է լինել միայն հակառակը՝ «նե պալոժենո»: Եվ քանի որ իմ այստեղ գալով խախտել եմ կարելին և ոչ կարելին, սեղան ենք նստում և այդ շեկլիկ սերժանտն էլ մեզ սպասարկում է կակ պալոժենո՝ անխոս:

Ես խնդրում եմ, որ ինձ չլցնի իմ բերածից, կոնյակից և լցնի իրենց «սովորականից», ու թեյի բաժակը իրեն եմ մոտեցնում, լցնում է, և անխոս, լուռ խմում ենք. սրանց մոտ ընդունված է լուռ խմելը, և ես դանդաղ քաշում եմ բաժակը՝ առանց աչք ճպելու, մայորի ակնհայտ գոհ հայացքի ուղեկցությամբ:

Խոսք չի բացվում. ինքը պիտի բացի, «տանտեր է»: Եվ ասում է հարկադրված քաղաքավարությունից երևի:

— Նու կակ, դովոլնի՞...

Շատ ազնիվ եք, ասում եմ, հոգեպես զգացված եմ և ավելացնում եմ, որ պարապ հետաքրքրությունից չէր խնդրածս այցելությունը, ծննդավայրս է, ասում եմ, այդ Իգդիր կոչեցյալը, այդտեղ եմ ծնվել...

— Իսկապե՞ս, այդտեղ՝ Թուրքիայո՞ւմ եք ծնվել...

Եվ, կարծեմ, այստեղ էր, որ հարգելի մայորը «տակտիկական» սխալ գործեց իր այդ հարցով՝ հավուր պատշաճի ասված... Միամտորեն սկիզբ դնելով խոսակցության, որը չէր ուզենա լսել երևի, չէր ուզենա հաստատ...

Իսկ ես հենց նման առիթի էի սպասում՝ հույս անգամ չունենալով:

Ինչո՞ւ Թուրքիայում, հենց Հայաստանում, և այդ քաղաքում եմ ծնվել, որին նայում էի... Եվ կնքվել եմ նրա երեք եկեղեցիներից մեկում և կնունքիս էլ ներկա են եղել՝ բացի մերոնցից, նաև ռուսաց ուղղափառ եկեղեցու տեր Մեֆոդին և գնդապետ Կարելկովը՝ իր սպաների հետ և... անունս էլ սպաներից մեկի խնդրանքով են դրել այսպես՝ «ոչ հայկական»... Եվ ինչո՞ւ եք զարմացած. չգիտե՞ք, որ մեր հողն է եղել, ինչ է, այսինքն՝ ... ձերը, ավելի ստույգ՝ թագավորինը Նիկոլայ... Եվ լավ է, որ ժպտում եք, և սահմանն էլ այս գետը չի եղել... Եվ իմացա՛ծ եղեք, որ եթե Կարելկովի ուզածովը լիներ... և եթե լինե՛ր...

— Սպասեք, սպասեք, կարծես թե լսել եմ այդ գնդապետ Կարելկովի մասին...

Ինչո՞ւ միայն Կարելկովի, իսկ գնդապետ Պերեկրեստովը... Քաջության ու ազնվության ասպետ Գեորգիևյան չորս խաչերի, կուրծքը ամբողջ շքանշաններ... Եվ սպայությունը կայազորների, որոնք լսել անգամ չէին ուզում, որ այդ հողը, «Ռուսահայաստանը» թողնվի «բասուրմաններին», այդ թուրք կոչեցյալին...

Իսկ մենք թողեցինք, նվիրեցինք պարզապես, չպահեցինք...

— Եվ այդ ով ասել է «մենք»:

Պետք չէ միամիտ ձևանալ, լավ էլ գիտենք այդ «մենք»–ի ով՝ ինչ լինելը...

— Է՛, դուք տիրություն անեիք, պահեիք...

Ուրիշ բան չէի սպասում, գիտեի ինչ կլսեմ... Եվ պահեցինք, այո՛, պահեցինք, երբ «մերը» դարձավ հրաշքով... Պահեցինք երկուսուկես տարի մեն–մենակ, օգնող չունենալով, այդքան կարողացանք, և Պերեկրեստովն ու Կարելկովն էլ սպաների հետ մեր միակ օգնողներն էին: Իսկ թշնամի՝ ինչքա՜ն ուզեք, և չեք էլ հավատա, եթե ասեմ ովքեր... Անցած, վաղուցվա բան է...

— Հետաքրքիր է, այդ ովքե՞ր էին ձեր «թշնամիները», եթե գաղտնիք չէ...

Խնդրեմ, հենց մեր այսօրվա «եղբայր» հանրապետությունները, չհաշված այդ ձեր Թուրքիան՝ մեր մշտական թշնամին և «մեր բարեկամը»...

— Իսկապես անհավատալի է... Ի՞նչ ունեիք կիսելու, վիճելու, թշնամանալու, երբ քանի՜–քանի տարիներ ապրում եք եղբոր նման...

Դե, ի՜նչ ասեմ սրան, սիրելի՛ս: Ի՞նչ իմաստ ունի, եթե իսկապես անտեղյակ է...

Երկար, խառը պատմություն է, էսօրվա խոսելու բան չի, ասում եմ, թողնենք մի ուրիշ առիթով, եթե հանդիպենք ոչ այստեղ՝ սահմանի վրա, որ ես ինձ փչի վրա նստած չզգամ... Թեկուզ ինձ մոտ՝ արվեստանոցում, եթե բարեհաճեք...

— Օ՜, ուրախությամբ, պատիվ կհամարեմ, զորամասի ընկերներիս հետ, ինչո՞ւ չէ, շատ կպարտավորեցնեք...

— Բայց մի հարց կուզենայի ձեզ տալ՝ «չպարտավորեցնող», «վերացական», եթե չեք առարկի...

— Խնդրեմ, եթե իրոք, ինչպես ասում եք՝ «վերացական է»:

— Ասացեք խնդրեմ, դեռ ինչքա՞ն պիտի այս փշալարերը սահման մնան «անշարժ», իրենց տեղում: Ե՞րբ պիտի «տեղափոխենք» իրենց նախկին սահմաննե-րին, հին սահմաններին, այսինքն՝ թագավորական... Պիտի որ իմանաք՝ որտեղ էին Ղարս, Էրզրում, Վան, Բիթլիս, դետից այն կողմ, Մասիսից այն կողմ...

— Իսկ դա դուք «վերացական» եք համարո՞ւմ... Երբ մի հսկայական, անիրա-կանանալի ռազմաստրատեգիական ծրագիր եք առաջարկում մեր, մեր բարեկամ պետության դեմ... Չէի սպասում ձեզանից, հարգելի՛ նկարիչ... Ես էլ կարծում եմ ձեր ծննդավայրի պեյզաժով եք հիանում... Իսկ դուք...— Եվ ասում է ժպտալով, և գլուխն է օրորում. «Չէի սպասում, չէի սպասում»...

Զարաշահեցի երևի այս ազնիվ մարդու համբերությունը... Բայց խոսքը, ինչ-պես իրենք են ասում՝ ճնճղուկ է, «վարաբեյ», որ թռավ՝ տերը չես... Եվ աներեսի պես շարունակում եմ. «Դե, եթե ինքներդ նկատեցիք, որ «անիրականանալի» է, ուրեմն՝ վերացական է, և վերացական էլ կմնա, քանի դեռ չենք ասել՝ «Չի կարելի»... Եվ ես էլ լռում եմ, ափսեիս մեջ եմ նայում, քչփորում եմ պատառաքաղով:

Լռությունը ինքն է խախտում.

— Վտանգավոր զրուցակից եք, միայն դուք չէ, հայերդ բոլոր... Պատահել է, էլի եմ լսել... Եվ չգիտես՝ զայրանա՞ս, թե՞ խղճաս, մեղադրել էլ չես կարող: Եվ ցավա-լի է, որ այդպես իզուր հոգեկան մշտական խռովքի մեջ եք, «բորբոքված» վիճակում. չեք կարողանում, չեք ուզում մոռանալ, հաշտվել եղածի հետ...

— Սպասեք, սպասեք,— հիմա էլ ես եմ իրեն կանգնեցնում և ինձ էլ չտիրապե-տելով արդեն.— այդ ի՞նչը մոռանանք, ինչի՞ հետ «հաշտվենք», խիղճ ունեցեք, խղճով մտածեք, ձեզ իմ տեղը դրեք, ի՞նչ կանեիք, եթե ձերը, ձեր ծննդավայրը, այո՛, այո՛, ձերը լիներ այսքան մոտ, դետի էն ափին, ինչպես այդ պատանին էր ասում ինձ. «Հրեն, ոնց որ ափիս վրա», և այդ թուրքն էլ շնթռած լիներ վրան, ձեր տանը, ի՞նչ կանեիք, հը՞...

Եվ մի երկար «նո՛ւ» եմ լսում և հարգելի մայորն էլ իրեն մոռացավ...

— Աներևակայելի բան եք ասում, ինչպե՞ս կարելի է, այդ էր պակաս, էտո եշչո նե խվատալո...

Այ ի՛նչ եմ ասել. տղամարդու խոսք, դուք էլ հուզվեցիք, դուք էլ չդիմացաք...

Իհարկե, ինչպե՛ս կարելի է... Ձե՛ր ծննդավայրը և «ինչ–որ թուրք» վրան շնթ-ռի... Նե պալոժենո, (ծիծաղում է էդ «նեպալոժենոյի» վրա), իսկ իմի վրա, ոչինչ, կարող է և հեծած մնալ... Եվ եթե շատ եմ մտահոգված՝ ես ինքս, մենք պիտի հոգանք այդ մասին. այդպե՞ս կարելի է հասկանալ թերևս ձեզ, հարգելի՛ Ֆյոդոր Ֆյոդորովիչ (հայրանունով եմ դիմում սիրտը շահելու համար, այսինքն՝ մարդուն, ռուսին, ոչ զին-

վորականին...). «Այո՞... Բայց չէ՞ որ դուք եք, նախ դուք եք կանգնած փշալարերով, տանկերով, շներով մեր ու նրանց մեջ... Եվ ինչո՞վ, ինչպե՞ս կհրամայեք... Դատարկ ձեռքով, անզեն կռվենք, և մենակ իհարկե...

— Ավելի վտանգավոր դարձանք... Եվ ես եմ երևի մեղավոր. հեռուն գնացինք, անիմաստ խոսակցություն է, բայց... Ասենք թե տվեցին, ունեցաք այդ զենքը, ի՞նչ պիտի անեք... Այդ բազմամիլիոն հակառակորդի դեմ մենակ...

(Օ՜, այդ խոսքը չպիտի ասեիք, բայց ասեցիք, հարգելի՛ մայոր): Եվ զգում եմ, որ արյունս տակնուվրա է լինում, և եթե խոսեմ, ձայնս պիտի խզվի: Մի կում ջուր եմ խմում ու ցածր, ատամներս սեղմած ասում եմ հատ–հատ...

— Նախ, ինչո՞ւ մենակ: Իսկ դուք և մեր մյուս «14 եղբայրները» ի՞նչ եք, «դիտորդի» դերո՞ւմ պիտի լինեք... Իսկ ո՞ւր մնաց «ինտերնացիոնալ պարտքը»: Աֆղանստանո՞ւմ է դեռ, «դուշմանների» մո՞տ... Եվ կամ ո՞վ է ասել, այդ ո՞ր իմաստունը, զորավարը, որ շատությունը ուժ է, հզորություն: Հակառակն են ասել բոլոր խելք ունեցող զորավարները և ապացուցել՝ Ալեքսանդրից սկսած մինչև Սուվորովը, իշխանուհի Մանուկովայի թոռը... Ի՞նչ արեցինք «մեր շատությունով» մենք ֆինների դեմ... Մոռացե՞լ եք, նրանք էլ էին քիչ, մեր քանակին... Ոչինչ չկարողացանք անել: Խայտառակություն էր աշխարհով մեկ: Եվ Աֆղանստանում էլ բան չի ստացվում, ինչպես տեսնում եք, դուշմաններն էլ են քիչ, բայց հալա դեռ ցինկի դագաղներն են շատանում, փակած, զոդած, «պահածոյի» պես. բացել չի կարելի, տեսնելու բան չի երևի՝ ինչ է մեջը. մա՞րդ է մեջը, թե՞ մարդու մնացորդներ, կտորտանք, քրքրված, հոշոտված... Մայրն էլ իրավունք չունի մի վերջին անգամ տեսնելու իր «ինտերնացիոնալիստ» զավակին, թուխ, սևաչ, սևագանգուր իր մինուճարին, որին տարել էին, որ «աննկատ» կռվի, չնկատվի աֆղան չլինելը...

Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ պիտի հայ պատանին զոհվի աֆղանի համար... Իսկ հիմա էլ՝ «ի՞նչ պիտի անեք մենակ»... Եղա՞վ, հարգելի՛ մայոր. չէ՛, չեղավ, և ինչո՞ւ մենակ, ինչո՞ւ, դոնո՞ր ենք ձեզ համար, ինչ է, երբ պետք ենք՝ արյուն պիտի տալ, հիշում եք, որ կանք և «պարտք» ունենք... «Ինտերնացիոնալ պարտք»... Ի՜նչ էլ հարմարավետ խոսք են հնարել... Զիմացանք ինչքա՜ն, ինչո՛ւ և ո՛ւմ ենք պարտք՝ տանք պրծնեինք: Եվ այդ ո՞վ է ասել, որ հայը ինչ–որ մեկին պարտք է էս աշխարհում, երբ ողջ աշխարհն է հային պարտք իրենց սևացած հոգով, կորցրած խղճով, քոռ աչքերով... Եվ դուք էլ, հարգելի՛ մայոր, ձեր խիղճն էլ... Կարող եք և չհիշել՝ ձեր լքած Ղարսում, Էրզրումում մեր թափած արյունը, խաբված, անմեղ զոհերը... Բայց Հայրենակցին՝ Հայրենական մեծ կռվին, մեր թափած արյունը... իրավունք չի տված, ոչ ոք իրավունք չունի մոռանալու Նելսոնի, Օհանի, Սերգեյ Օհանյանի, Հունան Ավետիսյանի... Հարյուր յոթ հերոսների, մարշալների, գեներալների՝ հիսուն–վաթսուն... և զինվորների, որոնք մնացին Կիևի տակ, Լենինգրադում, Օդերի ափերին, Ստալինգրադում, Կուրսկի տակ, Բեռլինի մատույցներում... Շատ էին, շատ, մեծաքանակ ազգերից

շա՛տ–շատ... Հասարակ թվաբանությամբ, թվերով, տոկոսներով, բոլորից ավելի, «սրբազան պարտքի», սրբազան հայրենիքի համար... Եվ մի՛ վախեցրեք մեզ «բազմամիլիոն» թշնամիով: Մենք գիտենք, տեսել ենք, որտեղ են նրանք «քաջ»... Դուք, դուք էլ եք տեսել Կարելկովի կոզակները... Այդպես է. մեծաքանակ ազգերի միայն խիղճը չէ պակաս, հիշողությունն էլ է խանգարվում, երբ ձեռնտու չէ հիշելը... Երբ չեն ուզում հիշել... Եվ ի՞նչ հիշի, ի՞նչ ունի հիշելու, ի՞նչ է ստեղծել, թողել մարդկությանը այդ «բազմամիլիոն» զորքի տեր ժողովուրդը, բացի իր անցած ճանապարհին թողած արյուն–ավերից, ցավ ու տառապանքից, «փոքրաքանակ» ժողովուրդների բնաջնջումից, ստրկացումից... և երեք հարյուր տարի էլ ձեր հողը, այո՛, ձեր հողը ասպատակելուց... Եվ ո՞ւմ է ծնել, բացի նողկանք առաջացնող վիժվածքներից, հիշելու արժանի սուլթան Համի՞դ, Թալեա՞թ, Էնվե՞ր, Քեմա՞լ...

Ձեր այս պահակատեղից աջ՝ ոչ հեռու, մեր մյուս գետի՝ Արփաչայի ափին նորից պահակակետ ունեք, տեսած կլինեք... Ավերակներ են փռված, հին քաղաքի, աշխարհի հնագույն քաղաքներից էր, Անին՝ մեր վերջին մայրաքաղաքը... Նրանց ավերած պալատների, տաճարների, բերդերի ավերակները... Տուրիստներ էլ տեսած կլինեք, ո՛չ ինձ նման մենակ՝ խմբերով և բացատրող: — Ուղեկցողին չեք լսի, որ լսեք՝ կիմանայիք, որ «հիշողություն» էլ ունեն... Միամիտ տուրիստներին պատմում են իրենց «նախնիների» մասին, այդ պալատները, տաճարները «շինողների», իրենց «հանճարեղ նախնիների» մասին, այդ քաղաքի «տերերի», որ մոռացել են մի մզկիթ շինեին՝ Քեմալ փաշան աղոթեր Ալեքսանդրապոլ մտնելուց առաջ...

Տե՛ր Աստված, երևի թե չասացի էդ բոլորը, մտքումս զառանցեցի երևի... Ինքն էլ վաղուց չի լսում ինձ... Լուսամուտի մոտ կանգնած դուրս է նայում, քո կողմը, սիրելի՛ս, կամ արագիլներին երևի, որ քո կողմ են թռչում... Գուցե և ուրիշ տեղ է միտքը, զառանցանքիս մեջ է խճճվել... Կամ բարկացած է և չի ուզում վիրավորական բան ասել, իրավունք էլ ունի... Հյուրին վայել չպահեցի ինձ... Արագի ջուրն իրենն արեց... Եվ զարմանալի է այս մայորի համբերությունը, զինվորական զսպվածություն չէ, անտարբեր էլ չի, տեսնում եմ. խռովված է, իր մտքերի հետ է... Ես չկամ, մոռացել է ինձ... Տե՛ր Աստված, գուցե սա ռուսի «ուրի՞շ տեսակն» է, «Կարելկովյան» տեսակից է, կամ Գրիբոյեդովի, Բրյուսովի... Ռուսաստանում հո բոլորը Բոգոսլավսկինե՞ր չեն, Լոբանովնե՞ր չեն, Յեժով ու Սուսլովնե՞ր չեն... Մարդու մասին վատ մտածողը նախ ինքն է վատը...

— Դե լավ, լավ, մի՛ կոտորիր քեզ, խոսք էր՝ ասացիր...

Նրա ասածն էլ մի բան չէր... «Ետո եշչո նե խվատալո», ասելու բան չէր, ուրեմն՝ ես հեչ... իսկ իրանը... «Նու ի նու...»: Դու իր բաժակը լցրու... և մի՛ մտածի, ճիշտը Ջհանգիր աղան էր... Դարգյա հազարե...

...Դու էլ ես ճիշտ, սիրելի՛ս, բայց իմացիր, որ ճիշտ, ճշմարտություն չկա էս աշխարհում... Մինչև էսօր դեռ մի մարդ է տվել էդ հարցը՝ հռոմեացի Պիղատոսը... «Ի՞նչ է ճշմարտությունը»... Եվ տվել է... «մեկին», որը երևի գիտեր, բայց չի ասել, չի պատասխանել, լռել է գլուխը կախ:

* * *

Եթե տղամարդուն կերակրելը, ծառայելը հաճույք չի պատճառում կնոջը, այդ մարդ կոչեցյալը կարող է իրեն համարել ամենաթշվառ, արհամարհված մարդը աշխարհում, և ճիշտ արած կլինի, եթե ռեստորան գնա, որ իրեն սպասարկեն հարկա-դիր սիրալիրությամբ... Տխուր բան եմ ասում, բայց այդպես է:

Ես եթե գործ էլ չունենամ արվեստանոցում, դիտմամբ ոտքս կախ եմ պահում, որ տանեցիք իրենց հացը վերջացնեն, որ մնանք ես ու մերս, մերս ու ես, և ուզում եմ, որ մայրս ինձ կերակրի, «սպասարկի»:

Տե՛ր Աստված, ինչ անհեթեթ դժբախտություն է, որ երեխաները ծնող ունե-նալու անկրկնելի երջանկությունը ուշ են հասկանում, իսկ երբ հասկանում են, ուշ է լինում: Ամենաօրինակելի, խելացի զավակն անգամ այնպես է խճճվում հիմար ճանճի պես իր ամենօրյա «մարդ դառնալու» ձանձրալի գբաղմունքի մեջ՝ տուն չինելու, «իր» ընտանիքը ունենալու մրջնային քաշքշուկների մեջ, որ ժամանակ չի գտնում գոնե մի քիչ երկար վայելելու Աստծո տված ամենամեծ երջանկությունը՝ ծնող ունենալու, երեխա, զավակ կոչվելու անվերադարձ երջանկությունը, որը չմնալու, մենակ չմնա-լու երջանկությունը...

Ես գինու շիշ եմ բացում, իսկ նա՝ սեղանը: Եվ նորից ու ամեն օր կշտամբան-քով հետևում իմ գործողություններին... Իսկ ես էլ ձևացնում եմ ինձ բարկացած, որ չասի ամենօրյա նույն խոսքերը. «Բոյիդ մեռնեմ, էդ գինին քիչ խմի...»: Թարս իրեն եմ նայում, որ չասի՝ «Հիշի՛ր՝ մեծ քեռուդ ինչ արեց խմելը», և կանխելով իրեն՝ կասեմ, որ ուրիշ բան գտիր խոսելու, պատմելու...

— Ախար ի՞նչ պատմեմ, էդի՛կ ջան... Քո ուզածը երևի ուրիշ բան է...

— Էսօր պատմիր, թե ոնց դարձար «իգդիրցի», Կողբը ոնց թողիր եկար էդ «քյաշում տվողների», էդ կռվարար խալխի մեջ ընկար:

— Մե պակասն էլ իրենք չէին, ավելի կռվարար էին, իգդիրցիք փառք էին նրանց մոտ... Ա՛յ, քո հորեղբայրդ ուրիշ էր, էդ մեկը հաստատ, նրա բերանից ո՞վ էր լսել անշնորհք խոսք, չէ՛, հաստատ նրա պես մարդ չկար:

— Էլի հորեղբայր, ուրիշ մարդ չկա՞ր:

— Կար, ընչի՞ չկար, բայց որ հորեղբայրդ չլիներ, ես ի՞նչ գործ ունեի ձեր Իգդիրում: Հալա լսի՛, Էդի՛կ ջան, ախար որ էդ օրը ես մեր խանութը գնացած չլինեի, քո մերը, գիտե՞ս, ով պիտի լիներ.

— Էլ ո՞վ, ա՛յ մեր:

— Բա, քո մերը մեր քավորի՝ Պահլավունի Արտաշեսի քույրը պիտի դառնար...

— Ո՞վ, Ծովիկի մա՞յրը:

— Հա՛, բոյիդ մեռնեմ, չաղլիկ, կարմրաթուշ, միշտ ծիծաղն երեսին, սիրուն:

— Սիրո՞ւն, քեզանից սիրո՛ւն: Բոլորը մի բերան քո սիրունությունից են խոսում՝ աղջիկներդ, տալերդ... Տալերդ քեզ տեսնելուց բերանները բաց են մնացել, իսկ դու...

— Է՛, Էդի՛կ ջան, ինչ իմանամ ինչ եմ եղել:— Եվ մի թեթև շառագունում է...— Հիմի ինչի՞ եմ նման:

— Հապա քո թայերին տես...— Զլսելու է տալիս:

— Դոլման ո՞նց է, հո աղի՞ չի, երեկվանն է:

— Համով է, համով է, մե՛ր ջան, մի քիչ գինի լցնեմ, Ռինդից եմ բերել, իսկը քո ուզածն է, քաղցրահամ:

— Գելի գլխին ավետարան կարդացին... Լավ, մի քիչ լցրու:

Մի կես բաժակի չափ լցնում եմ, խմում է կում–կում՝ գլխով հավանություն տալով... Գինուց հասկանում է, բայց էլի նույնը. «Քիչ խմի»:

— Իսկ դու մի՛ մոռացիր, բան էիր պատմում:

— Հա՛, էդ առավոտ մորքուրդ՝ Եզաֆոն, ուղարկեց խանութ չեմ հիշում՝ ինչ բերելու: Մտա՝ տեսնեմ անծանոթ մարդիկ են, մեջները մի բոյով, սիրուն, շատ սիրուն մարդ է կանգնած, քեռուդ հետ խոսում են: Էդ մարդը ինձ տեսավ ու ինձ էր նայում անընդհատ, ես էլ չեմ իմանում էս անտեր ձեռքերս ոնց պահեմ, երեսս ծածկի երկու ափով, ուզեցի դուրս փախնեմ՝ քեռիդ կանչեց. «Սաչո՛ ջան (Կողքում մերոնք ինձ էդպես էին կանչում), մե բաժակ սառ ջուր բեր մեր հյուրերին»: Վազելով աղբյուրը գնացի, բերի կուլան, բաժակը տվի քեռուդ ու փախա տուն: Իրիկունը տանը ինչ–որ բաներ են խոսում փսփսալով, գլխի չեմ ընկնում ինչ, բայց պապդ՝ Գրիչ պապդ, հանկարծ ձեռքը սեղանին խփեց՝ կարմրած, բարկացած ասաց.

— Ես իգդիրցու համար աղջիկ չունեմ, էդ լոպազների համար... Համ էլ էս քյոռփես հումա՞ խանգարըմ: Դո՞ւք եք պահըմ:— Մերս՝ տատդ՝ Մեհրիբաբը, թե.

— Կամաց, ա՛յ մարթ, հո էսօր չտարա՞ն...

— «Տանել» խոսքը որ լսեցի՝ լացս դրի, կպա քրոջս՝ Եզաֆոնին: Դրանով էդ օրը վերջացրին: Բայց հետո բերին մատիս էս մատանին դրին, հաստ էր, բարակել ա, էն օրվանից մատից չեմ հանել...

— Լվացքդ գիտի... Հետո, հետո...

— Հետո, հերդ մի քանի անգամ եկավ–գնաց, նա էլ ջուր ուզեց, ո՛չ ինքն էր ինձ նայում, ո՛չ ես՝ նրան:

— Բա թաքուն, մի տեղից չնայեցի՞ր դրա ինչ կա չկային, լուսանկարին եմ նայում էդ ժամանակների, չես ասի, որ գեղեցիկ չէր, հավանած պիտի լինես...

— Ի՞նչ իմանամ, էդի՛կ ջան, ո՞վ էր հարցնողը... Խուճուճ մազերը, պեխերը, աչքերը... Սիրուն էր: Շորերն էլ իրեն շատ էին սազում, սև չուխայով, բաշլղով, գլուխը հա ցած էր պահում, քյամարի հետ էլ մատներով խաղում, չէր էլ խոսում տնաշենը: Ամաչկոտ էր, չխոսկան: Խոսողը հորեղբայրդ էր լինում... Հիմի լեզուն բացվել է, թողնես սաղ օրը փնթփնթա: Ա՛յ՝ ով ա ճռիկենց քաշել:

— Հիմի որտեղ որ է, կգա, անունը տվինք, երեկ ասում էր. «Մորդ ուղարկիր թող գա, ճմեռվա գործ ունի»...

— Ինքը հիմի իմ գործը ինձանից լավ ա անում, էլի վայ թե կարկատանները միտն է ընկել, էն առածդ կոստյումն էլ չի հագնում, պահել ա, հետը պըտի տանի...

— Կարգին խոսա, ա՛յ մեր...

— Բա ընչի չի հագնում, հին քրջերից չի կարողանում բաժանվել, որ գնացի՝ վերցնեմ կվառեմ հա...

Վաղուց վառած պիտի լինեիր, խալխն էլ կմտածի, որ հագնելու բան չունի, չեն առնում...

— Արշալույս քեռիդ սկզբից ինքն էլ չէր ուզում, որ ինձ հորդ տան, բայց հետո հավանեց, ասում էր՝ «ոսկի» հոգի ունի, համա առուտուրը իրա գործը չի հեչ: Քեռիդ որ չլիներ՝ դրա դուքանը հլա Իգդիրում կփակվեր... Ինքն էր դրա հաշիվները կարգի բերում... Գաղթից հետո, հենց նույն տարին, պապդ տուն էր առել Նորքի տակը: Գետառի էս ափին մի նեղ փողոց կար, պիտի որ հիշես: Մենք էլ էդ տանը ապրեցինք մի քիչ վախտ: Խանութ էր բացել էն Իլիզոնի մոտ... (ճիշտ էր հիշում մերս, այդպիսի կինոսրահ կար՝ «Ապոլոն»): Քեռիդ էր էդ գործով զբաղվում, էն չելածների վախտն էր... Ինքը՝ քեռիդ, ախար, էնքան էլ ջահել չէր, արդեն երկու երեխա ուներ: Եկան մի օր երկու հոգի մաուզերներով... Լաց, կոծ, Տարան: Դիզիրտիր ես, ասում էին, ո՞վ պիտի հայրենիքը պահի, որ

քեզ նմանները տունը նստեն: Տարան Քեշիշքենդի կռվին: Հետո իմացանք, որ վիրավոր-վել ա: Պապդ գնաց, որ բերի, չէին տվել, ասել էին, թող հայրենիքի համար մեռնի...

Մեռավ, պապիդ ձեռքերի վրա մեռավ, էնտեղ էլ թաղել էր, շորերը տեսանք: Արշալույսին շատ էր սիրում պապդ, էդ մեկն էր մնացել... Պապդ էլ չդիմացավ: Ինչ կա–չկա ծախեց, վեր կացավ գնաց Տաշքենդ: Ասաց. «Ես էդ ավազակերանց, մարդաս-պանների հետ չեմ կարա ապրիլ»... Շատ էր բարկացած: Ո՞նց չբարկանար, որ տային բերեր, գուցե և բուժվեր, կլավացնեին մի կերպ: Մնացել էր վերքը, թարախոտել էր, աղիքները ամբողջ սևացել էին, ո՞վ պիտի բուժեր, անտեր լազարեթում ընկած հարյուր-ների հետ: Բայց ախար մեղք էր պապդ, շատ էր ծերացել: Իննսունը անցել էր, բայց պինդ էր պահում իրեն, հեչ չտեսանք, որ խեղճանար: Էլի կհագնվեր մաքուր, առաջվա պես ամեն ինչը տեղը, առավոտները երկար կլվացվեր, բոլորիս «բարի լույս» կասեր, ոսկե ցեպով ոսկե ժամացույցը կլարեր, մի բաժակ կաթ կխմեր, պանիր, հաց ու իրա գործին...

Տաշքենդում շատ չդիմացավ: Մի քանի տարուց հետո եկավ: Հողը քաշեց: Էստեղ էլ մի քանի տարի ապրեց, բայց կոտրվել էր, ցույց չէր տալիս, բայց էլ էն պապդ չէր, սիրունիկ, կապուտաչ, քաղցր–քաղցր խոսացող, պատմող: Մի երկու օր հիվանդացավ, քնում էր, քնի մեջ՝ «Արշալույս, Արշալույս», աչքերը բացում էր, խեղճ–խեղճ նայում էր և նորից...

— Ա՛յ մեր, էդ որ ասում ես՝ գնաց, եկավ... քանի՞ տարեկան էր արդեն:

— Հարյուր յոթի մեջն էր, Էդի՛կ ջան:

Եվ այնպես սովորական էլ ասում է «Հարյուր յոթ, հա՛, Էդի՛կ ջան»...

Որ քեռուդ, քեռիներիդ դարդը չունենար, էհ, հա կապրեր... Արշալույսիս շատ էր սիրում: Դե նրան ո՛վ չէր սիրում: Մի՛ զարմացի՛ր, Էդի՛կ ջան: Մեր մեծերը, քո պապերը արդար, բարի, խելոք մարդիկ էին, հողին կպած, իրենց հալալ քրտինքով ապրող: Արդար մարդը երկար կապրի, Աստված է պահում նրանց... Իգդիրում լավ մարդիկ շատ կային, նրանց կախ հոնքերին, հորթ ու բորթին շատ կարևորություն տալ պետք չէր, սիրտները մաքուր էր, բայց չարացնել պետք չէր նրանց:

— Իսկ հորեղբորը քո արդար Աստվածը ինչո՞ւ չպահեց...

— Ինքը չուզեց ապրի, տատիդ՝ Բանավշայի պես... Հայրոն էլ նրա համար էր ամեն ինչ. չդիմացավ: Բա Վարդուհի զալոն, մոմի պես հանգավ, նստած տեղը, բարձին հենված, մի ախ էր արել ու վերջ... Ախար բարի մարդիկ փխրուն են լինում, սրտի ցավի չեն դիմանում... Հորեղբայրդ ամեն ինչ կորցրեց, լավ էր, որ գոնե Ռուբիկի տանելը չտե-սավ, թե չէ մեռնելը կդժվարանար, շատ կդժվարանար, միակ ժառանգը, հույսը Ռուբիկն էր... Էն տանելն էլ անարդար բան էր, էն... Նիկոլային, Թագավորին, որ էդքան փնովում են, նրա վախտը օրենք էր, որ տան մեկին, ժառանգին թողնում էին...

— Հա՛, Էդի՛կ ջան: Դու պապիդ մասին ես մտածում հիմա, գիտեմ, բայց պապդ՝ Գրիշ պապդ, նրանը ուրիշ էր: Արշալույսից երկու երեխա էր մնացել, մի տղա որբ էլ մեծ

քեռուցդ՝ Արտաշեսից... Ո՞վ պիտի պահեր, իրավունք չուներ, ժամանակ էլ չուներ մեռնելու մասին մտածելու... Գրիչ պապդ ուրիշ մարդ էր... Բարին՝ բարի էր, բայց խելքը՝ խելքը միշտ իրա հետ էր...

Բարի, արդար... Անցել է նրանց վախտը, հիմա...

— Առանց բարի մարդ չի լինի, Էդի՛կ ջան... Վատը, չարը, ժանգի պես կուտեն մարդուն... Եվ մի՛ նեղացի, որ Ավետիս եղբայրին եմ միշտ հիշում... Բա, էլ ի՞նչ կարգին մարդ գիտեմ, որ օրինակ բերեմ...

— Գիտեմ, գիտեմ, որ իրեն շատ ես սիրել...

— Մենակ սիրե՞լն էր, պաշտելու էր...

— Չեմ նեղանում, բայց էլ ուրիշ «կարգին մարդ» Իգդիրում չկա՞ր...

— Կային, շատ կային, բայց նրանք՝ մի կողմ, հորեղբայրդ... ուրիշ էր:

Ճիշտ էր մայրս երևի, քանի որ լավից լավը կա, իսկ ինչպես իրենք էին ասում՝ վատի «էլ բեթարեն ազատես»...

Մայրս իր երկար կյանքի (93 տարի ապրեց) ժամանակամիջոցում, տասնութ տարեկան հասակից հարս լինելով Իգդիրում, մեր տանը, հնարավորություն ունեցել է «ուրիշի»՝ կողբեցու աչքերով լավը վատից ջոկելու, եթե նկատի ունենանք, որ մեր տունը եկող–գնացողի պակաս չի եղել՝ սկսած մեր անհամար բարեկամներից, վերջացրած Իգդիրի «երևելիների» մեծ մասով, հորս ընկերները, ծանոթ օֆիցերություն, մի խոսքով, «ջոկելու» հնարավորություն կար... Բայց մորս ցուցակը այնքան էլ «խիտ չէր»... Խաչատուր, Գարեգին աղանները, Վլասը, Ջհանգիր աղան (Ուսուբ բեկը չկար իր ցուցակում, չնայած որ Ջհանգիր աղայից անհամեմատ շատ էր լինում մեր տանը), Արչիլը, տեր Մեսրոպը, որի մասին առանձին պատկառանքով էր խոսում և նրա որդին՝ Արշավիրը, որին ողջ տնով էինք սիրահարված... Իսկ ուստաբաշին, ինչպես ինքն էր ասում՝ ուրիշ էր:

Դու ո՞ւմ կավելացնեիր մորս ցուցակին, սիրելի՛դ իմ Իգդիր:

— Դե ինքն էլ է ասում, որ «շատ կային». բոլորին չես թվի, իմ հիշածները ավելի հներին են վերաբերում, որոնք, ինչպես դու ես ասում, «հողերս կենդանացրին, շենացրին»:

Հենց մենակ Նարնջոնց Ենոքը, իսկ Մելիք Վրթանեսը, Ավագովենք, Օդաբաշենք, Քյաչալ Կասպարենք, Սեկոյենք, Նիսանովենք... բա Եփրեմը... և հենց իրենք՝ Կանայենք, այո՛, Կանայենք, հո մենակ Մարտիրո՞սը չէր, ուսումնական մարդիկ էին, Իգդիրում, հետո Երևանում... Ստեփան, Խաչատուր Կանայանները և ուրիշներ...

Գիտեմ՝ ում ես ակնարկում... Բայց մինչև «Նրան» հիշելը երևի ավելացնեիր նաև Ահարոնյանին, ո՛չ ծխական դպրոցի թվաբանության վարժապետին՝ գրողին, բանաստեղծին, մեծ գրողին, և պառլամենտականին, ազգային գործչին... Պատմվածքներն եմ կարդացել հրաշալի, իսկ որպես գործիչ՝ ի՞նչ իմանամ, համարյա թե անտեղյակ եմ, և ոչ միայն ես, և ոչ միայն նրա մասին. հանրապետության գործիչների՝ առհասարակ... Նրանց մասին խոսելը ոչ ոքի և ոչ էլ իմ խելքի բանն է... Եվ հատկապես Դրոյի, որին ուզում էիր հիշել...

— Այո՛, այո՛, Դրոյին, և մի՛ մոռացիր, որ եթե նա չլիներ, էդպես հեշտ ու հանգիստ չէիք գաղթի...

Լավ է, որ չես ասում արդեն «լքեցիք»... Բայց, սիրելի՛ս, հո մենա՞կ չէր, իսկ Իգդիրիդ ջահելնե՞րը...

— Ջահելները... անփորձ, միամիտ, ի՞նչ պիտի անեին առանց գլխավորի: Միամիտ էլ կկոտորվեին...

Կարգի՛ն խոսիր. կոտորվելը ո՞րն է, կռվել են ինչպես հարկն է, անվախ, անվարան մահին նայեցին և ընկան, զոհվեցին, որ մենք... հեշտ ու հանգիստ Արազն անցնեինք:

— Ներո՛ղ եղիր, միտքս էդ չէր...

Դե, դու ինչ կարող ես իմանալ, ինչ սև իջավ էդ միամիտների գլխին հետո, Երևանում, որոնք Իգդիր, հայրենիք լսելիս ամեն ինչ մոռանում էին աշխարհում...

հավատալով, ապավինելով իրենց հայրենակցին, քաջ խմբապետին, որի ձեռքի մի շարժումը բավական էր, որ այդ «միամիտները» առանց ակնթարթելու գնային որտեղ կռիվ էր ու մահ, որտեղ հարկավոր էր մեզ մնացած մի թիզ հողը պահել... Գոնե պահելու... Ուրիշ կերպ չէր կարող լինել... Իրենց խմբապետի հետ և նույն իրենց երգի նշանաբանով՝ եռագույնի վրա գրված.

... Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի...

— Իսկ Ապարանում նրա արածը...

Ասացիր, չէ՞, որ իմ խելքի բանը չի... Գլուխ հանելու չի, այնպես եմ մթագնել: Գիտեմ, որ խելոք էր, հնարամիտ, կռվից բան հասկացող, պատահական չէր դարձել ռազմական մինիստր, և «նոր հանրապետության» ժամանակ էլ...

Ապարանի կռվում հաջողությունը հենց նրա անհապաղ կողմնորոշվելու, հնարամտության մեջ է եղել, հեշտ բան չէր Երևանի պաշտպանության համար թողնված պահեստային ոչ մեծ ուժերով և երիտասարդական ջոկատներով, որոնց մեջ էին, և չէին կարող չլինել քո «տղերքից», կասեցնել ու գլխովին ջարդել փաշաների կանոնավոր զորքը, որ գաղտնի տեղափոխվել էր Բաշ Ապարան և հաջողության դեպքում՝ Սարդարապա-

տի թիկունք էին դուրս գալու ու լցվելու Երևան... Եվ ո՞ւմ էր պետք լինելու այդ պահեստի զորամասը, և կարող ես դու էլ պատկերացնել՝ ինչ էր լինելու Երևանի վիճակը, գաղթելու տեղ էլ չուներ: Պետք էր կանխել: Երևանի համար, գաղթականության փրկության համար կռիվը Սարդարապատում էր և Բաշ Ապարանում...

Եվ գաղտնի տեղեկացնելով իր օգնության մասին ու աշխարհազորայիններին խնդրելով, պահանջելով, որ դիմանան, գիշերով, աննկատ Ապարան է հասնում, մի կարճ դադար տալիս իր հոգնած այրուձիուն, առավոտ մութը լուսին անսպասելի թափով հարվածում փաշաների զորքին, որոնք կարծել են, որ գործ են ունենալու տեղի անզեն, վատ զինված գյուղացիների հետ և չեն շտապել, վստահ են եղել հաջողության համար... Եվ թվով մի քանի անգամ գերազանցող զորքը խուճապի է մատնվել ու ջարդ կերել...

— Լսել եմ, որ փաշային էլ գերի է վերցրել: ...Կարևոր չի, զրույց է երևի:

Այսքանն է եղել լսածս քո երևելի իգդիրցու մասին: Եվ իմացիր նաև, որ ո՛չ Ապարանով է սկսվել և ո՛չ էլ վերջացել նրա արածն ու անելիքը. սկսվել էր վաղուց, հանրապետության ծնունդից էլ շատ առաջ, և հետո էլ չպակասեց անելիքը... «Ամենայն տեղ էր», որտեղ վիճակներս դժվար է եղել, և... հաջողությունն էլ հետը. հաջողակ զորավար է եղել, ասում են՝ «բախտով»... Հայի համար չեղած–չճարվող բախտով:

Այսքանն է եղել իմացածս, լսածս, կցկտուր, սրանից–նրանից, ավելին չէր կարող լինել, խելքամոտ բան չկա գրված, եղածը սուտ ու փնովանք է, կամ այն «թույլատրելին», որ կարող էին իմանալ մեզ նման միամիտ, հասարակ մահկանացուները, և ոչ միայն քո երևելի քաղաքացու մասին, այլև մեր տարաբախտ, հրաշք հանրապետության և նրա երիցս տարաբախտ, ճշմարիտ հայրենասեր նվիրյալների մասին, բոլորի անխտիր, իրենք էլ իրենց ժամանակն էլ, պատմությունն էլ եղծված, հերյուրված են, կարդալու բան չեն... Մեր չուզողները, թուրք փաշաները ավելի «բարեխիղճ» են գտնվել, նրանց եմ կարդացել մեր մասին, այդ ժամանակվա մասին բան իմանալու համար...

Ապշել, հիմարանալ կարելի է սեփական կենսագրությունը՝ պատմությունը, եղծողների մոլուցքի վրա, ինքնաժխտման, ինքնահոշոտման մոլուցքի... Եվ դեռ գրում են... Գրում են պառավ, տանը մնացած օրիորդի խանդով, երկու կոպեկանոց դիսերտացիաների, կոչումներ ունենալու համար, պնակալիզության վարձ... Ժխտելով, կասկածի մաղձով ծածկելով ժողովրդի պատմության, նրա վերածնության, նոր դարասկիզբ ավետող աներևակայելի սխրագործությունը,— համարելով այն ոչ արժանի հիշվելու, չնչին, պատմության խոտորում, «տարապայման հանգամանք», ինչպես կասեր քո պատմությունը գրող պարոն Եփրիկյանը...

Այդ ջանասեր հուղարկավորների համար կարող էր և չնչին, աննշմար թվալ մեր երեկվա պատմությունը. մի ակնթարթ, երկուսուկես տարի... Մեր իսկ հազար–հազար տարվա համեմատ, այո՛, կարող էին և չտեսնել... Տե՛ր Աստված, ասենք կույր

էին... Գոնե կույր ձևանային, եթե թուրք փաշաների «բարեխղճությունը» չունեին... Զէ՞ որ չեն տեսել այդ «ակնթարթի», այդ պոռթկումի մեջ ինչ թանձրություն է եղել, ցավի, տառապանքի, սխրանքների, ինչպիսի աներևակայելի խտություն, տասնամյակների իմաստ ու արժեք ունեցող...

Իսկապես որ կույր պիտի լինեին, հոգով կույր, աղքատ, հացկատակ... Հիշողությունը կորցրած «մանկուրտի» նման, կիրգիզական լեգենդի մանկուրտի նման:

Բայց չհավատաս, սիրելի՛ս, հնարավոր բան չէ զրկել մարդ արարած կոչեցյալին իր միակ առավելությունից... չորս ոտքերով քայլողների նկատմամբ, իր հիշողությունից, ինչքան էլ որ «աննշան» լինի:

Եվ մի՛ մոռացիր, սիրելի՛ս, որ էդ հուղարկավորների հոգատարությունից դու էլ պակասություն չես ունեցել, բայց դու էլ էն մախաթը չես, որ դրանց ջվալում պարտկվես...

* * *

Ուստաբաշին, որ արդեն ոչ ոքի չէր գլխավորում, ուստաբաշի չէր (բայց ճանաչողները դեռ այդպես էին դիմում նրան), «կոտրվել» էր, բայց չէր ընկճվել, իր ձիգ պարանոցը, իր պատվական գլուխը միայն կարի մեքենայի առաջ էր խոնարհում... իր «բուդկայում» նստած իր կարն էր անում և իր «վերջին աշակերտին» խրատում: Զէր խրատում, զրուցում էր, գիտեր, որ մարդու ամենափուչ զբաղմունքներից «խրատելը» ամենափուչն է և՛ խրատողի, և՛ մանավանդ խրատվողի համար...

Հմայակ հայրս, երբ ինձանից «մարդ դարձնելու» հարցին անդրադարձավ... մնաց զարմացած, և ո՛չ միայն ինքը: Ես, ինչպես իրենք էին ասում, իմ «սուրբ պարտականությունը» չէի ուզում «վիզ առնել», երկու ոտքս մի չստի մեջ էի խցկել և չէի ուզում դպրոց գնալ ու վերջ:

Գիտենք նաև, թե ինչ «դժվարությամբ» ինձ տարան և ով տարավ: Բայց ես մի տարի... «շահեցի»: Եվ այդ միջոցում ճարահատյալ հայրս (մորս խորհրդով երևի) իր եղբորն էր խնդրել՝ ինձ իր մոտ վերցնելու, «խելքի բերելու» համար...

Զարմանալու հերթը ինձ էր հասել և հենց առաջին օրը:

Քար կտրեցի, երբ հորեղբայրը վերցրեց ու ծալեց միջին մատս, «կոճի» թելով կապեց, որ այդպես ծալված մնա, որ սովորի ասեղի գլուխը մատնոցով «հուպ տալ»... Իսկ թե ինչպես պիտի այդ ծալած մատով «ռոգատկայի» պոչը բռնեի, ծտերի, թթի ղշերի վրա ոնց «կրակեի», կամ քարակռիվներին ինչպես ծալած մատով մասնակցեի՝ հաշվի չէին առնում...

Այդ կապած թելը, իհարկե, կապած չէր մնում և քանդելուց հետո միշտ չէր, որ ճարվում էր նույն գույնի թել... Բայց տարօրինակ էր, որ հորեղբայրը «չտեսնել» էր տալիս և դեռ բեղի տակին անուշ, խորամանկ ժպտում էր...

Իմ գործը հորեղբոր «բուդկայի» ներս ու դուրսը ջրջնել, ավլելն էր, որ ես շատ մեծ ջանասիրությամբ անում էի և մի երկու անգամ էլ մեչիդից սառը ջուր էի բերում կուլայով, և պարտքս կատարելուց հետո տնկվում էի հորեղբորս առաջ՝ հասկացնելով, որ սպասում եմ իր գլխի շարժումին, որ և չէր ուշացնում, ակնոցի վերևից ինձ նայելով գլխի շարժումով ցույց էր տալիս կողքին դրած ցածր աթոռակը:

Խոսում էր անշտապ, ինչպես ողջ կյանքում, և ասեղի թելը մեկ իմ կողմ, մեկ հակառակ տանելուց՝ կարճ պաուզաներով, և հաճախ ինձ նայելով ակնոցի վերևից՝ ժպիտն էլ հետը: Խոսում էր ոչ ուրիշ մեծերի նման, իրենցից հնարած, անշնորհք, դիտմամբ պարզունակացրած, չասենք զզվելի, ասենք՝ ճանձրալի, տհաճ խոսելաձևով...

Խոսում էր մեծավայել, «արժանապատվությունս» նկատի ունենալով, ոնց մեծի հետ: Եվ խոսում էր, ինչպես բոլոր իգդիրցիք, անգամ ամենակրթվածները նրանց մեջ, անգամ պրոֆեսոր Շավարշյանը, երբ իգդիրցու հետ էր խոսում, խոսքի առաջից կամ վերջում Իգդիրի, Խոյի բարբառից կցելով... Համեղ բան էր ստացվում և բնական:

— Էդիկիս ասեմ, որ էս կարելը քո գործը չի, չէ՛... Մե քանի վախտ կնա–արի, թող հերդ դինջանա, կասեմ իրանը, Սաթենիկին էլ կասեմ, մորդ... Քո կործը ուրիշ պան կլի, ինչ իմանաս... Դպրոցն ի կլխավորը... առանց սովորելու չի կարելի, բոյիդ ղուրբան, չի կարելի,— չի ասում «սուրբ պարտականություն է»:— Ա՛յ, մե տարի կորցրիր... Դարձար ութը տարեկան, չէ՞...— և չի նայում իմ կողմը...

— Զգիտեմ, չեմ հիշում, հորեղբա՛յր...

— Զհիշելու պան չկա, ութ ես... մե տարին թռա՛վ... աշունը ութը կլես... բայց կարելը քո կործը չի... Կավիճով էն օրը պատի վրա մե պան նկարիր... վայ թե մեր եզդի քիրվային էր նման... Նման էր, բեղերը, կլխի չալման... իրան նկարիր, չէ՞...

— Խա, հորեղբա՛յր,— ասում եմ:

— Խա չեն ասի, բոյիդ մեռնեմ, այո՛ կասեն... Տու ընձի մի նայի, ես խառը խչտիկ խոսում եմ... Դու ճիշտն ասա...

— Այո՛, հորեղբա՛յր...

— Մեկել օրը էստեղ չէիր, մի բոյով, շլապավոր տրոստը ձեռին մարդ էր էկել, մեր բուդկայի իտևը խովին նստած՝ մեչիդն էր նկարելի... մե ծեռին փուզան էր (վրձինը), մե ծեռին... ինչ են ասելի... հաստ կլխով չիբուխ, թութուն էր քաշելի... ծուխը–մուխը՝ տրած... շատ նման տուրս բերեց... Ա՛յ, որ տու էլ սովորես...

— Ախար չեմ ուզում, հորեղբա՛յր...— հազիվ լսելի ես եմ ասում,— բա էլ ե՞րբ խաղամ... ախար...

— Օրը շատ երկար ի, բոյիդ մեռնեմ, ամեն պանի կհերիքի... կհերիքի... այ, որ էս կարելն էլ չլի, օրս չի վերջանա... չի վերջանա:

(Հետո, շատ հետո կիմանամ, որ այդ բոյով «շլապավոր մարդը» ինքը՝ «Աղաջանն» է եղել իր ձեռնափայտով և անբաժան ծխամորճով):

Կեսօրին տանից հաց կբերեին, կամ հարևան ուստաներով իրենք մի համեղ բան պատրաստած կլինեին՝ փուռը դրած «չանախ» կամ գառան խաշլամա: Եվ հարևանի ընդարձակ խանութում կնստեին հացի, գինին ու սառը կուլայով ջուրը՝ անպակաս... Ես էլ՝ մշտական մատուվակ, երբ մնում էի մինչև ճաշը, իսկ հաճախ էլ ինքն էր ստիպում, որ մնամ:

Ինձ էլ կլցներ մի կես բաժակ գինի՝ ջրով խառնած, և կասեր՝ խմի, ճաշի հետ տղամարդը իրավունք ունի մեկ–երկու բաժակ (ճիշտ մորս խոս-քերը, որ մինչև վերջ կրկնեց)... Եվ կշարունակեր խոսելը՝ մի համեղ բրդուճ էլ ինձ հրամցնելով...

— Կեր ու խմի, բոյիդ մեռնեմ... Իգդիրցին առանց գինու հաց չի կերել, սովորություն էր հնուց. մեր ճուրը շատ վատն էր մի ժամանակ: Պապդ էլ առանց գինու հացի չէր նստի... Ինքը կասեր, որ «Քրիստոսնի օրհնել գինին», մեչը խավողնի, վնասակար չի, ուժ կա մեջը, խավողի ուժնի...

— Ես խավող շատ եմ սիրում, հորեղբա՛յր,— ասում եմ,— բայց գինի չէ...

— Կխմես...— և բեղի տակ ժպտում է խորամանկ, անուշ:

— Հիմա չէ, բալա՛ս, հետո, որ մեծանաս, դառնաս տղամարդ: Կխմես, էլ ի՞նչ իգդիրցի, որ գինի չխմի, եթե հիվանդ չի. կխմես, բայց չափով, ախորժակի համար, տրամադրությունդ զվարթացնելու համար, չափով, անգյաջիդ օղ արա, չափով, թե չէ շատ կնեղանամ... Արաղ չխմես, թույնի, իսկ գինին ուժի, զվարթություն, առանց գինու ուրախություն չի լինի, առանց գինու ով կպարի, ով կերգի, կասեն՝ ծուռի... Հիշե՞ս էս էն կյրողին... Հայրոյիս հարսանիքին, որ սեղանի վրա շորորասեր, գինին էլ պարեցնելի, ինքը չէր... Քոնը հիմա սովորելնի, որ մարդ դառնաս, մեծ մարդ, էն շլա-պավորի նման, հա՛, բոյի՛դ մեռնեմ, սովորելնի:

Եվ այդպես խոսում էր, թե՛ կարում, թե՛ հացն էր ուտում միշտ անշտապ, իր գործի, իր արհեստի անխափան ռիթմով, որ շտապելու հետ համատեղելի չէր:

Բայց մեկ էլ հայացքը սառչում էր մի կետի՝ բաժակը թե ասեղը ձեռին: Կարծես մեկին, մի բանի սպասելով, հիշելով...

— Հը, ի՞նչ եղավ, ուստաբաշի՛,— ձայն կտային շուրջը նստածները,— թասդ խմի, հարյուրի կեսը հիսուն ա...

Ուստաբաշին, իմ անուշիկ հորեղբայրս տեսնում եմ, որ չի լսում այդ հարյուրի կիսվելու հեշտությունը, որ ես էլ կարող եմ կիսել իմ դպրոց չգնացած տեղովս... Ուստաբաշին թվերի հետ էլ գործ չունի երևի... Բոլոր թվերը կիսվել, կոտորակվել, դարձել են մի կլոր նիշ, որը կարող է թիվ դառնալ, եթե մի որևէ թվից հետո կողքին դնես... Ժամացույցի վրա էլ չկա այդ նշանը, մանավանդ իր խանգարված «ժամացույցի», որը կանգնել է, կանգնած մնալու է այդ նիշի՝ 0–ի վրա... Եվ հայացքն էլ սառել է ակնապիշ այդ նիշի վրա, որ կիսվելու ենթակա չէ այլևս:

Եվ լինում էր, որ չէին խանգարում՝ սպասելով, որ ինքը սթափվի... Եվ սթափվում էր՝ մեղավոր ժպիտը երեսին, չփոթված, խեղճացած... Եվ կասեր՝ ոչ ոքի դիմելով, իր համար երևի.

— Կյանքի տաժանությունը սելավի նման պանի... առաչը չկապիր, կսրփի և կտանի, ինչ կա չկա... կտանի, կտանի՛...

Հետո ես կամացուկ կհրեի ծունկը՝ հիշեցնելով, որ վեր կենալ է հարկավոր, գործ ունի...

— Հա՛, բոյիդ մեռնեմ, շատ նստամ,— և թեթև հենվելով ուսիս, նստածներից ներողություն կխնդրեր, ինձ էլ կասեր.

— Քել, քել երթանք, բալա՛ս, քեզ էլ ուշացրիմ, մկա Սաթենիկս ի՞նչ կասի...

Սաթենիկն էլ ոչինչ չի ասի, Սաթենիկը հիմա էլ նստած երկու խոսքից մեկը քո սուրբ անունն է, իմ անո՛ւշ հորեղբայր, Սաթենիկի համար մարդու երբևէ գոյություն ունեցող միակ օրինակը դու ես եղել, ինձ համար՝ նույնպես: Քո խոսքերը կհիշեմ, քանի դեռ մարդ եմ համարում ինձ և խոսքերդ էլ «ականջիս օղ արած», և եթե պատահել է՝ հացի նստած ընկերների հետ քո ասած «չափը» խախտել եմ, ապա՝ ոչ անկշտությունից, աչքածակությունից՝ ջահելության թափից, որը չի սիրում չափ ու սահման, բայց քո ձախողակ աշակերտին ոչ ոք չի տեսել սեղանից օրորվելով վեր կենալիս... Իսկ հաճախ էլ, ի զարմանս սեղանակիցների, թասը «կործել եմ» բերանց, ցած եմ դրել սեղանին, որ չլցվի նորից՝ հիշելով, որ ականջիս օղ ունեմ քո ձեռքով կախած...

Եվ այդպես էլ չպատահեց մեկը անցած օրերիս ճանապարհին՝ քեզ նման քաղցր, մեծահոգի մարդ, տեսածս հազարների մեջ... Բայց աշխարհում ինչքան էլ

բացառիկներ, «երջանիկ բացառություններ» լինեն, պետք է որ կրկնություն ունենան, որ հավատը մարդու նկատմամբ չաղավաղվի, անճանաչելի չդառնա...

Եվ մի օր Երևանում «ինժեների» բաղնիքի ծուռումուռ փողոցի մի շեն տան մեջ պատահեցի քեզ նման մարդու: Նա էլ էր ուստա, բայց, ափսո՜ս, որ ուշ պատահեցի: Նա էլ անուշ ասել–խոսել գիտեր և մի տարբերությամբ, որ նաև անուշ, շատ անուշ երգել գիտեր, և նա էլ էր ինձ դիմում նույն քաղցր խոսքերով, հացի նստած, և նորից մի տարբերությամբ, որ «Էդիկ» չէր ասում, ասում էր. «Յեդվարդ, բոյին ղուրբան, ընկերոջից անուշ մեկ էլ նորից ընկերն է, իմացի... և ականջիդ օղ արա»:

Ուստա Կարապետն էր. շահաբեցի ուստա Կարապետը: Իմ շատ սիրելի բանաստեղծ ընկերոջս՝ Հրաչիկի հայրն էր, որ մեկ–մեկ մեզ պատվում էր իր ներկայությամբ, հացի էր նստում մեզ հետ ու սովորական հացկերույթը դարձնում էր ցնծություն, զվարթություն, տոն օր:

Եվ հետո՝ ապրածս ողջ կյանքում, այդ երկու օղերը կճշտեն ու կհաստատեն մի հասարակ, գուցե տխուր իմաստություն, որ մարդուս հոգու զվարթագույն օրերը լինելու են և հիշվելու այն օրերը, երբ ընկերներիդ հետ սուփրա ես նստել, հացն ու գինին վայելել և վայելել՝ «Զափով նազանի»...

Ուստաբաշին այդպես էլ չհասկացավ, ժամանակ չէր մնացել, վիշտն էլ չէր թողնում հասկանալու, և ոչ ոք չբացատրեց, թե ինչ չներվող մեղք էր գործել իր Հայրոն, իր մինուճարը, որ խաչվելու արժանի լիներ... Ուստաբաշին շատ էր նեղացած ինքն իրենից և կոտրվել, խեղճացել էր, որ չկարողացավ, ոչինչ չկարողացավ անել իր միակ որդու համար...

Տեր Մեսրոպը չէր, որ «գիտենար» և չխանգարեր իր ջահել արծիվներին թռչելու դեպի անմահություն... Մի անգամ չէր, որ իր ամբիոնից ցուցամատը վեր տնկած ավետել էր, որ «մահ գիտակցված՝ անմահություն է» և մի անգամ չէր, որ այցելել էր իր ծխի ամենապատվավոր ծխապատկանին մխիթարելու համար և ձեռքերը տարածած ցույց տվել իր ծվատված մարմնից մնացածը՝ տնքալով...

— Ընձի տես՝ մխիթարվի...

* * *

Մայրս իր «լավերի» շարքում հիշում էր նաև մեկին՝ մի արհեստավորի՝ հմուտ ոսկերիչ սալմաստեցի զարգյար Արսենին, որին իրենք՝ իգդիրցիք, «խաչակյող» էին ասում, իսկ մայրս էլ ասում էր. «Ի՜նչ գող, ի՜նչ բան, մե խեղճ, Պյան Առաքելից էլ խեղճ մարդ էր, տուն, ընտանիք էլ չուներ, մենակ էր ապրում... Մեր տուն էր մեկ–մեկ գալիս, մեզ համար ինչքա՜ն բան պատրաստեց, ի՜նչ սիրուն թասեր, ականջօղեր, բլա-

զուկներ... Հիշո՞ւմ ես՝ էն քամբախ տարիներին ծախինք գնաց... Լավ շնորհքով մարդ էր, բայց խմող էր, խմող էր, է՛...»:

Էդպես կաշխատեր, կաշխատեր գլուխը կախ ու մի օր էլ կիմանայինք, որ չկա: Աստված գիտի, թե ուր էր գնում, ո՞ր կողմը էս անգամ: Եվ մի օր էլ ամբողջ Իգդիրը կխոսար, որ «խաչակյող Արսենը էկիրի»... Ցայտոնով, ոտ ու գլուխը պարոնի պես հագած–կապած, շլյապայով, գալստուկով... Մե ամիս երկու քեֆ կաներ, բերածը քոռ ու փուչ կաներ Իգդիրի մի քանի ավարաների հետ և... կէջ-վեր նորից:

Բայց ավելի հաճախ վերադարձել է հիվանդ, աղքատ, քրջերի մեջ և նորից թեքվել իր սեղանին, խանութի լուսամուտի առաջ...

— Պատահում էր, Էդի՛կ ջան, գնալուց առաջ կբերեր մի թանկագին բան՝ ոսկի բլազուկ կամ մատանիներ մի քանի հատ, վզնոց... Ինձ պահ կտար ու կասեր. «Գիտես, չէ՞, Սաթենի՛կ քույրիկ, ոնց եմ հետ գալու»... Թե ինչի՞ էր ինձ գտել իր մալը պահող՝ ինչ իմանամ. և միշտ նույնն էր ասում.

— Գիտես, չէ՞, ո՛նց եմ հետ գալու... Թե չեկա, ասում էր, քեզ փեշքեշ, հալալ, իմ կողմից հիշատակ...

Վա՛յ, աման, ի՛նչ էի քաշում դրա թողածը պահելու համար, չէի իմանում՝ որտեղ պահեի, որ չկորի... Լավ էր, որ գալիս հասնում էր իր մալին... Էդ էլ քեզ խաչագող, ի՛նչ գող, ի՛նչ բան, խեղճ, Պյան Առաքելից էլ խեղճ:

— Տես ինչ էր անում էդ մարդին խմելը, է՛...

Մորս վախը, սարսափը խմողների նկատմամբ մշտական էր և մնացել էր դեռ մեծ քեռուս՝ Արտաշեսի տխուր պատմությունից, Պյան Առաքելի ամենօրյա վիճակը տեսնելուց և առհասարակ իգդիրցոց, կողբացոց անզուսպ կովարար բնավորությունից, հարսանիքների, քեֆերի ժամանակ դրանց մշտական կռիվ–ղալմաղալից, մշտական էր այդ վախը: Ես նեղանալ չէի կարող իրենից՝ այնպիսի աղերսով էր նայում բաժակը ձեռքիս տեսնելուց...

Արտաշես քեռին իր հերթական քեֆերից հետո կայազորի սպա ընկերների հետ Կողբ վերադառնալիս կարկտախառն հորդ անձրևի տակ է ընկնում, երբ հասնում է Կողբա չային՝ գետակին, որը սովորական, մի քիչ մեծ առվի ջուր ուներ, բայց կատաղի հեղեղատ էր դառնում անձրևների ժամանակ: Հասնելով հեղեղատին՝ տաքագլուխ, անհամբեր՝ չի սպասում խաղաղվելուն, որ երկար էլ չէր տևելու... Քշում է իր սպիտակ ձին՝ բանի տեղ չդնելով իմաստուն կենդանու բողոքը, որը ոչ մի կերպ չէր ուզել պղտոր գազազած ալիքների մեջ մտնել, և ստիպելով, ազնիվ կենդանու կողերը ասպանդակելով, տանջելով՝ ջուրն է մտցնում և կատաղած հորձանքը նույն վայրկյանին ձիուն էլ, իրեն էլ քշում տանում է քարերին զարկելով, ջախջախելով... Ձին մի կերպ ափ է դուրս գալիս, իսկ ինքը մնում է կարկտախառն հեղեղատի մեջ մի քարից կառչած, մի հնարով, կիսամեռ կարողանում է

ատրճանակից կրակել և ձայնից նույն իր սեղանակից սպաները գալիս հանում են բերում տուն, սառած, կապտած, ջարդուփշուր եղած քեռուս դնում Գրիշ պապիս առաջ...

Գրիշ պապս, ասում են, չի էլ զարմացել, անձայն քարացած նստել է կողքին, կարծես սպասելիս է եղել...

Էլ ոտքի չի կանգնում քեռիս:

Եվ հետո՝ ողջ անցած կյանքիս ընթացքում, պիտի լսեմ մորս անվերջանալի թախանձանքը.

— Բոյի՛դ մեռնեմ, հո չե՞մ ասում հեչ չխմես...

Գիտեմ, գիտեմ՝ ինչ ես ասելու, հորեղբոր խոսքերը. «Ախորժակի համար լավ է»... Իսկ դու գիտե՞ս, որ խմողները ախորժակի համար չեն խմում, նրանցը «ուրիշ է»...

— Հա՛, Էդի՛կ ջան, քեռիդ էլ բան չէր ուտում համարյա...

Դե, լավ, բեր տեսնենք էսօր ինչ ես պատրաստել, սոված եմ է՛... և չիշն եմ բացում:

— Գելի գլխին ավետարան...

Եվ եթե բան չունես պատմելու, կարող ես հորեղբորից մինչև լույս...

— Է... Քեզ էլ տվինք իրա մոտը՝ մի բան սովորեիր, հորդ նման...

— Հորս թող հանգիստ, ինչ իմանաս, ինչի համար էր ծնվել...

— Էլ ինչի՞ համար պիտի ծնված լիներ, էնա առևտուր էր անում... Զէ՛, առևտուրը չէր դրա գործը, հեչ իրա գործը չէր, ուրիշ, ինչպես Արշալույս քեռին էր ասում, ուրիշ բան պիտի լիներ, որ «չբացվեց»... Ախար հիշում եմ՝ ինչ հետաքրքիր նամակներ էր գրում Թբիլիսի... Ի՛նչ սիրուն ձեռագիր ուներ... Եվ սովորածն ինչ էր՝ երկու–երեք տարի ծխականում, խոսելը չէ, գրելուց ուրիշ մարդ էր կարծես... Գրքերից օրինակներով, «ցիտատներով»... Զէ՛, մի բան կար մեջը հաստատ:

— Էլ ի՞նչ պիտի լիներ, քեֆին–քեֆ չի հասնի, ամբողջ օրը գրում ա ու կարդում...

Ես զարմացած իրեն եմ նայում... գրո՞ւմ, ի՞նչ է գրում, ես խնդրել էի, որ Իգդիրի մասին իր հիշածը գրի... «Հոնորար», փող էի խոստացել...

— Գրում ա. «Սամվելն» ա գրում...

— Ի՞նչ Սամվել, ա՛յ մեր...

— Դե էն լավ գրողի՝ Ռաֆֆու...

— Ուզում ես ասել՝ արտագրում է...

— Դե ի՞նչ իմանամ, գրում ա, գրում, թղթերը դրած...

Տե՛ր Աստված, ես էլ ասում եմ՝ էդքան թուղթը դրա ինչին է պետք...

— Մի բան լավ ա, Էդի՛կ ջան, էլ քուչեքը էնքան չի լինում...

Տո ես էլ ասեմ՝ տղաները, ընկերներս ինչքան ժամանակ է չեն ասում. «Հորդ տեսանք էստեղ, էնտեղ»... և նույն ժամանակին՝ մեկ «Պուշկինի պուրակում», մեկ հրապարակում... Եվ այն դեպքում, երբ ինչպես ինքն էր ասում՝ «ոտերից խեղճ էր», բայց ավելի ճիշտ, մի քիչ մրսկան էր և այդ պատճառով ամառ–ձմեռ իր Իգդիրի սովորությամբ՝ երկարաճիտ սապոգներ էր հագնում՝ մեծ Տոլստոյի նման շալվարը մեջը դրած, և այդ «խեղճ ոտներով» օրական 20–30 կիլոմետրից պակաս քայլել չկար... Իսկ հիմի տանն է նստել, գրող է դարձել... Անհասկանալի բան է, «խելքից դուրս բան»... Պարապությունից չի, զբաղմունք միշտ ուներ... Անհամար «քեռի Հմայակ» ասողներ կային և միևնույնն էր, որտեղ էին ապրում՝ Շիլաչիում, թե Կոնդում: Բոլորին հասնում էր, երեխաները ծնողների փոխարեն իրեն էին տանում դպրոց, տեխնիկում... Հարսանիք, ծնունդներն էլ իր հերթին: Բազմեցնում էին «իրենց քեռուն» սեղանի գլխավորի տեղում... Եվ ճառում էր, հինգ րոպեում երեք խոսք ասելով...

Տո ես դրան ցույց կտամ թուղթ փչացնելը, կարծես քիչ փչացնողներ կան...

— Գործ չունես, Էդի՛կ ջան, թող գրի, ո՞ւմ ա խանգարում, համ էլ տանը նստած, քուչեքը չի չափում... Դու իրան բան մի ասա, բոյի՛դ մեռնեմ... Կնեղանամ...

Այդպես էր մայրս, իմ լուսեղեն մերս... Ինքը իրեն կարելի էր, ասում էր, փնովում... Բայց թե մենք շարունակեինք նույն «ոճով»՝ չէր կարելի... Փոխվում էր, լրջանում... և բացառություն չկա, թեկուզ տղան ես այդ Հմայակի և իրենց պահողը...

Բան չունեմ ասելու, թող գրի, բայց լավ կլիներ, որ Իգդիրի մասին գրեր... և կարծես թե համոզել էի, և ոգևորվեց կարծես... Դե լավ, լավ, լցրու տեսնենք ինչ... Հա, չմոռանաս, Մամիկոնից պիտի պատմեիր...

— Եփածս էսօր բորշչի, տղաներդ՝ Մհերը, Արամը, կերան, հավանեցին, քեզ էլ լցնեմ, թե երեկվա դոլման կուտես...

Բորշչդ գինու հետ չի սազի, դոլմա բեր: Ռուսները ասում են բորշչը մյուս օրը ավելի համեղանում է, թող մնա վաղը:

— Հա՛, Էդի՛կ ջան, Մամիկոնին լավ չեմ հիշում, Հայրոյից, կարծեմ, հետո տարան, Փիլիպոսի հետ, գիշերով, սուսուփուս, էն տանելն էր, էլ բան չիմացանք: Մեղք էր, քանի տեղից վիրավոր...



Ափսո՜ս, անխիղճ բան են արել, ի՜նչ տղա էր, ի՜նչ իգդիրցի... Այ, ով էր իսկական իգդիրցի՝ պարզ, հասարակ, սիրտը լիքը բարություն, կյանքն էլ կարծես իրանը չէր... Գոնե ջահել կնոջը խղճար, նոր էր ամուսնացել...

— Հա՛, Էդի՛կ ջան, Մամիկոնը ուրիշ էր, ոչ մեկին նման չէր, ոչ եղբայրներին, ոչ հարազատներին... Ուրիշ էր, մեր Հայրոյի նման ուսումնական չէր, բայց շատ բարեկամասեր էր, թասիբով, հպարտ... Բոլորին կհասներ... էն քամ-

բախ տարիներին հորդ շատ օգնեց... Բայց ախար էն անիծած զենքից վրան կախած էր մշտական, էլ որտե՞ղ չէր կռվել, որտեղ կռիվ կար, ինքը էնտեղ էր... Քանի անգամ բերին, հազիվ շունչը վրան, ձախ ձեռքը հազիվ էր մի քիչ բարձրացնում, ասում էր. «Էս մե ծեռս էլ բոլի, որ...»:

Դե, եթե ինքը՝ կաթողիկոսը, կաթողիկոսն էր սպիտակ պատանք հագած Սարդարապատ գնացել իր աբեղաների, ճեմարանի վարժապետների հետ... Հո ինքը տանը չէ՞ր նստելու...

— Քո ասածից բան չեմ հասկանում, բայց անմեղ տեղը տարան... Ասում էին՝ մաուզերիստ ես եղել ու վերջ...

Լավ, ա՛յ մեր, ուրիշ խոսելու բան հիշի, դա հիշելու բան չի:

— Բա մեղք չէի՞ն... Բոլորը ջահելներ, նոր պսակված, անպսակ... Խեղճ հորեղբայրդ գնաց որտեղ, հասավ ռուսաստանները... Իսկ Մամիկոնին, Փիլիպոսին... Ասում էին, որ ըստեղ՝ բերդում... Էդ գետին մտածները...

Վայ ձեր անխիղճ տիրու մերը... Աքսորն էլ շատ են համարել...

* * *

Եթե մի հազար տարի էլ անցնի, լավ ու վատ մարդիկ երևի մնան... Վատ մարդ լինելը երևի ավելի դժվար է, իսկ լավություն անելը դժվար բան չէ, վատն էլ կարող է երբեմն լավություն անել, եթե ուզենա... Իսկ Մամիկոնը երևի ուրիշ բանի ընդունակ չի եղել, նրա արածը լավություն պիտի լիներ: Ընկերներ շատ ուներ, ոչինչ չէր խնայի ընկերոջ համար, կյանքն էլ երևի: Անձնազոհությունը ծնվել է լավերի մոտ, ուրիշ տեղ չի ծնվել... Ի վերջո՝ բարու ու չարի հաշիվն է, որ չի վերջանալու, և կռիվ ու կոտորածն էլ վերջ չի ունենալու, երբ «չարը» շատանում է...

Վատ մարդուն երեխան է անսխալ զգում, երբ խելքը գլխին մարդիկ անզոր են, սխալվում են միշտ: Մեր ցեղի բոլոր երեխաները, քիչ է ասել, սիրում էին Մամիկոնին: Մենք երեխաներով իրար պատռում էինք նրա մի որևէ հանձնարարությունը՝ ջուրը խնդրած, ծխախոտը, լուցկին հասցնելու համար... Իսկ ինքը չէր կարող պատահել, որ բակ մտներ և գրպանները լիքը չլիներին համեղ բաներով... Եթե ոչինչ չլիներ՝ կհաներ դիտմամբ մանրացրած կոպեկները և կբաժաներ, որ վազեինք գոզինախ առնելու կամ ֆռիկ խաղալու, բայց պարտավոր էինք ամեն մեկս մի երգ, մի զվարճալի բան անելու. մեկս ծուղրուղու էր կանչում, մեկս՝ հաչում, մյուսը՝ մկկում գառան պես, էծի... Իսկ ես հազիվ կարողանում էի Զանգիես օրինակել...

Մեր ցեղի բոլոր հարսները, զալոները նույնպես հմայված էին իրենով... Նրան տեսնելիս բոլորի դեմքից ժպիտը չէր իջնում, եթե պետք էլ չէր լինում՝ մի

բան կհնարեին իրենից խնդրելու, որ հետո ասեն՝ Մամիկոնն է բերել, տվել, արել... Գիտեինք անգամ ճաշից հետո նրա քնելու ժամանակը և առանց կարգադրության քաշվում էինք բակից, պատշգամբից... Պատահում էր՝ ընկերներով կառքով էր տուն գալիս և ֆայտոնչին պարտավոր էր մեզ «ֆոռացնել» Գյոյ մեչիդի հրապարակում մի երկու անգամ... Աստված չաներ մեկը սխալվեր «թարս» նայել Իգդիրի աղջիկներին, հարսներին... Կբռներ այդ թարս նայողին ականջից (ով ուզում է լիներ) և բարակ շրթերը սեղմած կասեր. «Մկա կռեմ (կտրեմ) անգյաջդ, դե, էլ թոզդ չտեսնամ էս թաղերը, հա՜...»:

Կրթություն չուներ, «ծխականի» երկու–երեք տարիների սովորածն էր, այդպես էր, Իգդիրում երկու–երեքից ավելի քչերն էին դիմանում ծխականում և հերիքում էր իրենց, իրենց չբարդացրած կյանքում:

Մամիկոնը մի ախպերացու ուներ (կարծես յոթ եղբայրները քիչ էին) իրեն հասակակից: Իր նման բարձրահասակ, ջլուտ, երկար, ուժեղ ձեռքերով: Շատախցի էր կարծեմ, միասին էին ապրում, հարազատներ չուներ Փիլիպոսը, բայց ունեցել էր և շատ...

Ցերեկը ինչ–որ գործով զբաղված էր, սրա–նրա այգիներում ֆայլայություն էր անում, իսկ գիշերը... Գիշերները Փիլիպոսը չքվում էր... Ոչ ոք չէր հարցնում նրա տեղը, ինչով զբաղված լինելը, և Մամիկոնն էլ ասել էր, որ չլինի թե բան հարցնեն: Փիլիպոսին մեր հարսները հարազատի նման էին նայում և ակնածում: Չէր խոսում, միշտ մթնած էր, սև, շատ սև աչքերը հաճախ սառում էին մի կետի, անթարթ... և գունատվում էր, գունատվում: Դա նշանակում էր, որ շշուկով պիտի խոսվեր շուրջը, ձայն բարձր չլսվեր, և երբ աղմուկ էր լինում, սթափվում էր քնից վեր թռածի նման և ոչ ոքի չդիմելով՝ հարցնում.

— Ո՞վ էր, ո՞վ էր...

Ջուր էր խնդրում, դողացող անգույն շրթներով ծծում էր ջուրը և գլուխը տանելով–բերելով՝ ասում. «Ծարավ եմ, ծարավ...»:

Ինչի՞ց էր ծարված նրա երևի ածխացած սիրտը... Մամիկոնը գիտեր միայն:

Առավոտը չբացված էր տուն դառնում... և սևացած, դաժան դեմքով նայում, որտեղ իր տեղաշորը պիտի լիներ և այդպես շորերով էլ պառկում՝ վերմակը քաշում գլխին: Մամիկոնը կամ հարսներից մեկը դուռը կամացուկ ծածկում էին և երեխաներին մատով սաստում, որ ծպտուն չլինի...

Եվ այդպես էլ չիմացավ ոչ ոք, Մամիկոնն էլ չպատմեց, թե ինչով էր իր ծարավը հագեցնում իր եղբայրացուն... Եվ հագեցրե՞ց իր ծարավը արդյոք Փիլիպոսը՝ ոչ ոք չիմացավ, բայց նրան էլ Մամիկոնի հետ տարան մի գիշեր:

Մամիկոնն էլ կարող էր իրեն սպասող արհավիրքից ազատվել, ճար կար: Կար այդպիսի հնարավորություն: Կարող էր... Ամերիկա գնալ իր փոքր եղբոր՝ Մկրտիչի հետ, որը ամուսնացել էր վանեցի շատ հարուստ վաճառականի աղջկա հետ և Ամերիկա էր գնում ապրելու...

— Դե, ախպորդ հետ ես գնում, ա՛յ Մամիկոն,. ա՛յ ախպերս, սիրելի՛ս,— համոզում էին եղբայրները, հատկապես Հովհաննեսը, որ բոլոր ծախսը և ապահովությունը Ամերիկայում վերցնում էր իր վրա. ուներ, հարուստ էր Հովհաննեսը և Մամիկոնին ոչինչ չէր խնայի: Եվ հասցրին Մամիկոնին Բաթումի նավահանգիստ ու կարծես ամեն ինչը գլուխ էր գալիս... Եվ այդ «կարծեսը» Մամիկոնը դարձնում է անհնարին...

Նավի տոմսը գնում է Հովհաննեսի ափին, իջնում նավից, և խոսակցությունը Մամիկոնի ու Հովհաննեսի մեջ անիմաստ, տխուր, անհասկանալի է դառնում... Անհասկանալի՞... Մարդը իր ճակատագրից երևի պրծում չունի, ոչինչ չի կարող օգնել...

— Մամիկո՛ն, Մամիկո՛ն, մտածի՝ ինչ ես անելի...

— Ի՞նչ եմ անելի...

— Ախար քանիսի՞ն տարան ընկերներից... Հայրոյին, քեզ չեն խնայելու... Մտածի՛, ախպե՛ր ջան... Կուզե՞ս չոքեմ առաջդ... Մամիկո՛ն:

— Էհ, թող տանեն, թե բանը դրան հասնի... Ի՞նչ եմ արի, թե վատ պանի արածս, թող տանեն... Ձէ, ե՛ս ամերիկացի՞, չէ՛, ըլելու պան չի:

— Դե հո մենա՞կ չես, ախպորդ հետ կլինես, Մամիկո՛ն...

— Ձէ՛, երկու իգդիրցի Ամերիկայի խմար շատ կլի... Մեկն էլ բոլի: Մասիսն էրևալի Ամերիկայե՞ն... Ձէ՛, Օհաննե՛ս, ընճմե ամերիկացի՞... ըլելու պան չի... Իգդիրն էլ ախար... Ի՛նչ իմանաս...

— Իգդիր, Մասիս, Մասիս որ տանեն... կիմանաս էդ քո Մասիսի տեղը, բայց ուշ կլի, Մամիկո՛ն. էս օրը լավ միտդ պահի,— ասում էր, աղաչում էր մեծ եղբայրը՝ Օհաննեսը՝ վատ բանի սպասելով... Իսկ Մամիկոնը Բաթումից ուղիղ Երևան, ուղիղ Երևան և առանց «միտը բան պահելու», ուղիղ Երևան և գուցե ինչ–որ հույսի նշույլ պահելով, որ գուցե և... խնայեն: «Ախար ի՞նչ եմ արի, ի՞նչ. թող պացեն ջանս նայեն... Սաղ տեղ ունե՞մ վրաս...»:

Այն անցած հուսահատ, դաժան կռիվներից մի կերպ կենդանի մնացածներին վիրավորի ժապավեններ չբաժանեցին, որ իմացվեր քանի տեղից է մարդը ծակծկվել... Մամիկոնին էլ հարցնող չեղավ. ավելի քան վատ, եթե կային այդ «իրեղեն» ապացույցները՝ «տանելը» հեշտանում էր և, եթե շատ հեռու չէր լինում «գնացած» տեղը՝ հագուստները բերելն էլ էր հեշտանում՝ լացելու սպասողների համար, և ոչինչ, որ հագուստի տերը մեջը չի, «իրական» չի լինի վիշտը... համարյա թե բանաստեղծական կլինի, և պատահում էր, որ թումբ էին կապում, գերեզմանի նման բան այդ հագուստի համար...

Մարդը միշտ էլ կարող է մխիթարվելու բան գտնել, եթե շատ պահանջկոտ չլինի:

* * *

— Քո սովորելը դարձրել էիր մե չտեսնված բան... Սովորելու անունը լսելուց ընկնավորվում էիր, ձեռդ չիվար էինք մնացել. բա երեխան սովորել չուզենա՞... չիվա-րել մնացել էինք... քոնը առավոտից իրիկուն խաղալն էր, որ զոռով տուն չբերեինք՝ հաց էլ չէիր ուտի, կքնեիր քո չինած չան ընում... քոնը Զանգուն էր, թուրքի բաղերը, քարակռիվ՝ Կոնդի, Զառաբիխանի ավարաների հետ...

— Ա՛յ մեր, ա՛յ մեր, ախար երեխան պիտի խաղա, վազի, լողանա, ձի տանի լողացնելու Զանգուն, թթի ծառերը բարձրանա, ընկնեն հետևից՝ փախչի, հետևից չհասնեն... Եթե երեխան չխաղաց՝ ուրեմն հիվանդ ա, հիվանդ...

— Ախար քո խաղալը ուրիշ տեսակ էր... Վա՛յ աման, ինչ եմ քաշել քո ձեռը. ուրիշի երեխաներն էլ էին խաղում, դու, տնաշե՛ն, ոնց որ վայրենի, ընկնավոր: Էն մեր սանդուխները, որ բռնելու տեղ էլ չունեին, երեք լոք էիր անում անհամբերությունից: Հաշիվ կա՞ր՝ քանի անգամ ես ընկել, ոտդ–ձեռդ իրարահան արել: Մե թուրք բիձա կար, ողորմի իրան, լավ մարդ էր, սնղչի էր, նա էր քո ոտ ու ձեռը տեղը գցում...

Բա էն, որ հարևանի երկրորդ հարկի բալկոնից ընկար... Մահաջառը պոկվել էր, բոլոր երեխաները մնացել էին տեղները, մենակ դու էիր ընկել... Վա՛յ Աստ-ված: Ներքևում՝ բալկոնի տակ, երկու մեծ սապոն եփելու ղազաններ էին դրված եղել, մեկը թարս, շուռ տված, տակը վեր, իսկ մյուսը, բերանը բաց, կողքին: Մի թիզ առաջ ընկած լիներիր, գլուխդ կիսվելու էր, ախար... Երեսի վրա ընկել էիր շուռ տված ղազա-նին՝ քիթ ու բերանով: Երեսդ՝ ոնց որ ծեծած միսը: Քեզ որ Արուսյակը շալակած բերեց մեր բակը... Վատ բան մտածեցի, արյունը չռում էր գլխիցդ... Ոտներս ծալվեցին, էլ բան չեմ հիշում: Ողորմի էլի Մամիկոնին, վռազ ուլը մորթեց ու էլի էն թուրք սնղչին՝ սպիտակ թոքը տաք–տաք կապեցին երեսիդ, երկու բարակ ղամիշ էլ դրեց քթածակե-րիդ, որ շունչ քաշես... Թե ոնց դզվավ նորից երեսդ, գլուխ չեմ հանում, մի գունդ կարմիր միս էր, ախար...

Ընկնավորի պես էիր խաղում ու միշտ մի օյին էիր բերում հենց քո գլխին: Էդպես խաղալով «Թոփի բարուֆի» հետ՝ հարևանի բամբակի պահեստը չվառեցի՞ք... Տակն էլ զենք էր եղել պահած... Մի շաբաթ տրաք–տրաքվում էր, չկարողացան հանգցնել և քեզ մեղավոր հանեցին ու եկան հորդ տարան միլիցատուն, էն չելածների վախտն էր, հորդ քիչ մնաց «բոլշևիկ» հանեին, որ քեզ իբր թե ինքն է սովորեցրել պահեստը վառել... Գնացին հորեղբայրներդ մի կերպ համոզեցին, որ երեխան միամիտ է արել... Երեխա... մի ընկնավոր ասա: Բա ամեն օրվա գզվռտո՞ցը թուրքի դպրոցի հայաթում: Վա՛յ, Տե՛ր Աստված, ո՞րը ասեմ, ոնց էլ սաղ–սալամաթ մնացիր: Քո տեղը մի ուրիշը հիմի երկու փետով պիտի ման գար: Ա՛յ, որ մնայիր հորեղբորդ մոտ... Բա քո ձեռին մենակ մե՞նք էին չիվար մնացել, բա խեղճ հարևանները... Քուչեքը ինչքան չան թուլա տեսնեիր դեռ աչքերը խուփ, կհավա-

քեիր, կբերեիր տուն, բակի պատի տակերը բներ էր չինել, պահում էիր... Գիշերները դրանց ոռնոցից, կաղկանձից հարևանները, մենք էլ քուն չունեինք...

— Բա ի՞նչ անեի, թողնեի քաղցած սատկեի՞ն, անխիղճները ինչո՞ւ էին թափում փողոց խեղճ քոթոթներին...

— Յանի թե իրանք հաց ունեին ուտելու, խեղճ ժողովուրդը, որ դրանց էլ կերակրեր. մոռացել ես մեր կերածը... Էլ ի՛նչ չկերանք, կորեկի, թեփի հաց... վա՛յ... ինչ տարիներ էին... Առավոտները անլվա, քնաթաթախ... հարևանները գալիս էին հորդ մոտ բողոքի...

Այդպես էր, հիշում եմ, հարևանների կանայք էլ մորս մոտ էին գալիս բողոքի՝ իրենց խլնքոտներին առաջները գցած, թե...

— Տե՛ս, Սաթենի՛կ քույրիկ, ինչ օրի են մեր երեխեքը...

Մերս էլ քաշում էր ինձ բերում կանգնեցնում իր առաջը, ձեռքերով վտիտ ուսագլուխներս բռնած, և ցույց էր տալիս իմ սփաթը...

— Ըհե, տեսեք, թե իմը ձերից լավ օրի ա, տարեք պակասը լրացրեք:

Եվ ակնհայտ գոհ իմ կապտած քիթ ու մռութի վիճակից՝ տանում էին իրենց խլնքոտներին՝ վզակոթներին տալով, որ ինձ հետ էլ ընկերություն չանեն... Իսկ մորս ձեռքերը ուսագլխիցս անմիջապես ականջներս էին բարձրանում մի ակնթարթում:

Ա՛խ, այդ ականջները. ինչքա՛ն էին ինձ խանգարում: Դե՛, երեխայի ականջ-ները, ճիշտ է, շատ ճկուն են, աներես, ինչքան ուզում ես քաշի, բայց իմոնքը արդեն փայտե գդալի տեսք ունեին՝ ամենօրյա, մշտական գործածության մեջ լինելով...

Զէ՛, երեխա լինելն էլ մի բան չի... Եվ երևի բարձր ասացի՝ մայրս դրանից էլ շարունակում է:

— Հա՛, Էդի՛կ ջան, դու երեխա չէիր, կրակ ու պատիժ էիր: Պատիժն ու ծեծն էլ չէր օգնում... Ասում ես Իգդիրից պատմի. բա Իգդիր չէր, ի՞նչ էր: Գաղթել եկել էինք, էլի բոլորս մի տեղ էինք ապրում, թուրքերն էլ՝ անպակաս, մեր խազեինից՝ Հաջուց սկսած...

Ինչքա՜ն էին դրանք, Տե՛ր Աստված, ամեն տեղ շնթռած... Հրե՜ն քո ընկերնե-րից՝ Քյարիմի տղաները՝ Ադիլն ու Հյուսեինը՝ նրանք էլ քո ձեռից օր չունեին, բայց ձեռ չէին քաշում՝ ի՞նչ կար մեջդ, որ երեխեքը գլխիդ էին հավաքվում... Դրանց բիբին՝ Քյարիմի մեծ քույրը, օրական քանի՜ անգամ էր սպիտակ փարաջան ֆռֆռաց-նելով ընկնում հետևիցդ՝ օխտը պորտդ հայհոյելով... է, քեզ կհասնե՞ր, բայց էլի պոչիդ կպած էին, պոկ չէին գալիս:

Մեր տան տիրոջ՝ Հաջու երկու տները իրար դիմաց էին, արանքում մեր բակն էր՝ քարքարոտ, ծառ ու ծաղկից զուրկ, որ թուրքերի բակերում անպակաս էր լինում, հատկապես Պարսկաստանից եկած թուրքերի, իսկ մեր Հաջին տեղի թուրք էր, բայց ավազան՝ «հավուզ» կար, ոչ մեծ քարե գուռ էր: Մեր բակի ջուրը իջնում էր Կոնդի

մեծ առվից՝ «մամուռից» և անցնում էր ներքևում եղած բոլոր բակերով մինչև մեր բակը. մեր տունը վերջինն էր և բակից, պատի մյուս կողմում մի մեծ բացատ էր, իմ մշտական խաղալու տեղը, որտեղ էլ իմ շների բներն էին, էլի Հաջու հողն էր, որ երևի նորից տուն էր կառուցելու:

Բացատից այն կողմ պատով պարսպված հսկայական բակ էր նորից, մեջտեղում մի քանի շինություններ, երևի դպրոցի համար շինված, որը այդ ժամանակ որբանոց էր, իսկ հետո դարձավ սկաուտանոց, «պարոն Օնիկի» երևելի սկաուտանոցը, իսկ հետո դարձրին թուրքի դպրոց:

Մեր բակի ավազանից օգտվում էին մեր բակում ապրող թուրքերը, Քյարիմ դադաշի ընտանիքի կանայք և Հաջու տղայի՝ Հասանի ընտանիքը, ինչպես և մեր բակից վերև ապրողները, մինչև Կոնդ: Բոլոր ավազաններում նույն «արարողությունն» էր տեղի ունենում: Իրենց բոլոր աման–չամանները, կանաչին, միրգը, ձեռք ու ոտք այդ ավազաններում էին լվանում, ավազանի շուրջը պպզած կանայք, ինչպես և Քյարիմ դադաշը, որ խանութից տուն էր գալիս, կամ առավոտ վաղ, «պետքի»

գնալիս իր «աֆթավայի» ջուրը ավազանից վերցնելով, իսկ պետքը վերջացնելով... մի լավ լվացվում մինչև արմունկները, թևերը քշտած: Բան չես ասի, շա՜տ զարմանալի մաքրասեր էին մեր հարևան թուրքերը: Մենք՝ բակի մյուս բնակիչները, ավազանից չէինք օգտվում, որ «չհարամեինք», բայց ես բիբիին՝ Քյարիմ դադաշի մեծ քրոջը, ջղայնացնելու համար պատահում էր գորտեր էի բերում լցնում ավազանը, և բիբին կատաղում, փրփրում էր մինչև գորտերից կմաքրեր ավազանը: Մի անգամ էլ, երբ մամուռի ջրանցքը փակել էին, մի տոպրակ խաչափառ էի հավաքել... բերի լցրի էդ ավազանը... Ա՜յ թե գժվել էր բիբին... Եվ այդպես «մաքրում» էին նաև փողոցի ծայրին եղած ջրի ծորակը, երբ հերթը իրենց էր գալիս ջուր վերցնելու՝ հայի ջուր վերցնելուց, «հարամելուց» հետո. շատ էին մաքրասեր:

Հաջու երկրորդ տան կեսում մենք էինք ապրում, մյուս կեսում՝ Վելիբեկը, Վալին, նոր ամուսնացած կնոջ և իր երկու մեծ տղաների հետ, ապարանցի Թանկա-գինի, Թանգոյի հետ: Մեր միջանցքին կից առանձին սենյակում վանեցի Դիքրանն էր ապրում իր մոր՝ Մարեի հետ, իսկ ներքևի առաջին հարկի մի քանի սենյակներում նորից իգդիրցիներ էին, Շեկոյենց Արշոն իր սիրունիկ տիկնոջ՝ Օվսաննայի հետ, կողքին Խոռո դադոն էր ապրում իր՝ արդեն հաստատ տանը մնացած երրորդ աղջկա՝ Շուշանիկի հետ, որին, կաղ լինելու պատճառով, տանող չճարվեց: Մյուս կողքին Այվազենց Աբիսողոմն էր ապրում իր եղբոր՝ Հարութի հետ (մեր ցեղակից Այվազյան-ներից), և միայն մեր շենքում՝ հինգ ընտանիք: Դիմացի առաջին շենքում ապրում էին Մեխակ եղբայրը և Մամիկոնը, որ նոր էր ամուսնացել, իսկ մյուս կեսում ապրում էր քյաչալ Կյասպարի մեծ տղան՝ Հմայակը, մեր փեսա Համազասպի՝ չոփուռ Համոյի մեծ եղբայրը իր փառահեղ տիկնոջ՝ նույն Շեկոյենց Արշոյի քրոջ Արուսյակի հետ: Արշոն էլ, Արուսյակն էլ շեկ էին, շեկի «վառ» կարմրավուն, շիկակարմիր տեսակը, և երևի

ամբողջ ցեղով և ծնած երեխաներն էլ շեկլիկ էին իրենց մոր՝ Արուսյակ զալոյի պես: Եվ այդպես՝ ութ ընտանիք հարազատներ, բարեկամներ, միակ «յաղը» Խոռո դադոն էր ուրեմն: Իգդիր էր հաստատ, պոզերով հո չէ՞ր լինելու: Բոլորը «գործի» վրա էին, հաջողակ բարգավաճում էին, քանի որ հանրահայտ նէպի ծաղկման ժամանակներն էին, և ով շնորհք ուներ, «բաշարում» էր՝ գործի վրա էր:

Շեկոյենց Արշոն լավաշի փուռ էր բացել (լավաշի, երբ մեր տանը կորեկի հացը գաթա էր, և եթե Արշոն «ձեռքից պինդ էր», հակապատկերը Օվսաննա զալոն էր. բարի էր, բարի, և «կաշվե բաճկոնավորներից» հետո մեկ–մեկ նա էլ էր Արշոյի թխած լավաշներից մեզ բերում.

— Սաթենի՛կ քույրիկ, մե էս խաղը վերցու... Էլը կպերեմ...

Վալին տավարի առևտրով էր զբաղված, քյաչալ Կյասպարի տղան՝ Հմայակը, հացահատիկի վաճառքի խանութ ուներ, դե մեր Այվազյանները, «Մսենք»՝ նախ-կին Իսաբեկյանները, մսի առևտրով և ավելի «լայն առումով», անգամ Խոռո դադոն էր «գործի վրա»՝ մեյդանում «լաբլաբու» էր ծախում, տաք–տաք խաշած կարտոֆիլ կամ կարմիր բազուկ և տակն էլ մանղալ էր պահում, որ տաք–տաք վաճառի, ու չէր պատահի, որ ղազանը դատարկ չվերադառնար...

Եվ միակ անգործը հերս էր, որի դեռ «աստեղային ժամը» չէր եկել: «Մնայուն» գործ չուներ իմ անուշիկ, անբաշար հերը, սպասում էր... միայն նէպի վերջում բարեհաճեց գալ նրա «ժամը», երբ պետությունը մտածեց ի վերջո կոոպերատիվ խանութներ բացել և մի կոոպերատիվում էլ իմ հորս գործ եղավ. «գաստրոնոմ» խանութի գործակատար դար-ձավ, քանի որ «առևտրական տան» փորձը ուներ և ապխտեղենից, խավիարից, ձկնեղենից բան էր հասկանում, և այդ խանութներն էլ պայթում էին առատությունից՝ Կոստրոմայի յուղ, խավիարներ բոլոր տեսակների՝ «կերչենսկի», «պայուսնի», «զեռնիստի»՝ սպիտակ մեծ տակառներով, և պանիրների անհամար տեսակներ առատ, բոլ–բոլ բերում էին, բերում... Զարմանահրաշ առատություն եղավ, սպիտակ հաց, բուլկիներ, գաթաներ, կոնյակ ու գինի-ներ և արդեն «Արարատի»... Օ՜, մենք էլ հաց կերանք: Զարմանահրաշ էր իսկապես. սովից, չկալությունից հետո այդպիսի՜ առատություն... Այ թե իմաստուն բան էր մտածել այդ նէպը ստեղծողը, նէպ, ընդամենը երեք տառ՝ հրաշագործ... Ուր էր թե՝ մի քիչ երկար տևեր...

Գաղթին հաջորդող տարիներին վիճակներս շատ վատացավ, վատ էինք ապրում, ապրուստի ոչ մի աղբյուր չկար: Հորս «առևտրական տաղանդն» էլ չօգնեց: Նրա առևտրի «իգդիրյան ոճը» բանի պետք չեկավ: Փորձեց ծախել ամերիկացիների ուղար-կած շոր–հագուստի հակերը, որ ուղարկվում էր երևի ձրի բաժանվելու համար տկլոր գաղթականությանը, իսկ ստեղծված «օֆիսները» դարձել էին ոսկի հավաքելու միջոց, և հակը ոսկով էին ծախում խիղճը կորցրած մարդիկ... Եվ «շորի մեյդանում» լիքն էին առնող–ծախողները: Հերս էլ առավ երկու հակ և երկուսն էլ՝ փուչ, անպետք դուրս եկան, ճիշտ մեր հարևան վանեցի Դիքրանի ասածով, որ՝ «հակ չկտրած ձմերուկի, բախտի պանի»... և, ինչպես պիտի սպասվեր՝ անբախտը հերս պիտի լիներ իհարկե...

Շորեղենը միջից դուրս եկած, ով գիտի՝ ամերիկյան որ նահանգի անցյալ դարի այլակերպություններ էին, իսկ կոշկեղենը... ո՜վ զարմանք, բոլորը թայփոխս էին, ծայրերը՝ սուր–սուր, կրունկները՝ բարձր, շատ բարձր... Ո՞ւմ պիտի ծախեր, ո՞վ պիտի առներ... Ես ոտաբոբիկ ման գալուց չռված ոտքերս մի կերպ խրեցի մի զույգի մեջ, որոնց քթերը նայում էին տարբեր կողմեր և մի երկու օր ողջ թաղի երեխաների ծաղրի առարկա լինե-լուց հետո հագա նորից իմ հին «գոնդորաները»՝ ավտոդողի հաստ ռեզինի տակերով... Գոնե երկուսից մեկը «կտրած ձմերուկ» լիներ, չէ, երկուսն էլ աղբ պիտի լինեին...

Փորձեց սելվորություն անել... Մի եզը հորեղբայր Ավետիսը առավ, մյուսը՝ ինքը... Եզների խոտի գինն էլ չհանեց, ուր մնաց մեր ապրուստի:

Միակ ճարը մնացել էր մեր ունեցող, շատ ունեցող բարեկամ հարազատների օգնությունը, որ և չէին զլանում, համաձայն չգրված օրենքի, որ այսօր դու պիտի սատար լինես հարազատիդ, վաղը՝ նա: Խախտվեց այդ օրենքը՝ կվերանա «հարազատ» հասկացությունը, և նույն արյան մարդիկ կդառնան սովորական օտարներ, իսկ «սովորական օտարները» ինչքան էլ շատ լինեն, ազգ չեն դառնա... Օգնում էին, չէին զլանում, հիշելով Հմայակի արած լավությունները ժամանակին, ժամանակին՝ այսինքն՝ Իգդիրում:

Օ՜խ, վատ էինք ապրում:

Փրկությունը եղավ նորից հողից: Իգդիրցիների մի քառասուն–հիսուն ընտանիքների հող տվեցին այսօրվա «Նոր Արմավիր» կոչվող նախկին անմարդաբնակ տարածքում, որը նույնպես ծածկված էր փուշ ու շոռամներով, հին Արմավիրի բերդ–ամրոցի ավերակների տակ, «Թափադիբի» գյուղի կողքին:

Երկար պատմություն է: Մի քանի տարի մնացինք հորեղբայր Ավետիսի հետ միասին, որի դերձակությունն էլ չէր օգնում հաց ունենալու: Եվ հաց ունեցանք. լավաշ հաց: Փրփրալի, սպիտակ լավաշներ մորս թխած... Եվ ոչ միայն լավաշ, մեծ ընդարձակ բոստան–բանջարանոց ունեինք, որտեղ ամեն ինչ ցանել, տնկել էինք՝ սկսած լոբի–սիսեռից, բամիայից մինչև սեխը, ձմերուկը...

Հորեղբայր Ավետիսը, դերձակությունից բացի, հողի լեզուն էլ գիտեր, և Հմայակ հայրս էլ հիշել էր, որ ինքն էլ է Իսաբեկի տղան, ես էլ մի բան արժեի: Բայց մինչև այդ հողը ցանելու, մշակելու կդառնար, նախ հարկավոր էր մաքրել քար ու խճերից, հսկայական շոռամներից, փշերից, և որերորդ անգամ նորից ու նորից: Օձն ու կարիճներն էլ անպակաս էին, և անխիղճ, աներես մոծակներն էլ՝ իրենց հերթին, հատկապես իրիկվա կողմը: Վաղ առավոտից Վարդուհի զալոյի շինած մի որևէ «փոր խաբելու» բան ուտելուց հետո հորեղբայրն ու հայրս, ուրագները վերցրած, փշերն ու շոռամներն էին արմատից փրթում, իսկ մենք հորեղբորս թոռների՝ Մարգոյի ու Արտավազդի հետ կրում էինք մանր քարերը, խիճը մի կողմ կուտակում, իսկ փուշն ու շոռամները՝ տան տեղի մոտ, որի դեռ պատերի կեսն էինք բարձրացրել կավ ու ցեխով... Սակայն երեխաներս ուրախանալու բան էլ ունեինք: Ցերեկը գործից փախչում, լողանում էինք ջրանցքում, իսկ երեկոները հավաքած փշերից «հրավառություն» էինք ստեղծում, «տրնդեզ»՝ Տյառնընդառաջ, ծուխ ու մուխ, որը միակ փրկությունն էր աներես մոծակներից ազատվելու համար: Եվ ինչպես Իգդիրում՝ խմում էինք նորից Արազի ջուրը, և պարոն Եփրիկյան չկար, որ զարմանար «պղտոր ջուրքի» ու մեր «աշխույժի»՝ ժրաջանության վրա... Իսկ երբ բոստանը հասավ, երբ առաջին ձմերուկը կտրեցինք, մեր քեֆին քեֆ չէր հասնի: Մեր ջուրն էլ, առավոտվա թեյն էլ ձմերուկն էր

հաց ու պանրի հետ: Մի խոսքով՝ այնքան էլ հեշտ ու հանգիստ լավաշի տեր չդարձանք: Դա գործի սկիզբն էր: Դեռ պիտի փորվեր, վարվեր, ցանվեր... Իսկ իգդիրցիների մեծ մասը և մենք՝ նրանց թվում, ոչ լծկան ու գութան ունեինք և ո՛չ էլ սերմացու... Եվ ահա այստեղ է, որ մինչև գետին պիտի խոնարհվել ղուրդուղուլեցի ունևոր գյուղացիների (այժմյան Հոկտեմբերյան քաղաքավանը) առաջ և առաջին հերթին՝ Գրիգոր ապոր առաջ:

Մեծ, հարուստ, շեն գյուղ էր Ղուրդուղուլին, գաղթ ու արհավիրք չտեսած, իսկ որտեղ հային թողել էին առանց «Աստծո օգնության» ապրելու՝ շեն ու առատություն պիտի լիներ, և 20–ական թվերին դա մեծ բան էր, ամեն գյուղում մի քանի տուն կար, և շեն տներից էր Գրիգոր ապոր տունը: Պատկառելի, նահապետական խառնվածքի տեր մարդ էր, խիզճ ու պատվով: Մեծ էր ընտանիքը՝ հինգ–վեց տղաներով, հարս ու աղջիկներով, թոռներով, և վաղ առավոտ՝ լուսաստղի հետ, դաշտերում, բոստաններում, այգիներում էին ողջ ընտանիքով, ու մրջյունի ջանասիրությամբ հատիկ–հատիկ, բուռ–բուռ հավաքելով լի ու բոլ տուն էին դարձել: Եվ նա էր՝ Գրիգոր ապերը, որ իր լծկանով, գութանով, սերմացուով վարեց, ցանեց մի քանի տան հողերը՝ մեզ թողնելով ընդամենը ջրել, բերջարել: Ցորենն էլ իր կալերում կալսեց, նրա մեծ, ընդարձակ կալերում, գիշերներն անգամ, մինչև մեր հերթը կհասներ, և տասը օր էլ ապրեցինք իր տանը, հաց կերանք իր գերդաստանի հետ, իր լի ու առատ սեղանից:

Ողորմի իրեն՝ ղուրդուղուլեցի Գրիգոր ապորը, հազար ողորմի... պարկերով, ջվալներով իր սելերին բարձած ցորեն տարանք տուն՝ Երևան և հացի տեր դարձանք... Օ՜, տեսնելու բան էր մորս ուրախությունը, լացն ու ուրախությունը: Գրիգոր ապերը միայն սերմացուն վերցրեց իբրև վարձ: Եվ լավ էր, որ արդեն չկային կաշվե բաճկոնավոր մարդիկ, և մեր միջանցքում դարսված «գարգալոս» ցորենի պարկերը մնացին իրենց տեղերում:

Բայց մինչև հացի տեր դառնալը տան համար ճաշի «պարագաների» որոշ մասի հոգացողությունը ինձ էր վիճակ ընկել: Մսի հոգսը իմն էր:

Ես, օրը մեջ կամ երկու, պիտի իմ հորեղբայրների, ծուռ Էվոյի տղաների՝ «մսի իշխանների» խանութ գնայի և ճաշի համար միս բերեի, առանց մսի ի՜նչ ճաշ իգդիրցու համար: Իսկ միս լինելուց հետո մնացածը դասավորում էր իմ հնարագետ մայրս:

Եվ գնում էի միամիտ, իմ «միսիայի» գարշելի իմաստից անտեղյակ երեխայի երջանիկ անհոգությամբ, և տնկվում նրանց խանութի առաջ, մինչև նկատեին ինձ: Խանութում հերթով միս էին ծախում եղբայրներով՝ Համազասպը, Մեխակը, Մամիկոնը, Գեղամը: Գնում էի և մինչև խանութի առաջ տնկվելս հեռվից նայում էի, թե ով է էդ օրը «դախլի» առաջ կամ կշռողը... Եվ երբ Գեղամն էր լինում, մի քիչ զբոսնում էի «դասաբխանայի» մուռտառ, ճանճերով վխտացող փողոցում, մինչև մեկը փոխարիներ նրան, կամ Մեխակը, Մամիկոնը մտնեին գոնե խանութ: Իսկ երբ չէին երևում, ճարահատյալ մոտենում էի և կանգնում դռանն ու սպասում: Բանի տեղ չէր դնում, վրաս էլ չէր նայում մինչև «մուշտարիներին» ճանապարհ դներ, հետո կովի մեծ, չռված աչքերը

դարձնում էր վրաս և ասում. «Հը՛, էլ եկի՞ր ես...», և մի կտոր էծի միս թե ինչ, կամ «դավեսկաներից» գցում էր կշեռքը, որ միտը մնա՝ ինչքան է տվել և փաթաթելով թղթի մեջ, տալիս էր ինձ ու ասում. «Գոնյա թուղթը պեր խետդ...»: Եվ տանեցիք, մերս, մսին նայելով, իմանում էին անսխալ, որ Գեղամի տվածն է: Հիշո՞ւմ ես, ա՛յ մեր:

— Բա չե՞մ հիշում, նրա տվածով ես ճաշ չէի եփում, մի բանով յոլա էինք գնում: Որ իմանաս, թե հերդ ինչքա՜ն է դրան՝ էդ անամոթին օգնել, լավություն արել Իգդիրում: Աչքերը, էդ չռված աչքերը բռնի, միտը չի մնացել, որ աղաչում էր հորդ՝ սալդատությունից ազատեր, հերդ դրան ազատեց, թե չէ տանելու էին գյոռբագյոռ ըլներ...

Ուրիշ էր, երբ Մեխակ եղբայրն էր լինում. ես շատ պիտի մոտենայի, որ Մեխակը տեսներ ինձ. կարճատես էր, և քանի որ իմ ու մեծ եղբորս անուններից մեկն էր միտը մնացել՝ էդպես էլ կանչում էր.

— Յար, յար, Հրայր, տո՞ւ ես,— և մի ընտիր կտոր կախած մսից կտրում, փաթաթում, անկշռել ինձ էր տալիս: Իսկ երբ Մամիկոնն էր լինում կշեռքի մոտ... ես մի շաբաթ չէի գնում մսի:

Իմ այցելությունները միայն մսի պրոբլեմով չէին վերջանում: Զկալությունից, աղքատությունից ավելի նվաստացուցիչ, ամոթալի վիճակ չկա երևի, մանավանդ երբ մարդ ունեցել է, շատ է ունեցել, մարդավայել կյանք է ունեցել և պիտի խնդրի... Իգդիրցի և խնդրել: Եվ ինձ էին ուղարկում այդ միսիայով՝ համարելով, որ երեխան ինքնասիրություն կարող է և չունենալ: Եվ իսկապես, ես ինձ հաշիվ չէի տալիս իմ արածի տխուր, անպատվաբեր լինելու մասին: Պատահում էր, որ ուղարկում էին մեր բակում ապրող պարսկաստանցի Թուրք Քյարիմ դադաշի խանութը՝ մանրածախսի, որտեղ տան համար ամեն ինչ կար: Գնում էի և գործս հեշտացնելու համար՝ նրա տղայի՝ Ադիլի հետ, որ իմ ամենօրյա խաղընկերն էր: Եվ այդ զարմանալի բարի Թուրքը (ինչ համեմատություն մեր խազեին Հաջու հետ, որ հրեշ էր պարզապես) ամեն անգամ մի կապոցով ասեղ, կոճի թելեր, օճառ (օճառ, որ սև աղվեսի գին ուներ), չոր մրգեր, թեյ և տան համար շատ պետքական այլ մանր–մունր բաներ էր ինձ տալիս: Երևի ինքն էր պատվիրում հորս ինձ ուղարկել, քանի որ այդ բոլորը կապած, բոխչա արած ինձ էր սպասում: Քյարիմ դադաշը բարի էր, իսկ նրանից բարի և չքնաղ նրա կինն էր՝ Բյուլբյուլը, որին, երեխա լինելով հանդերձ, տեսնելուց կարմրում, գլուխս կախում էի անբացատրելի հիացմունքից... Եվ ինքը նկատում էր ու ժպտում քթի տակ և, երևի, նաև գոհ, որ փսլնքոտն անգամ իր աննման գեղեցկությունը տեսնում է...

Բա ձեր արածը բա՞ն էր, ա՛յ մեր, մե՞ղք չէի...

— Բոյիդ մեռնեմ, ես քեզ տեղ եմ ուղարկե՞լ, հերդ էր, մոռացե՞լ ես, ես ի՞նչ իմանայի, որ «հենց էնենց» ես բերում, կարծում էի, որ ինքը հետո տալիս է ունենալուց: Համ էլ ախար ինքը էդ բոլորին իրա ժամանակ, երբ ինքը, մենք էլ ունեինք՝ մերժել չկար, ինչ ուզել են, տվել է և հաշիվ չի իմացել... Եվ կարծում էր, որ հիմի էլ նրանց հերթն է իրեն

օգնելու: Բա որ ասում եմ՝ մարդը պետք ա արհեստ ունենա: Ի՞նչ էր մեր օրը, Տե՛ր Աստված, ընչի՞ քոռացար... Եվ պիտի հիշես, որ հետո, երբ հերդ կոոպերատիվում էր աշխատում հենց էս փիս ժամանակից հետո, էլի իրա մոտ էին գնում բոլորը...

— Ինչո՞ւ չեմ հիշում, նրա բարությունը ինձ էժան չի նստել, քանի՛ անգամ եմ նրա «պակասորդը» փակել, մինչև իրա գործից ձեռ քաշելը... Կոոպերատիվի խանութը խառնել էր իր Իգդիրի խանութի հետ, իսկ Արշալույս քեռի էլ չկար, որ հաշիվները դրստեր:

— Լավ, բոյիդ մեռնեմ, իրա մասին վատը մի հիշիր, քո հերը լավ մարդ էր, նա էլ էդպիսին էր, Ավետիս չէր:

Եվ ապրում էին իգդիրցիները Երևանում արդեն քեզ սպասելուց հոգնած, բայց հույսերը... չկտրած, այո՛, չկտրած, ով ինչպես կարող էր: Մեկը՝ հարուստ, մյուսը՝ աղքատ, գործավոր, մեծ ու փոքր պաշտոններով, մի մասը՝ Երևանում, մի մասը՝ երևանամերձ գյուղերում, հողագործ, նորից բաղ ու բախչա ունեցողներ... Բայց արդեն «էն չէր», մի բան, շատ կարևոր բան արդեն չկար: Բայց մենք կարող էինք չլինել այդպիսի «ողորմելի» (ո՛չ հորս գործածած իմաստով) վիճակում, քանի որ հայրս խանութի ապրանքը հասցրել էր տեղափոխել Երևան մինչև մեր գաղթելը: Ահագին ապրանք էր, որոնք ծախծխում էր խանութպաններին և յոլա էինք գնում: Իսկ բերած ալյուրը, բրինձը, յուղը, մակարոնը, վերմիշելը, ուտելեղենը տան գործածության համար էր պահվում, և մերս էլ ոսկերչի խնամքով էր բանեցնում այդ եղածը, քանի հորս գործերը այդպես անհուսալի վատ վիճակում էին և հայտնի չէր, թե երբ հուսալի կդառնան: Մի խոսքով՝ այդքան շուտ չէինք դառնա ուրիշների ձեռքին նայող: Բայց...

Մի առավոտ, երբ թեյը վերջացրել էինք, մեր բակը մտան մի քանի հոգի, մեջները երկուսը՝ կաշվե բաճկոններով, կաշվե գլխարկները աչքերին քաշած մարդիկ, և ամեն ինչից երևում էր, որ պետական մարդիկ են: Մի քանի րոպե բակում կանգնած վերև–ներքև էին նայում, իսկ մենք՝ վախը սրտներումս, լուսամուտներին էին կպել: Տեսնես ինչո՞ւ էին եկել և որտեղի՞ց լույս ընկավ խազեին Հաջին՝ դևը, որի հետ ինչ–որ հարցուփորձ անելով՝ մեր պատշգամբի կողմն էին նայում, և Հաջին էլ իր մուռտառ, հինա դրած մորուքով մեր կողմն էր ցույց տալիս... Բարձրացան, մերս նստեց թախտին, ոտքերը ծալվում էին երևի... Շատ պարկեշտ բարևելուց հետո կաշվե բաճկոնավորներից մեկը, որ մաուզեր ուներ վրան կապած, հորս դարձավ, որ, չգիտես ինչու, ինքն էլ չէր նստում թախտին, քանի որ պարզ տեսնում էի, որ դողում էին ծնկները: Այդ մաուզերով մարդը հորս դարձավ և հորս ազգանունը հարցնելուց հետո ասաց.

— Քաղաքացի՛ Իսաբեկյան, ցո՛ւյց տվեք, թե ինչ «ավելորդ» ապրանք ունեք,— և ինչ–որ թուղթ էլ ցույց տվեց հորս, երևի իրենց իրավունքը վկայող:

Հմայակ հերս շվարած ձեռքերը տարածեց, ասեց կմկմալով.

— Ի՞նչ կա, ավելորդ ո՞րն ի, մե քիչ «սննդարար» բան կա (որտեղից էլ հնարեց «սննդարար» բառը), սրանց համար եմ պահել,— ու մեզ՝ երեխաներիս, մորս էր ցույց տալիս:

— Կունենաս, կունենաս, բեր, բեր տեսնենք:

Իսկ հերս մեխվել է տեղում, չի շարժվում, երևի ընկներ, եթե շարժվեր...

— Էհ, եթե չես կարող, մենք կօգնենք,— և աչքով արեց հետը եկածներին, իսկ նրանք էլ հենց դրան էին սպասում. ընկան քունջ ու պուճախ, մահճակալների տակերը, պահարանները, միջանցքում շարած եղած–չեղածը և մեկ–մեկ հանեցին, դարսեցին պատշգամբում: Հաջին ներքևում իր կարմիր մորուքն էր քորում, վախեցած հարևանները բակ էին լցվել... Հմայակ հորս շրթունքներն էլ էին սպիտակել և կոկորդի խնձորիկը վերուվար էր անում, երևի թուքը ցամաքած կուլ չէր գնում... Օ՜, ինչ զարհուրելի տեսք ուներ իմ խեղճ հերս... Հետո ներքևի ծնոտը արդեն իրեն չէր ենթարկվում, ճակատի, աչքերի կնճիռները կծկվել, հոնքերի արմատում հուսահատ աղերսի նշան էին դարձել, և աչքերից հոսում էր արցունքը: Կաթիլ չկար, հոսում էր արցունքը... Ճիշտ այնպես, ինչպես «տունդարձի» ժամանակ Իգդիրում, երբ պիտի վերադառնայինք... և գլխում երևի վիհ էր բացվել, անտակ, որտեղ մի միտք էր միայն մնացել թպրտացող, ի՞նչ անի, ի՞նչ կլինի, և ձեռքերն էր բարձրացնում, իջեցնում, ինչպես թռչելու պատրաստվող արագիլը, ու ջրից հանած ձկան պես բերանն էր բացուփուփ անում անձայն... Հետո կարծես սթափվեց, երբ տեսավ ծխախոտի, օճառի, կոնյակի արկղերից հետո սկսեցին «սննդարար» ապրանքը՝ ալյուրը, բրինձը կրել, և հանկարծ տեղից պոկվեց, կառչեց մակարոնի արկղից, հետո բրնձի կիսատ պարկը գրկեց: Բայց ամեն անգամ տանողները հեշտությամբ պոկում, մի կողմ էին հրում նրա անուժ, թույլ ձեռքերը: Հետո այդ կաշվե բաճկոնով մարդը նստեց սեղանի մոտ, մատիտ հանեց, թուղթ և «արձանագրեց» իրենց հավաքածը, ու այդ թուղթը մեկնեց հորս, որ ստորագրի երևի, բայց տեսնելով, որ հորս ձեռքերն այլևս չէին շարժվում, ձեռքով հորս կողմը հրեց թուղթը և ասաց.

— Այստեղ, քաղաքացի՛ Իսաբեկյան, գրված է բոլորը, ինչ «բռնագրավված» է: Այս ցուցակով, եթե կուզեք, կարող եք բողոքել ուր կամենաք,— և գնացին:

Այդպես Հմայակի ունեցած բոլոր «սննդարար» եղած–չեղածը «արձանագրվեց»: Օ՜, այդ կաշվե բաճկոնավորները, այսօր էլ հիշելիս զզվանքից փշաքաղվում եմ...

Օրը ցերեկով էր, աշնան արև օր, ձմեռը՝ քթներիս տակ: Քար լռություն եղավ տանը: Մեռելատան նման մի բան... Մայրս վեր կացավ, ավելն առավ և սկսեց ավլել մնացած բրնձի հատիկները, մակարոնի, վերմիշելի մնացորդները... Եվ այդ օրն արդեն մեր տանը սեղան չնստեցինք: Քաղաքացի Իսաբեկյանը ոչ մի տեղ չբողոքեց, ի՞նչ իմանար՝ ուր, որտեղ է հարկավոր բողոքել և ինչ իրավունքով, եթե այդ մառուզեր կապած կաշվե բաճկոնով մարդուն իրավունք էր տված կնքված թղթով, որը ոչ ոք կարդալու փորձ էլ չարեց: Գուցե այնտեղ գրված էր, որ ինչ–որ բան եղածից պիտի թողնվի՝ վեց շնչից բաղկացած ընտանիքին... Գոնե կիսատ ալյուրի պարկը, կամ մի արկղ մակարոն: Այդ թղթի մեջ հո չէ՞ր գրված, որ մի բուռ բրինձ էլ չթողնեն չորս մեծ ու փոքր երեխաներին:

Դաժան, անողոք ժամանակներ էին, և ապրում էին այդ ժամանակներին հարմարվողները:

Այդ չնախատեսված փոփոխությունը մեր ընտանիքի համար, երբ մենք զրկվեցինք մեր «սննդարար» ունեցվածքից, զարմանալի կթվար, եթե միայն մեզ վերաբերվեր: Իմացանք հետո, որ կաշվե բաճկոն հագածները միայն մեր տանը չէին «արձանագրություններ» թողել: Ամենազարմանալի իրադարձությունները մարդու համար զարմանալի չեն մնում, եթե զարմացողները շատ են լինում:

Մեր տան հիմնական զարմացողը հերս պիտի լիներ, որ Դիոգենեսին վայել փիլիսոփայական անտարբերությամբ ընդունեց մեր չնախատեսված «սոցիալական փոփոխությունը», երբ երեք ժամվա ընթացքում ունևորից դարձանք չունևոր: Պարզապես իրականացավ մորս կանխագուշակությունը, որ արհեստ չունեցող մարդը համենայն դեպս պիտի որ փիլիսոփա լինի նաև: Եվ Հմայակ հայրս ապրեց՝ մենք էլ հետը, փիլիսոփայի նման: Անտարբեր անզորությամբ, որն ավելի դիմացկուն է, քան կյանքին հակառակվելը: Անճարակությունն էլ ուժ ունի և իր փիլիսոփայական բանաձևը՝ հարմարվել և ապրել այդ դաժան «խելքից դուրս» հանգամանքներում, որ կարող էր և «պատմական անհրաժեշտություն» չլինել, եթե հայրս փիլիսոփա ծնված չլիներ, լիներ մի քիչ, մի չնչին չափով շրջահայաց, մի քիչ խորամանկ, այդ «սննդարար» եղածից պահ տար մեր հարազատներին, քույրերին, թեկուզ մեր տակն ապրող Խոռո դադոյին, որի տունը ուշադրության չարժանացրին... Եվ գլուխը քար, թե այդ մակարոնից, բրնձից, վերմիշելից մի քիչ էլ դադոն վռիկ կեփեր իր տանը մնացած Շուշանիկի համար... Զմտածեց, հեռատես չէր, «անբաշար էր», ինչպես մերս էր ասում, և ապրում էր մեծ Սոկրատի փիլիսոփայական բանաձևին հակառակ, որ ասում է. «Մտածում եմ, ուրեմն՝ ապրում եմ»...

Քիչ բան չէ՝ ապրել Սոկրատի նման հանճարեղ փիլիսոփայի բանաձևին հակառակ, ապրել՝ չմտածելով: Մենք՝ երեխաներով, բացի մորիցս, աշակերտում էինք Հմայակի փիլիսոփայական դպրոցին... Բայց մինչև այդ չնախատեսված փոփոխությունը, երբ վիճակներս դեռ լավ էր, մեր տանը շարունակվում էին կիրակի օրերի՝ Իգդիրում ընդունված ապրելակերպը, «քուֆթայի օրերը», որի անփոփոխ, մշտական այցելուներն էին

Ավետիս Հորեղբայրը և Արշավիր Շավարշյանը, մեր տանեցիների ամենացանկալի հյուրերը և՛ Իգդիրում, և՛ Երևանում, և՛ հետո նորից շարունակվեցին, երբ Հմայակը դարձավ խանութի գործակատար:

Հորեղբայրը և Շավարշյանը թաքցնելու բան չէր և չէին էլ թաքցնում, և, ինչպես Շավարշյանն էր ասում, խորապես «զգացված» էին՝ մեկը՝ Վարդուհի զալոյի, մյուսը՝ Եղիսաբեթ Եփրեմովնայի եփած ճաշերից, քանի որ էն գլխից Վարդուհի զալոն որոշել էր, որ ճաշը «փոր խաբելու» համար է, իսկ Եղիսաբեթ Եփրեմովնան էլ, տարված լինելով իր մանկավարժական գործունեությամբ... չէր հասցնում ճաշի համի մասին մտածել... Իսկ իմ լուսեղեն մոր եփած ճաշերը, ինչպես նույն ինքը՝ Շավարշյանն էր ընութագրում, «կուլինարիայի հրաշք» էին: Քուֆթա ծեծողները մայրս և ես էինք, ես երկու ձեռքով ծանր օթակը շրփացնելով, իսկ մայրս մի ձեռքով՝ մյուս ձեռքին դանակը, որով իմ ցիրուցան արած մասերը հավաքում էր քարի կենտրոնում, քարը, որը Իգդիրից էր եկել հասել Երևան՝ հղկված, կոկ սև մարմարի նման: Տոն էր մեզ համար այդ օրը, և քուֆթա շիլան համեմվում էր անուշ մասալներով, Օրդուի մասին պատմություններով, որ Շավարշյանը պատմում էր՝ մի բան էլ ավելացնելով, և մինչև ուշ երեկո ծիծաղ ու ուրախություն՝ մոռանալով, որ Իգդիրում չենք, որ գաղթական ենք, դեռ կորեկի, գարու, թեփի հացը պիտի չճարվի...

* * *

Երևանում իմացանք, որ Իգդիրի «տարապայման» օղի գործածողը միայն Առաքելը չէր եղել: Ինչպես ասացի, մի պատ էր բաժանում մեզ իրարից, պատի մյուս կողմում նույն չափի երկու սենյակներում ապրող Վալիից, Վելիբեկից, որը նույնպես մսագործ էր, բայց արդեն դասաբերություն չէր անում, «դալալ» էր, անասուններ էր առնում եզդիներից՝ վերավաճառում դասաբերին: Երեք տղա ուներ, որոնցից մեծը «ռուսաստաններում», իսկ մյուս երկուսը՝ Գուգոն ու Նահապետը, անասուններ պահելով էին զբաղված: Երևանում Առաքելին փոխարինող Վալին ութսունն անց էր արդեն, երբ նորից ամուսնացավ մի ապարանցի կնոջ՝ Թանգոյի հետ, որը տարին չանցած մի աղջիկ բերեց՝ շեկլիկ, ոսկեծամ, կարմրաթուշ, ճիշտ Վալու քթից թռած... Ճիշտ է, խմող էր Վալին, բայց նրան «օրորվելուց» չտեսանք, ջրի տեղ երևի օղին էր գործածում:

Տեսնելու բա՜ն էր Վալին: Բերկուտը քեզ օրինակ: Բարձրահասակ, չոր–չոր կազմվածքով, ամառ–ձմեռ Իգդիրի հին «վենգերկան» հագին, ձեռքերը բերկուտի թևերի նման, գրպանում, արմունկները կողքերին տնկած, կապուտաչ էր, մեծ կեռ քթով: Մոլի նարդի

խաղացող էր և միշտ՝ մի «բանի» վրա: Իսկ տարվելուց կարմրում, քլքլում էր հնդուհավի նման: Ես իրեն հիշեցի մի դեպքի առիթով, որ շատ զարմանալի լինելով՝ միտս էր մնացել:

Մի օր սովորականի պես ճաշին տուն եկավ, և որովհետև իրենց տան կեսը բարձրանում էին միակ մեր կողմից եղած սանդուղքներով, բարձրացավ և անցավ միջանցքով իրենց կողմը, որտեղ մի փոքր պատշգամբ էլ կար, և մի քանի րոպեից հետո տեսնեմ՝ նորից բարձրանում է սանդուղքներով... Իմ ապուշ կտրած դեմքը տեսնելով՝ ընդամենը բեղի տակ ժպտալով ասաց. «Թռամ բալկոնեն»: Ա՛յ քեզ ուրախուն տարեկան բիձա: Գլխի վրա տնկվել է բարձր պատշգամբից, երկրորդ հարկից թեքվել է թքելու թե քիթը մաքրելու, և բարձրանում է աստիճաններով, կարծես իսկապես որ բերկուտ է և թռել է պատշգամբից:

Վալու մեծ տղան, որը, ըստ երևույթին, տեր Մեսրոպի «նզովյալներից» էր՝ Ռուսաստանում ապրող, մի օր եկավ 11–րդ բանակի հետ... Եկավ հորը տեսնելու, բայց չմնաց, շուտ էլ գնաց «ռուսաստանները»: Վալին «թարս» նայողներից էր, տեր Մեսրոպի ծխից: Եվ երևի խոսքը «տարբեր լեզուներով» էր եղել, և ոչ Իգդիրի բարբառով...

Եվ Վալուն հիշելուս մյուս պատճառը 11–րդ բանակի հետ եկած իր մեծ տղան էր՝ Հայկը, որի գալու մասին ոչ ոք ոչինչ չէր կարող իմանալ: Վալին գիտեր, թե անսպասելի էր նրա հայտնվելը, գուցե և սպասելի, քանի որ հանդիպումը հազիվ թե «սրտառուչ» համարվեր: Բայց թե Վալին ինչպես իրեն կպահեր, իսկապես «տարբեր լեզուներով» էր եղել նրանց խոսակցությունը թե ոչ, մեծ աղմուկ հանեց Հայկի գալը Իգդիրցի հարևանների մեջ, որոնք, ինչպես և Երևանի ողջ ժողովուրդը, մեծ անհամբերությամբ ու տագնապով էին սպասում... «պոպոզավորների» գալուն:

Էլ ինչե՛ր չէին պատմում նրանց՝ այդ պոպոզավորների մասին... Բայց մեր տեսածը՝ «քեռի Հայկը», մի ուրիշ բան էր, մի նկարած պատկեր... Բարձրահասակ, Վալու պես չոր–չոր, շեկ մազերի փունջը՝ «քյաքյուլը» կուբանկա փափախի տակից կախ, կապուտաչ, արծվային քթով ու հայացքով, ինքն էլ ուրախ, ասող–խոսող, մարդամոտ և եկած օրվանից այցելություններ, քեֆ–ուրախություն չչմած իգդիրցիների, հարևանների հետ... Իգդիրցու մի չտեսնված տեսակը և շատ հմայիչ իր կաշվե բաճկոնով, ծոպավոր թուրը կողքին կախ, մաուզերն էլ հետը, երկարաճիտ կոշիկների կրունկներին ինչ–որ փայլուն մետաղներ, որ քայլելուց կոշիկների ճռռոցի հետ իրենք էլ զնգզնգում էին...

Ինքն էլ էր տեսնում, որ բոլորի հիացմունքին է արժանացել, և Վալին էլ կարծես թե իրեն պակաս փքված չէր պահում, ինչքան էլ անտարբեր ձևանար:

Այդ օրը մինչև Հայկի հայտնվելը, ինչպես ասացինք, Երևանի ժողովուրդը համակ անհամբերություն էր, ինչպես և մերոնք, որ հավաքվել էին Վալու տանը և պատշգամբից պիտի նայեին «պոպոզավորների» երևալուն. նրանք պիտի գային Քանաքեռից իջնող միակ նեղլիկ խճուղով, որ Վալու պատշգամբից պարզ երևում էր, ինչպես և ամեն առավոտ մութը լուսին այդ խճուղով իջնող «Քյավառա պոյեզը»՝

էշերին բարձած իշխան ձկով քարավանը, որն ընդամենը 4–5 ժամում «քյասար» ճանապարհով Քյավառից Երևանի շուկա էր հասցնում զարմանահրաշ իշխան ձուկը, որ դեռ արև չծագած՝ թարմ–թարմ վաճառվեր, մինչև բազարբաշու հայտնվելը, որը ժամը 10–11–ի մոտ արգելում էր ձկան վաճառքը այլևս:

Երևանի ժողովրդից ոմանք, ինչպես և որոշ իգդիրցիներ, մի քանի օր առաջ փախել էին Թավրիզի ուղղությամբ խառնափնթոր ասեկոսեներից, պատմություններից ահաբեկված, իսկ մնացած ժողովուրդը, փողոցները լցված, տանիքներին բարձրացած, սպասում էր...

Վալու պատշգամբում լուսամուտների առաջ բոլորն են եղել մեր տանեցիք, բացի ինձանից ու հորիցս: Բանն այն էր, որ հայրս էլ էր ուզում Թավրիզի ճանապարհը բռնել, բայց այնքան «թոնթորաց», ուշացրեց, որ փախչելը դարձավ մորս ուզածով, ավելորդ, միանգամայն ավելորդ: Միակ պատճառն այն էր, որ ինքն էլ էր իգդիրցի, ինքն էլ պիտի «մի բան աներ», երբ մեր բարեկամներից մի քանիսը պարսկական սահմանին էին հասել... Եվ քանի որ ծլկելը չհաջողեցրեց, հիմա... Վալու փոքր սենյակում եղած տեղաշորի դարսված ծալքի հետև նստած սպասում էր իր թարս բախտին... Զնայած որ կարող էր իրեն ազատ զգալ և ոչ միայն ազատ, եթե նկատի ունենանք նրա, ճիշտ է՝ աննշան, բայց «ինչ–որ ծառայությունը» եկողների հանդեպ, երբ մի երկու ամիս առաջ միլիցատուն էր «հրավիրվել» զինապահեստը «իմ միջոցով» վառելու համար... Քիչ բան չէր, բավականին զենք փչացավ, չկրակվեց...

Երևի Վալին գիտեր իր տղայի գալու մասին, քանի որ որպես իգդիրցի՝ ոչ միայն Թավրիզ չծլկեց, այլև հիմա էլ թաքցրել էր հորս իր տանը...

Առաջինը երևաց ձիավոր նվագախմբի ջոկատը, որոնք երևի նվագելով էին իջնում, քանի որ փողային գործիքները փայլփլում էին արևի ճառագայթներից: Հետո ձգվեցին հեծելազորը, հետևակը, թնդանոթների շարանը, և զորքի մի ծայրը արդեն երևի համալսարանի մոտ էր, իսկ մյուս ծայրը դեռ գալիս էր...

Հորս (երևի դիտմամբ) Վալին ծալքերի հետևից հանել է, երբ Հայկը մեծ աղմուկ–շուքով ներս է մտել: Եվ խեղճ հայրս, շշմած, զարմացած, վախն էլ հետը, կանգնել է ծալքից դուրս եկած, շփոթված, բան չհասկանալով, մեկ մերոնց է նայել, որ ծիծաղում էին, մեկ Հայկին, Հայկի թրին, թեք դրած փափախին... և փորձել է նորից մտնի տեղաշորի հետևը: Բայց Հայկն էլ, երկար չկարողանալով իրեն լուրջ ձևացնել, փռթկացել է, փաթաթվել հորս, նստեցրել, բաժակով ջուր տվել, և ուշքի եկած հերս ինքն էլ է ծիծաղել, ոնց որ չարության մեջ բռնված երեխան, երբ տեսնում է, որ էլ չեն պատժելու... Ու հենց երեխայի պես էլ մորս էր նայել, նա էլ, ի՜նչ պիտի աներ, լալիս էր ու ժպտում...

Հետո Թանգոն սեղան է բացել Վալու նշանով, և առաջին բաժակը խմել են ազատարար կարմիր բանակի կենացը, և Հայկն էլ ճառ է ասել՝ համարյա թե անհասկանալի, որն արդեն ես էլ լսեցի:

* * *

Մեր տան կեսի շարունակության վրա, ինչպես ասացի, միջանցքից բացվող մի առանձին սենյակ էլ կար, ուր ապրում էր մեզ նման գաղթական, վանեցի Դիքրանը իր մոր՝ Մարեի հետ. այդպես էին իրար անվանում մայր ու տղա, Դիքրանը՝ Մարե, Մարեն՝ Դիքրան:

Դիքրանը արհեստավոր էր, ջուլհակ, իսկ Մարեն, ինչպես բոլոր մայրերը, մերություն էր անում իր միանուճարին:

Օ՜, եթե նկարել իմանայի այն ժամանակ... Ինչ նրբագեղ ազնվություն էր շողարձակում Մարեն իր գունատ դեմքով, և հիմա գիտեմ, որ իջել էր աստվածային Ռեմբրանդտի նկարներից... Դժվար թե խոսքերով հնարավոր լինի «նկարել» Մարեի տխուր, թախծոտ, բարություն առկայծող դեմքը, կապույտ, ջրաներկի նման թափանցիկ աչքերը, աղոթելու համար ստեղծված փոքրիկ ձեռքերը, որ մի վայրկյան պարապ չէին մնում... Տանից դուրս չէր գալիս, ձմեռը՝ քուրսու կողքին նստած, ամառները պատշգամբում՝ թախտի վրա թել էր մանում և ցածրաձայն խոսում, պատմում էր Վանի զարմանալի քնքուշ, երգեցիկ բարբառով, որ հայի ունեցած ամենահրաշագեղ բարբառն է հաստատ: Բանավեճն չկար, և մայրս նրան էր դիմում ամեն անգամ մի խորհուրդ իմանալու համար:

— Էտա, քյո բալան, Էդիկ, անուշ բալայի, քաղցր բալայի, համա... ամա՜ն, շատ չարաճճի: Մեռնեմ քե, աչքդ վրան պախի, մե օյին չպիրի իրա կլոխ...

Մարեն գործի հետ իր համար քթի տակ կամացուկ դնդնալ գիտեր, երգում էր՝ ինչ իմանաս ինչ, և էնքան անուշ, աներևակայելի քնքուշ, բայց զարմանալի լսելի... Ու ես զգույշ փիսոյի նման մոտենում էի, կպնում ուսին... ու խնդրում. «Մարե՛, էն, էն երգը... Մի քիչ բարձր...»: Զէր մերժում, ասում էր. «Քյա տղա՛, ամոթ ի... Հարևաններ կլսեն»: Բայց ձայնը մի քիչ բարձրացնում էր ու՝ «Քյա խորոտիկ, քյա նազերով, տյու վիրն ես... Ալամ կիտի... աշխարհ կիտի... դու իմն ես...»:

Ու թացվում էին Մարեի աչքերը, ձեռագործը ձեռքի մի կողմ էր դնում ու մի կետի նայում...

Հետո սթափվում էր, փոքրիկ, փոքրիկ՝ իմ ձեռքից էլ փոքրիկ ափով մազերս էր խառնում ու աշխույժով ասում. «Դե փախի, փախի հիմա, որտեղն որի Դիքրան կուքա... Ելնեմ ճաշ տաքցնեմ...»:

Տղան՝ Տիգրանը, գործից գալուց, Մարեի պատրաստած ճաշն ուտելը վերջացնելուց հետո պատահում էր՝ նստում էր պատշգամբում, զրուցում հորս հետ, և խոսողը, ինչպես պետք է որ լիներ, Տիգրանն էր:

Վանեցիք Իգդիրով էին գաղթում, և նրանց գաղթը սկսել էր 14 թվի արհավիրքի օրերից էլ առաջ: Իգդիրում նրանց դադարը, շունչ քաշելը պատահում էր՝ երկար էր տևում, քանի որ նրանց շտապելը Իգդիրով էր վերջանում: Իգդիրում իրենց դադարի

ժամանակ հանգիստ ծանրութեթև անելով՝ որոշում էին ուր գնալ և շարժվում դեպի Ալեքսպոլ, Թիֆլիս և Երևան: Մեծ մասը՝ Երևան: Բայց ինչքան էլ ծանրութեթև անեին, ամեն տեղ վիճակը նույնն էր, ամեն տեղ գաղթական էին կոչվելու և ամեն տեղ շունը տիրոջը չէր ճանաչում: Քիչ չեղան Թիֆլիս գնացողները, բայց ափսո՜ս, շատ ափսոս: Երևելի արհեստավորներ էին, երբեք ուրիշի ձեռք չնայողներ, ով չէր ուզի նրանց տեղ տալ: Այդ ժողովուրդը չէր կարող, իր բնույթի մեջ չկար ի ծնե պարապ ապրել, ինչ որ «լավ ժամանակների» սպասել, նրանք «գործավոր» էին, գործ պիտի անեին:

Մենք վանեցիների, Վասպուրականի ժողովրդի նման լրջմիտ, խելքը, առաջին հերթին՝ խելքը գլխին ժողովուրդ չենք ունեցել: Տասը չափել նոր կտրել՝ մի բան անելու համար և կանեին՝ համոզված, վերջնական և հաջողությամբ: Զլինեին Երևանում վանեցիք, ո՞վ պիտի հագցներ՝ գոնե ներկած բամբակի «քյաթանով», կտավով հագարավոր տկլոր, ցնցոտիների մեջ ծվարած գաղթած ժողովրդին:

Ջուլհականոցներ բացեցին, գործարաններ, օճառի, լվացքի օճառի, որ չքվել էր, գոյություն չուներ, և անիծի, ոջիլի մեջ կորած ժողովուրդը, որ գլուխ էր լվանում կանաչ կավով՝ «գիլ» կոչվող, ու քացախով, օճառի տեր դառավ: Ոսկորից, պոպոկի ամուր փայտից՝ ատաղձագործները սանրեր պատրաստեցին, էժան ծախեցին և անիծի մեջ կորած գլուխներին սանր կպավ... Եվ բաղնիք գնալուց իրարից սանր էին խնդրում.

— Մե ծեր սանդրը տվեք, էսօր բաղնիք ենք եթալի:

Եվ նստեցնում էր Խոռո դադոն իր աղջկան՝ Շուշանիկին, որը գոգնոցի փեշը բացած անիծն էր հավաքում փեշում, և Խոռո դադոն էլ ամեն մի շերտ հանելիս վերև՝ պատշգամբի կողմն էր նայում Մարեի տղային՝ Դիքրանին, օրհնելով, որ դադոյին սանր, ոսկորի սանր էր նվիրել...

Եվ նույն Դիքրանը, բալկոնում նստած, հորս բացատրում էր մի զարմանալի հաշվապահություն, որ մինչև օրս դեռ ոչ մի տնտեսագետ գլխի չի ընկել, որ զբաղվեր դրանով:

— Է, Հմայա՛կ եղբայր, չոտք, թվաբանություն թույլի, անկարողի հաշվելու արյան արժեք, արյուն քին չունի: Ո՞վ կարողի հաշվել մորթված երեխաների արյուն, որոնք իրենք էլ պիտի երեխաներ ունենային... Մենք ընդամենը ոչ ստույգ հաշվեր ենք՝ կոտորվածների քանակ, հապա մեր ունեցվա՞ծք, ո՞վ ի հաշվե...— և ամեն մի հարցը տալիս հորս էր նայում, մի քիչ սպասելով և բնականորեն պատասխան չստանալով գլուխը կախած «Հմայակ եղբայրից», շարունակում էր.

— Մեր տուն, դարբար, մեր պարտեզներ, այգիներ, մեր հող վերջապես, մեր պապական հող... Հող քի՞ն ունի, քեզ կհարցնեմ, Հմայա՛կ եղբայր... Ա՜խ, Հմայա՛կ եղբայր... մեր տուն, տեղ... Վա՜ն–Վա՜ն, Վա՜ն եղած կա՞ս, Հմայա՛կ եղբայր...

— Զէ՛, չեմ եղել, մի քանի անգամ միտք եղավ գալու, բայց ափսո՜ս...

— Է՜, Հմայա՜կ եղբայր, Վա՜ն... Ձեր Իգդիրն էլ ձեզ համար ի քաղցր, կիտեմ... Տեսանք, գաղթին տեսանք, բան չունեմ ասելու, ժողովուրդ, իգդիրցիք լավ ժողովուրդ են, հյուրընկալվեցինք, շնորհակալ ենք, ազնիվ են, վատ պան չտեսանք, քավ լիցի... Փայծ Վան, Վան... Ո՜ւր է, թե տեսած լինեիր... Մե խոսքով, մե կողմ, մե կողմ աշխարհ... Հիմա քեզ կհարցնեմ. Վանի, Վանի հող գին ունի՞, չունի, չունի, մի մտածե, չունի, ջանս, չունի...

— Իսկ մորթվածներ, արյուն քին ունի՞... չունի, չունի մի մտածե...

— Իսկ այդ մորթվածներե չծնվածնե՞ր...

— Մի՛ մտածե, հաշվող չի եղել...

Եվ մշուշվում էր հորս գլխում այդքան չհաշված հաշիվները, երբ նրա մտքով էլ չէր անցել հաշվել իր թողած «տուն ու դարբարը», այգիները, հողը...

Ո՞վ պիտի հաշվեր ու հաշիվ ներկայացներ: Ներկայացնողը չկար, մորթված էր, իսկ մազապուրծ եղածին բացատրեցին հետո, որ վաղանցուկ հաշիվ է, անվավեր պարտք, չհատուցվող...

Բայց հատուցման ձև կար հայերի համար: Հազար տարվա փորձված ձև: Տիգրանը ամուսնացած չէր: Մարեն ասում էր. «Խետ ձեռաց չի կյա»: Բայց Մարեն սխալվում էր, երևի: Մարեի Դիքրանը շատ էր սիրում իրեն՝ Մարեին, մի քիչ էլ իր «քործը» դեռ կարգի չէր բերել: Պատճառ ուներ Տիգրանը, որ դեռ «ստույք» չէր հաշվել, թե ինչը ինչպես պիտի դասավորվի: Բայց Մարեի թոռ ունենալու «հաշիվը» հաղթեց: Եվ մի օր Մարեն մի շարմաղ վանեցի՝ կապուտաչ, ոսկեծամ աղջիկ բերեց տուն և մի «ողորմելի» (հորս ասած՝ համեստ) հարսանիքից հետո Դիքրանի հարցը լուծվեց:

«Հատուցումը» իրեն սպասել չթողեց: Տարին չլրացած՝ Մարեի հարս Մայրանուշը մի Վարդանիկ նվիրեց Մարեին: Հետո 3–4 տարիների ընթացքում թիվը թոռների հասավ հորսի, բոլորը՝ տղաներ: Եվ Մարեն, համարյա թե ջահելացած, էլ քուրսու տակ նստելու ժամանակ չունեցավ:

Տիգրանի հաշվապահությունը շատ էր զարմացնում հորս, երևի, որովհետև այդ զրույցների ժամանակ ինքը ուշադիր լսողի դերում էր մնում, և ինքն էլ ստիպված մտքում ինչ–որ հաշիվներ էր անում իր թողած տան, «դարբարի», «այգիների» մասին, բայց այնքան աննյութական, անիրական, հեռու, հեռու... Տիգրանին չէր լսում, աչքերը կարմրում էին, մտքով գնում էր իր խանութը, ընկերները, ֆայտոնով քեֆերը, Զոռի սառցահամ աղբյուրները, Կողբը, Սաթենիկի՝ եղնիկի վախվորած աչքերը և ի՜նչ իմանաս էլ ինչ...

Տիգրանի միակ լսողը հերս էր, և նրան էլ չպատմեց Վանի պաշտպանության մասին, որին ինքը, դեռ շատ պատանի, մասնակցել էր՝ մտածելով երևի, որ իգդիրցուն չի

կարող զարմացնել... Բայց իզուր, կարող էր: Վանեցիք, երբ հարկավոր էր, իրենց նմանը չունեցող քաջ էին եղել... Բայց ի՜նչ անեին, ինչ կարող էին անել մինչև ատամները զինված ասկյարների դեմ և խուժանի, անմաքուր, ոչլոտ բաշիբոզուկների դեմ. Երևանում այն օրհասական օրերին դեռ կար իր քաջությամբ հռչակված Վանա գունդը: Որտե՞ղ միայն չէր կռվել, արյուն թափել Վանա գունդը և Սարդարապատում էլ կռվեց առաջին շարքերում աներեր, հետ չնայելով...

Առավոտյան դեռ գործի չգնացած՝ հեռախոսի մոտ են կանչում.

— Դա Իսաբեկյանի բնակարա՞ննն է,— հարցնում են:

Պատասխանում եմ, այո, չեն սխալվել...:

— Գիտեք ինչ, ձեզ անհանգստացնում են օրթոպեդիկ հիվանդանոցից: Ձեր հայրը հիմա մեզ մոտ է, վիճակը լավ չի, կարո՞ղ եք գալ: Ալո՛, ալո՛...— ասում են՝ լսափողը կախելով: Բան չեմ հասկանում. օրթոպեդի՞կ, վիճակը լավ չի՞, ի՞նչ գործ ունի օրթոպեդիկում ախար, Տե՛ր Աստված: Ապրիլյան առավոտ է, տաք արև օր է, պայծառ, բայց գիշերը անսպասելի ձյուն էր եկել և հալհլոց էր փողոցում: Տեսնես սայթաքել, ընկե՞լ է, ի՞նչ եղած պիտի լինի, վիճակը...

Պառկած է բարձր, սպիտակ վիրահատման սեղանին՝ իր ամենօրյա շորերով, վերարկուն են հանել միայն, կողքին թթվածնի բարձն է... Շնչում է խորը, ընդհատ, նորից խորը, դեմքն էլ՝ սովորական իր առողջ, առույգ գույնով... Բայց ինչո՞ւ են աչքերը փակ, ինչո՞ւ չի բացում... Գլխավերևում մեծ եղբայրս է կանգնած և տխուր ժպիտով ինձ է նայում, ինձանից շուտ է իմացել եկել... Հայրի՛կ, ա՛յ հեր, ի՞նչ է, մի բան խոսա...

Լուռ է, շնչում է... Բժիշկը, որին չէի նկատել, մատը շրթներին է դնում, եղբայրս էլ գլխով է անում, որ ի՞նչ: Բժիշկն ինձ դուրս է ուղեկցում և սպասարանում տեղ ցույց տալիս՝ մի՛ շտապեք, նստեք այստեղ, սպասեք... Վիճակը լավ չի, ծանր վնասվածքներ, կոտրվածքներ ունի... տեսնենք կդիմանա՞: Եվ շարունակում է կոտրվածքները թվել. ողնաշարն է, կողերն են ջարդված, ոտքը աջ... մի խոսքով՝ տեսնենք:

Ի՞նչ տեսնենք, եթե ողնաշարն է ջարդված և էլ ի՞նչ մնաց... Ողջ տեղ չունի, ասում է՝ տեսնենք... Կողքիս երկու երիտասարդներ եմ նկատում կանգնած, որ ուզում են բան ասել:

— Գիտե՞ք ինչ... Երևի ձեր հայրն է ծերուկը... Մենք,— ցույց է տալիս կողքին կանգնած ուրիշ երիտասարդի,— կանգնած էինք ավտոբուսի կանգառում՝ Աբովյան փողոցում՝ Իսահակյանի արձանի մոտ, ձեր հայրը նույնպես կանգնած էր, ձեռքին ցանցազամբյուղը՝ դատարկ կաթի շշերով: Մենք իրեն իսկույն նկատեցինք և չէր կարելի չնկատել, որովհետև իրեն շատ անհամբեր էր պահում, իսկ ավտոբուսները գալիս էին լիքը, դռներին խցկված, կախված, իսկ ինքը ամեն անգամ վազում էր դեռ չկանգնած ավտոբուսները... Մի երկու անգամ հետ պահեցինք, որ իջնողները իրեն

չհրեն գցեն... Ժողովուրդն էլ՝ անհամբեր, շտապող... Ավտոբուսները սահելով, հազիվ արգելակները զոռելով էին կանգնում...

Եվ երբ հերթական ավտոբուսը դեռ չկանգնած, նորից իրեն առաջ նետեց, անսպասելի արգելակված մեքենայի հետևի մասը միանգամից շուռ եկավ ու հարվածեց նրան... Մարդիկ բոլորը ճչացին, վազեցին դեպի նա... Իսկ նա ընկած տեղից վեր կացավ, կանգնեց ու անգամ ժպտալով ասաց. «Ոչինչ, պան չկա,— ու մի ձեռքով շորերն էր թափ տալիս... Ջարդուփշուր է եղել,— պան չկա»,— և դեռ շորերն է թափ տալիս:

Մեքենավարը տեսավ, որ ոչինչ չկա, քշեց գնաց: Բայց մենք տեսնում էինք, որ ինքը ինչ–որ հենարան է փնտրում ազատ ձեռքով և օրորվում է, հիմա պիտի ընկնի, վազեցինք, մեջքից բռնեցինք և միանգամից փլվեց, թուլացավ մեր ձեռքերին:

Մի մեքենա կանգնեցրինք, բերինք այստեղ, նստած սպասում էինք, ոչ ոք չէր մոտենում, մի քանի անգամ խնդրեցինք, բանի տեղ դնող չեղավ, բոլորը ինչ–որ շտապում էին, իսկ նրա ուշքը արդեն տեղը չէր... Այս ընկերուհին ահա օգնեց, ցույց է տալիս սպիտակ խալաթով մի աղջկա, որ եկել է հիվանդի այցելության, ճանաչեց և իր աղմուկի վրա եկան տարան... Նրա վերջին խոսքն էր՝ «Բա ըստեղ բժիշկ չկա՞...»: Դե, կներեք մեզ, դասից ուշանում ենք, լավ է, որ եկաք...

Տե՛ր Աստված, ինչո՞ւ է շտապել էս մարդը, ով էր շտապեցնում դրան, մածուն էր, կաթ էր, կառնեիր, էլի, մի քիչ ուշ, շուտ: Ո՞վ էր ընկել հետևիցդ, որ ամեն անգամ ավտոբուսը չկանգնած խցկվում էիր, երբ մարդիկ ճչում էին, հետ էին քաշում, որ չտրորվես ոտի տակ, գոնե առաջին դռնից խցկվեիր, չէ՞ որ իրավունք ունեիր, ծեր էիր... Օ՜, ինչ ձգողական ուժ ունի այդ մահ կոչեցյալ դևը, եթե մտքին դրել է մեկին տանելու... Ի՞նչ է մտածել այս 84 տարեկան երեխան: Կարո՞ղ է, որ արդեն լերդացել էր արյունը երակներում... Ո՛չ մի լերդացում: Վեցերորդ հարկ՝ արվեստանոցս, մի երկու բոպեում էր բարձրանում, հենց մի քանի օր առաջ էր, երբ եկել էր «ռոճիկը» ստանալու: Եվ երբ դուրս եկավ մեր շենքի մուտքից, ես վերևից, լուսամուտից նայում էի ու մտածում՝ տեսնես մայթո՞վ պիտի գնա, թե՞... Էլ ի՞նչ թե: Ինչպես միշտ, ուղիղ կտրեց Լերմոնտովի հսկայական փողոցը, անցավ մյուս մայթը և մորուքը տնկած գնաց: Գնաց, իսկ ես ո՞րերորդ անգամ մտածեցի, որ էս մարդը մի օր մի օյին պիտի բերի իր գլխին:

Վարորդները խեղճ, ի՜նչ ճիգերով, արգելակները ճռռացնելով պիտի մի կերպ փոխեն իրենց ուղղությունը, գլուխները պատուհանից հանեն, թքեն, հայհոյեն կատաղած, իսկ ինքը՝ պետքն էլ չի, չի էլ նայում, թե ինչ խառնակություն է ստեղծել փողոցում: Քանի՜ անգամ եմ խնդրել, ասել. «Ա՛յ հեր, փողոցը մի ձևի մկրատվող քո քեֆին, վատ կլինի...»: Ժպտացել է իր միամիտ, երանելի ժպիտով ու նորից՝ նույն պատասխանը. «Իգդիրի հրեշտակները ընձի հետ են, պան չի պատահի...»:

Իգդիրի հրեշտակները այդ առավոտ քնով էին մնացել, թե ուր էին կորել, թե Արազը գարուն է, ապրիլ, վարարած է եղել կամ չեն կարողացել անցնել փշալարերը...

Դե ասա, ա՛յ հեր, ի՞նչ անեմ քեզ հետ: Դու հասկանո՞ւմ ես, թե ինչ պիտի կորցնեմ հիմա, քեզ հետ միասին ու անդարձ... Հույսս, հույսս եմ կորցնելու, տանելու ես, տանելու ես հետդ, որ դեռ քո մեջ էի պահում, հավատալով քո միամիտ, բայց զարմանալի համառորեն պնդումին, որ Իգդիրը տեսնելու ես... Եվ երկու չիշ մածնի համար սրբեցիր տարար: Ո՞ւր էիր շտապում, ո՞ւր, էլ ինչո՞ւ ես գիշերները ցցվում առաջս՝ ծպծպացնում, մորուքդ քորում, շորերս դրստում... Ու նայում երեսիս անմեղ, անտեղյակ կարծես արածիցդ: Խելք, բանականություն մի կողմ դրած՝ իսկապես հավատում էի, որ Իգդիրը պիտի տեսնեմ... Ա՛խ, թե ոտքերս բամբակից չլինեին՝ կվերկենայի հա... Հիմա որ գնացիր, ի՞նչ պիտի ասես եղբորդ՝ Ավետիսին, Վլասին, հորդ՝ Իսաբեկին, ի՞նչ պիտի պատմես, որ գնում էիր մածուն առնելո՞ւ: Քո մածուն հնարողի էլ, տո քոնն էլ...

Շնչում է, կողաճառները համարյա չեն շարժվում, կուրծքը քիչ բարձրանում է, իջնում... Միայն շնչառությունն է ծանր, ընդհատ–ընդհատ, և քներակն է ուռչում–հանդարտվում: Հայացքս վեր է սահում՝ ամեն ինչը շոյելով, դեմքին ոչինչ չի փոխված, նույն անուշիկ հայրս է, ոչինչ չկա դեմքի ձևերի մեջ փափկած, ծերունական, ամուր, հավաք ձևեր են... Ճակատի խոր ակոսները՝ նրա համառության վկաները, որ իմ ճակատին էլ է քանդակել, հիմա հարթվել են... Ճակատից երկու–երեք մատ վերև սկսվում են խիտ ալիքվող գանգուրները, որոնք ծնված օրից այդպես են եղել, սպիտակ են ընդամենը. բարի, խոշոր աչքեր, որ շատ բարկացած ժամանակ էլ չէին փոխվում, և իր բարկությունն էլ դրանից թվում էր շինծու, փակել է, քնած է, ամեն ինչից անտեղյակ, անտարբեր... Դեմքի անդորրությունը խանգարում է քթի փոքր սապատի կապտությունը և փոքր ուռուցքը, բայց զարմանալի մարդ է, ինչ–որ մեղմ, համարյա մանկական ժպիտ կա փակ կոպերի տակ, բեղ–մորուքի արանքում... Այդպես խաղաղ մեղմ ժպտում էր և ծպծպացնում բերանի անկյունում, երբ շատ էր խաղաղ հոգու մեջ, մտածկոտ, ինքն իր մեջ, ներկաներին չտեսնելով, վերացած... Ո՞վ գիտի՝ ինչ է հիմա հիշում. Կողբա չա՞յն է անցնում՝ Սաթենիկին տեսնելու, թե՞ Արշիլն է լեկուռին սկսել խանութի դռնից, թե՞ հրեշտակների հետ է արդեն, որ հասցրել են Արազն անցնել... Դե՛ ասա, ասա՛, սիրելի՛դ իմ Իգդիր, ինչո՞ւ ուշացրիր, ինչո՞ւ շուտ չուղարկեցիր հրեշտակներիդ, որ քո պատվելի քաղաքացուն ավտոբուս նստեցնեին գոնե առաջին դռնից կամ համոզեին՝ մածունի հետո գնալ, երբ հալհլոցը կանցներ փողոցում: Օ՜, ինչ անողոք ուժ ունի այդ դևը՝ մահը, եթե մտքին դրել է տանել... Ի՜նչ հրեշտակներ, ինքը՝ Բարձրյալը, չի կարող խանգարել...

Հասկանում ես, սիրելի՛ս, որ շրջապտույտ չկա, որ հերս բալի կամ դեղձի ծառ չի, որ նորից ծաղկի կամ շիվ տա. քո վերջին քաղաքացիներից էր կենդանի մնացած: Տիրություն չարիր, տարավ, հետն էլ ի՜նչ է տանելու՝ հույսս, հավատս, քե՛զ, քեզ տեսնելու հույսս...

Մենք, եղբորս հետ չիվարած, ապշած նստել ենք վիրահատարանի նախասրահում, և արդեն ծանոթներ, մխիթարողներ ճարվեցին. «Դե, ոչինչ, մի՛ հուզվեք, տարիքն արդեն առել էր, դուք ողջ լինեք, Աստված տա՝ մենք էլ, դուք էլ այդքան ապրենք...»:

Զարմանալի է, թե ինչքան են մարդիկ խելոքանում, երբ դժբախտությունը իրենց չի վերաբերում, իմաստո՜ւն խոսքեր են, բան չես ասի. «Մի՛ հուզվեք, ոչինչ, դուք ողջ լինեք, բոլորս էլ գնալու ենք, տարիքն էլ մեծ...», գուցե և՝ «ուրախացեք, որ դուք չեք պառկածը...»,— իսկ որ այլևս առավոտ ծեգին չի նայելու Մասիսի կողմը, որ լուսաբացը, արևի առաջին ճառագայթները ողջունի, որը պիտի իջնի, փռվի Իգդիրի վրա... Ո՛ւմ պետքն է, որ դու մնացիր որբ, որ այլևս երեխան, զավակը չես ծնողիդ, որ ոչ ոք այլևս քեզ չի դիմի քո փոքրացած անունով՝ անխափան «ջանը», «բոյիդ մեռնեմ», «ցավդ տանեմ»–ը հետը... Եվ կասեն, կդիմեն անձնագրիդ մեջ գրված անուն–ազգանունով և մի օրվա մեջ կդառնաս ինքդ էլ զառամյալ, խղճմտանքի արժանիի մեկը... Իսկ մի ժամ առաջ որդին էի հորս:

«Վերջը» անխուսափելի է, ահավոր, անհեթեթություն, անխորհուրդ ծամածռություն... Ճիշտը չծնվելն է, երևի. դա էլ քեզանից չի կախված, ոչինչ քեզանից չի կախված... Հազիվ թե մեր հեռավոր, շատ հեռավոր նախնիները հավատացած լինեին «հանդերձյալ կյանքի» գոյությանը. ինչ–որ մի բան մինչև վերջ պարզ չի եղել նրանց համար, իսկ մենք մինչև վերջ «շուտ պարզեցրինք»: Հորս համար էլ երևի մինչև վերջ մի բան պարզ չի եղել, դրա համար էլ, երևի, պառկած տեղը ժպտում է...

Եթե ամենախելոք մարդը աշխարհում ասել է, որ «Մահի ահ կա իմ սրտում»... ուրեմն «ահը», վախը, մարդու մեջ ծնված օրից կա. ճիշտը չծնվելն է... Բայց ընությունից հետ ու առաջ չես ընկնի, և չվախենալն է ճիշտ երևի... Եվ, խնդրեմ, թոռան հետ էր խոսում մի օր հերս, և հարցն էլ ճիշտ այդ մասին էր, մահ կոչված առեղծվածի, որ ուսանող, մաթեմատիկոս թոռանն է հետաքրքրում չգիտես ինչու...

— Ա՛յ պապ, բա մահից չե՞ս վախենում...

— Մահն ի՞նչ է... որ վախենամ,— ու անպարկեշտ խոսք է ասում «նրա»՝ մահի հասցեին...

— Է՛,— քրքջում է թոռը,— էդ պատասխան չէր, հեչ չեղավ...

— Ընչի՞ չեղավ, գիտեմ, որ անվերջանալի չի, վերջ ունի, որ վախեցար՝ ի՞նչ կփոխվի, վերջ ունի, ու վերջ: Մարդը հիվանդություններից պետք է վախենա, բժիշկներից, որ չմուռտառվի ապրելուց... Մե ծերը կյանքի, մյուս ծերը՝ մահը. մեշտեղ տու ես, ապրի, ուրախացի... արևի, անձրևի, շոգի, ցուրտի... հա, պան կա, զբաղմունք... Պարապ մարդը մահեն կվախենա... Էսօր քյանիսի՞ն զարթնար... 10–ին, 11–ին... Ափսոսի, ես կո վեցին ոտի վրա եմ, խինգը ժամ քեզմե ավել եմ ապրի... Հլա նոր պտի լվացվես, խաց ուտես, իսկ ես կերիր եմ, ծառերին էլ կերակրիր եմ, աղոթիր եմ... Վախենալու պան չկա, ամեն ինչը վերջ ունի, ծառն էլի չորանալի... Իրա չիվը կտրի տնդի կողքին...

Եվ պապը կլռի՝ իր ասածի վրա մտածելով երևի, իսկ մաթեմատիկոս թոռն էլ կմտածի, որ պապի ասածը, եթե մաթեմատիկորեն դասավորես... Բայց ավելի հավաստին կհամարի այն, որ իր պապը քաջ է, կյանքին նայում է վերից, փիլիսոփայորեն,

պարսիկ, հույն փիլիսոփաների նման՝ ծխական դպրոցի 3–4 դասարան սովորած լինելով ընդամենը... Եվ պապը, սակայն, երկար լուռ մնալուց հետո կավելացնի.

— Հալա ո՛ւր ես, հալա Իգդիր կա, Իգդիր պետք է կնանք քեզ հետ... Այ որ չտսնամ Իգդիրը, շուտ մեռնեմ... Էն վախտը հեչ լավ չի ըլի... Մեռնելը կտժվարանա մեքիչ...— «Մեքիչ»... ասում է, «մեքիչ»: Լսո՞ւմ ես, սիրելի՛դ իմ Իգդիր, «մեքիչ» է ասում, բայց իմացիր, որ դրա սերը, հավատը քո նկատմամբ իր մաթեմատիկոս թոռն էլ չի կարող հաշվել՝ հաշվող մեքենայի օգնությամբ թեկուզ...

Մեր անհայտ գրիչներից մեկը մագաղաթի վրա «փորագրել է». «Սեր կատարյալ ի բաց մերժե զերկյուղ»... Դրա համար էր ժպտում, երևի, նրա սերը դեպի քեզ, սիրելի՛դ իմ Իգդիր, անչափելի էր, առավել քան կատարյալ էր, և երևի դեպի քեզ է սավառնում արդեն՝ հրեշտակների կամ արագիլների հետ իր երանելի ժպիտը երեսին...

Հողը դրեցինք առանց տեր Մեսրոպի՝ Իգդիրմավայի նրա ծխի վերջին ծխապատկանին: Եվ քանի որ մայրս խնդրել էր, որ տերտերով հողին հանձնենք, իսկ եթե չխնդրեր էլ, այդպես պիտի անեի, քանի որ հայրս բարեպաշտ լուսավորչական էր և մի քիչ էլ հավատում էր Աստծո գոյությանը:

Մորս չտարա գերեզմանատուն... Տուն: Այո՛, այդ սև փոսն էլ է տուն: Մարդ առանց այդ «տան» չի կարող... Մեռնելը շատ կդժվարանա: Հողե թումբ է, քար է վրան դրած՝ իրենն է, տուն է, և, եթե քարի վրա էլ մի երկու բառ տաշվի, որ այսպես, այսպես՝ ծնվեց այսինչ թվին Իգդիրում, կամ Վանում և վախճանվեց այնինչ թվին Երևանում, սկզբից իր անուն–հայրանունը և որ ազգից լինելը, դա էլ արդեն տուն և տան հասցեի նման բան է կարծես, և մնացողները գնացողներին չպիտի զրկեն այդ ունենալու իրավունքից, որով վերջանում է մարդու կյանքը և սկսվում հիշողությունը: Իսկ առանց հիշողության կյանքի իմաստից բան չի մնա: Զկա և վերջ: Եվ ես չեմ հիշի իմ մորը, նա չի հիշի իր հորը: Մի ամբողջ ժողովուրդ չի հիշի, որ ծնվել է հորից, մորից և ոչ՝ պատի ճեղքից...

Եվ հրավիրեցի տեր Մեսրոպի փոխարեն մի երիտասարդ քահանայի՝ իր տիրացուի հետ, և նրանց առույգ, թավ ձայնով ճանապարհ դրինք Իսաբեկի որդի Հմայակին՝ ծնված 1880 թվին Իգդիրում և 1964–ին «զոհված» Երևանում, և ոչ Օրգովում կամ Արհաջի մոտ... Ճանապարհ դրինք Գրիգոր Լուսավորչի և տեր Մեսրոպի սահմանած համեստագույն արարողության կարգով...

— Ասեմ և կնքեմ...— Եվ խաչը իջնում է հողաթմբի չորս ծայրերին, դրոշմելով հավերժության իմաստի խորհուրդը՝ հաստատելով միակ հավաստին, որ հող էիր, հող դարձար, քանի որ ոչ մի կնիքով կնքված չի հաջողացրել տեսնել իրեն՝ Աստծո Որդուն, որ ծանր ու թեթև աներ նրանց մեղքերը, ջոկեր արդարն անարդարից, չնայած մարդիկ իրենք էլ, եթե ուզենան, կարող են ջոկել և ով գիտի գուցե և պետք էլ չի, և ով ումը ջոկի: Ես բնավ չեմ կասկածում, որ քո Հմայակ քաղաքացին՝ իմ հերը,

որ իր ասելով «մրճեմ չեմ տրորի», այսինքն՝ մրջյուն չի տրորել, պիտի որ «Յերկինս» համբառնա Աստծո անմիջական ծառաների՝ սերովբեների, քերովբեների ընկերակցությամբ, որոնք այն ապրիլյան առավոտ ինչ–ինչ պատճառով Արազը չէին անցել, և միով բանիվ կմնա միակ ճշմարտությունը, որ հող էիր՝ հող դարձար...

Ցավալին, թերևս, երեք ափ քո հողի պակասն էր, սիրելի՛ս, չկար, չէինք բերել, ո՛չ շտապելուց. ինքը պիտի բերեր, բայց նա ե՞րբ էր կասկածել, որ... պիտի Երևանում թաղվի և ոչ իր հոր՝ Իսաբեկի, մոր՝ Բանավշայի կողքին, Սուրբ Գևորգ եկեղեցու գավթում, պապերի կողքին, քո հողում, սիրելի՛ս: Մտքով էլ չի անցել...

Իսկ հրավիրված երգիչն ու իր խումբը երգեցին էն սրտամեռ երգը, առանց որի իգդիրցուն, սուրմալեցուն չի կարելի հողին հանձնել: Այդ երգն է, որ երկու, երեք անգամ պիտի կրկնվի՝ երեք բուռ Իգդիրի հողի փոխարեն, որ «չշտապելուց» չվերցրին իրենց հետ և չվերցրին հաստատ համոզված լինելով, որ իրենց պետք չի գալու Երևանում, Երևանում մեռնելու մտադրություն չունեին: Քո քաղաքացիներից «ոչ ուսյալ» խալխի մտքով էլ չէր անցնում, որ այդ հողը դառնալու է չճարվելիք մի բան: Ի՜նչ իմանար այդ խեղճ, ոչ ուսյալ խալխը իր «գլխին գալացուկը»: Կա՞ր մեկը, որ կարողանար հասկանալ և բացատրել չհասկացողներին, այդ մնացյալ ոչ ուսյալներին, երբ իր համաքաղաքացիներից ուներ պառլամենտում ճառողներ, որոնք ավետում էին երեք ամիս հետո Իգդիրում վերադարձի քեֆ, ուրախություն... Եվ այդ վերադարձի առաջին հավատացողը ինքը՝ հերս էր, որ հիմա կնքված է խաչով, և երեք ափ հող չեղավ քո հողից, սիրելի՛դ իմ Իգդիր, որ եղած հողը «թեթև» դարձներ, և կդարձներ անկասկած, եթե ճարվեր, չկա՛: Չկա՛, չկա՛, ա՛յ հեր, չկա՛...

Իրեն՝ հորս, շատերն էին ճանաչում, բացի իր անհամար բարեկամներից, որոնց միակ մեծն էր մնացել և բոլորի համար դարձել էր հարազատ, «քեռի» էին ասում ու ապացուցում, որ այսպես, այսպես իրենց քեռի է գալիս, իրենց զալոյի կողմից, մյուս, ի՜նչ իմանաս, որ կողմից: Ժողովուրդ շատ էր գերեզմանատանը, բայց իգդիրցիք քիչ էին արդեն, քչանում են, և մի օր էլ չեն լինի քո բուն քաղաքացիք, և միակ զարմացողը դու կլինես երևի: Իսկ ովքեր կային՝ հրավերի չեն սպասում:

Օղին շատ պիտի լինի, քանի որ մովուզի գինի չկա, որ ողորմաթասը խմելով՝ տխրությունը պայծառվի, խմում են մատնեբով անշշուկ բաժակին կպնելով, և չեն պայծառվում ո՛չ յոթին, ո՛չ քառասունքին և ո՛չ էլ տարելիցին: Իր մասին «լուրջ», տխուր պատմություններ չկան, պատմում են զարմանալի, միամիտ երեխայական պատմություններ, որ և՛ տխուր, է և՛ չի կարելի չժպտալ:

Ամասիան՝ իր հորեղբոր՝ Եփրեմ կակոյի միջնեկը և Իսաբեկների ցեղից հիմա ամենատարիքովը, կհիշի, թե ինչպես մի առավոտ եղբայրներով քնից վեր են կացել և հագն-

վելու ժամանակ մեկը չի գտել իր շալվարը, մյուսը՝ բլուզը... Իսկ իրենց հարսն էլ կբացատրի, որ Հմայակ հորեղբայրն է եկել առավոտ վաղ և տարել շորերը, ու իրեն բացատրել է, որ մյուս հորեղբոր տղան շոր չունի հագնելու, դպրոց գնալու... Մի ուրիշ օր էլ համբալ է բերել, տան եղած ալյուրը շալակը տվել, բերել մեր տուն, քանի որ մենք ավելի կարիքի մեջ էինք այդ ժամանակ... Միակ կոստյումս, որ հագնում էի մի տեղ գնալուց, տարել էր բարեկամներից մեկի տղային, որ ինստիտուտ գնալու շոր չի ունեցել. «Էն հնով թող յոլա գնա, ձեռը քարի տակ չի...»,— ասել էր Արփենիկին՝ կնոջս, որի մտքովն էլ չի անցել արգելել:

Պատմեմ, թե ոնց ինձ խայտառակեց սիրելի Շավարշյանի, պրոֆեսորի մոտ:

Արվեստանոցս եկավ պրոֆեսորը: Չեմ հասկանում, թե ինչու եմ այդպիսի պատվի արժանացել: Խոսել չի կարողանում սկսել: Ծխախոտ խնդրեց, որ չէր ծխում: Հարցնում եմ. «Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել, Արշավի՛ր եղբայր»,— հարցնում եմ և չեմ ասում «պրոֆեսոր», ասում եմ՝ «Արշավիր եղբայր», որովհետև այդպես ասում էր նրան իմ լուսեղեն մերս, և ես ի՞նչ եմ, որ փոխեմ էդ ազնվագույն իմաստը... Եվ միանգամից սկսում է լրջացած.

— Ա՛յ տղա, դու այդ ե՞րբ դարձար... ը... խմող, այսինքն՝ – ը... ը շատ խմող... Ի՞նչ է պատահել, և ի՞նչ պատճառ ունես...

Ես ապշած ու անխոս իրեն եմ նայում՝ բան չհասկանալով, բայց սկսում եմ գլխի ընկնել, թե որտեղից է գալիս...

Մի տես է՛, սիրելի՛դ իմ Իգդիր, տես, թե ոնց է շփոթեցրել այս միամիտ մարդուն, հերի պրոֆեսորին, քո անունը կրող առևտրական տան միակ և վերջին ներկայացուցիչը, այդ Իսաբեկի փոքր տղան՝ Հմայակ կոչեցյալը... Եվ այնպես է շփոթեցրել, որ հերը՝ պրոֆեսորը, մոռացել է հենց իրեն՝ այդ Հմայակ կոչեցյալին հիշեցնել, թե ինչով էր զբաղված լինում ինքը իմ տարիքին, երբ պապս, իմ Իսաբեկ պապս խանութում չէր լինում, և երբ իրեն «տեսության» էին գալիս «կարոտած» ընկերները Արշիլի գլխավորությամբ և հաճախ էլ իր՝ պրոֆեսորի հետ, երբ դեռ պրոֆեսոր չէր, էջմիածնում սովորական վարժապետ էր... Օ՜խ, մոռացել է, մոռացել՝ մովուզի թանձր կծպծան գինու քաղցրատտիպ համը և հավատացել բժիշկներին. գոնե դրանով վերջանար, չէ՛, հավատացել է նաև այդ խիղճը Իգդիրում թողած հորս, որ ես, այսպես ասած, «չարաշահում եմ ոգելից ըմպելիքները» և, էլ ի՜նչ՝ «ձեռից գնացել եմ»...

Ես սա քեզ եմ ասում, իսկ իրեն՝ պրոֆեսորին, ի՞նչ ասեմ, որ բժիշկների խորհրդով է ապրում. ասեմ, որ «Կինին զվարթություն ի, պայծառություն ի»... Ասեմ, որ ուստաբաշին՝ անուշիկ հորեղբայրս է ինձ ավետել, բայց՝ «չափով, սոյիդ մեռնեմ, չափով», և ավելացնեմ նաև ասածներից, որ «առանց կինու երգ չի երգվի, պար չի պարվի»... և ավելացնեմ նաև, որ էն մեծ քթով

«կյրողն» էլ սեղանի վրա չէր շորորա թարաքյամա... Ասելու բան չէ, քեզ եմ ասում, ու տխրած, տխուր իրեն եմ նայում...

— Դե ներո՛ղ եղիր, ջա՛նս, և այդպես խեթ–խեթ մի՛ նայի վրաս, ինձ... և հա, իսկ ե՞րբ ես ինձ նկարելու, մի օր պիտի նկարե՞ս, թե՞...

— Օ՛, եթե նեղություն քաշեք մի ժամ, երկու... հենց հիմա կսկսեմ:

— Չէ՛, լինելու բան չի, քիթ սրբելու ժամանակ չունեմ, հնարավոր բան չի, խոսքի համար ասացի,— և գնում է դեպի դուռը՝ ոտքերը զգույշ դնելով, գլուխն օրորելով, ես էլ հետևից, և խոսում է ինքն իրեն. — Կարծում էի կտեսնեմ... և էլի խոսքեր, որ տարիներ առաջ լսել էի, մի անգամ էլ այդ խոսքերը.— «Վա՛յ, Համայակ, վա՛յ»...

Եվ հաստատ լսել եմ, բայց Տե՛ր Աստված, ումի՞ց, մտածում եմ... Դե՛, իհարկե, լսել եմ, հենց տեր Մեսրոպի բերանով ասած՝ «Վա՛յ, Համայակ, վա՛յ»...

Իհարկե, լսել եմ, ինչպես այսօր, ճիշտ տեր Մեսրոպի խոսքերն են, երբ Երևանի մեր տանը, հին տան դռան վրա խմորով կպցրած տետրակի թղթի կտորի վրա կարդաց և կարդացածից քարացավ, շանթահար եղած... «Տերտերներին մուտքը արգելվում է»:

Համայակի ստեղծագործությունը չէր, ոչ էլ իմը կամ եղբորս, մեծ քրոջս... Փոքրիկ քույրիկս էր գրել, մեր տան «Կոմիսարը»... (այդպես էինք թաքուն կնքել իր անունը): Նրա հերթական հրամանագիրն էր. արդեն երկրորդ հրովարտակն էր գրավոր, իսկ առաջինը բանավոր զգուշացումն էր՝ մորս արված, որով խստիվ արգելվում էր եկեղեցի գնալ կամ աղոթել առավոտները շուտ վեր կենալիս, որ հազար տարվա սովորություն էր, ծտերի համար հաց էր մանրում պատշգամբում և հետն էլ Աստծուն խնդրում մեզ փորձանքից հեռու պահի: Էդ էր նրա աղոթքը: Բանն այն էր, որ իմ և բոլորիս համար պաշտելի Ռուզաննա քույրիկս՝ մեր «Կոմիսարը», նոր էր ընդունվել պատկոմական շարքերը, պատկոմ էր դարձել: Հինգ մատները միացրած, ճակատից բարձր պահած՝ երդում էր տվել, որ կոմունիզմի բարձրահարկ շենք կառուցելու համար պատրաստ է արմատախիլ անելու այն ամենը, ինչ կարող է խանգարել այդ նպատակին հասնելու ճանապարհին: Պատկոմ էր դարձել: Իսկ դա նշանակում էր առաջին հերթին անաստված լինել: Եվ եթե դեռ չէր կարող «թեորապես» հիմնավորել իր սկզբունքները և ապացուցել հավատացյալներին իրենց անմխիթար հետամնացությունը, ապա իր նոր գործունեության մեջ, պրակտիկայում կարող էր և շատ անողոք էր: Եվ միակ հարմար օբյեկտը, որի վրա մեր կոմիսարի ուժը պատում էր, խեղճ մերս էր, որին և արգելեց եկեղեցի գնալ: Իսկ նա՝ խեղճ մերս, չէր կարող չգնալ: Նրա միակ մխիթարությունը կամ տանից մի երկու ժամ բացակայելը իր հասակակից կանանց հետ ժամ գնալն էր, և գնում էր գաղտնի՝ ինչ–որ միամիտ պատճառներ հնարելով:

Ախար էդ տնաշենի կոմիսարը իրեն էլ չէր խնայում. իրենից էլ սկսել էր... Իր թանձր, թավշանման մազերը երկու հաստ հյուսերով մինչև գոտկատեղն էին իջնում, որ մերս սանրելուց, հյուսելուց չէր կշտանում շոյելով, համբուրելով՝ իր ձեռքով

«արմատախիլ» արեց, վերցրեց ու... մկրատով ինքը կտրեց, կարճացրեց... Ի՜նչ էր կատարվում խեղճ մորս հետ: Զոքել, ծնկերն էր գրկել, լալով աղաչում էր, որ չկտրի, չօգնեց. ասել էին, որ պատկոմին այդ «հին կենցաղի մնացորդները»... անհամատեղելի են: Իրենց գետին մտած «ընկեր Մարոն» էր ասել, որ ինքն էլ կտրած ուներ տղայի պես և տղայի էլ գլխարկ էր դնում իր ցանցառ գլխին... Բայց էլի սիրունիկ էր քույրիկս, էդպես էլ էր իրեն սազում, երբ արդեն վարժվեցինք:

Եվ ահա մորս փակել էր մեր փոքր սենյակում, և բանտարկված մայրս արցունքն աչքերին ծնկներն էր ծեծում, բայց ոչինչ չէր կարող անել, հրամանը հրաման էր, ես լուսամուտի ջարդած ապակու անցքից նայում էի (ինձ էլ էր բանտարկել), թե ինչ է լինելու...

Զատիկ էր կարծեմ թե Նոր տարի, և տեր Մեսրոպը, ըստ սովորականի, որպես Իգդիրի իր ծխի հոգևոր հովիվ՝ պիտի հերթով լիներ բոլոր իգդիրցիների տներում, օրհներ տունը, ապրողներիս ցանկանար բարի Զատիկ, վերցներ իր խաչհամբույրը, որ աննկատ դնում էին տիրացուի տոպրակի մեջ, և անցներ մյուսների տները...

Ցնցվեց, իսկապես շանթահար եղավ: Աչքերին չհավատաց, հանեց ակնոցը, նորից կարդաց... և Ավետարանով գլուխը թակելով՝ շրջվեց շփոթված, շշկլված, փարաջայի փեշերը բարձրացրած մի կերպ, տիրացուի օգնությամբ աստիճաններից իջնելով ասաց այն բառերը, որ պրոֆեսորը մի քիչ առաջ արտաբերեց դեպի դուռը գնալով. «Վա՜յ, Համայակ, վա՜յ...»: Եվ խայտառակ եղանք մեր բոլոր հարևան իգդիրցիների, բարեկամների առաջ, դարձանք մի մատ մեղր:

Ահա թե ինչ էր նշանակում պատկոմ լինելը...

Պատկոմ... Այսինքն՝ պատանի կոմունար, իսկ երևանցիների թարգմանությամբ՝ «պատ կրծողներ»: Եվ հետաքրքիրն այն է, որ այդ պատանեկան կազմակերպությունը մեզ մոտ՝ Հայաստանում, մի քանի տարի առաջ ստեղծվեց, քան Ռուսաստանում և մյուս հանրապետություններում: Եվ անունն էլ՝ իմաստավոր, դիպուկ՝ պատանի կոմունար, «պատկոմ»... Բայց հետո այն փոխվեց, կոչվեց «պիոներ»... Ի՜նչ համեմատություն: Եվ այդ կազմակերպության ստեղծողն էլ գեղեցիկ էր, հմայիչ, բնության չտեսնված շռայլ քմահաճույք, ֆենոմեն՝ մի անձի մեջ դնելով այդքան շնորհք, եռանդ ու կարողություն...

Ե՛վ մանկավարժ էր, և՛ կազմակերպիչ, բանաստեղծ էր ու դրամատուրգ, հոգեբան էր ու ռազմիկ, հռետոր էր հմայիչ, պատկերավոր խոսող, պատմող... Այդ զարմանահրաշ մարդը՝ «ընկեր Ստյոպան»...

Հեշտ ու հասանդ չէր իր հզոր ծաղկունքն ապրող սկաուտական կազմակերպությանը հակադրվելը և... մեն–մենակ: Ինչ պայծառ հստակությամբ էր պատկե-

բացրել իր անելիքը այդ մարդը, Միքելանջելոյի նման իր ձեռն ընկած տաշ մարմարից քանդակեց Դավթի նման մի պատանի, պատանի կոմունար...

Նրա շուրջը, «Կոմունարների այգում», ծառերի ստվերում նստարանին նստած, մեկ–մեկ հավաքվեցին քսանմեկ պատանիներ, այն «21 պատկոմները», որոնք էլ իրենց շուրջ հավաքեցին տասնյակներ, հարյուրներ, հետո էլ դարձան հազարներ՝ Հայաստանի ողջ պատանեկությանը հավաքելով իրենց առաջնորդի հրամանատարության տակ... Այդ 21 պատկոմները դյուրված, կախարդված, ինչպես Հռոմի գլադիատորները Սպարտակից, տարի չանցած դարձան պատանեկության երազանքների տերն ու տնօրենը, և այդ մի տարվա մեջ էլ սկաուտական կազմակերպությունից մնաց միայն հիշողություն: Բայց լա՜վ հիշողություն, քանի որ սկաուտ լինելն էլ հեշտ բան չէր: Նախ որ... որը պիտի լիներ, որը, անծնող, այսինքն՝ ծնողներիդ կորցրած, կամ... ինքդ մենակ, մի հրաշքով կենդանի մնացած, Երևան հասած և ամերիկացիների հիմնած որբանոցներից մեկում տեղավորված և այդ որբանոցներից էլ «ջոկված», այո՛, ջոկված՝ «աչքի ընկած» իր շենքով ու շնորհքով, իր տեսքով, ֆիզիկական կառուցվածքով. մի խոսքով՝ այնպիսին, որ քեզ «ընտրեին» արժանապատիվ պարոններ պարոն Օնիկը կամ պարոն Զերազը, հմուտ մանկավարժներ, «Առողջ հոգին առողջ մարմնի մեջ» սկզբունքի քարոզիչներ, որ հետո պատիվ ունենայիր երկնագույն փողկապ կապելու և մեջքիդ՝ կաշվե գոտի, որի պղնձե կլոր կապանի վրա փորագրված պիտի լիներ... «Բարձրացիր–բարձրացրու», իսկ մեջտեղում՝ Սիս–Մասիս..., որն էլ կնշանակեր ինքդ բարձրացիր և բարձրացրու քեզ նմանին, ընկերոջդ, որ եթե դու բարձրացել ես, քեզ հաջողվել է հաղթող դուրս գալ ինչ–որ դժվար գործում, մի՛ մոռացիր ընկերոջդ և բարձրացրու նրան էլ, բարձրացրու քեզ հավասար: Եվ ի՜նչ մարդիկ դարձան հետագայում Մուշեղ Մամիկոնյանը, Խաչիկ Դաշտենցը, տասնյակ ուրիշներ...

Սկաուտների մեծ մասը նույնպես չդիմացան ընկեր Ստյոպայի կախարդանքին և դարձան պատկոմներ:

Մարզահանդեսները հաջորդում էին իրար, «Պիոներ» ամսագիրը դարձավ ամենասիրելին ու կարդացվողը... «Սպարտակ» բեմադրեցին, Շիլլերի «Ավազակները» խաղացին... Գիշերային երթեր ջահերով... Երևանցիք ապշելու շատ բան տեսան այդ տարիներին: Եվ զարմանալու բան չէր, որ ես, իմ քույրիկի հետ միասին հետևեցինք մեր մեծ եղբորը, որը «21»–ի մեջ էր՝ առաջին «հմայվածների» թվում: Ես ընդամենը հոկտեմբերիկ էի, իսկ իմ սիրելի քույրիկը՝ պատկոմ:

Եվ ահա իմ անուշիկ քույրիկն էլ պատկոմ էր դարձել, բայց պատկոմի մի... «ուրիշ տեսակը»... Շատ սկզբունքային, անզիջում, մի... Աթարբեկյան ասա, մի Ավիս, «կոմիսար», ինչպես կնքեցինք մենք իրեն, երբ «երդումը» տալուց հետո սկսեց մեզ հետ խոսել «հրովարտակներով», կարգադրություններով:

Օ՜, այդ «պատ կրծողները» հանաք չէին անում, նրանք իսկապես կրծեցին առնե-տի նման, նախ սկաուտներին խժռեցին, շարքից հանեցին և հետո անցան դեպի բոլոր

տեր մեսրոպները, դեպի հավատի քար ու կրե հիմքերը, դեպի Աստծո տաճարները: Հանեցին եկեղեցիների խաչերը, արգելեցին զանգեր տալը, եկեղեցիներից շատերը դարձրին պահեստ կամ ակումբ, կարմիր անկյուն, կինոսրահ, անունը՝ «Անաստված»:

...Այդ եկեղեցիներից շատերի բախտը հետո էլ չբերեց: Որը «պլանի տակ» ընկավ՝ քանդեցին, որը չքանդվեց՝ պայթեցրին, հիմնահատակ արեցին: Եվ քանդողները «պատ կրծողները» չէին արդեն... Քանդողն էլ, շինողն էլ, անորոշ զբաղմունքի տեր մարդիկ էին, իրենց կոչումին, ճարտարապետի կոչումին ոչ մի կերպ չհամապատասխանող մարդիկ, որոնց այդ սուրբ կոչումը կսազի այնպես, ինչպես թամբը մի այլ կենդանու՝ ձիուց բացի, քանի որ ճարտարապետ են ասել Թորոս Թորամանյանին, Ալեքսանդր Թամանյանին...

Եվ քանդեցին հրաշքով ողջ մնացածը, թուրքերից, թաթար–մոնղոլներից, սելջուկներից ավելի վայրագորեն, և երեք հազար տարվա քաղաքը զրկեցին իր տարիքից, ջահելացրին և համարյա թե դարձրին իրենց տարիքին... Եվ այդ «պատ կրծողների» այսպես ասած «տիրապետության» օրերին հարգելի երևանցիք էլ իսկապես և երբեք ճանճրանալու ժամանակ չէին ունեցել, իսկ պատկոմները հաստատ որ հանաք չէին անում:

Եվ եղան անաստված թոռ ու զավակ, որ մկրատով քնած տեղը խուզեցին իրենց տեր հոր կամ պապի դեղնած մորուքները՝ ով չէր հասցրել ինքն իր ճարը տեսնել: Վառեցին փարաջաները, և սարսափած տերտերները թաքուն էլ վախենում էին իրենց՝ պետության կողմից չարգելված շորի տեսակը հագնել և մանավանդ խաչը կախել վզներից... Փաթաթած, թևի տակ դրած՝ տանում էին եկեղեցի, էնտեղ հագնում:

Կային մեջները հատուկենտ «քաջ» տերտերներ, և առաջինը նրանց մեջ՝ նորից մեր ծխական քահանան, մեր անկոտրում տեր Մեսրոպը, որը, ի վերջո, իգդիրցի էր և այնքան հեշտ չէր նրան զարմացնել կամ վախեցնելը... Նամանավանդ, եթե նկատի ունենանք ծերության պատճառով նրա հանդերձանքին ավելացած մի շատ պատկառելի ձեռնափայտը, որ բռնում էր մեզ ծանոթ մսագործ Վալիի նման և ոչ ինչպես ծեր մարդիկ՝ հենվելու համար: Եվ այդպես էլ չհանեց իր հին փարաջան, առավել ևս չհրաժարվեց իր փառահեղ մորուքից, և փարաջան ֆռռացնելով շարունակում էր իգդիրյան ծխի հովվությունը, բանի տեղ չդնելով նաև իր «ուսյալ զավակի» թախանձանքները, որը կարող էր նրա ծերությունը ինչպես հարկն է ապահովել:

Բայց ի՜նչ խոսք և խորհուրդ կարող էին Իգդիրի ծերացած քահանային փոխարինել՝ միակ մնացած խորհուրդը, իր կյանքի մեն–միակ մնացած հնարավորությունը՝ իրեն իր տարերքի մեջ զգալու, գոնե տարին երկու–երեք անգամ, գոնե առերևույթ իր ծխի քահանան զգալու:

Ո՞ւմ էր պետք նրա ծվատված, քրքրված հոգին, նրա՝ իգդիրցու տրորված արժանապատվությունը:

Նրա սև փարաջայի լայնատարած թևքի երկարության մեջ աննկատ տեղավորվում էր մի շիշ Արտաշատի գինի, որ տուն դառնալիս թևքի մեջ տանում էր իր որդու շեն ու լի տունը, որտեղ ամեն ինչը իր համար անպակաս էր, խնայող չկար:

Եվ այդ մի շիշ գինին նրան ոչ ոք չէր խանգարում մենակ, կորացած, փոքրացած, անհնազանդ ձեռքով բաժակը բարձրացնել և դեռ վերև նայել՝ հին սովորությամբ, դեպի վեր՝ գաջած առաստաղը և ոչ իր Իգդիրի տան մեծ սեղանատան կենտրոնում, առաստաղից կախած «չարովի» լամպը, և ամեն բաժակին հիշելով իր Նորայրին, որ մնաց Արհաջի տակ՝ մինչև գաղթականները կանցնեին Մարգարայի կամուրջը... Շավարշին, որ մնաց Ապարանում՝ պահելով Սարդարապատի թիկունքը, Խորենին, որ մնաց Օրգովում՝ մինչև իգդիրցիք հասնեին Մարգարայի կամրջին, Արամին, որ...

Այդպես մեկ–մեկ, ինչպես տանը, Իգդիրում Զատկի կամ Նոր տարվա ուշ գիշերներին, երբ ճրագը ձեռքին անցնում էր նրանց քնած գլխավերևներով և օրհնում իր պահած միակ, նրանց համար պահած աղոթքով, որ սակայն չօգնեց իր ջահել արծիվներին... Թռան գնացին և քեզ համար գնացին, սիրելի՛դ իմ Իգդիր, քեզ պաշտելու չափ, ինքնամոռաց սիրող Իգդիրի ջահել արծիվները...

Եվ մի՛ ասա, էլ չասես էն անտեղի խոսքը, որ քեզ լքեցին իգդիրցիք... Մի՛ ասա: Երբեք այլևս մի՛ կրկնիր այդ խոսքը, եթե չես ուզում ավելորդ վիշտ պատճառել տեր Մեսրոպի՝ հեռու անհունում մենակ, մեն–մենակ սավառնող անմխիթար հոգուն:

Աշխարհը լիքն է դժբախտություններով, բայց նրանց մեծ մասը պարտադիր չէ, որ մարդուն վիճակվի, բայց վիճակվում է: Եվ ցավն այն է, որ մեկին շատ, շատ ավելի է բաժին ընկնում...

Իսկ մեզ, սիրելի՛դ իմ Իգդիր, մեզ բաժին ընկածը դժբախտություն չէր, որ մի օր դադարի մորմոքելուց, ծածկվի փոշով, ցավ չէր, որ տանելի լիներ՝ ատամներդ սեղմած... Դա անբուժելի վերք է, ուղեղի մորմոք, հոգու տառապանք, ինչպես ասել է մակվեցի մեծ բանաստեղծը իր զարմանահրաշ, հանճարեղ վեպում:

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Եվ սեփական անկարողության դառնությունը ճաշակելուց հետո խոնարհվելով մինչև հողը քո առաջ, քո սուրբ անունի առաջ, սիրելի՛դ իմ Իգդիր, խնդրում եմ՝ ներողամիտ, մեծահոգի գտնվես իմ այս անվարժ շարադրանքի նկատմամբ, առավել քան քո իսկ օգնությունը չարդարացնելու համար:

Եվ հանդգնություն մի համարիր արածս, քանի որ միակ պատճառը քո հանգիստը խանգարելու՝ եղել է սահման չունեցող սերս, պատկառանքը, հավատս քո գոյի իմաստի նկատմամբ և ոչ երբեք «մի բան գրելու» անվայել հավակնությունը:

Եվ իմացիր նաև, որ զրույցս քեզ հետ՝ սրտիս ու հոգուս թելադրանքով էր, քանի որ հոգիս շատ էր ծանր, որ մենակ կարողանայի տանել առանց քո օգնության:

Եվ թող ներողամիտ լինեն նաև իմ «անհրավեր այցելությունները», պատվելի քաղաքացիք՝ ուստաբաշի Ավետիսը անմխիթար, Իսաբեկ պապս հպարտ, Բանավշա տատս հրաշագործ, Եփրեմ կակոն անմուրազ, տարաբախտներ Գարեգինը, Հայրապետը, Մամիկոնը, հայրս՝ Հմայակը՝ անհանգիստ, դադարդյուն, Վլասը՝ պատվելի, Օվսաննա, Նունե, Մանե հորաքույրներս և մայրս լուսեղեն, որ նրանց միացան և շատ ուրիշ երևելիներ, որոնք տարան իրենց հետ քո անձեռակերտ պատկերը, որին կենդանություն պարգևելը վեր էր իմ տկար կարողություններից:

Եվ պատճառը վերջին քո հանգիստը խանգարելու, սիրելի՛դ իմ Իգդիր, այն քար անտարբերություն էր քո նկատմամբ, որից կարող է աղբյուրը ցամաքել, հացը կուլ չգնալ, արյունը լերդանալ երակներում նրանց, որոնց երջանկություն էր վիճակվել ծնվելու քո հողածածկ կտուրների տակ:

Իսկ նրանք, ովքեր հետո ծնվեցին Երևանի թիթեղապատ տանիքների տակ, առավել ևս թող ներողամիտ լինեն, եթե նրանց երակներում դեռ խլրտում է և կխլրտա գոնե մի կաթիլ քո մովուզի գինու թանձր–բոսորակարմիր անհանգիստ արյունից... Գոնե մի կաթիլ:

...Իսկ եթե չկա, չի մնացել այդ կաթիլն էլ, կամ մակարդվել է, սպիտակել՝ լինելու բան չէ: Դու էլ չհավատաս, սիրելի՛դ իմ Իգդիր: Դու ամեն օր արևածագին նայի՛ր Արագի կողմը, դեպի Մարգարայի կամուրջը, ավելի հեռուն, դեպի Սարդարապատ, ուշի՛մ եղիր, զանգեր են ղողանջելու, կախված են բարձր սյուների վրա և կղողանջեն մի օր, ինչպես հրացանը պատից կախ, որ պիտի պայթի, եթե բլթակը չքաշեն անգամ, կլսես և կտեսնես պատանիների հագած–կապած, որ անցնելու են Արագը և դիմեն դեպի Լյառը մոտի...

1975–1983 թթ.
Երևան–Շորժա

ԷԴՈՒԱՐԴ ՀՄԱՅԱԿԻ ԻՍԱԲԵԿՅԱՆ
ԻԳԴԻՐ

●

ЭДУАРД АМАЯКОВИЧ ИСАБЕКЯН
ИГДИР

Հրատարակչության տնօրեն՝ Է.Ս. Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ա.Ա. Բաղդասարյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ն. Ն. Փարսադանյան
Համակարգչային ձևավորումը՝ Ժ. Ա. Հակոբյան
Շապիկի համակարգչային մշակումը՝ Ժ.Ա. Հակոբյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 15 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 0 օրինակ: Գինը՝ պայմանագրային:

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23–25–28,
ֆաքս՝ (+37410) 23–25–95, էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայք՝ www.zangak.am, www.book.am